

ՁԱՅՆ ԲԱՐԲԱԲՈ ԱՆԱՊԱՏԻ

Գեհենի Առաքել



Խմբագիր Տ. Բարսյան, Ա. Աբովյան,
Վ. Հովհաննիսյան

geheniaraqel@gmail.com

ՉԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՒ
ԱՆԱՊԱՏԻ

ԳԵՂԵՆԻ ԱՌԱՔԵԼ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հարգելի ընթերցասեր բարեկամներ Ձեզ ենք ներկայացնում՝ հեղինակի Գեհեհնի Առաքելի հերթական գիրքը՝ «ՁԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՒ ԱՆԱՊԱՏԻ» : Գրքում ընդգրկված են հայ ժողովրդի հոգեբանության, մտքի, նրա ձեռքբերումների և կորուստների պատկերները : Հեղինակը բացահայտում է, թե ինչպես իրականության և պատմության հետ առերեսումը կարող էր ժողովրդին սովորեցնել գտնել լուսավոր ապագայի ճանապարհը: Այս գրքույկը ոչ միայն ձեռնարկ է գտնելու արժանապատիվ ապագայի ուղին, այլ նաև հասկանալու, թե ինչպիսի կորուստների և զոհաբերությունների շնորհիվ հայ ժողովուրդը զգալի ձեռքբերումներ ունեցավ, թեև կորցրեց, որովհետև չգնահատեց և պատշաճ կերպով չվերաբերվեց դրանց, հարգանքի և սրտացավության բացակայության, երախտամոռության դրսևորումներով: « ՁԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՒ ԱՆԱՊԱՏԻ» գիրքը ցավի և ողբերգության մասին է, հեղինակի ճշացող ցավի, ըմբոստության աղաղակն է, մարտակոչ, որով փորձում է ոտքի հանել հոգևարքի մեջ գտնվող ժողովրդին: Այն ժողովրդին, որը նախընտրեց ամբոխավարությունը, ոչ թե արժանապատիվ ապրելու իր միակ հնարավորությունը: Սա կորստի, ցավի, հուսահատության և պայքարի մասին պատմող մատյան է, մեր ազգի ինքնաչնչացման դեմ ձեռնոց նետած մարտահրավեր: Դարերի խորքից աղաղակող՝ Չայն Մեծաց, Չայն Հայրենյաց, Չայն Ճշմարտության ... ՁԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՒ ԱՆԱՊԱՏԻ...

Հեղինակի խոսքը

« Միայն ինչ-որ բան կորցնելով, մենք գիտակցում ենք կորցրածի արժեքը... »: Արթուր Շոպենհաուեր: Գիտե՞ք գեղեցիկ է սաված, սակայն ո՛չ մեզ համար՝ հայերիս: Արթուր Շոպենհաուերը գերմանացի էր, դրա պատճառով էլ գերմանական այս կարգախոսը ընդունվեց պետության ու հասարակության կողմից, դարձավ երկիրը առաջ տանելու բանաձև: Իսկ մենք՝ հայերս չենք կարող ընդունել այս ճշմարտությունը, որովհետև մեզ մոտ ընդունված է. « Եղունգ ունես, գլուխդ քորի » բանաձևը: Դրա համար էլ Հանրապետականները իրենց գլուխն են քորում, դաշնակները իրենց հետույքը, իսկ Փաշինյանի բանակն էլ իրենց ամորձիները: Դրա համար էլ այս վիճակում ենք: Մեր կորուստների արժեքը երբեք չիմացանք, ո՛չ տարածքային, ո՛չ գիտական մտքի, ո՛չ մշակութային արժեքների, ո՛չ էլ հայրենասեր զավակների: Մեր համար արժեքը կամ ոջլոտներն են, կամ էլ ղզիկ չկողմնորոշվածները, որոնք անգամ չգիտեն թե իրենք է՞զ են, թե՞ որձ: « Չկա ավելի հզոր ուժ, քան գիտելիքը. գիտելիքներով զինված մարդը անպարտելի է »: Մաքսիմ Գորկի: Այս իմաստուն մարդու իմաստուն խոսքերով շատ ազգեր կարողացան գտնել իրենց ճանապարհը, սակայն ո՛չ մեք՝ հայերս, որովհետև Աշոտյաններն ու Շարմազանովները, Արայիկ Հարությունյանները ու Չարուհի Բաթոյանները, որոնք տգրուկի պես կպել են ժողովրդի զարկերակին ու ծծում են նրա արյունը: Գիտելիքը դարձնելով սեռական հողով, իսկ գիտությունը՝ ստամբուլյան կոնվենցիա: Ինչպես կասեր մեծ Մարգարեն՝ վիպասան Բաֆֆին. «Ներկայումս գիրքը և ժողովրդի մեջ ընթերցանություն տարածելը այն փրկարար միջոցներից մեկն է, որ կազատե նորան շատ մոլորություններից: Մի լավ գիրքը կարող է փրկել մի ամբողջ ազգ »:

10/11/2019

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԳԱՐԱՎՈՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

« Այս վերնագիրը չեմ կարծում թե կգայթակղի շատերին կարդալու համար նյութը, որովհետև այն լինելու է բավականին երկար ու ճանճրալի, այնպես որ իրենց ոսկի ժամանակը թող չծախսեն, իսելացի ընթերցասեր երևալու համար: Կարևորը այն չէ, թե քանի հոգի այն կկարդա, այլ կարևորը, որ ինքնուրյուն վերլուծեն, կամ մտածեն այս մասին: Շատերին ավելի շատ հետաքրքիր է Լիլի մորտոյի սեռական անբավարարվածության ու բոտոքսների մանրամասները քան թե սեփական ճակատագիրը, կամ էլ դժբախտ ու դժգույն իր կյանքի ճշմարտությունը: Այսպիսով, ինչպես ասացի նախորդում նյութը ձգվելու է ու ճանճրալի դառնալու: Հայ ժողովրդի հոգեբանական ախտորոշման մասին բազմիցս անդրադարձել եմ իմ աշխատություններում ու օրինակներ բերել ոչ միայն հոգեբանությունից ու մեր ՄԵԾԵՐԻՑ այլև Աստծո, տիեզերական համամարդկային ու պատմական ճշմարտությունից: Այն, որ մեջբերումները առատ են լինելու այս բացատրություններում, պարզեցնելու համար, առանց այն էլ պարզ խնդիրները: Պատահական չէ նաև, որ Ֆեյսբուքահայությունը փորձում է ավելի իսելացի երևալ ոչ միայն իրենց մեջ բերած ցիտատներն ու աֆորիզմները իրենց էջերի պատերին ծեփելով, այլև սիրում են իրենց սելֆիները ու լուսանկարների միջոցով ներկայացնել իր չկայացվածության ու կայացածության աստիճանը: Ինքներդ փորձեք նկատել, որ հայերի լուսանկարները մեծ մասի արված են միկրոֆոնների, եռագույն դրոշների, կամ մեկի ճոխ աշխատասենյակում: Հայ հայտնիների շարքում լինելու համար ամեն ինչի պատրաստ են անգամ՝ իրենց սեռական ու ինտիմ գաղտնիքները ու քաղքենիությունը ի ցույց դնելով: Հրապարակում են լուսանկարներ, որոնք ոչ միայն անորակ այլև անճաշակ: Դա մասամբ սիլիկոնայասեր ու բոտոքսավոր կանանց է վերաբերվում, որոնք առանց որևէ բան գրելու միայն գունագեղ լուսանկարներով լայքեր են հավաքում, այդքանով պատկերացնում են, թե լայքվողների կողմից ճանաչված են ու սիրված: Շատերը հիշում են Սեյրան Օհանյանի կնոջ՝ Ռուզիկի գունազարդ թելավարտիքների ու ծաղկեփնջերի պատմությունը: Միյուրահայության լուսանկարները չեն տարբերվում թվարկածներիցս, դրանք եռագույն

դրոշի, դեսպանատան, թանկարժեք մեքենաների, կամ էլ գլամուրային փարթիների ֆոնին են, փորձելով չտարբերվել Քարդաշյանների ընտանիքից: Միևնույն է ինչքան էլ փորձեն ցույց տալ, որ իրենք հայ են ու ազնվական արյուն է հոսում իրենց երակներում, սակայն իրենց լուսանկարները այլ բան են ասում: Երբ համատարած տգիտության մեջ վառվում գույներով պճնված ԳեղՈՒԻհին ոչ ավելի է քան կիսաբացի անատամ բաջիները, ինչքան էլ փորձեն թաքցնել իրենց ճոխ թվացող երևույթների մեջ, միևնույն է քաղթենիությունն երևում է... Բոշաների մասին ասած խոսքերը երևի հիշում եք: Ասեմ, որ այդպիսի մարդիկ ոչ միայն չեն կարողանում փոխել իրենց կերպարը, այլև տեսակը, կրթված գրագետ մարդը, կամ կինը այդպես չեն լինում, իհարկե եթե հորմոնային կամ ուղեղային խանգարումներ չունեն: Այսպիսով այս բացասական ենթատեքստը կարծում եմ կավարտենք, որովհետև խոսելու ենք հայ ժողովրդի թշնամիներից: Ես միշտ գրել եմ, որ ուժեղ ու հզոր ժողովուրդները թշնամիներ չեն ունենում, որովհետև հզորները իրենց թշնամիներից վաղորոք են ազատվում: Հզոր ասելով նկատի չունեմ իրենց երկրի տարածքը, կամ սպառազինությունը, այլ գիտության, կրթության, մտավոր ու քաղաքական ինտելեկտը: Հիմա աշխարհը շարժվում է այլ երթուղով, ամեն ինչ փոխվել են, անգամ ազգային ու բարոյական արժեքները, մարդիկ փորձում են « արհեստական ինտելեկտ » շնորհիվ իրենց կյանքը դարձնել բարեկեցիկ, սակայն մոռանում ենք կարևոր մի բան, չգնահատելով մարդկային ու ազգային արժեքները, երբեք չենք կարող արհեստական բանականության շնորհիվ լավացնել կյանքը: Բայց հայությանը դա չի սպառնում, որովհետև մենք վաղուց ենք հրաժարվել մարդկային չափանիշներից ներառյալ՝ բանականությունը: Այնպես, որ մինչ աշխարհի ժողովուրդները արհեստական ինտելեկտին են հարմարվում, հայությունը միջնադարի խավարի մեջ իր անվտանգության ու գոյապահպանման երաշխիքներ է փնտրում: Չնայած, եթե Հայաստանում կյանքի կոչվի արհեստական ինտելեկտը, ապա վստահ եմ այն դառնալու է ավելի բռնակալ, քան իր նախորդներն էին՝ այսինքն մարդկային տեսակը: Ֆանտազիան՝ ֆանտազիա կմնա, եթե այն կյանքի չկոչվեն ֆանտաստիկների երազանքներ, բայց ինչպես տեսնում ենք աշխարհը առաջ է գնում օգտագործելով իր գիտական միտքը ու այլընտրանքային բանաձևեր փնտրում, իսկ մենք ծվարել ենք միջնադարի խավ-

արում ու մեղավորներ փնտրում: Այդպես միջնադարից սկսած առ այսօր չենք կարողանում հասկանալ, թե ովքեր են հայ ժողովրդի թշնամին... Այո ճիշտ լսեցիք, որ հայ ժողովուրդը անգամ 21-րդ դարում չկարողացավ հասկանալ իր թշնամիները որտե՞ղ են, կամ ովքե՞ր են: Իմ ընթերցասեր բարեկամներից շատերը գիտեն, որ հաճախակի եմ մեջ բերում Արցախի գրող՝ Վազգեն Օվյանի, ամերիկահայ գիտնական՝ Արա Հարությունյանի ու ազատամարտիկ՝ Վարդան Հովհաննիսյանի մտքերն ու գրառումները: Ինչ էք կարծում նպատակը ու կապը ո՞րն է... Հասկացող մարդիկ պետք է, որ վաղուց հասկացած լինեին այդ կապի մասին, ճշմարտախոսությունը, ճշմարտության ու գաղափարների միջև է այդ կապը:

Ճշմարտությունը շատ մեծ ու հզոր զենք է, նաև հզոր զենք է սուտը և ստախոսությունը, չարախոսությունը, բամբասանքը: Իզուր չէր, որ Ջորջ Օուրելը ասում էր, որ «Տգիտությունը ուժ է»: Այո թեման ձանձրալի է լինելու, ուստի վստահ եմ, որ ներվերից թույլ մարդիկ չեն շարունակի ընթերցել: Նպատակը հենց դա է, որպեսզի վաղորոք անընդունակներից ազատվենք: Հայ ժողովուրդը իր պատմության և գոյության ողջ ընթացքում փնտրել է իր դարավոր ու ռիսերիմ թշնամիներին... նույնիսկ բացահայտել է, որ իր թշնամիներն են բյուզանդացիները, հոները, արաբներն, պարթևները, թուրքեր, ռուսները անգամ օլիգարխներ, կամ էլ նախկինները:

Սակայն, այդպես էլ չհասկացանք թե որտեղ է իրական թշնամին...

Պատահական չէ, որ սասնա ծռերն ու Արա Պապյանը Վիլսոնի 100 տարվա բորբոսնած քարտեզը վերցրած անիմաստ ջուր են ծեծում, իսկ գիտեք թե՞ Արա Աբրահամյանը այդ քարտեզի քարոզչության համար ինչքան գումարներ է աշխատել, նույնիսկ վերջերս Բևեռի ռաիվիրան, սորոսական ճառասաց՝ Հայկ Մարտիրոսյանի իր քարոզչության համար ԱՄՆ-ում 200 դոլար մուտքի տոմս է վաճառել ամերիկահայությանը, որպեսզի միամիտներին ավելի էշացնի: Հարցը միայն Պապյանն ու Հայկ Մարտիրոսյանը չեն, այլ աղանդավոր, կուսակցական ու քաղաքական դեմագոգներն ու դատարկախոսները՝ Ծանթ Հարությունյան, Հրաչ Մուրադյան, Ծառոտ, Լիլի Մորտո, Սյուզի Ծանել Մելքոնյան և այլն դրան գումարենք՝ Դաշնակցակահանրապետական, ՀՀԾ-ական բարգավաճներին ու քայլ արած բոգորդիներին: Կարելի է անվերջ թվարկել այս ցանկը, քաղաքական կուսակցություններ իրենց առաջնորդներով ու արբանյակներով,

որոնք ոչ միայն չեն տարբերվում իրարից, այլ բարեկամախնամիական կապով ամուր շղթայված են միմյանց հետ: ՀայՈՒԲ գեների ու ՀայՈՒԲ մտքի մասին բազմիցս խոսել եմ, դրա համար էլ չգիտեմք որտեղից ինչ- որ միաբջիջ հանկարծ հայտնվում է, ու նոր բառ կամ բառակապակցություն հորինում ՀայՈՒԲ գեն, ՀայՈՒԲ տեսակ... Դա Գինոսյան Գագիկի ուրույն հայտնագործությունն էր, իր 150 դուարանոց խանչալների պարի հետ միասին: Ինչպես ասացի՝ հազարավոր օրինակներ կարելի է բերել հայՈւթյուն կուրության մասին, ժողովրդի իմաստություն շյուղի ու գերանի մասին շատ տեղին է ասված. « Ազգովի ուրիշի շյուղն ենք տեսնում՝ չտեսնելով մեր աչքի գերանը », դրա համար ինքնախաբեությամբ Վիլսոնի քարտեզով ենք ինքնաբավարարվում, երբ քրեականասեր Շանթ Հարությունյանն է խոսում հայրենասիրությունից ու արժեքներից, բարոյականությունից ու ազնվությունից: Թաղերում պագող, թքող թաղային ոչնչություններն են դառնում քաղաքական հեղինակություն, կամ էլ կուսակցանկանապետ: Առհասարակ կուսակցական գործիչների, քրեական հեղինակությունների ու մարմնավաճառների տարբերությունը մեծ չէ, նույն ժարգոնը, նույն աշխատատեղը, չի բացառվում նաև նրանց արյունակցական կապը: Այստեղ ճիշտ կլինի Գագիկ Գինոսյանի արտահայտած՝ ՀայՈՒԲ տեսակ բառը, բառը՝ « порода »: Հայ ժողովրդին հասած գրական ժառանգությունը հարուստ է, հարկավոր է միայն հասկանալ, թե որտե՞ղ ենք սխալվել, որտե՞ղ ենք սայթակել, կամ էլ որտե՞ղ ենք հանցավոր անտարբերություն ցուցաբերել, իսկ ոճիրներից ու դավաճանություններից չեն խոսում: Այո՛, ոճիրներ, որովհետև հայությունը իր ողջ պատմության ընթացքում այդ ոճրագործությունները ու գործած չարագործներին ո՛չ միայն հերոսացրեց, այլև՝ սրբացրեց ու կուռքեր դարձրեց: Աստվածային խոսքերը՝ շնանալու ու կուռքերին երկրպագելու մասին վաղուց մոռացված թեմա է, ինչպես կասեր Գարեգին Նժդեհը. « Նույն աստվածասպան ամբոխն է՝ մեր ցեղի վատասերված տականքը, որ օտարի միջոցով խաչել է տալիս այն ամենը, ինչ-որ ազգային է: Հայ ժողովուրդների արյունն ու արցունքը պիտի չդադարի, մինչև որ նրանք ինքնօգնությամբ ոտքի չկանգնեն, մինչև չհզորանան հոգով»: Շատ դեպքերում մարդը բանականությունից զրկվում է, երբ նրա գլխում դատարկություն է, ու քամիներ են խաղում, դրա համար է Շպոռտի շրթներիկ գույնը իրենց ավելի է հետաքրքրում իրենց,

քան սեփական զավակների կամ հայրենիքի ճակատագիրը: Հայ ժողովրդի մոտ արմատավորված տգիտության մասին ես չպետք է որ խոսեմ, ինձանից առաջ հայ մեծերն ու դասականներն են այդ մասին գրել, սակայն լսողներ չեղան, ոչ ոք չցանկացավ պարզել պատճառները կամ այդ մասին: Այդ պատճառով էլ վատ մանկություն տեսած ամեն մի ընչագուրկ դատարկություն չարացած աշխարհի ու շրջապատի վրա, չարացած ճշմարիտ խոսքի ու արդարության հանդեպ, պետք է իր կեղծիքն ու սուտը դարձնեն ոչ միայն սկզբունք այլ գործելաոճ: Հայ տիրակալները հենց այդ կեղծիքով ու ստով, խոստումներով կերակրեցին ժողովրդին, նրանք էլ իրենց հերթին կեղծիքով ու ստով դաստիարակեցին իրենց ժառանգներին ու չարիքը բույն դրեց ո՛չ միայն ժողովրդի մեջ, այլև հայոց լեռնաշխարհում հաստատվեց ու ամրացավ: Պատահական չէ, որ Հայաստանում վերջին ժամանակներս գրանցվում է ակտիվ սեսմակայունություն, կամ բնական այլ աղետներ շատերին է զարմացնում, ասեմ որ նախորդում իմ գրած « Չարիքի իշխանություն » գրքում մանրամասն գրված է այդ բնական աղետների պատճառները, ուստի միայն կցանկանաի մեկ հատված նշել այդ գրքից: Չարիքի իշխանությունը հիմնված է ոչ միայն պետական կառավարման ու ուժային կառույցներց, այլև ժողովրդի տգիտության, անտարբեր թամաշավորության վրա, թայֆայականության վրա, ապերախտության ու սրբապղծության վրա: Կապ չունի թե պետության իշխանավորները ո՞վ է, կամ ի՞նչ է, կարևորը նա ստի ու կեղծիքի, խավարի չարիքի հեզևորդին է: Ինչպես կասեր Րաֆֆին. « Անաստված երկրում բընակվիր, բայց անօրեն երկրում մի բնակվիր »: Հայերը ողջ դարերում եղել են այդ չարիքի իշխանության գերին, իսկ կարևորը, իրենց մեղքով է այն աղետները, որոնք բերեցին իրենց գլխին: Ուստի ավելի պարզ լինելու համար հիշեցնեմ Մովսես Խորենացու խոսքերը: «Եվ ի՞նչ կա այս բոլորի դիմաց, եթե ոչ այն, որ աստված մեզ անտես է արել, և տարրերը փոխել են իրենց բնույթը, գարունը՝ երաշտացած, ամառը՝ սաստիկ անձրևային, աշունը՝ ձմեռ դարձած, ձմեռը՝ սաստիկ ցուրտ, մրրկալից և երկարատև: Քամիները՝ բքաբեր ու խորշակաբեր, ցավեր տարածող, ամպերը՝ կայծակներ թափող, կարկտաբեր. անձրևներն՝ անժամանակ և անօգուտ, եղանակը դաժան, եղյամաբեր. ջրերի ավելանալը անօգուտ, իսկ պակասելը՝ չափազանց. հողի պտուղների անբերրիություն և անասունների անանե-

լություն, նաև երկրաշարժեր և սասանումներ: Այս բոլորի վրա ամեն կողմից խռովություն, համաձայն այն խոսքի, թե ամբարիշտներին խաղաղություն չկա: Որովհետև (մեզ) տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս, կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները գորացած, հավատը ծախսվում է այս ունայն կյանքի համար: Ավագակներ են գալիս անհատնում և շատ կողմերից, տները թալանվում են, ստացվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեսպի օտարություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սովեր և հիվանդություններ և բազմատեսակ համաճարակներ: « Աստվածապաշտությունը մոռացված է, և կա դժոխքի ակնկալություն »: Մովսես Խորենացի: Ի՞նչ էք կարծում մեծ պատմահորր գրածն ու ներկայիս իրականության մեջ տարբերությունը մե՞ծ է... Թուրքերը մի առած ունեն, որ ասում են. « Կաթի հետ մտածը՝ հոգու հետ դուրս կգա »: Այս ամենից հետո հասկանում ես, որ միջնադարից է գալիս « Կիսաբաց լուսամուտների » ժողովրդական սիրված այդ ավանդույթը, երբ գյուղի քահանան, կամ գյուղապետը իրենց սեռական քաղցը ու անբավարվածությունը հագեցնում են ժողովրդական զանգվածների վրա: Առհասարակ՝ զանգվածային մտածելակերպը հատուկ է հայ ժողովրդի համար, Գարեգին Նժդեհի ասած մտավոր կույր. « Մետերլինգյան կույրերի նման մոլորված « տգիտության անտառում »: Եթե քիմիաբանության տեսանկյունից նայենք, ապա զանգվածը դա խտանյութի կարծրացած, կամ էլ հեղուկային բաղադրությունն է, անկախ իր որակական կամ քիմիական հատկություններից: Երբ ժողովուրդը զանգվածային վիճակում է, նրան դժվար բան է ինչ որ բան հասկացնել, զանգվածային վիճակից է առաջանում ամբոխավարությունը, որտեղ ամեն մի փրկիչ իրեն զգում է իրավիճակի տերը: Այդ է պատճառը, որ Սյուզի Շանելը ու իր նմանները լատինատառ տգիտությունը գրում են առանց կետադրական նշանների ու բառերը իրար կպած: Դա հարթաուղեղային ախտորոշման եզակի երևույթներից է, երբ ամեն ինչ երևում է աղավաղված հարթության վրա: Խոսքս երկարում է, իսկ ընթերցողները

քանում են, այդպես է ճիշտը, որովհետև հայերը ընթերցանությունը ատող ժողովուրդներից են, իսկ կարիք կա՞ գիրք կարդալ, երբ կարելի է յուրուրից սովորել, կամ էլ լսել հարևանի կնոջպատմածից: «Ներկայումս գիրքը և ժողովրդի մեջ ընթերցանություն տարածելը այն փրկարար միջոցներից մեկն է, որ կազատե նորան շատ մոլորություններից: Մի լավ գիրքը կարող է փրկել մի ամբողջ ազգ »: Բաֆֆի. Ընթերցանությունը բարդ արվեստ է, մանավանդ անտառանձանաչ զանգվածի համար: Այո՛ ընթերցանությունը դա արվեստ է, արվեստ, սովորելու, ըմբռնելու ու հասկանալու արվեստ: Գեղարվեստական գրականության հաստատվոր հատորներով գրքերը վաղուց մատնված են անուշադրության, որովհետև կարիք կա՞ կարդալ, երբ Շանթ Հարությունյանի ու Արա Պապյանը կարող են սովորեցնել հայոց պատմությունը կամ հայրենասիրությունը:

Հայի դարավոր թշնամուն պետք չէ հեռուններում փնտրել, կամ յոթ սար ու ձորից այն կողմ, հայի դարավոր թշնամին հայն է, « Հայի ռիսերին թշնամին օտարը չէ, այլ հայը »: Բաֆֆի Չեմ փորձելու հայերին բաժանել խմբերի, կուսակցությունների, կամ ըստ դավանանքի նախասիրությունների, որովհետև բավական է ազնիվ գտնվենք ու խոստովանենք, որ բոլորն էլ նույն հայերն են: Հայերը սիրում են իրենց անցանկալի մարդկանց թուրք անվանել, կամ դավաճան, իսկ ինչու՞ է ստացվում այսպես: Հայ գրականության դասականները իրենց գործերում միշտ խոստովանել են հայերի մասին իրականությունը: Հայի տականքի, հայ օլիգարխի, հայ ոստիկանի, հայ կուսակցականի ու առաքյալների, շահագործողների ու շահագործվողների, դավաճանների առավել ևս, բայց լսե՛՛ր եք, որ ժամանակը կամ Աստված նրանց պատժի... Այդպես մենք հույսներս դրել ենք Աստծո վրա, որ չարից ու փորձանքից կազատի, որ վատին ու հանցագործին կպատժի: Առհասարակ, ինչպես հոգեբան գրել եմ նախորդ գրքերում, որ Աստծո վրա հույս դնելը դա վախկոտությունը թաքցնելն է հերթական անգործությունը արդարացնելու, անողնաշավորի վիճակ, որի համար փորձում են հումանիստ ու խաղաղասեր երևալ: Այդ պատճառով են հայության զգալի մասը, մանավանդ արվեստագետ-մտավորականները որոնք արդարանում են, որ իրենք արվեստի մարդ են ստեղծագործող, որ իրենք քաղաքականությամբ չեն զբաղվում: Ծիշտն ասած, Հայաստանի Անկախության 30 տարիներին այդ մտավորականությունը ոչինչ չստեղծեց, որը կարող

էր հպարտություն ներշնչել ազգին: Ընդհակառակ, այդ արվեստագետները դարձան չարիքի իշխանության դրոշակակիրը: Չեմ փորձի կրկնել հին մտքերը ներքին թշնամիների պահով, սակայն դեգրադացված հասարակության մեջ չարիքի մետաստազները ավելի արագ են աճում ու տարածվում: Ինչպես կասեր վիպասան Րաֆֆին. « Խաբեբաների կարգը գնալով ընդարձակվում էր, և նրանք օրըստօրե նոր անդամներ էին գտնում:

Նրանք տարածվեցան երկրագնդի այն անկյունները, ուր ավելի տիրում էր մտավոր խավարը, ո՛ր քրիստոնեությունը գտնվում էր մռայլոտ հեթանոսության մեջ »: Ներքին թշնամիների մասին գրում ենք, խոսում, ճառում, փիլիսոփայում, ու հաջորդ քայլին մոռանում, անցնում ու գնում... Ո՛չ հատուցում, ո՛չ պատասխան, ո՛չ հաշվեհարդար կամ է՛լ վրեժ: Հեց այնպես չնշեցի վախկոտության ու դրա արդարացման մասին, հայերը հազար պատճառ կբռնեն, արդարացնելու իրենց ամուլությունը: « Հայը՝ Հայի արյուն չի թափի»: Այս կարգախոսի մասին նախորդներում գրել եմ, դա ամենալավ բանաձևն է բոլոր հարցերից խուսափելու համար: Դա արդարացման ամենալավ ձևն է: Հիշողության կորուստը հայերի մոտ խրոնիկական է, հիշում են բաներ որոնք անհրաժեշտ չեն, բայց մոռանում են կարևորագույնը, իր պատմությունը, հերոսներին, մայրենի լեզուն ու մշակույթը: Հիմա էլ նոր երևույթ է ի հայտ եկել, եռասերունդ երկրապահներից ու ասֆալտամարտիկներից բացի, նաև «Հանդիսավար, թամաղաները », որոնք իրենց զվարճանքը ու խրախճանքը անգամ չդադարեցին 44- օրյա սպանդի ժամանակ: Ֆեյսբուքում հիմա վիստում են իրենց գունագեղ զրվարճանքների տեսարաններով, դրան գումարենք անահատական մերսողուհիներին ու գումարով հանդիպողներին (Handipum Anhatakan, Anhatakan Mersum Handipum gorcakan mersum anhatakan): Ողջ համացանցում հայուհիների մատյան գնդերն են ու փնթի թամաղանների ոհմակները: Սրանք հենց այն պատանի երկրապահներն են, որոնց փչացրեցին Վազգեն Սարգսյանի գերեզմանի վրա երդում վերցնելով: Սա դեռ միայն Հայաստանում, իսկ արտերկրում՝ վիճակը կրկնակի անգամ աղետալի է: Հայերին գիտեք թե ինչն է միշտ դավաճանել, հենց այդ հիշողությունը, նա մոռացել է պատմության տված դասերը, հիշողությունը կորցրած հավի մասին Վարդան Պետրոսյանն հետաքրքիր ներկայացում էր բեմադրել: Հայկական մամուլը այն ժամանակ էլ էր աղբ ինչ-որ հիմա, նույն աղբը

Արևտյան Հայաստանում էր, նույն աղբը Արևելյան Հայաստանում: Վերջերս համացանցում պատահաբար տեսա, որ ինչ-որ դատարկամիտների մի խումբ, որոնք իրենց համարում են « Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւն » անգամ ֆէյսբուքում ու Յութուքում հատուկ էջ «Western Armenia TV» ունեն, սակայն զարմանալին այն է, որ ունի Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան, ունի իր զինված ուժերը: Մեջ բերեմ բառացի գրված նյութից. « Արևմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետ՝ Տիգրան Փաշաբեգյանը Ամերիկայի Միացյալ Նահանգներից հեռահար հեռարձակմամբ ընթերցեց Արևմտյան Հայաստանի Հանրապետության նախագահի N 50-4/2022 հրամանագիրը՝ Հայոց բանակի 30-ամյակի, և Արևմտյան Հայաստանի հայերի պաշտպանության ուժերի կազմավորման 4-ամյակի, Արցախյան ազատամարտում անմնացորդ ու հերոսական նվիրումի ու մասնակցության, Հայրենիքին մատուցած ծառայությունների համար, Արևմտյան Հայաստանի հայերի պաշտպանության ուժերի գնդապետ՝ Արամ Աշոտի Անդրեասյանին Արևմտյան Հայաստանի հայերի պաշտպանության ուժերի գեներալ-մայոր բարձրագույն զինվորական կոչում շնորհելու մասին »: Չգիտեմ ինչ անուն կարելի է տալ սրան, երբ հայ ժողովուրդը անգամ զուգարանի թղթի գործարան չունի, որպեսզի իրենց հետույքները կարողանան մաքրեն, հիմա էլ Արևմտյան Հայաստանի մասին են երագում: Սյունիքի ճանապարհների անվտանգությունը չեն կարողանում ապահովվել մտածում են Արևմտյան Հայաստանի մասին: Չավելշտալին այն է, որ « Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւն » Յութուքյան էջում միայն 9.900 ավելի բաժանորդ կա: Իսկ « Ազգային-ժողովրդավարական բևեռը » ունի 56.600 բաժանորդ: Ես չեմ թվարկելու «Կիսաբաց լուսամուտների» Hrach Muradyan 298.000 բաժանորդներին, Ծանթ Հարությունյան 67 հազար բաժանորդների « подписчики: 67.тыс.» և այլն: Ի՞նչ էք կարծում այս թվարկածս անունների բաժանորդները հայեր են, թե՞ հավատացեք, երբ ասում ենք թե միլիոնով ԲՌԱԿ ենք տվել, դա այդպես է, այս թվերը ամեն ինչ ասում են, չհաշված թուրքալեզու ռաբիզասեր մուղամչիներին ու քրեական թզրեհ ֆոռցնողներին, որոնք միայն օղնակլասնիկում են: Ի՞նչ էք կարծում, արդյոք այս որակական հատկանիշներով ժողովուրդը ընդունակ է հասկանալ, թե իր թշնամին որտե՞ղ է կամ ո՞վ է, արդյոք այս ամբոխը ընդունա՞կ է սեփա-

կան երկիրը կամ պետությունը ունենալ: Հիշողության կորուստը ցավալի երևույթ է, բայց չտեսնել ներկայիս այս ամենը ինչ մեր շրջապատում կատարվում է ուղղակի զավեշտալի է: Հիշողության արդյունքում կրկնեցինք անցյալի սխալները, որի ողբերգական ու ճակատագրական ապտակն անգամ չսթափեցրեց մեզ, խրոնիկական հիշողության կորուստի պատճառով հայտնվում ենք միշտ նույն կեղտափոսում: Հայի թշնամին վաղուց է բույն դրել մեր մեջ, իսկ մենք փնտրում ենք նրանց չգիտես որտեղ: Հայի թշնամին ոչ միայն տգիտությունն է, այլև հիշողության կորուստը, վախկոտությունը: Այնպես չէ, որ հայերը մահից են վախենում, ընդհակառակը՝ հայերը գեղեցիկ մեռնել գիտեն, արժանապատիվ ապրելը հայերի համար չէ, հայը պատրաստ է մեռնել իր տիրոջ համար, սակայն պատրաստ չէ ապրելու համար մեռնել, մեռնել՝ գաղափարի համար, կամ էլ՝ մարդավարի ապրելու համար. Ինչպես կասեր Գարեգին Նժդեհը. «Ապրի՛ր չմեռնելու, մեռի՛ր ապրելու համար»: «Մեռնելը դատարկ բան է. սարսափելին չապրելն է...» Վիկտոր Հյուգո. Հայերը իրար փոր են թափում, թասիբին ու շեֆի համար իրեն նվիրաբերում, սակայն ընդունակ չեն մեռնել ապրելու համար: Տեղին է հիշել Ավետիք Իսահակյանի ասած խոսքերը. «Հայաստանում երկու սերունդ է աճում կողք-կողքի. մեկը՝ ազգամերժ, կոսմոպոլիտ, լեւանդին, անիդեալ, ճուլվող, ազգուրաց, մայրենի լեզուն արհամարհող, կարիերիստ, մյուս սերունդը՝ թանձր, թունդ հայրենասեր, հայրական օջախներին կառչած, գրաբարյան: Մի օր այս սերունդները՝ հայերը և այլասերվածները, իրար փոր պիտի թափեն»:

Երբ խոսում ենք թե այս 44- օրյա պատերազմում զինվորը չի պարտվել, դա հերթական ինքնախաբեություն է, իմաստությունը ասում է. «Պատերազմում կռվում են բանակները, բայց հաղթում, կամ պարտվում են պետությունները». ես կասեի ոչ թե պետությունները, այլև ժողովուրդները, անկախ նրանից թե որտեղ են բնակվում, կամ ինչ պայմաններում:

« Զափվում են, բախվում բանակները, բայց հաղթում կամ պարտվում են ազգերը, ցեղերը »: Գարեգին Նժդեհ Ավարայրի ճակատամարտից սկսած հայ հոգևորականները միամիտ ժողովրդին կերակրեցին այդպես ասած « Բարոյական հաղթանակի » լեգենդներով, դրա համար էլ Նիկոլ փաշինյանը իրեն թույլ է տալիս Ազգային ժողովի ամբիոնից հայտարարել. « Եկեք պայմանավորվենք՝ ինչ էլ լինի, մենք մեզ երբեք պարտ-

ված չենք ճանաչի: Չկա պարտություն, քանի դեռ ինքդ քեզ պարտված չես ճանաչել... Եթե բոլորին թվա, որ մենք պարտվել ենք, մենք մեզ պարտված չենք համարի.»։ Գեներալները ու զինվորականները իրենց հերթին իրենց պարտված չեն համարում, մտավորականները իրենց հերթին... Ի՞նչ է նշանակում, 44- օրվա սպանդը կազմակերպեցին, 5.000 ավելի մարդու դրեցին գերեզման, 10 հազարին էլ հաշմանդամ սարքեցին, որպեսզի իրենց բարոյական հաղթանակը նշեն, այն էլ գունագեղ հրավառությամբ: Ինչ եք կարծում, սա զավեշտ չէ՞, երբ ոչ մի զինվորական չհամարձակվեց ասել դավաճանի անունը, դավաճան՝ գերագույն գլխավոր հրամանատարին արդարացրեցին, սրբացրեցին ու իրեն երկրպագեցին: Նույնը գեներալներին ու սպաներին... Ինչու՞ գեթ մեկ արժանապատվություն ունեցող հայ սպա համարձակություն չունեցավ գոնե հավասարվեր Նաիր Հունանյանին, վախեցան դավաճանի ուղղությամբ մի քոստո կոշիկ նետել, ինչպես արեցին Իրաքում արաբ լրագրողը: (2008 Դեկտեմբերի 14. Իրաքում՝ Բաղդադում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ իրաքցի լրագրող Մուրադհար ալ-Չաիդին կոշիկով հարվածել է ԱՄՆ-ում, այն ժամանակվա նախագահ՝ Ջորջ Բուշին ու բացականչել. « Դա հեռու համբույր է Իրաքի ժողովրդից, շո՛ւն »:) Չէ որ հայ զինվորականը, կամ սպան ուսադիրներ կրելուց առաջ պատվավոր զինվորական երդում են տալիս պաշտպանելու հայրենիքի ու ժողովրդի շահերը: Ի՞նչ է ստացվում Հայաստանում բոլոր երդումները կեղծ են, հայրենիքի հանդեպ ծառայությունը նույնպես, մի՞թե հայրենիքը չարժե Նիկոլ Փաշինյանի քմահաճույքներին, ստացվում է, որ ո՛չ... Երեսուն տարի անկախ Հայաստանում սպականեցին ոչ միայն արժեքները, այլև 70 տարիների Սովետական Հայաստանի բոլոր ձեռքբերումները, բարոյականությունը, կրթությունը, ամենակարևորը՝ գիտությունն ու մանկավարժությունը: Մանկավարժներին դարձրեցին կուսակցական ոհմակի անբաժան մասը... « Տգիտությունը ուժ է» կարգախոսով: Հայության բարոյական հաղթանակի բանաձևը օգտագործեցին ամեն ուր, և ամեն տեղ՝ ընտանեկան վեճերի, ռազմաքաղաքական պարտությունների, անգամ կապիտուլացիայի ու ցեղասպանության դեպքում: Ինչ-որ ձեռքբերումներից ենք խոսում ու հաջողություններից: Տեղին է այստեղ նշեմ իմ ազատամարտիկ ընկերոջ իմաստուն խոսքերը՝ « Արցախյան պատերազմով անցնելով տեսա շատ դավաճանություններ

ու կեղծիք, սակայն երբեք չեմ զղջացել, որ իմ երիտասարդ տարիները անց եմ կացրել պատերազմի դաժան պայմաններում՝ ցրտի ու սովի, մահվան ու կյանքի դեմ կռիվ տալով, սակայն հիմա զղջում եմ, որ պատերազմի արհավիրքներով եմ անցել, ափսոսում եմ իմ կորցրածը վեց տարիները, իմ կորցրած ընկերներին»։ Ի՞նչ եք կարծում, ինչու՞ պետք է Արցախյան պատերազմով անցած հերոսական մարդը է զղջար։ Պատասխանը նրա ավելի ցնցող էր, կարծում եմ շատերի համար անհասկանալի. « Երբեք չեմ զղջացել, որ մասնակցել եմ Արցախյան պատերազմին, սակայն երբ հիմա կորցրեցինք այն ձեռքբերումները որոնք ունեցել էինք մեր զոհված ընկերների արյան հաշվին, մեր առողջության ու ընտանիքների զոհաբերության հաշվին, ամեն ինչ զրոյացվեց, ամեն ինչ ոտնատակ տվեցինք և նախորդ պատերազմի զոհերի հիշատակը և նրանց անձնագոհությունը ու մայր հայրենիքի ազատագրված տարածքները։ Այս ամենից հետո, երբ լկտիաբար ու ցինիկ հայտարարում են, որ ԱՆԻՄԱՍՏ զոհեր են եղել... Ինչ է, այդքանից հետո չե՞մ ափսոսա այն անիմաստ տարիները, որի համար կյանքս չխնայեցի։ Ժողովրդի անտարբերության ազատամարտիկների հետ քիչ թե շատ ներեցինք, բայց նրանց անձնագոհությունը ուրանալը աններելի է »։ Տեսնո՞ւմ եք ինչ մեծ աղետի առաջ եկանք ու կանգնեցինք, ժամանակին էլ զորավար Անդրանիկը ու Գարեգին Նժդեհը այդպես թքեցին ու հեռացան հայրենիքից։ Կարևորը, որ ԲՊ- ական պատգամավորներն ու փնթի աստղերը իրենց լավ զգան։ Հայոց ցեղասպանության ժամանակ 1915-ին, երբ թուրքերը գուղ առ գյուղ հայերին կոտորում էին, հայերից շատերը վստահ էին, որ թուրքերը հայերի դիմադրությունից են կատաղած բնաջնջում հայերին, պետք է հնազանդվել ու ենթարկվել թուրքին։ Դրա համար հայության մեծ մասը հլու հնազանդ քայլեց դեպի Դեր Չոր, որովհետև գյուղապետերի ու քահանաների ասելով այնտեղ երկնքից մանանա է թափվելու։ Հայերը ամեն պատճառ կգտնեն հայի վախկոտությունը քողարկելու, կամ արդարացնելու համար։ Համացանցում շատերը մեղադրում են, թե քրիստոնեությունն է մեղավոր, որ դարձանք այսպիսին, հեթանոսները իրենց հերթին են պատճառներ գտնում, ոմանք էլ օտարամուրհիմն ու ստրկամիտներին։ Լավ, իսկ ե՞րբ է հայ ժողովուրդը հասկանալու, թե իր ոխերիմ թշնամին՝ վախկոտությունն է, սուտն ու կեղծիքը, որ հայի թշնամին ծուլությունն է ու թամաշավոր անգործություն-

նը, դատարկամտությունը ու մեծամտությունը, տգիտությունն ու մորթապաշտությունը: Բացեք Մովսես Խորենացու գրածները, ու հերթով կարդացեք հայ տղամարդու կերպարը 5- ըր դարից սկսած առ այսօր ոչինչ չի փոխվել, հայ հոգևորականը, զինվորն ու ուսուցիչը, աշխարհականը ու դատավորը: Գուցե այսքանից հետո հասկանանք, որտեղից է գալիս այս ամենը...

Վերջերս նկատում եմ ՖԲ-ի ամենատարածված կարգախոսներից մեկը դարձել է այս հիմնարկությունը. «Մինչևեւ այս սոց. ցանցերը չփակվեն, մենք հայթանակի չենք հասնի »: Սա ՀՄՅՈՒ հերթական անգրագիտություններից մեկն է, որ իր բոլոր անհաջողությունները կասում է ինտեռնետի կամ սոցիալական ցանցերի հետ: Ռուսներից ու ջիռլաններից հետո կարելի է մեղադրել սոցիալական ցանցերին կամ ինտեռնետին: Լավ մարդ ինչքա՞ն անգրագետ պետք է լինի, որ այսպիսի բան ասի: Որպես հոգեբան հազարից ավելի աշխատություններ եմ գրել ՀՄՅՈՒ անհաջողությունների, տգիտության ու հոգեբանության մասին, չնայած ամեն անգամ ավելի ու նորովի եմ բացահայտում հայության տգիտությունը ու ողորմելիությունը: Միայն ասեմ, որ ինտերնետը ու սոցիալական ցանցերը շատ օգնեցին հասկանալ ՀՄՅՈՒ իսկական դիմագիրը, հայու ով լինելը, հայու պատկերը: Չնայած ժամանակին Մովսես Խորենացին էր բացահայտել ՀՄՅՈՒ գենի ու տեսակի մասին, բայց ով էր Խորենացու գրածը կարդալու, եթե չլիներ համացանցը: Համացանցի շնորհիվ իմացանք թե հայությունը ինչի է ընդունակ, պատվաբոգերի ու անատամ բաջիների գոյության մասին մամուլը լռում էր, փառք Աստծո ինտերնետի շնորհիվ բացահայտվեց, լատինատառ հայության ողորմելի վիճակը տեսնելիս օբնոկրասանիկում ուղղակի փառավորվում ես նման տգիտության աստիճանից, փնթի կայքերը, կիսաբաց լուսամուտները, ոջլոտ հերոսներն ու քյառթու ռաբիզները: Ֆեյսբուքյան մերտողուհիներ, լիլի մորտոներ ու քաղթական պոռնիկներ: Հավատացեք ինտերնետը ու սոցիալական ցանցերը դա ժողովրդների հոգու հայելին է, այնտեղ ամեն ազգ կարող է տեսնել իր պատկերը, իր հոգին, իր տեսակը: Հայ մամուլի մասին ժամանակին գրել էր Թումանյանը, Բաֆֆին ու Շփեհերը, գրել էին հայի փչացածության մասին, հայի անբարոյականության ու սրբապղծության մասին, գրել էին հայ փնթիների ու ազգադավների մասին: Եթե չլիներ ինտեռնետը, հազիվ թե իմանաինք հայերի իննությունը, իրենց մշակույթը, իրենց նախընտրությունները ու իրենց հերոսներին:

Լավ ինչքա՞ն պետք է ողորմելի լինենք, որպեսզի չնկատենք մեր թշնամիներին, սասնա ծռեր-Բրեռականները մեղադրում են ռուսներին, դաշնակները՝ քայլականներին, քայլականները՝ նախկիններին ու այդպես անվերջանալի մեղադրանքներ ու փնտրտուք, բայց ո՛չ պատիժ, ո՛չ ինքնադատաստան, ո՛չ հաշվեհարդար կամ արդարադատություն: Աստուծո տված բանականությունը մերժել ենք, ու Շանթ Հարությունյանի նման քաղաքական պոպուլիստների խոսքը դարձրել ապրելաձև: Երբ հայկական հեռուստասերյալներում իրար են բռնաբարում ու հայհոյում, երբ լատինատառ ամեն փնթի իրեն աստղային բարձրունքների տեր է համարում, նշանակում է այդ ազգը ինքնառնչացման ճանապարհով է գնում: Գլամուրոտ դեմքեր, ճղճիմ քաղաքական ոչնչություններ ու ազգային կոսմոպոլիտ փրկիչներ, հրեշտականման ոստիկաններից ու դատավորներից էլ չեն խոսում: Քանի որ խոսեցինք ոստիկաններից, տեղին է հիշել, թե դրանք ինչից են առաջացել: Նախ նշենք, որ ոստիկան չեն դառնում, այլ ոստիկան ծնվում են: Այն, որ ոստիկանին ոչ միայն իշխանության կողմից տված գումարն ու պարզևավճարն է ուժ ու անպատժելիություն ապահովվում, այլ իր գրպանի կարմիր վկայականը, բավական է նրան գրկել վկայականից, նրանք իսկույն դառնում են փիղրած հավ: Չնայած նրանք հենց այդ հավային վիճակով էլ սաստկում են, առանց մեղքի ու խղճի զգացումով: Ժամանակին ոստիկանների մասին մի անեկդոտ կար, որպեսզի պարզ լինի շեղվենք թեմայից... Վարարած գետը գերաններ է բերում, ընկերներից մեկը ասում է, - Ինչ լավ կլիներ, որ այս գերանների փոխարեն դազադներով ոստիկաններ լինեին, ընկերն էլ թե, այդպես մի ասա, որովհետև լավ ոստիկաններ էլ կան, նա էլ թե. - լավ ոստիկանը լավ դազադով գնան, վատն էլ՝ վատով: Երբ խոսք է գնում, թե ոստիկաններն են մեղավոր, որ Նիկոլ բռնակալ է, Սերժը բռնակալ է, կամ ինչ-որ մեկի ռեժիմի պահապանները նրանք են... Իսկ ո՞վ է մեղավոր, որ ձեր ասած ոստիկանը անպատիժ է, չեն վախենում մեռնելուց, բայց վախենում են ոստիկանին պատժելուց... Երբ հանցանքը արժանի պատժի չի արժանանում, այն դեպքում վրեժն է իր գործը անում: Սակայն այս տարբերակը հայ ժողովրդի համար չէ, հայի վախի աստիճանը այնքան մեծ է, որ վաղուց մոռացել են պատ ժելու, արժանապատվության ու արդարադատության իրավունքի մասին: Սակայն բավական է քրեական հեղինակություն դարձած հարևանի

մատի մեկ շարժումը, որպեսզի իր հարազատի փորը թափի: Այնպես չէ, որ հայ քրեական հեղինակությունները արժանապատվություն ու ինքնասիրություն ունեն, որ նրանք թասիբի ու շրջապատի համար մեռնում են, նրանք էլ հայ ժողովրդի վախկոտ տեսակին են պատկանում, իրենց վախի գերին են: Գենետիկական վախկոտության գոհը... « Ամեն վախկոտ կենսաբանորեն անբարոյական է. Բարոյական տկարության ծնունդ է ամեն կարգի ստորություն »: Գարեգին Նժդեհ. Յույց տվեք մեկ հեղինակություն, որը գլուխ չի խոնհարել իրենից ուժեղ ու հեղինակավոր հանցագործի առջև, նրանք կարծում են, որ այսօր իրենք են գլուխ խոնհարում, իսկ վաղն էլ իրենց առջև կխոնհարվեն: Սակայն, ինչպես ասում է քրեական աշխարհի չգրված օրենքը. « Բավական է մեկ անգամ կգես, ամբողջ կյանքդ կգած կապրես »: Ցավոք սրտի այդ կարգախոսը դարձավ հայկական բանակի կարգախոսներից մեկը, դրա համար հայերը չկարողացան նորմալ բանակ ունենալ, կամ էլ պետություն: Մի կարծեք թե 90-ականներին, կամ դրանից հետո հայկական բանակը եղել է տարածաշրջանի հզոր բանակներից մեկը, դա հերթական կեղծիքներից մեկն է: Նայեք այս օրվա գեներալներին, ու կհամոզվեք, որ նախկինում էլ դրանք նույնն են եղել, նույն անգրագետ, հանցագործ ու զինվորասպան գեներալները, նույն Վազգեն Սարգսյանի նշանակած ու զինակից ռեմակը: Մենք չկարողացանք հասկանալ թե բանակը ինչպես պետք է լինի, կամ պետությունը: Երկրապահ կամավորական միության անդամները դարձան սեփական վախի գերին, ոչ միայն Մանվելի հարեմի անդամը, այն Նազիկ Ամիրջանի խարդավանքների մասնակիցը: Վախը՝ դա սարսափելի գործիք է բռնակալի ձեռքին. « **Անհնար է վախի, ատելության ու դաժանության վրա քաղաքակրթություն հիմնել: Այն չի հարատևի** »: **Ջորջ Օրուել.**

44-օրյա պատերազմից հետո, երբ հայ սպաները լռում էին, չխոսելով պատերազմից, կամ զոհերից ու կորուստներից, նույնիսկ վախենում էին Շուշիի ու Հադրութի թեման շոշափել, ի՞նչ էք կարծում գուցե ռուսներն ու ջիուդներն են մեղավոր այդ վախերի համար: Լավ, հայ սպաները լռեցին, երկրապահները նույնպես, հոգևորականները, կամ սփյուռքը, ինչու՞ լռեց մտավորականությունը... Դուք տեսա՞ք արդյոք սփյուռքահայ մի համայնք, կամ կազմակերպություն, որը գոնե դատարկ խոսքով մեղադրեր վարչապետ Նիկոլ փաշինյանին, չէ, որ երկրի ու բանակի գերագ-

ույն գլխավոր հրամանատարը ինքն էր, ինքն էր հոխորտում. « նստե՛ք տեղներդ »: Գիտեք Ջորջ Օրուելին ասում էր. « Կարևորը ապրելը չէ, այլ ապրելը որպես մարդ »: Հայ զինվորը, հայկական բանակը ու հայ մարդը պարտվեց այս պատերազմում, կարիք չկա պարտությունը բաժանել խըմբերի մեջ, որպեսզի խուսափենք ճշմարտությունից: Պարտվել ենք ազգովի, պարտվել ենք ժողովրդով: Իսկ թե արդյոք հասկացե՞լ ենք դա, չեն կարծում թե հասկացել ենք: Հավատացեք, հայի համար միշտ պատճառներ կգտնվեն իրենց հանցավոր անգործությունը արդարացնելու համար: Մեղավորներին պատժելու հարցը դատարկաբանության ու պոպուլիզմի շարքից է: « Փնտրեք հայի սուրն այնտեղ որտեղ հայի արյուն է թափվել: Հայրենիքի թշնամուն սպանելը մեղք չէ, թշնամուն չսպանելն է մեղք »: Բաֆֆի Ես ժամանակին գրել էի, որ Նաիր Հունանյանը դա վերջին հայ վրիժառուն էր, պատճառները գրել եմ անցյալում: Հիմա շատ են սիրում ասել, թե հայերը կարող են այս ամեն դժվարությունները հաղթահարել, որ միշտ էլ փյունիկի պես մոխիրներից վեր ենք հառել, որ սա հերթական փորձությունն է մեր ժողովրդի գլխին: Որ հայը նորից կարող է հզորանալ ու ամուր բանակ կառուցել, հաղթել թշնամուն ու բլա՛ բլա՛ բլա՛... Իսկ ի՞նչ էր կարծում, արժե՞ արդյոք, որ հայությունը նորից գրկանքների գնով բանակ կառուցի, անցնի նույն տառապանքներով, ցուրտ ու մութ տարիներով... Ինչպես կասեր Թոխմախի Մհերը. «Ավելի լավ է մնալ Ռուսաստանի լծի տակ » կամ էլ Լևոն Շիրինյանի ասածը. « Հայը ավելի լավ է թուրքի շուն լինի, քան թե օտար պետության գործակալ »: Խնդրեմ, տեսնում եք հայ ժողովրդի մտքի տիտաններին: Հարցերի կարևորագույն հարցը մնում է, արժե՞ արդյոք պետություն, կամ երկիր ունենալ, եթե ժողովուրդի համար նախընտրելի է Դեր-Չորը, երբ նախընտրելի է օտար-ամայի գաղթականի ճանապարհը, արժե՞ նորից երկիր ունենալ, որտեղ Շմայսները, Սանվելները ու Նիկոլները պետք է վայելեն ու զվարճանան... Տարբերությունը ո՞րն է, թե քեզ այսօր հայ ոստիկանն է սպանում, իսկ վաղը թուրքի ասկյարը: Գուցե՞ բազմազանությունն է, որ մեզ գայթակգում է: Թուրքի ու հայ ոստիկանի տարբերությունը շատ չնչին է, անգամ աննկատելի, այնպես, որ մորթվելու համար պետք չի նորից վերակենդանանալ ու նորից մորթվել: Հայությունը միշտ իր փրկությունը տեսել է օտարների մեջ՝ հոներ, պարթևներ, հազարացիներ, թուրքեր կամ ռուսներ, հիմա էլ

եվրոպամետներ ու ռուսամետներ... Մենք երբեք չենք նայել հայելու մեջ. թե մենք արժանի՝ ենք օտար ժողովուրդների բարեհոգությանը, եթե ոչ այսօր, ապա վաղը հաստատ ապերախտաբար ուրանալու ենք նրանց մեծահոգությունը, կամ բարեկամությունը: « Ո՛վ կարող է օգնել մի ժողովրդի, որը ինքն իր ձեռքով է սրում թշնամու սուրը »: Րաֆֆի. Ապերախտ հայության մասին գրել են, երբ Խորհրդային Միությունը հայերին շնորհ արեց այն, ինչ երբեք չենք ունեցել, անգամ չենք էլ երագել, ու հիմա ապերախտաբար նրանց ենք մերժում: Հայաստանի անկախության իր 30 տարիներին արժեքավոր ոչինչ չստեղծեցին անգամ իրենց երկրի ու ժողովրդի համար, չհաշված գունազեղ տոնակատարությունը նվիրված զոհերի հիշատակին: Այդ պատճառով էլ հայության համար Նիկոլը կմնա ավելի նախընտրելի զավակ, քան իրենց հարագատ որդիները: «Էրեխիս որ կորցրեցի, չուզեցի Ձեզ էլ կորցնեմ »: Սովորաբար երկիր և պետություն ունենալու համար միայն մտավոր գիտելիքները քիչ են, կամ էլ երկարաժամկետ ծրագրերը: Երկիր կառուցելու համար պետք է հզոր մարդիկ, գաղափարներով հարուստ ու ազնիվ առաջնորդներ ունենալ, արի ու անկոտրուն հայորդիներ: Իսկ ինչպես գիտեք քաղաքական դաշտում չկան այդպիսի անհատականություններ, իհարկե չհաշված ինձ ծանոթ մարդկանց: Պետություն կառուցելու համար պետք է ճշմարտություն, կեղծիքի և ստի բացահայտում, կեղծ կուռքերի ու առաքյալների մերժում: Ինչպես պատվիրել էր Գարեգին Նժդեհը. « Քրքրի՛ր ազգերի պատմությունը և երես առ երես պիտ հանդիպես հետևյալ ճշմարտության. ժողովուրդները նախ և առաջ իրենց ամենաընտիր որդիների արյունով են սրբում իրենց երկիրը, և ապա այդ սրբացած հողի վրա բարձրացնում շենքն իրենց անկախության: Այո՛, նախ հերոսների և նահատակների գերեզմանատուն, ապա՝ ազատ և երջանիկ Հայրենիք: Այլ կերպ չի ստեղծվել և ոչ մի հայրենիք, այլ կերպ չի ստեղծվելու և յոթնիցս սրբազան քո՛ Հայրենիքը »: Պետք է համարձակություն ունենալ առերեսվելու սեփական պատմությանը, քաղաքական, բարոյական գնահատականներ տալ ու դատապարտել հանցագործությունը ոճրագործներին, չխուսափել պատժելուց նրանց: « **Անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար**»: Հովհաննես Թումանյան Գլխավոր հարցադրումը կրկնելով կավարտենք այս

երկար բացատրությունը: Ո՞վ է ՀԱՅԻ ՈՒՏԵՐԻՄ ԹՇՆԱՄՄԻՆ...

« Ծանհիր թշնամուդ. Ծանաչիր թշնամուդ: Այդ երկու բառն էլ գրիր հոգուդ մեջ, որ չմոռանաս երբեք »: Գարեգին Նժդեհ «Հայի ռիսերիմ թշնամին օտարը չէ, այլ հայը »: Բաֆֆի

Հայի ռիսերիմ թշնամին հայն է՝ վախկոտ, մորթապաշտ տգետ, ազգադավ թամաշավոր ու թայֆայասեր:

Հաջորդում կներկայացնեմ հայ ժողովրդի մեծերի խոսքերը, որոնք անտեսեցինք:

Գեհեհի Առաքել 17.02.2022

Հայերը գեղեցիկ մեռնել գիտեն, հետո էլ զարմանում են թե ինչու ենք այսպես... Այնպես կարելի է հասկանալ, որ այդպես կոչված Հանդիսավար, թանադաներին կարելի է դասել օսմանլթի թուրքերի դասին, սպացույցները կան, կարող եք տեսնել իրենց ՖԲ էջերին:

ԻՆՉ ԱՆՈՒՄ ԵՆՔ՝ ԵՐԵԽԵՔԻ ՀԱՄԱՐ ԵՆՔ ԱՆՈՒՄ

«Ինքնուրոյնութիւնից զուրկ ժողովուրդները չեն կարող պետութիւն ստեղծել »: Գարեգին Նժդեհ

«Ինչ անում ենք՝ երեխեքի համար ենք անում»: Այս հայերի ամենահայտնի խոսքերից մեկն է, որի պատասխանը երբեք չենք կարողացել տալ: Չեմ կրկնվի, եթե ասեմ ,որ սա « Հայու »՝ այսինքն Հայությանյան հերթական դատարկամտությունն է, հայության ամենանողկալի արտահայտությունն է, որովհետև մեր ժողովուրդը երբեք չի իմացել հայրենիքի ու իր գավակների գինը, այլապես արժանվույնս կգնահատեր այս երկու կարևոր արժեքները: Հայերի հաջորդ խոսքը. «Գնա մեռիր՝ արի սիրեմ», այս բառակապակցությունը հայության սիրելի խոսքերի շարքում է: Վստահ եմ, հայության մոտ մեծ հիստերիա կառաջացնի իմ այս ակնարկը, սակայն չասելն էլ կլինի հանցագործություն: Facebook-յան որոշ ընկերներ անկեղծանում են ասելով, թե ինչու՞ եմ չարացած կամ միայն վատը գրում մեր ազգի մասին: Կամ էլ հայ ժողովուրդը ի՞նչ մեղք ունի, երբ ազգի մեջ այդ-

քան տակա՛նք կա: Ի՞նչ էք կարծում, իմ մեղքո՞վ է, որ հայության մեջ տակա՛նքը շատ է, իմ մեղքո՞վ է դավաճանաբուծությունը զարգացած Հայաստանում, սփյուռքում, հոգևոր կյանքում ու առօրյայում, համացանցում, մեր կառավարությունում ու մշակույթում: Անգամ Ֆեյսբուքում և մյուս սոցիալական ցանցերում են վիստում: Կույր ձևանալը հերոսություն է, իսկ ճշմարտությունը ասելը՝ չարախոսություն: Չգիտես ինչու սիրում ենք ռուսներին մեղադրել ո՛չ միայն մեր անգործության, այլև դժբախտությունների մեջ: Տեղին է հիշել Ռուսաստանի քաղաքացի Վիտալի Կալունին, ով 2004 թվականի փետրվարի 24-ին Շվեյցարիա Ցյուրիխ քաղաքում սպանեց ավիոդիսպետչեր՝ Պիտեր Նիլսենին: Վիտալի Կալունին 15 տարի պահանջվեց, որպեսզի իր գոհված ընտանիքի համար վրեժ լուծի ավիոդիսպետչերից: Պետք է խոստովանեմ, որ շատ զարմացա: Այս նյութը գրելուց առաջ հայկական Վիքիպեդիայում գտա Վիտալի Կալունի մասին տեղեկատվություն: Նախ ցանկալի է, որ կարդաք նրա մասին, իսկ շարունակությունը կգտնեք հաջորդում: « Վիտալի Կոնստանտինովիչ Կալուն (օտերեն՝ Калоты Къостайы фырт Витали, ծնվել է՝ հունվարի 15, 1956 Օրջոնիկիձե, Հյուսիս-Օսեթական ԻԽՍՀ, ՌԻՖՍՍՀ, ԽՍՀՄ), խորհրդային և ռուսական ճարտարապետ-շինարար, Հյուսիսային Օսիայի շինարարության և ճարտարապետության նախկին նախարար: Ինչպես համոզվեցիք՝ հայրը կարողացավ արժանի պատիժ տալ անպատիժ հանցագործին: Սա ռուսների և ինչու՞ չէ, նաև համամարդկային չափանիշներից ելնելով: Հիմա հայության մասին, երբ 44 օրյա պատերազ մում երկրի գերագույն գլխավոր Ճիվաղ՝ Նիկոլ Փաշինյանը հազարավոր հայորդիների տարավ ու պատերազմում զոհեց, ոչ մի հայ ծնող բացի ամոթանքից ոչինչ չասաց: Պատկերացնո՞ւ՞մ է հինգ հազարից ավելի զոհված զինվորի ծնող միայն թամաշավոր սգացողի դերում էր, դրան գումարենք հաշմանդամ 10 հազարից ավելի զինվորների ծնողներին ու զերի և անհայտ կորած զինվորների ծնողները: Հիմա այդ թվերը բազմապատկեք իրար, որովհետև շատերի համար Նիկոլը փրկիչ է, շատերի համար կապիտուլյանտ ու հողատու, շատերի համար սիրելի վարչապետ, իսկ շատերի համար էլ՝ երկնային առաքել ու Հիսուս Քրիստոս: Հայերից և ոչ մեկ չփորձեց Փաշինյանին մեղադրել կամ մեղադրանք ներկայացնել, ո՛չ մեկ չփորձեց դատավճիռ կայացնել, ո՛չ մեկ ինքնադատաստանի փորձ չարեց, վրեժ ու ար-

յան փոխհատուցում... Հիմա ուզում եք ասել, թե մենք ա՛զգ ենք, ժողովուրդ կամ հասարակություն: Մեզ մոտ անգամ բացակայում է հասարակական միտքը, բանականությունը: Շատերը տեղյակ չեն, որ 1992 թվականին Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը Սովետաշենի գնդի մեկ շաբաթական նորակոչիկ զինվորներին, որոնք անգամ երդմնակալություն չէին տվել ու չգիտեին հրազենի գործածության հասարակ կանոնները, գիշերային տազնապով ուղարկվում են Լաչինի միջանցք՝ մարտական առաջադրանք կատարելու, արդյունքը եղավ 100-ից ավելի զոհերը, արդյունքում անգամ քրեական գործ չբացվեց, ոչ էլ հետաքննություն ու մեղավորներ փնտրեցին: Պատասխանատվությունը իրար վրա գցելով գործը փակեցին գնաց: Չորամասի հրամանատար գնդապետ՝ Աշոտ Պետրոսյանը անգամ զարմացել էր, որ իրեն ինչու՞ գեներալի կոչում չեն տվել. այդքան զինվոր զոհելու համար: Չնայած հետագայում Աշոտ Պետրոսյանին ո՛չ միայն գեներալ դարձրեցին, այլև պաշտոններ ու անձեռնամխելիություն, բնակարան ու մեքենա: Այն, որ Վազգեն Սարգսյանը ու Աշոտ Պետրոսյանը մնացին անպատիժ այդ զոհված զինվորների անտարբերության շնորհիվ, փաստը անհերքելի է: Անգամ Նաիրի Հունանյանի ինքնադատաստանից հետո էլ, Վազգենին ու Աշոտ Պետրոսյանին հերոսացրեցին ինչպես հարկն է: Սա՛ ենք, հիմա մեղավորը այստեղ ո՞վ է, ե՛ս, թե՛ անտարբեր, վախկոտ, ողորմելի ու ստրկամիտ ծնողները, որոնց երեխաների համար իմ սիրտը ավելի է ցավում, քան իրենց: Գերի զինծառայողների ծնողները միայն տեսախցիկների առջև են ոգևորվում, ռուս գեներալներն են մեր գերիներով ավելի շատ են մտահոգված, քան հայ անգլուխ գեներալներն ու գերիների ծնողները: Ի՞նչ եք կարծում, այդ զոհված զինվորների հոգին խաղաղվելու՞ է, քանի դեռ իրենց ծնողները կրավորական անտարբերությամբ թամաշա են անում, փողոց են փակում, պառվաբոզի լաց դնում: Վստա՛հ եմ, այդ զինվորները անգամ երկրներից նզովվելու են ո՛չ միայն իրենց գերեզման հասցրած Նիկոլ Փաշինյանին, այլև իրենց ծնողներին... Հարգանքը միայն գերեզմանին մարմարե սալիկ դնելը չէ: Թարմ ծաղիկներով ու մոմավառությամբ չեք կարող զոհված խռովյալի հոգին խաղաղեցնել, այստեղ միայն արյուն է պետք ու շատ արյուն, անկախ դա կլինի գեներալի, թե՛ դատախազի՛, վարչապետի՛, թե՛ իր թուլեքի, միևնույն է, աստվածաշնչի մեջ ասում է. « Ակն ընդ

ական, ատամն ընդ ատաման »: Հիշում եմ Վարդան Ղուկասյանն էր ամ-
ոթանք տալիս գերի զինվորների ծնողներին, որոնք գումարի դիմաց նախ-
ընտրում են իրենց զավակների գերությունը, քան նիկոլի հրաժարականը:
Սրբապղծությունը հենց այստեղ է, հետո էլ համարձակություն ենք ունե-
նում խոսել Թեիլերյանից ու ԱՍԱԼ-այից: Ինչպես կասեր իմ բարեկամ
գրող Վարդգես Օվանը. « Ստրուկների մէջ կարող է Սպարտակ ծնուել,
ստրկամիտների մէջ՝ երբեք »: Հիմա ուղղակի որպես հոգեբան ցանկան-
ում եմ հարց տալ այդ սպանված զինվորների ծնողներին, գերի ընկած
զինվորների, հաշմանդամ դարձած զինվորների ծնողներին. «Այն ինչ ան-
ում եք՝ ձեր երեխեքի համա՛ր եք անում, թե ուղղակի...»: Այստեղ են աս-
ում, հիմա այդ գոհված զինվորների ծնողները պետք է. « ռուս Վիտալի
Կալուևի ոտքերը լվան ու ջուրը խմեն »:

Գեհենի Առաքել 30.12.2021

**ՄԵՆՔ ՔԻՉ ԵՆՔ, ՍԱԿԱՅՆ ՄԵՉ ՀԱՅ ԵՆ ԱՍՈՒՄ... ԱԶԳԱՅԻՆ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

*« Օտարը չի հարզի և սիրի մի ժողովրդի,
որը ինքնուրույն պատկեր և բովանդակություն չունի »:
Հովհաննես Թումանյան*

Ազգային հոգեբանության ու խառնվածքի մասին շատ եմ գրել, անգամ
գիտական մի քանի աշխատություններ եմ հրապարակել այդ թեմայով:
Կցանկանայի քիչ լրացում անել, վերջին քաղաքական դաշտում հայտնվ-
ած մարդկանց մասին, որոնք, առհասարակ, վտանգավոր երևույթներ են
հասարակական ու քաղաքական հարթակում: Սկսենք այդպես կոչված
անկախ պատգամավոր Արման Բաբաջանյանի հայտարարությունից, թե
նա հանդիպել է հոկտեմբերի 27-ի գործով դատապարտված Նաիրի Հուն-
անյանի հետ: Չեմ կարծում, թե դա ճիշտ է, որովհետև բազմիցս անգամ
իմ իրավապաշտպան ընկերները փորձել են ամեն գնով հանդիպել Նաիրի
Հունանյանի հետ, և դա նրանց չի հաջողվել, անգամ նամակագրական
հաղորդակցությունը չի ստացվել, այնպես որ կարծում եմ, դա սուտ է,
անգամ ձայնագրություն կամ լուսանկար չկա այդ հանդիպումից: Իսկ թե
ի՞նչ նպատակով է արված այդ ամենը, կարծում եմ, հասկանալի է: Հիմա

սկսենք, թե ինչու՞ են Նաիրի Հունանյանին համարում ոճրագործ, պարագլուխ և այլն: Փորձենք բառերի ու մտքերի վերլուծությունով որոշել հոգեբանական ներգործությունը: Մինչ այդ փորձենք հասկանալ, թե ո՞վ է այդպես կոչված՝ անկախ պատգամավոր Արման Բաբաջանյանը, նա հասարակ շարքային շառլատան է ու դասավիք, նրա մասին շատերը կարող են վկայել, որ մանկամիտ, փափկասուն ու նազանի կերպար է, իսկ թե ինչպես ձեռք բերեց ԱԺ-ի պատգամավորական մանդատը, դրա մասին չգիտեն շատերը: Այնպես, որ հիմա իրեն անկախ համարվող կախյալ խրժիկը ոչ այլ է, քան վնասակար մի երևույթ՝ հայ ժողովրդի բարձրագույն մարմնում: Չնայած նրա մնացած գործընկերները նրանից պակաս չեն, օրինակ Էդմոն Մարուքյանը, որը հայտարարել էր, որ « Նաիրի Հունանյանն ինձ համար դահիճ է »: Հիմա անցենք բառերի, իմաստների ու հայկական իրականությանը: Նախ մի փոքրիկ օրինակ պարզեցնելու համար ասելիքս: Ֆեյսբուքյան ընկերներից մեկը, որը ԵԿՄ-ի անդամ է, Մանվել Գրիգորյանի ձերբակալությունից հետո ինձ նամակ էր գրել, կներեք չեմ գրում նրա անունը, որովհետև վստահ եմ նա նույնպես կարդալու է այս գրառումը, ներողամտություն եմ հայցում նրանից՝ այս ամենը ներկայացնելու համար: Սակայն վստահ եմ, որ այս գրածս կարող է օգտակար լինել և իրեն: Այդպիսով ԵԿՄ վարչության անդամներից մեկը ինձ մի նամակ էր գրել. « Որ վերջապես պատռվեց Մանվել Գրիգորյանի դիմակը, որովհետև նա հանցագործ է ու մարդասպան »: Իմ հարցին, թե նա նոր իմացա՞վ այդ մասին, թե վաղուց գիտեր... Նա պատասխանեց, որ ինքը միշտ էլ իմացել է, թե ով է Մանվելը, որովհետև ինքը եղել է Մանվելի կամավորական բրիգադայի կազմում, տեսել է Մանվելի հանցանքները ու ոճիրները պատերազմի ժամանակ, բայց լռել է: Դա արել է ստիպված, որովհետև Մանվելը այդ ժամանակ հերոս էր, նրան չէին կարող ինչ-որ բանում մեղադրել, որովհետև նա հզոր էր ու նման բաներ: Հետո ՖԲ-ի էջում տեսա նրա լուսանկարները Մանվելի, Նազիկի ու մնացած ԵԿՄ վարչության անդամների հետ միասին: Պարզվում է՝ ինքը իմանալով այդ հանցագործներին սիրով ենթարկվել է նրանց քմահաճույքներին, նրանց հետ կերել-խմել, է կիսել է իր ուրախությունը և լռությամբ տարել նրանց լկտիությունը՝ նվաստացումն ու ծաղրանքը: Բայց և հպարտությամբ ու սիրով սելֆի է արել ու լուսանկարվել Արցախի հերոս՝ Մանվել Գրիգորյանի ֆոնին: Չնայած

մի ամբողջ ազգ է եղել այդ երկրապահի պես, սելֆիներ են արել, լուսանկարվել, փառաբանել, գրքեր ու ձոներ գրել, ֆիլմեր նկարահանել, դրան գումարած ֆուտբոլային ու Դոքենդոյի ամենամյա մրցաշարեր անցկացրել մեծ գորավարի պատվին, հարսանիքների ու կնունքների քավոր դարձրել: Ցավալին այն է, որ շատերը իմացել են, թե ով է նա և ինչ քրեական անցյալ ու պատմություն ունի, թե ինչքան մարդ ու ընտանիք է հոշոտել նա ու իր ոճրագործ ընտանիք՝ որդիների ու աղջկա հետ միասին: Մանվելի կնոջ՝ Նազիկ Ամիրյանի մասին ավելորդ կլիներ չխոսել, որովհետև նա իր ամուսնուց ետ չի մնացել հանցանքների ու ոճիրների չափով, նույնիսկ գերազանցել է նրան: Այն, որ Նազիկ Ամիրյանը նույնպես դասվել է հայոց սրբերի շարքը, դա հայտնի է բոլորիս: Չմոռանանք, որ նա Հայաստանի նետաձգության ֆեդերացիայի նախագահն է, ՀՀ բանակի գնդապետ ԼՂՀ « Մարտական խաչ » 1-ին աստիճանի ասպետուհի և այլն: Իսկ Մանվել Գրիգորյանի որդիները նույնպես ունեն իրենց բազմահազարանոց երկրպագուների բանակը, չեմ փորձի թվերով ասպացուցել, համացանցում կարող եք տեսնել, թե քանի էջմիածինցի է քվեարկել նրանց օգտին: Միայն թե չասեք ստիպված են եղել, որ ձայն տվողները դրանք հայեր չեն, այլ թուրքեր: Այն, որ հայկական Վիքիպեդիայի էջերում կարող եք տեսնել բազմաթիվ կեղծիք, սուտ ու հիմարություն, այդ էլ ցուցադրում է մեր ազգային դեմքը՝ պատկերը: (« Օտարը չի հարգի և սիրի մի ժողովրդի, որը ինքնուրույն պատկեր և բովանդակություն չունի »: Հովհաննես Թումանյան) Կարծում եմ, այս փոքրիկ բացատրությունը թույլ կտա հասկանալ ասածիս իմաստը: Մենք՝ հայերս, վախկոտ ժողովուրդ ենք, վախենում ենք ճշմարտությունից, վախենում ենք նայել պատմության հանցավոր էջերին, վախենում ենք կուռքերից, վախենում ենք մեր տերերից: Քաղաքակիրթ հասարակությունում ՏԵՐԵՐ չեն լինում, որովհետև ամեն մարդ իր գլխի տերն է: Քաղաքակիրթ երկրներում արժեքները ժողովրդի պարանոցին չեն փաթաթում, ինչպես արվում է մեզ մոտ՝ սերունդներին խավարի ու տգիտության մեջ պահելով, նրանց դարձրեցին գործիք, ինչպես Օրուելլի գրքում է ասված: Օգտագործելով երիտասարդներին՝ իշխանությունները իրականացնում են իրենց սև գործը, արդյունքում ծնվում են Աշոտյաններ, Մարուքյաններ, Շարմազանովներ ու Արման Բարաջանյաններ: Իսկ թե ինչու՞ չցանկացանք ինքնուրույն

մտածել, որովհետև վախեցանք ինքնուրույն մտածել և գործել, ինչու՞ մը-
տածել, երբ մեր փոխարեն մտածում են ուրիշները: Ահա մեր ազգային
աղետներից հիմնականը: Այդպես մտածել ենք բոլոր դարերում՝ առ այս-
օր: Երբ ազգադավ Վազգեն Սարգսյանին դարձրեցինք սպարապետ, իսկ
Նաիրի Հունանյանին ոճրագործ, դահիճ, մարդասպան ու անգամ մանկա-
պիղծ ու դավաճան: Ի՞նչ է, պատահակա՞ն է արվել այդ ամենը:
Որակումները հենց այնպես չի արվել: Դա ներքին տականքի դարավոր
ձեռագիրն է, դարեր առաջ Պավլիկյաններին ու Թոնդրակյաններին անվ-
անեցին սրբապիղծ, սատանայապաշտ ու աղանդավոր, նրանց կոտանքի
ու խոշտանգումների ենթարկելով, աղվեսադրոշմով էլ խարանեցինք ճա-
կատներին ու կեղծեցինք ճշմարտությունը՝ այրելով պատմագրությունը:
Հետո նույնը կրկնվեց բոլոր դարերում, դաշնակները մեղադրում էին իր-
ենց հակառակորդին՝ բուլշևիկ լինելու մեջ, բուլշևիկները՝ դաշնակ լինելու
մեջ, ՀՀԾ-ականները Հանրապետականներին ու միշտ երկու բանակի բա-
ժանված, ինչպես ասված էր Թումանյանի « Մի կաթիլ մեղրում »: Ինչպես
հիմա՝ սև ու սպիտակ... Միշտ հայերի մոտ հիմնավորված է իրենց մեղքը,
արդարացված է իրենց հանցանքը, որովհետև ինչպես ասում են. « Ուժե-
ղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր »: Ու այդ ամենի ետևում կեղծիք, պատ-
մության աղավաղում ու կուռքապաշտություն: Երբ բոլորը գիտեին, որ
Վազգեն Սարգսյանը հանցագործ է, դրա մասին լռում էին, որովհետև ինչ-
պե՞ս կարելի է մեղադրել մեկին, որը ազգային հերոս է: Մարուքյանների,
Արման Բաբաջանյանների, Ֆելիքս Յուլակյանների ու նման հանցագործ-
ների համար Նաիրի Հունանյանը չի կարող վրիժառու լինել, իրենց պետք
չէ իրականությունը, իրենք այն պատանի երկրապահի պես պետք է խոն-
արհվեն ոճրագործների առջև, որովհետև Վազգենը դեռ կուռք է: « Երկրի
քրեական օրենսգրքում չկա որևէ հոդված, որին հանցակից չէր Վազգենի
կեղտոտ ձեռքը: « Ազգային գաղափար » ամսագիր) Հետո էլ կա երկրորդ
նախապայմանը՝ հայկական տան շեմի բանաձևը: « Ինչու՞ առաջինը ես »:
Ոչ ոք առաջինը չի ցանկանում ասել ճշմարտությունը, ինչպես սովորա-
բար հայերն են ասում. « ինչու ինձանից դուրս գա, թող առաջինը ասի, ես
կողքից կմտածեմ դամ պահեմ, թե ոչ »: Հիշու՞մ եք « Թագավորը մերկ է »
հեքիաթը, կարծում եմ, հասկանալի է: Սակայն հայերս չգիտես ինչու
միշտ արդարացում գտնում ենք՝ ասելով. « Թող քար նետի առաջինը նա,

ով մեղք չի գործել »: Ու այս բանաձևով թարցնում ենք գողությունը, բողությունը և ոճիրները: Վազգեն Սարգսյանի եղբոր՝ Արմեն Սարգսյանի մասին բոլորը գիտեն, որ նրա ձեռքով սպանվեց Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ՝ լրագրող Տիգրան Նադդայանը, դա էլ գիտեն, որ նա անգամ իր պատիժը չկրեց: Նա միշտ մնաց բարձունքում՝ վայելելով իր ընտանիքի թալանած միլիոնները, ու, ինչու չէ պետական դիրքն ու պաշտոնները: Այն, որ նա Պաշտպանության Նախարարի խորհրդակալն է, դա դեռ ոչինչ, իսկ որ ոսկու հանքերի բաժնետերն է, դրա մասին շատերը չեն իմանում: Իսկ Արմեն Սարգսյանի Ֆեյսբուքյան ընկերները այնքան շատ են, որ զարմանում ես, թե ինչ որակական հատկություններով ենք օժտված մենք՝ հայերս: Վազգեն Սարգսյանի ազդեցիկ կերպարը հենց այնպես չէր հորինվել: Նրա մահից հետո պետք է հարյուրավոր գրքեր գրվեին ու գործի դրվեին անողնաշարավորները՝ Տեր Գուլանյաններն ու Հրանտ Մաթևոսյանները, որպեսզի ազգադավին դարձնեն սրբության սրբոց, պատանի երկրապահներին էլ պետք է նրա գերեզմանին երդվել պարտադրեին, ինչպես անում էր Կռազի շոֆերը: Նրան պետք է փառաբանեին ու կիսանդրիներ պետք է բարձրացվեին: Այդպես են կուռքերին երկրպագում: Ստալինին ու Լենին պապիկին այդպես էին դարձել աստված ու գաղափարական կերպար, Վազգենը ի տարբերություն այդ հրեշների, մոլագար էր ու շիզոֆրենիկ: Շիզոֆրենիան հիվանդություն չէ, երբ արյան ու դիակների վրայով է քայլում նա: Հիմա Նաիրի Հունանյանի մասով, պարզ է, եթե նա սուրբ ու ճաշանչափայլ Վազգեն Սարգսյանի սպանությունը կազմակերպողն էր, պետք է կոչվեր ո՛չ միայն պարագլուխ ու ոճրագործ, այլև Թուրքիայի գործակալ, դավաճան, մեծամիտ, գոռոզ ու ժխտական ցանկացած անուն որակումով: Իմ Ֆեյսբուքյան ընկերներից շատերը կհիշեն, որ ժամանակին ինձ նման որակումներ էին տալիս Հանրապետականները՝ որակելով որպես Թուրքիայի ու Ադրբեջանի գործակալ, հետո ազատամարտիկ ու ԿԳԲ-ի գործակալ, մի խոսքով, ինչ ասես անվանեցին, որովհետև իրենց վրա քար նետողին սկսում են անվանումներ կայցնել, հետո պախարակել, վարկաբեկել և, ինչու չէ, ֆիզիկապես հաշվեհարդար տեսնել ու ոչնչացնել: Հայկական այս ավանդույթը վաղուց է գալիս, Պապ թագավորին անվանեցին արվամոլ, հետո սրբապիղծ, անհավատ, Թոնդրակյաներին ու Պավ-

լիկյաններին՝ աղանդավոր, իսկ Վազգենի ու Դաշնակների հանցանքների մասին խոսողներին՝ դավաճան ու սրբապիղծ:

Կցանկանայի մի օրինակ ևս բերել. օրեր առաջ սփյուռքահայ մի ՖԲ ընկերոջից մի բան խնդրեցի « Մոնթե ստուդիայի » տղաների համար: Նա խոստացավ աջակցել: Հետո երկու օր անց, հայտնեց, որ իրենք պետք է համայնքով ժողով գումարեն, հետո որոշում կայացնեն, նոր հարց է՝ կարո՞ղ են օգնել, թե՞ ոչ: Այս ամենը չէի գրի, եթե չլինեք այս վերջին դեպքերը: Խնդրում եմ մտաբերեք այս հատվածը, իմ սփյուռքահայ բարեկամը նույնպես թող ներողամիտ և ուշադիր լինի, որովհետև բացատրությունը օգտակար կլինի ո՛չ միայն իրեն, այլև իրենց համայնքին, ինչու՞ չէ նաև մյուս հայկական համայնքներին:

Հայոց ցեղասպանության մասին շատ է գրվել պատմաբանների ու լրագրողների կողմից, սակայն հոգեբանական տեսանկյունից ուսումնասիրված չէ ու դեռ շատ անելիքներ կան: Ճիշտ է մի քանի գիտական աշխատություններում ես անդրադարձել եմ դրան: Մինչ Օսմանյան կայսրությունում ծրագրավորվում ու իրականացվում էր հայոց ցեղասպանությունը, դրա մասին գիտեին շատ հայեր, այդ թվում ազդեցիկ մեծահարուստ հայեր, որոնք կարող էին ո՛չ միայն կանխել այդ ամենը, այլև կարող էին Թուրքիային ծնկի բերել, սակայն դա չարեցին, որովհետև մենք քիչ ենք բայց մեզ հայ են ասում: Այս կարգախոսը ո՛չ թե դատարկ կարգախոս է, այլև բանաձև ու սպրեյակերպ: Այն, որ մի անգամ մենք թուրքերի ձեռքից տեսել էինք նման ոճրագործություն՝ Արևմտահայերի զանգվածային կոտորածները 1894-1896 թվականներին, դա անտեսեցինք, սակայն ինչպես կասեր Գարեգին Նժդեհը. « Հայոց պատմությունը մեզ մի բան է սովորեցնում, այն որ հայը իր պատմությունից բնավ չի սովորում »: Այդպես մինչ անգլիական նավերը կբարձրանային Տավրոսի լեռները, հայերը զվարճանքի մեջ էին... Մե խինդ, մե ծիծա՛ղ, մե ուրախություն՛ն...

Ու Ռուսաստանի, Եվրոպայի ու Ամերիկայի հայությունը ինչպես կասեր իմ սփյուռքահայ ծանոթը, ժողով էին գումարում, որոշում էին կայացնում, քննարկում էին ու այդպես էլ մինչև հիմա չեն կարողանում որոշել և լինում է այն, ինչ որ պիտի լինեք (« *Մեր բարյացակամ չեղորոշյալն դեպքում իսկ, եթե դա, կրկնում եմ, նույնիսկ հնարավոր լինեք, թրքությունը պիտ վարվեք մեզ հետ ճիշտ այն ձևով, ինչպես որ վարվեց* »: Գարեգին Նժդեհ)

Միայն այնպես չէ, որ պետք մեղադրել մեծահարուստ հայերին կամ սփյուռքահայերին, քանի որ պետք է հիշենք նաև Արևմտյան ու Արևելյան Հայաստանում ու կուսակցական խմբերում ճառ ասող մեծամիտ ու հորթի ականջում քնած մեր հայրենակիցներին: Այս գրառումն նույնպես հիստերիա կառաջացնի, քանի որ այն ոհմակապետական սկզբունքով արարածները սկսելու են պիտակավորել ու որակումներ տալ: Տեղին կլինի նշել նշանավոր մարդու խոսքերը, որը կարծում եմ շատերին օգտակար կլինի օգտվել: « Ով որ քաջություն գտնի դեմ գնալու սնապարծությանը, պատմության մեջ կհիշվի որպես դավաճան, բայց եթե նա հրաժարվի դա անելուց, ապա նա կդառնա իր խղճի դավաճանը » գնդապետ կոմս Կլաուս ֆոն Շտաուֆենբերգ: Այդպիսով, մինչ դաշնակցականները երգում էին Հայրենյաց պաշտպան քաջ դաշնակցությունը՝ սրբացնելով իրենց կուսակցական ընկերներին, Արևմտահայաստանում կենաց ու մահվան կռիվ էին տալիս ֆիդայիներն ու կամավորները: Միայն չասեք, թե այդ Ֆիդայիների մեծ մասը դաշնակցական էին, գիտեք ինչու՝ որովհետև այլընտրանք էլ չկար, որովհետև այդ կառույցն էր միակ հզորը ու ուժը, ինչպես ԵԿՄ-ում անդամակցող շատ միամիտներ: Արցախյան պատերազմի ժամանակ էլ կամավորականները կուսակցական էին դարձել, որովհետև կարծում էին, թե կուսակցությունը իր գաղափարներով պարզ ու զուլալ է, իրականում այնտեղ « հայրենասեր » ու ճառասողների պակաս չկար: Հիշու՛մ եք Թումանյանի « Մկների ժողովը », ճառ ասողների պակաս չկար, բայց զանգ կախող չկար: Այն, որ դաշնակցությունից շատերը թքեցին ու հեռացան, դա փաստ է, կուսակցությունը նրանց սկսեց անուններ կացնել, որակումներ տալ՝ դավաճան ու նման բաներ: Եթե հիշում եք, ժամանակին Գաշնակցությունը Գարեգին Նժդեհին Անդրանիկ Օզանյանին ու Մեպուհ զորավարին էլ էին անվանարկում: Հիշեցնեմ, թուրքերին մատնություն փաստագրությունը Անդրանիկ Օզանյանի դեմ: Կարծում եմ շատերը տեղյակ են 1918 թվականի հունիսի 17 Երևանից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հեռագրված նամակը օսմանյան կայսրության զինվորական մինիստր՝ Էնվեր փաշային: Նույնը արվել է Գարեգին Նժդեհի հանդեպ՝ նրանց դատապարտելով մահվան: Շատերը կասեն հետո ի՞նչ, Պողոս առաքյալը մինչև արքորականը Հիսուսին ուրացավ երեք անգամ, իսկ մենք հո սուրբ չե՞նք, կարող է սխալվենք մի քանի անգամ: Ինչևիցե, սա արևելա-

հայրության մասով: Իսկ ի՞նչ էր կատարվում Արևմտյան Հայաստանում: Թուրքերը մինչև կոտորածները հայերին զինակոչել են Օսմանյան բանակ ու դա հասկանալի էր, որ նրանք զենք չէին տալու այդ զինվորագրվածներին, շատերը դասալիք դարձան, իսկ ինչպես միշտ՝ գտնվեցին գյուղապետեր, կուսակցական ակտիվիստներ, որոնք օսմանցիներին հանձնեցին ո՛չ միայն այդ դասալիքներին, այլև հայրենիքի համար կռվող ֆիդայիներին: Հիշե՛ք բոլոր ֆիդայիները սպանվել են հայ մատնիչների միջոցով: Այն, որ ցեղասպանությունից առաջ դաշնակցության կողմից նախօրոք զինաթափվել էր արևմտահայ բնակչությունը, դրա մասին ոչ մի խոսք, անգամ Իթթիհաստի՝ Երիտթուրքերի կուսակցությանը աջակցել են մեծահարուստ հայերը ու դաշնակցական գործիչները: (« Մեր պատմությունը լեցուն է դավաճանության փաստերով, փնտրեք հայի սուրն այնտեղ որտեղ հայի արյուն է թափվել »: Բաֆֆի) Երևի մեր ազգային գեների մեջ է դրված երեսուն արծաթի սերը: Երեսուն արծաթով ո՛չ միայն ծախեցինք մեր հոգին, այլև մեր զավակներին ու ժողովրդին, մեր պատիվը, մեր ինքնասիրությունը, մեր պատմությունը: Ինչպես կասեր Բաֆֆին « Հայերի մեջ ամեն տեղ անպակաս են եղեռնագործ տեր Մարկոսներ, ավազակ մելիքներ, խաբերա Միրզա-Ֆաթալիներ, փոփոխամիտ տիկին Թարլաններ, օգտաձարավ վասակներ և այլն... »: Այդ ցանկը կարելի է ավելացնել վազգեն սարգյաններ, մարուքյաններ, մանվելներ, լֆիկներ լիսկաներ նազիկներ, հերմինե նադոպյաններ, գրետա սարգյաններ ու արփինե հովհաննիսյաններ: Այդ ցանկը կարելի է ավելացնել՝ ԱԺ նախկին ու ներկա պատգամավորներ, քաղաքական գործիչներ, մտավորականներ, գեներալներ, անգամ հոգևորականներ ու բարերարներ: Ահա ազգային դիմապատկերը, միայն չասեք, թե մեր Մեծերը հայ են եղել և ինչու՞ չեն թվարկում նրանց: Բայց հիմա պետք է պարզել, այդ մեծերը մե՞րն են, թե՞ ուրիշինը, կամ թե արժանի՞ են նրանք, որ մերը կոչվեն: Ավելի ճիշտ, մենք արժանի չենք, որ իրենց մերը կոչենք: Առհասարակ, ժողովուրդները իրենց մեծերի իմաստուն խոսքն ու խրատները պետք է սովորեն ու առաջ գնան, իսկ մենք ի՞նչ արեցինք... Կոմիտասին հոգեբուժարանում փակեցինք, Նժդեհին ու Անդրանիկին էլ հալածեցինք, իսկ Հաց Բերողին էլ սպանեցինք... Հիմա կասեք, թե Հաց բերող Արթուր Մարգյանը ի՞նչ մեծություն... Համաձայն եմ, մեր համար մեծությունը հարբեցող Անդրանիկ Մարգարյանն է, մոլագար՝

Վազգենը, անգամ Կարեն Դեմիրճյանն ու Նիկոլայ Ռիժկովը, մեծություն են անգամ Արցախի ոճրագործ՝ գեներալացված հերոսները: Տեսնում էք, թե մեր ազգային պատկերը ինչպիսին է Շմայսի դեմքով, Փաշինյանի ականջներով, Սերժի հայացքով, Քոչարյանի բառապաշարով: Միայն թե չասեք, թե սա իրականությանը չի համապատասխանում: Արևմտյան Հայաստանում թուրքերը հայկական գյուղերին առաջարկել էին տեղահանության վերջնագիրը, հայերը, ինչպես կասեր իմ սփյուռքահայ ծանոթը, համայնքում հենց այդպես հեշտ չի լինում, ժողով են գումարում, որոշում են, թե ինչ անեն և ինչ թողնեն ու մինչև իրենք որոշում էին, հայկական հարևան գյուղերում թուրքերը կոտորում էին իրենց հայրենակիցներին: Հետո հերթը հասնում էր իրենց ու որոշում են շառից փորձանքից հեռու, ավելի լավ է ուղևորվել Դեր Չոր: Ու ամբողջ գյուղը գյուղապետի ու գյուղի տերտերի հետ, երկու թուրք ոստիկանի ուղեկցությամբ քայլում են դեպի Դեր Չոր: Պատկերացնում եք գյուղի մեջ չգտնվեց մի մարդ, որ ասեր. « այժ ժողովուրդ, էս ի՞նչ էք անում », քարը վերցնեք ու այդ թուրք ոստիկանների գլուխը ջարդեք, այդ տերտերի ու գյուղապետի գլուխը նույնպես: Բայց դե ո՞նց կլինի, հայը հայի արյուն ո՞նց կթափի, նախընտրեցին իրենց զցել Եփրատի ջրերը, քան թե մարդավարի՝ զենքը ձեռքին կռվեին, գոնե իրենց երեխաների գոյության համար: Որովհետև ինչպես ընդունված է հայկական իրականության մեջ գյուղապետն ու քահանան իրենց փոխարեն արդեն որոշել էին: Մենք՝ հայերս, չենք սիրում ընդունել սխալները, պատմության հանցանքները:

Օրինակ գերմանացիները խոստովանեցին, որ Հիտլերը հրեշ էր ու թեթևացան, առաջ շարժվեցին, իսկ մենք ի՞նչ արեցինք՝ Վազգենին դարձրեցինք կուռք, իսկ նրան պատժողին էլ՝ ոճրագործ: Երբեք չմտածեցինք, որ, եթե մեկին կոչում են պարագլուխ, սպա դա նշանակում է կազմակերպիչ, իսկ մենք փորձում ենք հոկտեմբերի 27-ը կապել արտաքին ուժերի հետ, Ռուսաստան, Թուրքիա, Իսրայել ու նման հիմարություններ, կարելի է նաև ասել Մոզամբիկ, Ռուանդա կամ էլ Բուռնդիա Ֆասո, մի հատ ավել, մի հատ պակաս, ի՞նչ կլինի որ... Իսկ ինչու՞ չենք հարցնում, թե Վազգենն ո՞վ էր նախքան հեղափոխությունը... Գնացեք Դավալլու ու հարցրեք, թե նա ո՞վ էր ... Ճիշտ է շատերը կփորձեն լռել, որովհետև նրան այնքան են սրբացրել, որ իրենց սեփական աչքի տակ մեծացած մոլագարը արդեն հրեշտակ է

երևում: Ինչպես ասացի՝ կուռք ենք դարձնում ու սկսում ենք նրանց ո՛չ միայն պաշտել, այլև վախենալ նրանց ստվերից: Խնամի, ծանոթ, բարեկամ սկզբունքը այդ գործընթացի անկյունաքարերից մեկն է, որովհետև նրանք իրար չեն գցում, ինչպես ժողովուրդն է ասում. « շունը շան թաթ չի կծում »: Մարության, Արամ Սարգսյան և Նիկոլ Փաշինյան եռյակը չնայած ցույց է տալիս, որ իրենք քաղաքական հայացքներով տարբեր են ու անկախ մեկը մյուսից, իրականում նրանք նույն ոճի ու նույն խառնվածքի մարդիկ են, անգամ մեկ շղթայի տարբեր օղակներ, դրա համար Նաիրի Հունանյանը իրենց համար ոճրագործ է ու մարդասպան: Լավ, եթե այդքան պարզ մարդ էր ու արդարության մարտիկ, ինչու՞ մեկ ժամ չեն տրամադրում Նաիրի Հունանյանին, որպեսզի նա պատմի իր արարքի պատճառները, կարող է հիմնավոր պատճառները դա՞ է պարտադրել: Այն, որ նորվեգացի ահաբեկիչ Անդերս Բրեյվիկը, որը 68 մարդու կյանք է խլել, իսկ 66 -ին հաշմանդամ դարձրել, իրավունք ստացավ լրագրողների ու հանրության առաջ ներկայացնել իր պատճառները, իսկ մեր իշխանավորները, անգամ քսան տարի անց, վախենում են լսել իրականությունը, որովհետև իրենց անձնական շահերը դա է պահանջում: Իսկ ո՞վ պետք է ասի ճշմարտությունը, եթե ոչ Նաիրի Հունանյանը: Ամեն անգամ հոկտեմբերի 27- ը կապում են Ռոբերտ Քոչարյանի ու ռուսական ծառայությունների հետ՝ շեղելով հասարակությանը այդ թեմայից: Անգամ քսան տարի հետո էլ չկարողացան բռնի ու կտտանքի միջոցով ցուցմունք կորզել Նաիրի Հունանյանից, որ դա եղել է Ռոբերտ Քոչարյանի պատվերով, ոչ թե սեփական նախաձեռնությամբ: Իսկ ի՞նչ էր, Նաիրի Հունանյանի ազատամարտիկ քեռին՝ Վռամ Գալստյանը նույնպե՞ս Թուրքիայի գործակալ էր, կամ Քոչարյանի պատվիատուն: Երբ նա Արցախյան պատերազմում կոպում էր հայրենիքի թշնամու դեմ, լավ էր հասկանում, թե ամենամեծ թշնամին որտեղ է... Ինչու՞ չեն խոստովանում, որ Վազգեն Սարգսյանը ոճրագործ էր, մարդասպան, հանցագործ, արյունարբու ու դավաճան, որովհետև հանցագործ քրեաօլիգարխիան նրան այնքան է աստվածացրել, որ անգամ դժվար է ընդունել ճշմարտությունը: « Մեր դեմ խաղ չկա » այս խոսքերը պատճառ դարձան շատ ոճիրների, այդ խոսքերով թիկունքից խփեցին իրենցից « աչոտ » ուզողներին՝ Մոնթեին, Բեկորին և մնացած հայորդիներին: Այդ խոսքերը նաև դարձավ պատճառ Նաիրի Հունանյանին ու Վռամ Գալստյանին զենք

վերցնել ու պատժել ոճրագործին: Գիտե՞ք ինչ ցավոտ է ընդունել ճշմարտությունը: Այն, որ Վազգեն Սարգսյանին հուղարկավորելուց հետո նրա գերեզմանին այնքան արմատուրա ու բետոն լցրեցին, որ լավ գիտակցում էին, թե ճշմարտությունը բացահայտվելուց հետո էլ, ոչ ոք չի փորձի նրան գերեզմանից հանել: Հավատացեք, դրանք խոսքեր չեն, այլ ճշմարտություն, որը ցանկալի չէ ասել, երբ օլիգարխի հանցագործները խնամի բարեկամական կապով շղթայված են Սարգսյանների ընտանիքին, դժվար թե մեկը քանդի այդ կծիկը, որովհետև դա արեց Տիգրան Նաղդալյանը, Վահրամ Խոռխոռունին ու Մարիոս Յուզբաշյանը այնպես, որ քանդելը վտանգավոր է կյանքի համար: Ինչպես թուրքերն են ասում. « Եթե չես կարողանում կտրել ձեռքը, ապա այն պետք է համբուրես ու դնես գլխիդ »: Այս մեկ բանաձևը թուրքերից ենք շատ լավ սովորել: Այդպես մենք ճառում ենք, խոստումներ շալյում ու միշտ մնում գերի մեր փականքների ու մեր վախի մեջ: « Ինչու՞ առաջինը ես... Լինել, թե՞ չլինել... »: Հայերից առաջինը ոչ մեկ չի ցանկանում լինել, որովհետև մենք հայ ենք... Սակայն կան առաջիններ, որոնք չեն ընդունում այդ բանաձևը, դրանք մեր ազատամարտիկներն էին, որոնք ելան ու մեկնեցին ռազմաճակատ, առանց տրտնջալու, սոված - ծարավ, առանց հագուստի ու առանց գենքի:

Բայց տեսանք, թե ինչպես ավարտվեց ազատամարտիկների պայքարը, մարտադաշտում թիկունքից հարված ստացան, իսկ թիկունքում էլ ճակատներից՝ գնդակ: Պատերազմի դաշտում թիկունքից խփողները ավելի շատ էին, քան ճակատում կոփողները: Ամենասարսափելին այն էր, որ 10 միլիոն հայությունից ընդամենը 6 -7 հազար մարդ է մասնակցել Արցախյան պատերազմին, իսկ սփյուռքահայերից ընդամենը 12 կամավոր: Թիվը զավեշտալի չէ՞, կարող եք ինքներդ ճշտել մասնակիցների թիվը: Հայրենասիրություն ճառասողները շատ են, մասնակիցները՝ մի բուռ, ինչպես Ապրիլյան պատերազմում: Տեսեք, քանի՞ ազատամարտիկ դոյակ ունի, տեսեք քանի՞ ազատամարտիկ պաշտոն կամ բիզնես, ինչպես՞ եղավ, որ նրանք ճակատում առաջինն էին, իսկ թիկունքում՝ քամուց քշվածները: Օրեր առաջ մամուլում գրեցին, որ ազատամարտիկ Սուսաննա Մարգարյանը տեղափոխվել է Էջմիածին քաղաքի հիվանդանոց, նա երկրորդ ինսուլտն է ստացել: Կցանկանայի մեջբերել նրա հարցազրույցի անփոփոխ տեքստը: « Հաց վաստակելուս միջոցից էլ զրկվեցի:

Կցանկանայի մեջբերել նրա հարցազրույցի անփոփոխ տեքստը: « Հաց վաստակելուս միջոցից էլ գրկվեցի: Գիշերը գողացել են իմ վրանը, որի տակ պատասխարվում էի ու բանջարեղեն վաճառում, անգամ աթոռակն են տարել ու արկղով բիբարը, հոսանքի լարերը ու ինչ-մանր ու մեծ բան ունեի: Ես ինտուիտից հետո դժվարությամբ եմ շարժվում, առիթից օգտվել են, որ ներսում չեմ եղել »: Մուսաննա Մարգարյան: Ճատերը կհիշեն համացանցից Մուսաննա Մարգարյանին, այն անվախ կլին ազատամարտիկին, որը տարիներ առաջ գիշեր ցերեկ փողոցային պայքարով ըմբոստացել էր հայրենիքի հրեշների դեմ, իսկ մենք՝ հայերս, այսպես ենք վարձահատույց լինում հերոսներին, փոխարենը միլիոնատեր սպարապետի ընտանիքը վայելում է ո՛չ միայն իրենց թալանած միլիոնները, այլ մեր ազատամարտիկների արյունն ու տանջանքը, փոխարենը վայելում է այդ ժողովրդի սերն ու հարգանքը: Որովհետև մենք քիչ ենք ու մեզ հայ են ասում: Դասալիք երկրապահները ու հրեշ գեներալները, որոնք սահմանին կանգնած զինվորի արյունով դոյակներ կառուցեցին, թքած ունենալով ամեն ինչի վրա: Պատգամավորներ, որոնք նույնպես թքած ունեն ժողովրդի ու հայրենիքի վրա, սփյուռք, որը թքած ունի հայրենիքի ու ճակատագրերի վրա, երբ սովահար իրենց հայրենակիցները օրվա հացը չեն կարողանում վաստակել, սփյուռքահայ աստղային փնթիները իրենց տեսահոլովակների համար միլիոնավոր դոլարներ են ծախսում, փառատոններ ու մրցանակաբաշխություններ կազմակերպում: Ցեղասպանության ժամանակ նույնպես այդպես էր, արևմտահայությունը գաղթի կոտորածի ճանապարհներին, իսկ արևելահայությունն ու սփյուռքը՝ ճառելու ու հայրենասիրական փարթիների ու դրամահավաքության խնջույքներում: Ոչինչ չի փոխվել, անգամ ոճի ու ձևի մեջ ենք ամփոփոխ, որովհետև մենք քիչ ենք, բայց մեզ հայ են ասում: Լատինատառ ու ռուսատառ հայրենասերները ճառում են ու խոստումներ շռայլում, որովհետև մենք քիչ ենք, բայց մեզ հայ են ասում: Հոգևորականները Աստծու պատվիրաններից են խոսում, սակայն կենակցում են ոչ միայն մեծահարուստ օլիգարխների հետ, այլև Աստծո պատվիրանների, որովհետև քիչ ենք բայց մեզ հայ են ասում: Երբեմն մենք սովորություն ունենք կրկնել. « Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է »: Ինչու՞ ենք կարծում թե սա է ճշմարտությունը կամ հայ ժողովրդի փրկության միակ ճանապարհը, ընդհակառակը

այս միասնական ուժը ավելի աղետաբեր է եղել մեր ժողովրդի պատմության մեջ, որովհետև ինչպես կասեր Հովհաննես Թումանյանը. « Տասնյակ տարիներով ու անհամար դեպքերով փորձված է, է՛լ հայիոյանք, է՛լ գրպարտություն, է՛լ ավաշկարա սուտ, է՛լ չարախոսություն, կեղծավորություն: Նեղ թայֆայականությունը »: Ահա հայի հավաքական ուժը՝ թայֆայականությունը: Հուսամ այս հավելվածով շատերը կհասկանան, ովքեր են հերոսները, ճառասողները, խոստումներ տվողները, չկողմնորոշվածներն ու անտարբերները: « Բայց հայերի մեջ ամեն տեղ դժվար կարելի է գտնել — սիրահարվա-ժազահներ »: Բաֆֆի

Գեհենի Առաքել 25.10.2019 թ.

ԱԶԳԱԴԱՎ ՍՊԱՐԱՎՊԵՏԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

« Հայկական հողը ևս մեկ Վազգեն Սարգսյանի չի դիմանա և կգահալիժի դժոխք »: «Մտորումներ « Պազդիմի»-ից հետո » գրքից.

Իմ ընթերցասեր բարեկամները ծանոթ են իմ ստեղծագործություններին և նույնիսկ գաղափարակից են: Կարծում եմ շատերն են հիշում « Ազգադավը » պատմավեպում ներկայացրած փաստագրությունը և արտահայտած մտքերը: Կարծում եմ դժվար չէ մեկ անգամ էլ կրկնել այն խոսքերը, « Որ Վազգենով է սկսվել այս երկրի թալանն ու անարխիան, և Վազգենով էլ այն պետք է ավարտվի »: Չնայած հավատս էլ չի գալիս, որ երբևէ հայ ժողովուրդը ուժ կգտնի ու կիրաժարվի խնամի-ծանոթ-բարեկամ երևույթից: Ռոմանտիկ Վազգենի մասին սկսել են շատ խոսել իշխանավորները, ընդդիմադիրները, երկրապահներն ու հանրապետականները, Վազգենի հեռու-մոտիկ հարազատներն ու սանիկները: Չեք գտնի որևէ բարոյական մարդ, որևէ ազնիվ քաղաքացի, որը կարող էր Վազգեն Սարգսյանին ճանաչելով նրան գովաբանել: Հիմա անցնենք գովերգողներին... Պատահական չէր, որ ժամանակի իշխանությունները նրա մահից հետո հերոսացրին ոջլոտ, շիզոֆրենիկ Վազգեն Սարգսյանին: Նրա կենդանության ժամանակ դժվար թե մեկը դրական որևէ կարծիք հայտներ այդ գար-

շահոտ արջին, դե ինչպես ասում են, մեռավ՝ հերոսացավ... Հանցագործ ոհմակի համար նրա կերպարը դարձավ ո՛չ միայն անձեռնամխելիության երաշխիք, այլև պաշտոնի խնամի-բարեկամ-ծանոթ շղթայի մի օղակը, նրանք պետք է ձգտեին բարեկամություն, քավոր սանիկ, հարաբերություն ունենալ Վազգենի ընտանիքի հետ: Անկախ կարգավիճակից, անկախ պաշտոնից .կամ գործած հանցանքից ու ոճիրներից միշտ լինելու են անպատիժ, քանի կա սպարապետի ընտանիքի հետ կապը: Այդ անգամ Լևոն Տեր-Պետրոսյանը զգաց Վազգենի շինծու կերպարի հզորությունը, դրա համար էլ իրեն իշխանությունից զրկած Վազգենին, որին ասում էր իր մարմնի բոլոր մասերով, հանկարծ ընդունեց ու ներեց Հոկտեմբերի 27-ից հետո: Վազգենի հերոսական դիակը օգտագործեց իր քաղաքական վերելքի համար: Առհասարակ ոչ միայն նա օգտագործեց, այլև նրան հաջորդած իշխանավորները, անգամ՝ Նիկոլ Փաշինյանը: Նույնիսկ ժամանակին գրել էին դրա մասին. « Չվարճալի էր դիտել, թե ինչպես էին երկու հակոտնյաններ՝ Լևոն Տեր-Պետրոսյանը եւ Մերժ Սարգսյանը, միաժամանակ եւ մեկը մյուսից անկախ, վերմակի նման իրենց վրա քաշում Վազգեն Սարգսյանի դիակը»: « Մտորումներ « Պազովինի »-ից հետո» գրքից: Սակայն Վազգենի կերպարը երկու տասնամյակից ավելի դարձրեցին անձեռնամխելի կուռք, բոլոր հանցագործները, երկրապահից սկսած վերջացրարած քրեական հեղինակությունները նրան պաշտեցին: Վազգեն Սարգսյանը դրեց ռազմական օլիգարխիայի սկիզբը, ընդունելով « Մեր դեմ խաղ չկա » կարգախոսը, նրան էին պարտական՝ ասֆալտամարտիկ փնթի գեներալները, անգրագետ մարզպետներն ու պաշտոնյաները, նախարարները, պատգամավորները, քրեական հեղինակություններն ու ռուսաստանից ժամանած հարբեցող զինվորականները: Վազգենը դրեց բանակում կոռուպցիայի անկյունաքարը, գործարանների սեփականաշնորհումն ու թալանը: Վազգենի եղբայր՝ Արմեն Սարգսյանը դարձավ Սաշիկ Սարգսյանի ուսուցիչը 50/50-ի ավանդույթը այնտեղից սկսվեց: Այնտեղից սկսվեց, « Ով մեզ հետ չի, մեր դեմ է » գործելաոճը: Դա մրցակիցների ու իրենց դեմ ըմբոստացողների հանդեպ արշավանք էր, կալանք, հետապնդում, հալածանք ու հաշվեհարդար, սպանություններ ու արտաքսում: Գործի էր դրվել անգամ վարձու մարդասպանների ոհմակը, որոնց ձեռքով էլ սպանվեց Սոնթե Մելքոնյանը, իսկ տարիներ անց Տիգրան Նաղդալյանը:

Մոնթե Մելքոնյանը, իսկ տարիներ անց Տիգրան Նաղդայանը: Վազգեն Սարգսյանի մասին գրած մի միտք, որը գրվել է դեռ 2014-ին « Վազգեն Սարգսյանը հայոց պատմության մեջ ամենամեծ ոճրագործն էր, քանզի նույնիսկ մեռած ժամանակ շարունակում է ոչնչացնել ազգային արժեքները »: Սակայն անձեռնամխելիություն ստացած Վազգենի ոհմակը առ այսօր իշխում է ոչ միայն պետական բարձր պաշտոններում, այլ կուսակցական, հասարակական, ռազմական ու անվտանգության համակարգում, ամենուրեք նրանք են, նրանց փոխարինում են իրենց ժառանգները: Պատահական չէր վերջերս ի հայտ եկած Կարապետ Ռուբինյանի որդին «Իմ Զայրը» խմբակցության անդամ՝ Ռուբեն Ռուբինյանը, Նուարդ Վարդանյան, որը Գևորգ Վարդանյանի (Ժոկո) դուստրն է: Գևորգ Վարդանյանի (Ժոկո) Վազգենի ժամանակ եղել է Հանրապետության նախարարների խորհրդի նախագահի տեղակալ, հետո ՊՆ նախարարի օգնականը, այնուհետև պետական նախարար... Դավիթ Վարդանյանի աներձագը՝ կնոջ եղբայրը, 2. Դեկարտ Դավթյան. հանրապետության կառավարության վերահսկողական տեսչության պետ, Դավիթ Վարդանյանի փեսան՝ քրոջ ամուսինը: 3. Հրաչիկ Թորոսյան. Երբաղգործկոմի բնակչահագործման վարչության պետ, Դավիթ Վարդանյանի փեսան՝ մյուս քրոջ ամուսինը: 4. Համլետ Թորոսյան. «Հայտեղարդ » արտադրական միավորման գլխավոր տնօրեն, Դավիթ Վարդանյանի փեսայի՝ Հրաչիկ Թորոսյանի եղբայրը, նախկին ցեխավիկ: 5. Մարտին Վարդանյան. « Հայտեղարդ » համակարգի՝ Չովունու լայն սպառման ապրանքների գործարանի տնօրեն, Դավիթ Վարդանյանի եղբայրը: Այս ցանկը կարելի է անվերջ շարունակել՝ Գրզո, Դոդի Գագո, Հովիկ Արրահամյան, գեներալներ՝ Մանվել Գրիգորյան, Մելքան Սարոյան, Արթուր Աղաբեկյան, Գագիկ Մելքոնյան, Աշոտ Պետրոսյան, Աստվածատուր Պետրոսյան, Խաչատուրով և ուրիշներ. Դրան գումարենք քրեաժին բոգորդիներին՝ Անդրանիկ Քոչարյան, Սերժ Սարգսյան, Գագիկ Ջհանգիրյան, Դավիթ Շահնազարյան, Ռոբերտ Քորարյան, Սաշիկ Սարգսյան, քրեականներ Պզո, Չապ, Նորադուզգի Ալիկ և Արթուր Ասատրյան, իսկա և Ժոկո, դրան գումարենք նրանց զավակներին, խնամիներին, սանիկներին ու վարորդներին այդ երկար շղթան ձգվում է մինչև Նիկոլ Փաշինյան: Կոնգրեսականները, որոնք ՀՀԾ-ի ու քրեական տարրերի միացությունից առաջացած չարիք էր, պետք է արմատավորվեր ոչ միայն

կուսակցությունների մեջ ու հասարակական կառույցների, այլև ընտանիքների ու հոգևոր դասի: Մշակույթի գործիչ մարմնավաճառ երևույթները, հանձինս՝ գրողների միության, պետք է ապահովվեր ոչլուտների հաղթարշավը: Անուններով չեմ նշի, թե դրանք ովքեր էին, ինքներդ կարող եք համոզվել, նայելով նրանց տեսանյութերը: Նիկոլի իշխանության անբաժան մասն են կազմում ՀՀԾ-ի ոճրագործների ժառանգները, Վազգենի շնորհիվ միլիոններ կուտակած պաշտոնյաների թուլեքը այսօր ԱԺ-ում են, Երևանի ավագանում ու մարզպետների պաշտոններին, ուժային ու անվտանգության կառույցներում են: Երկիրը դարձրել են՝ Ավգյան մի հսկա ախոռ, որ անգամ Եփրատն ու Տիգրիս ջրառատ գետերը միասին վերցրած չեն կարող մաքրել այդ աղբը: Երբ լսում ես Վարդան Դուկասյանի՝ Դոզի ելույթները կոռուպցիայի, խնամի-ծանոթ-բարեկամ ոհմակի մասին, հասկանում ես թե ինչպիսի խոր ու հանցավոր մետաստազներով է պատված երկիրը, և ինչպես միշտ բուրգի գազաթին Վազգեն Սարգսյանի ընտանիքի անդամներն են՝ Արամ Սարգսյանի ղեկավարությամբ: Նա է գորշ Կարդինալը այդ ողջ ոհմակի, ինչպես ինքը՝ Արամ Չավենիչն էր խոստովանում, իրենք եղբայրներով գենետիկական եզակի երևույթներ են, որովհետև մի հորից ու մի մորից են: Նրանց շնորհիվ էին Լևոն Տեր-Պետրոսյանից սկսած վերջացրած բոլոր ՀՀ նախագահներն ու վարչապետները, գործել անպատիժ: Պատահական չէ, որ այս 44 -օրյա սպանդի մեղավորներից մեկը ՊՆ նախկին նախարար՝ Դավիթ Տոնոյանի ազատության համար Արամ Չավենի Սարգսյանն է երաշխավորել: Նրանք իրար երբեք չեն գցում, իրենց ոհմակի օրենքն է դա: Հիշում եք գեներալ Գագիկ Մելքոնյանի ելակի ու թուրքերին ճանապարհի տալու մասին հայտարարությունը, ի՞նչ եք կարծում, սա այն ողորմելին չէր, որ 1996 թվականին Մանվել Գրիգորյանի Երկրապահների ու Սեյրան Սարոյանի մյուս գեներալների հետ բանակի ու ոստիկանության ուժերով իրականացրեցին Վազգեն Սարգսյանի ծրագրավորած ռազմական հեղաշրջումը: Շատերն են հիշում Վազգենի հայտնի հայտարարությունը. « Ընդդիմությունը 100 տոկոս ձայն էլ ստանար, նրան իշխանություն տվող չկար »: Վազգեն Սարգսյան 1996 թ. «Հրապարակ օրաթերթի» լրագրողներից մեկը՝ Հասմիկ Բաբաջանյանը մի հարց էր տվել. « Այդ ինչպե՞ս է լինում, երբ 90-ականների պաշտոնյաների ժառանգները հայտնվում են հեղափոխական իշխանության հրեշտակային փետուրների

ներքո, բայց հայտարարում են, որ սարսափի մեջ են մեծացել: Միակ պատճառն այն է, որ նրանք ցանկանում են ժխտել հեղափոխական իշխանության և 90-ականների իշխանության սերտ կապը»: Հարցի պատասխանը գուցե գտնեք այն տեսանյութերում, որտեղ Հայաստանի ընդդիմադիր ու իշխանամետ պատգամավորները, գեներալները կամ գործիչները, գովերգում են Վազգեն Սարգսյանին, իբր թե նա եղել է նուրբ հոգու տեր, շունամտիկ, հաղթական ու հերոս: Ոչ մեկ հարց չտվեց, այդ ինչպե՞ս եղավ, որ այդ հաղթական սպարապետի զինակիցները դարձան խոշոր սեփականատերեր, գործարանների ու հյուրանոցի տերեր, պիռներական ճամբարները անգամ դարձրեցին իրենց հոր բոստանը: Այդ ինչպե՞ս ստացվեց, որ ոչ մի ազատամարտիկ չկարողացավ ունենալ այն, ինչ ունեցան գեներալները, ինչպես ստացվեց, որ անատամ ազատամարտիկին անտեսեցին, այդ ինչպե՞ս ստացվեց, որ օլիգարխ գեներալները դարձան այդքան լկտի ու անպատիժ: Գուցե հայրենասեր Վազգենից հարցնենք, թե ինչու՞ էին « ցուրտ ու մուխ » տարիների տեռորը, իր եղբայրների թալանը, Քրքր Քրքրոյանի նվիրաբերած միլիոնները ու՞ր կորան: Գուցե Սպարապետը ասի՞ թե ինչպես 90-ականներին բարբարոսաբար կացնահարեցին իր հայրենիքի այգիներն ու պուրակները: Իսկ տրամվայների ու Մեղրու երկաթգծի գծերը ո՞վ կերավ: Ասում էին, թե Վազգենը ուզում էր երկիր կառուցել, որ 21 դարը իրենցն է լինելու: Ճիշտ էին ասում, Վազգենը կառուցեց այն ինչ կա, ու 21 դարը իրենցն է եղել, որովհետև իրենք են վայելել ամեն ինչ: Գուցե սպարապետը չգիտեր, որ Հայաստանից 1,5 միլիոն մարդ փախավ արտերկիր, փախան ոչ թե սոցիալական վիճակից, այլ բեսպրիդելից, անարխիայից, ոչլուտ, ասֆալտի ֆիդայիների կրակահերթերից: Հիմա էլ լոզունգ են դարձրել, թե Վազգենը հայրենիք էր սիրում, նայեք նրա ընտանիքի ճոխությունը, նրա զարմիկների օվշորային հաշիվները, եղբոր աշխատասենյակի վարագույրները ու կիսականաք նրա սիրո արժեքը: Հայրենիք սիրող մարդը այդպես չի լինում, դա ազգադավություն և դավաճանություն է: Ժամանակին գրել եմ. « Երբ բացահայտվի Վազգեն Սարգսյանի հանցանքները, ապա հազարավոր Նաիրի Հունանյաններ կսկսեն նրա զինակիցների հաշվեհարդարը »: Պետք է խոստովանեմ, որ սխալվեցի, որովհետև Նիկոլ Փաշինյանը, որը Վազգենի հետնորդներից է ու գաղափարակից ընկերը, մնաց անպատիժ, այն էլ այսքան աղետներից ու զոհեր-

ից հետո: Կարիք չկա արդարանալ, որ պատերազմում են զոհվել այդ տղաները, նրանց ուղղակի սպանել են՝ լավ իմանալով, որ թշնամին զինվում է: Նրանք զոհեր են, որոնց մեղավորները եղել են Վազգենն ու նրան նախորդող հրեշները: Վազգենի կոտրած ձեռքով էր, որ Բիշշքեկում 1994-ի մայիսին ստորագրվեց՝ զինադադարի խայտառակ պայմանագիրը, որի պատճառով երեսուն տարի սահմանին սպանվեցին զինվորները, նրա գեներալները սպանեցին այս սերունդին, նրա ժառանգների խղճին է այս զոհերի արյունը: Սա պատերազմ չէ, այլ գիտակցված, կազմակերպված սպանող էր սերունդների հանդեպ: Հիմա խոսել դավաճանությունից, վրեժից, պետություն կառուցելուց ու ասպազայից, ուղղակի անհիմաստ է: « Եւ ուրեմն, կեցցե՛ սպարապետը, կեցցե՛ նրա կառուցած Հայաստանը, կեցցե՛նք մենք եւ մեր երեխաները, որ ապրում ենք ազատ եւ երջանիկ Հայաստանում»: «Վազգենը՝ կենդանի է, Վազգենը՝ մի՛շտ կենդանի է, Վազգենն՝ անմահ է...»:

Գեհենի Առաքել 21.01.2022

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

« Ու՛յ որ տնտեսում է դայրոցների վրա, կկառուցի բանտեր: Ազգային բանակի վրա տնտեսելը, նշանակում է գերեզմանաշին ություն »: Օտտո Բրամսարկ

Վերջերս եվրոպական գործուղումների ժամանակ հետաքրքիր փաստերի ականատես եղա, որոնք շատ հայտնի պատճառներով մեր իրականության մեջ մնացել են լուսանցքից դուրս, սակայն այդ կարևորագույն փաստագրությունները հայոց պատմության վերջին երեսուն տարիների ցավալի էջերից են, որոնք արգելափակում են Հայաստանի առաջխաղացումն ու զարգացումը՝ ոչ միայն տնտեսական ու ռազմաքաղաքական ոլորտում, այլև բարոյահոգեբանական խորը հիասթափության պատճառ են դառնում եկող սերունդների համար: Մինչդեռ բացահայտելով ու լուսաբանելով այդ սխալները՝ այն կարող էր հնարավորություն տալ մեր երկրին դառնալու ոչ միայն տարածաշրջանի հզոր պետությունը, այլև տարբեր ձեռքբերումներով համաշխարհային ճանաչում արձանագրել բոլոր ոլորտներում:

Ինչպես գիտենք հայկական բանակի թեմայի արժարժույթը ամենավտանգավորն է, արգելված է այդ կառույցի հասցեին քննադատություններ հնչեցնել: Հայկական բանակի «առեղծվածը» վտանգավոր թեմա է դարձել մարդկանց առողջության ու կյանքի համար, ուստի շատերը խուսափում են անգամ վերհիշել կամ շոշափել այն: Առհասարակ ընդունված է Հայկական Բանակի ծնունդը կապել Վազգեն Սարգսյանի հետ, որին դարձրեցին ազգային հերոս, սպարապետ, իսկ հետո էլ բանակաշինության նախահայր: Վազգենի մասին բազմիցս ներկայացրել են ու լուսաբանել, սակայն, կարծում են, դեռ հետաքրքիր առեղծվածներ կան մոլագար շիզոֆրենիկի կյանքի հետ կապված: Երբ նրան համարում են Հայկական բանակի անկյունաքարը դնողը, կարծում են, մասամբ կարելի է ճիշտ համարել, նայած թե ինչ տեսանկյունից է այն դիտվում: Հիշեցնեն այն կարևոր փաստը, որ Վազգեն Սարգսյանն առհասարակ բանակում չի ծառայել, որը պատկերացում չունեն անգամ, թե ինչ է զինվորականը և ինչ է իրենից ներկայացնում բանակը, չէր տարբերում անգամ ուսադիրների տարբերանշանները: Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի նշանակումը միանգամայն արդարացվում է, ինչպե՞ս կարելի էր մոլագար ու անգրագետ Վազգեն Սարգսյանին դարձնել պաշտպանության նախարար, հետո վարչապետ և հետագայում հերոս սպարապետ, իսկ Վիգեն Սարգսյանին՝ ոչ: Ամեն ինչ արդար է՝ ինչպես որ տեսնում ենք: Վազգենը բանակաշինության նախահայր դարձավ ոչ հենց այնպես, դրա մասին բազմիցս գրվել է, իսկ հիմա տեսնենք, թե նրա կառուցած Բանակ կոչվածը իրենից ինչ է ներկայացնում: Ըստ ԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի՝ Վազգեն Սարգսյանի կառուցած բանակը «Քոստո բանակ» է իր բնույթով: Եվ փաստն այն է, որ Հայկական Բանակը Բանվորա-գյուղացիական բանակ է, որը ոչնչով չի տարբերվում Սո.Չորյանի նկարագրած բանակից, որտեղ Մանկկալանց Դավիթի նմանների խոշտանգում են ու սպանում: Ապացույցը՝ սևազգեստ մայրերն են ու չբացահայտված խոշտանգումները, որոնք քսանհինգ տարուց ավելի շարունակվում են և դարձել են արդեն ավանդույթ: Վազգեն Սարգսյանի անվան բարձրագույն ռազմական ուսումնարանի մասին բազմիցս է գրվել, կարծում են կարիք չկա անդրադառնալու, սակայն հիշեցնեն, որ դա ոճրագործների ու մարդասպանների դարբնոց է, որտեղ թրծվում են Ռամիլ Սաֆարովից ոչ պակաս ոճրագործներ: Կարծում են, բոլորը հիշում եք

կուրսանտ Հայկազ Բարսեղյանի սպանությունը: Հայկական բանակի ծնունդը սովորաբար համարվում է հունվարի 17-ը սակայն իմ ազատամարտիկ բարեկամները, որոնք կանգնած են Հայկական բանակի կազմավորման ակունքներում, պնդում են, որ Հայկական բանակի կազմավորման օրը Սեպտեմբերի 21-ն է՝ Հատուկ Գնդի կազմավորման օրը. 21 սեպտեմբեր 1990 թ. բայց չգիտես ինչու Հայկական բանակի օրը նշվում է հունվարի 17-ը, հիշեցնեմ միայն, որ այդ օրը՝ 1993 թվականին ստեղծվել է Պաշտպանության նախարարությունը: Պաշտպանության Նախարարության և հայկական բանակի տարբերությունը պետք է տեսնել և հասկանալ, որովհետև այդ կառույցները իրար հետ առնչվում են, սակայն ոչ փոխկապակցվում: Պատահական չէ, որ Հայաստանում ՊՆ-ն անվանում են ՊԵՆՏԱԳՈՆ: Թեման շարունակելով՝ անցնենք փաստերին: Սովորաբար ընդունված է ասել, որ Հայկական բանակի կազմավորման ընթացքում Վազգեն Սարգսյանն իր անևրևույթ կոչով դիմել է Խորհրդային բանակում ծառայող բարձրաստիճան սպաներին, որպեսզի վերադառնան հայրենիք ու համալրեն նորատեղծ հայկական բանակի շարքերը: Ինչպես գիտենք շատերը ականջալուր եղան ու վերադարձան՝ մտնելով հայկական բանակ: Սակայն իրականում ինչպես և ինչ է եղել, շատերը վախենում են խոսել, անգամ վախենում են մտաբերել կամ էլ կարելի է ասել, որ անգամ տեղյակ են չեն եղել, իմացողներն էլ նախընտրում են լռել, այլապես կհայտնվեն այնպիսի վիճակում, որ նկարագրելն անհնար է:

Վստահ եմ այս հրապարակումը պատճառ է դառնալու, որպեսզի նորից սվինահարեն ինձ՝ մեղադրելով դավաճանության ու թշնամության մեջ: Նախկինում «Ազգադավ» գիրքը հրապարակելու ժամանակ նույն հիստերիան էր և նույն մեղադրանքները: Հետաքրքիրն այն փաստն էր, որ Հայաստանում եղած ժամանակ փորձել եմ ծանոթներիս նվիրել «Ազգադավը» գիրքը, սակայն զգում էի, որ այլալվում էին ու սառը քրտինք էր պատում նրանց, ճիշտ է, չէին ցանկանում վիրավորել, բայց դժկամությամբ էին ընդունում գիրքը, որոշեցի թողնել իրենց հայեցողությանը և... պարզվեց մի բան... Շատերը պատճառաբանում էին, թե համացանցում կարդացել են ու լավ կլինի գիրքը նվիրեմ նրանց, ովքեր չեն կարդացել: Հարցը փակված էր, որովհետև սպարապետի հանցանքները հիշողներին ազգի թշնամի են դարձնում, ավելի շուտ՝ աղբրեջանցի: Երեսուն տարի մարդկանց պատ-

ել է վախը, ու կարծես թե նրանից չեն էլ կարող ձերբազատվել: Ինչևէ, հայկական բանակը համալրվելով Խորհրդային բանակից եկած սպաներով՝ դարձավ Խորհրդային բանակի ստերիոտիպը, իսկ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ուսումնարանի շրջանավարտների օգնությամբ ներմուծվեցին քրեական աշխարհի օրենքներն ու բարքերը: Խորհրդային բանակի բացասական երևույթներին միացավ գողական աշխարհի չգրված օրենքները, ու Հայկական բանակը դարձավ մի հսկայական ՁՈՆ՝ Սպանդանոց, որտեղ խոշտանգվում ու սպանվում են աղքատ ընտանիքների զավակները, սպանությունների ու խոշտանգումների հիմքում ընկած էր թալանն ու կողոպուտը: Ծանոթ բարեկամ, խնամի ու սանիկ, ամեն ինչ արվում էր ծախելու ու առնելու համար, բանակից ազատելով ու տարկետում տալով՝ ուսադիրներով ավազակները իրենց գրպաներն էին լցնում: Կոծկելով անմեղ զինվորների սպանությունները՝ հարստանում էին ու դղյակներ կառուցում: Հիշենք Վազգեն Սարգսյանի կոչը, որի օգնությամբ Խորհրդային բանակի հայ սպաները համալրեցին Հայկական Բանակի շարքերը: Նախ հիշեցնեմ Խորհրդային Բանակին վերաբերող մի փաստագրություն: 1990-1992 թվականներին Խորհրդային Բանակը գտնվում էր սոսկալի վիճակում, պետական գանձարանը դատարկ էր, ու զինվորականները 7-8 ամիս շարունակ աշխատավարձ չէին ստանում, նույնիսկ զորամասեր կային, որոնք մեկ տարուց ավելի գումար չէին ստացել: Սպաներին հասանելիք սննդամթերքի քանակը կրճատվել էր զորամասերի հրամանատարները երբեմն իրենց ենթակայության տակ գտնվող զինվորներին աշխատեցնում էին քաղաքացիական շինարարություններում՝ հավելյալ սնունդի կամ գումարի դիմաց: Բանակը հոգևարքի մեջ էր, պետական ֆինանսավորումը դադարեցված էր, պահեստային հանդերձանքն ու զինամթերքը վաճառում էին անօրինական ու հանցավոր եղանակով: Շտաբային սպաների վիճակը ավելի ծանր էր, վաճառելու ոչինչ չունեին: Բանակում զանգվածային կրճատումներ էր գնում, մանավանդ Խորհրդային հանրապետության քաղաքացիներին պետական բնակարաններից էին զրկում, շատ ընտանիքներ զինվորական զորամասերում էին գիշերում՝ օգտագործելով զինվորական կազարմաներն ու հարակից կառույցները: Հայազգի սպաների վիճակը ավելի վատ էր, որովհետև նրանք հիմնականում թիկունքային և շտաբային ծառայություններում էին աշխատում:

Խորհրդային միության փլուզումը նոր, ավելի սարսափելի վիճակի մեջ գցեց սպաներին, որոնք կրճատման սարսափից արդեն ահաբեկված էին: Սպաներից շատերը քաղաքացիական կյանքում չէին կարողանում հարմարվել և նախընտրում էին անգամ ոստիկանութ- յունում ցածր պաշտոններում աշխատել: Խորհրդային բանակի սպաների համար նպաստավոր եղավ ՊՆ նախարար Վազգեն Սարգսյանի կոչը, որը քաղաքական ու ռազմական պայմաններից ելնելով՝ նրանց ծառայողական աշխատանք էր առաջարկում հայկական բանակում: Նրանցից շատերն էլ օգտվեցին այդ հնարավորությունից ու վերադարձան Հայաստան: Բարձր-աստիճան գեներալների ու գնդապետների մուտքը հայկական բանակ «պտղաբեր» եղավ: Հարբեցողություն, թղթախաղ, թալան ու կողոպուտ. Խորհրդային բանակի աղբը լցվեց Հայկական բանակ: Սպաները սկսեցին անխնա թալանել պետության ու բանակի միջոցները, թալանվում էին թիկ-ունքում, թալանում էին ինչպես կարող էին, տաքուկ գինկոմիսարիատ-ներում նստած սպաները զորակոչիկների ու եռամսյա հավաքների կանչ-վածների վրա էին գումարներ աշխատում՝ մուծվելով վերադասին: Չորա-մասերի հրամանատարները ազատամարտիկների ու կամավորների հաս-անելիք միջոցներն էին կողոպտում: Թիկունքը ճակատի հաշվին հարստա-նում էր, ամեն ինչ թիկունքի համար էր դառնում: Շտաբային սպաները թղթախաղով էին տարված, խրախճանքների մեջ էին՝ անգամ ճակատային շտաբներում իրենց սիրուհիների հետ էին ժամանակ անցկացնում: Այդ կամանդուի կոչվածների ու գեներալների կողմից ոչ մի ռազմական գործ-ողություն կամ օպերացիա մշակված չի եղել, ամեն ինչ արվել է խրամա-տային հրամանատարների կողմից, Արցախյան պատերազմի ողջ ընթացք-ում միայն կամավորականների ու դաշտային հրամանատարների անձնա-գոհության շնորհիվ են գրանցվել հաղթանակները: Հարբեցող սպայակույ-տը Պաշտպանության նախարարության առանձնասենյակներ ում նստած հերոսանում էր ու հարստանում: Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին հետաքրքրում էր սեփական որովայնն ու գրպանը: Պատա-հական չէր, որ բռնաբարության մեջ մեղադրվող կանանց գաղութի կյուչ-նիկ գնդապետ Մարտիրոսյանին նշանակեցին Երևանի նոր բացված ռազմ-ական ուսումնարանի պետ: Խորհրդային Միության ժամանակ գնդապետ Մարտիրոսյանին հեռացրել էին ծառայությունից, սակայն Վազգեն Սարգս-

յանին ու Անդրանիկ Բոչարյանին վճարելով կորիկ գումար, նա ոչ միայն նշանակվեց ուսումնարանի պետ, այլև գեներալական ուսադիրներ ստացավ: ՊՆ-ում վճարում էին պաշտոնների ու կոչումների համար, խորհրդային բանակի ենթասպան դառնում էր գնդապետ, իսկ Կռազի շոֆեռն էլ գեներալ և ավելին: Ազատամարտիկների հուշագրերում և օրագրերում շատ փաստեր են հիշատակված, որոնք մնացել են այդպես էլ անտեսված: Չնայած իմ ձեռքի տակ եղած փաստերը բավական են պատկերացում կազմելու այդ ամենի մասին: Ճիշտ է, շատերի համար դժվար է լսել այս ծանր հանցանքների ու կեղծիքների մասին, սակայն դա է իրականությունը և այն չբացահայտելով՝ ավելի ենք մխրճվում հանցանքների ու մեղքերի մեջ: Կցանաանայի հիշեցնել այն կարևոր փաստը, որ խորհրդային բանակի բացասական երևույթները ներմուծվեցին հայկական բանակ՝ այն դարձնելով ավանդույթ, քրեական օրենքները լրացրեցին այդ բացը՝ դարձնելով այն սպանդանոց: Չաստ նայողների ինստիտուտի ձևավորումը ծեծի ու ջարդի, խոշտանգումների ու ինքնասպանությունները կոծկելու ավանդույթը նույնպես պատմություն ունի: Բանակից սննդամթերքի ու հեղուկ վառելիքի թալանը ուղղորդվում էր սպանություններով կամ ինքնասպանություններով, ականատեսներին ու վկաներին ոչնչացնում էին ինչպես կարող էին՝ ամենը վերագրելով ինքնասպանություն: Հայկական սպանդանոցի մասին արգելված էր խոսել, անգամ բարձրաձայնելը վտանգավոր էր, լրատվությունը արգելափակելով՝ հասարակությանը մատուցվում էր, որ « Հայկական Բանակը » տարածաշրջանի ամենահզոր բանակն է: Ծիծաղելի է, բայց ողբերգական, որ հայ զինվորին ստիպում են ստրուկի պես բանել, հետո էլ ստիպում են չոքել ու մահմեդականի պես աղոթել, ինքնասպանությունները դեռ չհաշված: Ահա այն բանակը, որի նախահայրը շիզոֆրենիկ Վազգեն Սարգսյանը եղավ: Պորտաբույծ սպաների մուտքը հայկական բանակ ուղղորդվեց պարտավորական մարտավարությամբ՝ կորցրեցինք Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանը, Արցախի Մարտակերտի շրջանի մի զգալի մասը և Հայաստանի Արծվաշեն ավանը: Չնայած Արծվաշենի պարտությունը բարձրաստիճան հրամանատարների դավաճանության ու մասնակցության շնորհիվ կատարվեց՝ հանձինս Վազգեն Սարգսյանի: Եթե հաշվի առնենք, որ դեռ այն ժամանակ ՊՆ բանակի հարբեցող սպայակույտը նույնպես արդարացնում էր Վազգեն Սարգսյան-

նին Արծվաշենի ու Շահումյանի կորստի համար, նույնը մենք տեսանք ապրիլյան պատերազմի 800 հեկտար տարածքի կորստի համար, գեներալական ոհմակն ու սպայակույտը ջանասիրաբար արդարացնում էր այդ տարածքների կորուստը՝ Ազատիչին շռայլելով խոսքեր ու հետույք մտնելով: Հայկական բանակում չգտնվեց գեթ մեկ սպա, ով կփորձեր հակառակվել ու դավաճանության մասին բարձրաձայներ: Ինչպես տեսնում ենք սպայակույտը մնացել է անփոփոխ՝ ինչպես Վազգենի օրոք էին, այնպես էլ Ազատիչի օրոք մնացել են նույն աղբակույտը: Հայկական բանակին մաս կազմեցին ՀՀԾ-ական ոջլոտների ու քրեաձին հանցագործների ոհմակները: Ժամանակին դրանց կոչում էին Ասֆալտի ֆիդայիներ կամ Ասֆալտամարտիկներ, սրանց մասին բազմիցս գրել են անգամ պատմագետները: Կարծում եմ կարիք չկա վերհիշել այն ամենը, ինչ արդեն ասվել է, միայն հեշեցնեմ կռակի շոֆեռ Մանվել Գրիգորյանի և մակաբույժ խեղկատակ՝ Սեյրան Սարոյանին ուղին: Այդ երկու հաստագլուխների ձեռքով ավելի շատ հայ ազատամարտիկ է սպանվել, քան աղբբեջանական բանակի կողմից: Այս փնթիներին Վազգենն օգտագործում էր, որպեսզի իր թալանն ու կողոպտածը ավելացնի, նրանց անպատժելիության մանդատ տալով ապահովում էր իր իշխանությունը, պատահական չէր, որ Վազգենի թեթև ձեռքով նրանք գեներալական ուսադիրներ ստացան, Մանվել Գրիգորյան, Սեյրան Սարոյան, Լևոն Երանոսյան, Սերգեյ Չալյան, Արթուր Աղաբեկյան ու հարյուրավոր նման փնթիներ: Վազգեն Սարգսյանին պետք էր, որ մինչև պատերազմի ավարտը՝ ճակատում ոչնչացվեին հայրենասեր տղաների ջոկատները, որոնք հետագայում կարող էին իրենից պատասխան պահանջել, ինչպես Մանվելն է հայտարարում իրենից պատասխան ուզողները թուրք են: Վազգենը ազատամարտիկներին ու կամավորականներին ոչնչացնում էր հենց այդ քրեաձինների ձեռքերով, նրանց շնորհելով անձեռնմխելիություն ու գեներալական ուսադիրներ: « Հերոսները պետք է զոհվեն պատերազմի դաշտում, հակառակ դեպքում նրանք անտանելի են դառնում »: Վազգեն Սարգսյան: Ազատամարտիկների սպանողը շարունակեցին Վազգենի հետևորդները: Եվ պատահական չէր, որ Պավել Մանուկյանը ու Սասնա ծռերը համարվում են ահաբեկիչներ ու երկրի համար մեկ թշնամի, դա ավանդույթ դարձած գործելաճ է: Զանի որ Փնթի գեներալներին հիշեցինք, տեղին է նշել նաև Մանվել Գրիգորյանի ու Սեյրան

Սարոյանի հանցանքների թիվը ավելացնել ևս մեկով, թե ինչպես հայկական բանակի հակաօդային Իզլա տիպի հռթիռները վաճառում էին Չեչեն գրոհայիններին, իսկ Արթուր Աղաբեկյանի, Խաչատուրովի, Հայկազ Բաղմանյանի, Սերգեյ Չալյանի ու Աշոտ Գրիգորյանի և ոհմակի մասին առանձին առանձին գրվել է: Հենց այդ ոհմակն էր, որը Վազգեն Սարգսյանի շնորհիվ ոչ միայն չսատկեց սովից, այլև միլիոններ կուսակեց ու հարստացավ: Հենց այդ ոհմակը նրան պետք է դարձներ սպարապետ ու ազգային հերոս, հենց այդ ոհմակն է խոշտանգում ու հետապնդում նրանց, ովքեր մոլագարի հանցանքների մասին խոսում են, նրանք Վազգենի ուրվականի ետևում մնում են անձեռնմխելի, քանի դեռ Վազգենը հերոս է, իրենք անպատիժ գործելու են: Իսկ ինչ եղան Արցախյան պատերազմից վերադարձած ազատամարտիկները, որոնք խոշտանգվեցին ու հետապնդվեցին, որոնց ծաղրում են ու նվաստացնում հենց այն փնթիները, որոնք նրանցից վերցրեցին հաղթանակի փառքը: Ինչու լուսանցքից դուրս մնացին այդ հերոսները, որովհետև ժողովուրդը անտարբեր գտնվեց իր հերոսների հանդեպ: 30 տարուց ավելի այդ անողնաշարավոր սպաների ու գեներալների հաղթարշավը պետք է շարունակվեր, իրենց ետևում թողնելով հարյուրավոր սևազգեստ մայրերի և հարյուրավոր դոյակներ ու առանձնատներ պետք է կառուցվեին այդ զինվորների ու ազատամարտիկների արյան ու կյանքի հաշվին: Պատահական չէր, որ Արցախի Հերոս Վահան Բադալյանը բարձրաձայնում է այդ հանցագործ գեներալների մասին: Հիմա պատկերացնում կազմեցի՞ք տարածաշրջանի ամենահզոր բանակի մասին: Հենց այդ գեներալներն են պնդում, որ Արցախյան պատերազմի վերսկսման վտանգը միշտ լինելու է, հավիտենից հավիտենիս, դա հերթական կեղծիքն է ու սուտը, ընդամենը մի քանի օր է հարկավոր, այդ պատերազմը ավարտին հասցնելու և հակամարտությունը լուծելու համար, սակայն ինչպես Ջորջ Օրուելն է ասում. «Բռնակալները պատերազմում են սեփական ժողովրդի դեմ », այնպես, ինչպես Հայաստանում սպայակույտի լուռ համաձայնության ներքո խոշտանգում են ժողովրդին ու տանուլ տալիս սահմանային տարածքները: Վտանգը արտաքին թշնամուն մատնացույց անելով՝ փորձում են քողարկել ներքին թշնամու արարքները: Հայկական բանվորագյուղացիական բանակը իր բնույթով խեղճ է ու հուսալքված, այնտեղ բացակայում են պատիվ ունեցող սպաները: Ամենաքոստ ենթասպան իր-

են համարում է արքա, իրեն թույլ տալով կողոպտել զինվորի ոչ միայն հանդերձանքը, այլև սնունդն ու հիգիենայի պարագաները: Խնամի, բարեկամ, քավոր սանիկ՝ ահա Հայկական բանակի ցեցը, որը ներսից հռչակում ու թուլացնում է բանակը: Իսկ Հայկական բանակը կարող էր իրականում հզոր լինել:

Իմ ազատամարտիկ բարեկամներից մեկը, դեռևս Արցախյան պատերազմի տարիներին մշակել էր հայկական բանակի մոդելը, որը կարող էր ապահովել Արցախի ու Հայաստանի անվտանգությունը, կարող էր տնտեսել հազարավոր դոլարներ ու կարող էր իր մարտունակությամբ հավասար լինել աշխարհի հզոր բանակների հետ, սակայն, ցավոք սրտի նա այդ ամենը չկարողացավ կյանքի կոչել, որովհետև ռիմակապետական իշխանությանը դա պետք չէր: Հիմա ինչպե՞ս կարելի է հայկական բանակը հզոր ու անպարտելի համարել, եթե նրա գերագույն գլխավոր հրամանատարը Քոստո դասալիք է ու վախկոտ: Ի՞նչ եք կարծում, Հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը ինչու՞ էր գրել իր «Քաջ Նազարը» հայտնի հեքիաթը, կարծում եմ հասկացողները այն պետք է համեմատեն ներկայիս իրականության հետ, որ դասալիք զանաճը ոչ ավելին է, քան իր հեքիաթի հերոսը: Գրել է, որպեսզի սովորենք իր խրատներն ու դասերը: Հիմա մեր զինվորների ուսերի վրա է ոչ միայն սահմանի պաշտպանությունն ու անվտանգություն, այլև գեներալական ու սպայական որմակին կերակրելը: Չորջ Օրուել. Կա ճշմարտություն և կա սուտ, ու եթե կառչում ես ճշմարտությունից՝ նույնիսկ հակառակ ամբողջ աշխարհի, խենթ չես: Անհնար է վախի, ատելության ու դաժանության վրա քաղաքակրթություն հիմնել: Այն չի հարատևի: Անգործունակ պետությունը վաղ թե ուշ պարտվում է, իսկ գործունակությունը չի կարող հիմնվել պատրանքների վրա: Բացի այդ, գործունակ լինելու համար անհրաժեշտ է դասեր քաղել անցյալից, նշանակում է՝ բավական ճշգրիտ գաղափար ունենալ այն մասին, թե ինչ է եղել անցյալում: Չորջ Օրուել

« Հայոց պատմությունը մեզ մի բան է սովորեցնում, այն, որ հայը իր պատմությունից բնավ չի սովորում »: Գարեգին Նժդեհ.

Գեհենի Առաքել 27.01.2018

ՍՈՎՈՐԻՐ ԱՆՑՅԱԼԻ ՍԽԱԼՆԵՐԻՑ

*« Նախընտրելի է սովորել ուրիշների սխալներից՝ քան սեփական »:
Գեհենի Առաքել*

ՀՀ իշխանությունները 30 տարի շարունակ ոչնչացրին հայ ժողովրդի ամենարժեքավոր բանը՝ հասարակությունը և հասարակական միտքը: Դեռևս միջնադարի խավարում, երբ աշխարհը խավարի ու տգիտության մեջ էր, Հայաստանում լուսավոր միտքն ու գաղափարները ոտքի հանեցին ժողովրդին: « Ազատություն, հավասարություն, եղբայրություն », այս կարգախոսը ոչ միայն ոտքի հանեց հայ ժողովրդին, այլև՝ հարևան ազգերին ու ժողովուրդներին: Այդ միտքն անգամ Բյուզանդական ու Հռոմեական կայսրություններին էր սարսափեցնում: Ողջ աշխարհը զգաց այդ ուժն ու նրա շնորհիվ էր, որ աշխարհը ճանաչեց մարդկային ու աստվածային արժեքները: Պավլիկյան, այնուհետև Թոնդրակյան շարժումները ոչ միայն Հայաստանին բերեցին լուսավոր մտքեր ու գաղափարներ, այլև՝ աշխարհին: Աշխարհի շարժիչ ուժը, դա հասարակական միտքն է, երբ ժողովուրդը հասունանում է՝ ձգտելով կատարելագործել իր կյանքը և կենցաղը, ձգտելով գիտության ու լուսավորության: Կեղծիքը և սուտը, վախն ու անարդարությունը տեղ չունեն նման հասարակության մեջ: « Ազատություն, հավասարություն, եղբայրություն » կարգախոսը շատերը համարում են մասոնական կարգախոս, սակայն չիմանալով, որ դրա սկզբնաղբյուրը եղել են Պավլիկյանները, որոնք լուսավորեցին Եվրոպան և աշխարհի մյուս ծայրամասերը: Բյուզանդական և Հռոմեական կայսրները, Արաբական ու Իրանական խալիֆաներն ու շահերը սարսափում էին այդ ուժից և ամեն ինչ արեցին, որպեսզի հասարակական ուժը խեղդեն իրենց բնօրրանում: Ու այդ գործին լծվեցին խավարի ծառաները՝ սևաաքեմ կղերականները՝ Հայ առաքելական եկեղեցին, որն ամեն ինչ արեց, որպեսզի ոչնչացնի լուսավոր գաղափարներն ու գաղափարախոսությունը: « Աղվեսաղդոշ » խարանդով ոչ միայն ազատասերների ճակատներին, այլև՝ նրանց ժառանգների ճակատագրերին: Ոչնչացրեցին պայքարը՝ արյան մեջ խեղդելով այն: Սակայն գաղափարները երբեք չեն մեռնում, Միտքն ապրեց ու տարածվեց աշխարհի բոլոր անկյուններում՝ ներառյալ Եվրոպա, Չինաստան, Հնդկաս-

տան և Լատինամերիկա: Մենք կարողացանք մռայլ աշխարհին գույներ պարզևել ու լուսավորել մնացած ժողովուրդներին, սակայն այժմ մենք ինքներս ենք հայտնվել խավարում՝ նախընտրելով հանքարդյունաբերական խռոռչը ու չենք կարողանում հասկանալ, թե ո՞վ է մեղավորը, և ինչու: Սակայն մեղավորներին գտնել պետք չէ, նրանք մեր մեջ են ու բավական է ցանկանալ տեսնել, գատել սևը սպիտակից, գատել անարդարը արդարից, սուտն ու կեղծիքը: Ներքին թշնամին, ահա մեր առաջին դժբախտությունը: Հանդուրժողականությունը, ահա երկրորդ դժբախտությունը, վախը, պատմական հիշողության կորուստը: Հասարակությունը պետք է հասկանա, որ օտարները չեն կարող իրենց կամքը և քմահաճույքները պարտադրել ժողովրդին, եթե չլինեն այդ ներքին թշնամիները: Նրանց ձեռքերով են թշնամիները խարխլում պետության, հայրենիքի հիմքերը՝ հասարակական միտքը փորձելով ապականել բոլոր միջոցներով: Հասարակական միտքը հզոր է, եթե այն արդարության ու ազնվության գաղափարով է պարուրված: Պետք է մաքրել երկիրն ամեն գնով ու բոլոր եղանակներով, հավատացեք, այլապես այն ճակատագրական է լինելու եկող սերունդների համար՝ այսօր հանդուրժելով ներքին թշնամուն, մեզ համար վաղվա գերեզմանափոր ենք պատրաստում: Պատմությունն այդ դասերը մեզ տվել է, և պետք է սովորենք ոչ միայն մեջ դժբախտություններից, այլև՝ համաշխարհային պատմությունից մեզ հասած ժառանգությունից: « Հայոց պատմությունը մեզ մի բան է սովորեցնում, այն, որ հայը իր պատմությունից բնավ չի սովորում »: Գարեգին Նժդեհ

« ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆ ԶԻՆԱԿԻՑ Է ՈՒ ԵՂԲԱՅՐ ԱՐՏԱՔԻՆ ԹՇՆԱՄՈՒՑ: ՄԻՆՉԵՒ ՈՐ ԶԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆ ՄՊԱՆԵԼ, ԱՆԿԱՐԵԼԻ Է, ՈՐ ԱՐՏԱՔԻՆ ԹՇՆԱՄՈՒՑ ԱԶԱՏՎԵԼ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ »: Գարեգին Նժդեհ

« Անկախութեան հաւակնութիւն ունեցող ժողովուրդները նախ պետք է այս մտայնութիւնից ազատուին »: Գարեգին Նժդեհ

Գեհենի Առաքել 17. 08. 2019

ՆԱՄԱԿ ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Այս բաց նամակն ուղղում եմ Վազգեն Սարգսյանին: Հուսով եմ, որ նամակը տեղ կհասնի ոչ միայն իրեն, այլև իր զինակից ու հանցակից գեներալներին ու իր ոհմակի մյուս անդամներին: Գիտեմ, շատերի համար ծիծաղելի կթվա, որ մեռելին եմ գրում այս նամակը, բայց հավատացնում եմ՝ հասկացող, խելամիտ մարդը կհասկանա նամակի հասցեատիրոջը: Չեմ չափազանցնի, եթե ասեմ, որ Վազգեն Սարգսյանը վաղուց դժոխքում է, սակայն նրա գցած սերմերը ծլեցին ու ծաղկեցին այս երեսուն տարիներին: Այո ծաղկեցին ու բազմացան, պատահական չէր, որ քո սիրելի հերոսին՝ Մանվելին, պետք է գար փոխարինելու մեկ ուրիշ զինակից ընկեր՝ փնթի ու անգրագետ Սասուն Միքայելյանը: Վազգեն, դու ընտրության հարցում չես սխալվել, երևի միակ դրական փաստը դա պետք է արձանագրենք քո կենսագրությունից: Որովհետև կարողացար գտնել քեզանից անգրագետ ու փնթիների մի բանակ, որոնք ոչ միայն քեզ պետք է սպարապետացնեին, այլև աստվածացնեին: Քանի՛ քանի՛ անկուշտի ես հացի տեր դարձրել, քանի՛ քանիսի՛ն ես դարձրել հրեշ ու մարդակեր, երևի դրանց թիվը գնալով սերնդե-սերունդ ավելանում է, պատանի երկրապահները պատահական չեն գալիս ու քո գերեզմանի վրա երդվում, որ քո կիսատ գործը պետք է շարունակեն: Վազգեն, այն կիսատ թողածը, որը չհասցրեցիր ավարտել, որովհետև դեռ մնացել են գաղափարի մարտիկներ՝ Պավել Մանուկյանը, Վահան Բաղայանը և շատ ուրիշներ, որոնք դեռ կարողանում են ըմբոստանալ քո ոհմակի դեմ, ըմբոստանում են ու պատասխան պահանջում քո գործած ու դեռ չգործած ոճիրների առջև: Վազգեն, իզուր չեն ընկերներիդ պնդումները, որ կենդանի ես ու իրենցից անբաժան, որովհետև քո անունը շուրթերին են գործում ոճիրները, քո կերպարի ետևն են թաքնված գործում հանցանքները: Ու դու անմահ ես ու կենդանի, քանի դեռ շնչում են նրանք, քո զինակից ընկերներն ու եղբայրները՝ Մանվելն ու Սասունը, Լիսկան ու Սարոյանը, Հովիկ Աբրահամյանն ու Հրանուշ Հակոբյանը, Քոչարյանն ու Ազատիչը: Ուղղակի մի բան չեմ հասկանում, քո հետույքից դուրս եկածները ինչու՞ են փորձում մոռացության մատնել քո թևավոր խոսքերը . « Որ Մանվելը կենդանի հերոս է, ու Անդրանիկը գորավարը նրա դեմ ոչինչ էր », կամ Քոչարյանն ու Սերժը անփոխարինելի դեմքեր էին: Այդ ամենը դու

ես ասել, սակայն զինակիցներդ փորձում են քեզ ներկայացնել գրողի ու հրապարակախոսի, հերոսի, սպարապետի, մայր թերեզայի կերպարով: Չգիտեմ ինչ ասել, երբ կյանքում այդպես էլ չկարողացար կայանալ ո՛չ որպես ռազմական գործիչ, ո՛չ էլ անգամ ֆիզկուլտի դասատու: Առհասարակ համաշխարհային պատմությունն ու գրականությունը լի է քեզ պես հերոսներով, մոլագար Ներոնը, որը հրի տվեց Հռոմը, քավության նոխազ սարքելով քրիստոնյաներին, իսկ շարիկովների մասին երևի լսած կլինես, ինչքան չլինի մայրդ մանկավարժ է եղել, որը գողացված վարտիքներ ու լիֆեր էր վաճառում Արարատի դպրոցում: Չգիտեմ, թե ինչպես է ստացվում, որ մոլագարների բախտը բերում է, հայտնվում են ճիշտ այնտեղ, որտեղ պետք է և այն էլ՝ ճշգրիտ պահին: Վազգեն, եղբայրներդ այսօր քո տված թևերով են ճախրում իշխանական բարձունքներում ու ոչ միայն նրանք, այլև ինչպես եղբայրդ՝ Արմենն է ասում, Խնամի, ծանոթ, բարեկամները: Նրա աներորդին երեսուն տարի պատգամավորի օթյակում բազմած մնաց, Արմենի կինը, երեխաները, անգամ իրենց փեսաները: Դե սանիկների մասին ավելորդ է խոսել, մեկը մեկից արյունարբու ու անկուշտ: Տարածվեցին քո ենիչերիները « Մեր Դեմ խաղ չկա » կարգախոսով: Ու պետք է ձեզ ա ով անեիք ոչ միայն 21-րդ դարը, այլև երկրի՝ տասնամյակներով ստեղծած բարիքը, ձեզանով պետք է անեիք Խոսրովի արգելանցը, ոսկու հանքերն ու ժողովրդի բախտն ու ճակատագիրը: Այդպես սկսեցիք ու վերջը կարծես թե չի երևում, հավատացնում եմ, որ նամակս հասնի քեզ՝ դժոխք, ուրեմն ամեն ինչ այլ ընթացքով է գնացել ու դա կլինի քո անմահության վախճանը: Չկարծես, թե ժողովուրդը կույր է, ոջլոտ՝ ինչպես դու, որովհետև դու չկարողացար անգամ կուշտ փորով հաց ուտել, որովհետև անկուշտ էիր, չգիտեիր քո չափն ու սահմանը, չկարողացար հասկանալ, որ ամեն ինչը ավարտ է ունենում, չհասկացար, որ համբերության գավաթը լցվելուց կարող է թափվել: Հավատա հոկտեմբերի 27-ը եղավ հենց այդ համբերության գավաթի անտեսումը: Երբ մարդ կորցնում է իր չափի զգացողությունը, ապա պետք է պատրաստ լինի խզակոթի ու շան սատակ լինելու դատավճռին: Այն, ինչ վաստակեցիր այդ օրը դրա մեղավորը դու էիր, ու հավատա, որ այս աշխարհում լկտիությունն ու ոճիրը անպատասխան չի մնում: Այսօր քո զինակից Ռոբերտ Քոչարյանին ու սանիկ Մանվելին են դատում, վաղն էլ կգա եղբայրներիդ ու զարմիկներիդ հերթը:

Որովհետև նրանք են շարունակել քո արյունոտ գործը: Երեսուն տարի խեղդելով ու թունավորելով ժողովրդին, քո սանիկները տափաստանի վերածեցին Նաիրի երկիրը, պոչամբարներ դարձրեցին մեր հովիտներն ու ջրամբարները: Հանքարդյունաբերական մի խոռոչում հայտնվեցինք ազգովի ու դրանից դուրս գալը պետք է հրաշք լինի: Ու հազարավոր մանուկների սպականված հոգիներում նորից ու նորից հնչում է սպարապետին նվիրված լեգենդները: Հավատա, որ անպատասխան չի լինելու նաև քո գերեզմանը, որովհետև գալու է այն պահը, որ այդ պատանիները հեյթ են կանգնելու, որպեսզի միզեն քո գերեզմանին: Քո ոսկորներն անգամ հանգստություն չեն ունենալու: Պատահական չէր, որ պետք է անժառանգ սատկեիր ու գնայիր, որովհետև մոլագար ոճրագործից միայն հրեշներ կարող էին ծնվել: Մի տես սանիկների՝ Կարեն Գրիգորյանն ու Տաթևիկ Գրիգորյանը, սրանք ցանկացած մարդակերից ավելի դաժան ու արյունախում են: Այդպես են բոլորը, ում զինակից ես համարել քեզ, իսկ ով զինակից չէր, իսկ ով գաղափարն ու հայրենասիրությունը վեր էր դասում քեզանից՝ խոշտանգվում էր ու սպանվում: Դու չկարողացար հասկանալ, որ քո զոհերի բերանները փակեցիր, բայց նրանց ձայնը չոռեց, տասնամյակներ հետո անգամ աղաղակում են ու նզովում այն արգանդի ծնունդը, որը քեզ նման հրեշի լույս աշխարհ բերեց: Հավատա դեռ կգտնվեն հայորդիներ, որոնք իրենց խոշտանգված հայրերի համար, քո հարազատներից են պատասխան պահանջելու, ու չկարծես, թե անպատասխան են թողնելու, որովհետև երևի ջարդած գլուխդ կհիշեցնի, որ այդ ամենը հեքիաթների շարքից չէ: Մնում է միայն սպասել, որովհետև ժամանակը ամեն ինչ զցում է իր տեղը, ու չկարծեք, թե ժողովուրդը չի տեսնում, չկարծեք, թե ձեր գործած ոճիրները կոծկված են մնալու առանց պատասխան տալու: Ավարտում եմ այս նամակը, ցանկանալով, որ քո զինակիցները արժանանան իրենց սպարապետի բախտին, իրենք ավելիին արժանի չեն: Եվ վստահ եմ, որ դեռ կտեսնենք այն լուսավոր արևածագը, որը կբացվի հայ ժողովրդի վրա, որ պատմության տված դասերը պետք է գրել սերունդների հիշողության ու հոգու մեջ, որպեսզի չնոռանանք ո՛չ միայն մեր հերոսներին, այլև ազգադավներին ու ոճրագործներին, ու այդ ամենը պետք դաս լինի մեր ապագան կերտելու համար:

Գեհենի Առաքել 07.06.2019

ՄՈՒՆԳՎԱՐ ԿՈՄՍՈՄՈՆԻ ՓԱՌԱԲԱՆՈՒՄԸ

Ունեինք այք... ու չուզեցինք տեսնել: Երբ տեսանք... չուզեցինք հավատալ...

Մողթվում էինք, բայց չէինք ուզում սովորել որչ մնալու ճանփան:

Շահան Նաթայ

ԵԵրբեմն սուր այքը բավական չէ, տեսնելու շրջապատում եղածը, շատ դեպքերում էլ չենք նկատում, կամ չնկատելու ենք տալիս, երբեմն ժամանակը ու հանգամանքները այդպես են պահանջում: Շատ դեպքերում երկու գումարած երկուս չորս չի անում, որովհետև մեր ընկալումը ու ցանկությունը պարտադրում են ասել այն ինչ չենք ցանկանում: Պատահական չէ, որ հաճախակի եմ նշում Ջորջ Օրելու արտահայտությունները, որտեղ պարզ նշում է մարդկային մտքի, խոսքի ու գործի միջև եղած տարբերությունները: Այն ինչ տեսնում ենք խաբուսիկ է, երբ այքի տեսածն ու զգացածը տարբերվում են՝ ժամանակի և հանգամանքներից ելնելով: Բացահայտել մարդկային ներաքնաշխարհը բարդ է, որովհետև չկողմնորոշված մարդիկ հասարակության մեջ դառնում են անկառավարելի, նույնիսկ իրենք իրենց համար: Ինչպես նկատում ենք, վերջին ամիսներին ԿՈՒՌՔԵՐԻՆ փառաբանելու նոր հիստերիա է սկսվել: Դա արդեն իսկ վտանգավոր երևույթ է քաղաքացիական հասարակություն ձևավորելու համար: Իսկ ինչպես գիտենք քաղաքակիրթ հասարակությունում կուռքապաշտությունը խայտառակելի երևույթ է: Առհասարակ հասարակությունը պետք է մերժի կեղծիքը, սուտը, ստրկամտությունը ու մտավոր կուրությունը: Բայց ինչպես տեսնում ենք մեզ մոտ նորից Կիսաբաց լուսամուտներն ու Վազգենի վկաններն են բազմանում: Քաղաքակիրթ երկրներում արժեքները ժողովրդի պարանոցին չեն փաթաթում՝ ինչպես արվում է մեզ մոտ: Երեսուն տարի սերունդին խավարի ու տգիտության մեջ պահելով նրանց դարձրեցին գործիք, ինչպես Օրվելի գրքում: Օգտագործելով երիտասարդներին իշխանությունները իրականացնում են իրենց սև գործը: Ժամանակին Խորհրդային համակարգում այդպիսի կեղտոտ գործ կատարում էին ԿՈՄՍՈՄՈՆ-ի ակտիվիստները: Մի զարմացեք, քանի որ փաստագրությունը, որը ներկայացնում եմ ծանոթ է շատերին, իսկ թե ինչու են լռել կարծում եմ հասկանալի է: Նախ երիտասարդներին բացատրեմ, որ

ԿՈՄՍՈՄՈՒ-ը դա ներկայիս՝ Կոմունիստական կուսակցականների երիտասարդական թևերն է, որը կատարում էր կուսակցական աշխատանք: Ֆաշիստական Գերմանիայում դրանք կոչվում էին՝ Հիտլերյուգենդ: Կարծում եմ շատերը չգիտեն, թե իրականում ի՞նչ է նշանակում կոմսոմոլ, կամ կոմերիտմիությունը, կամ էլ ՀԼԿԵՄ հապավումը: «Հայաստանի Լենինյան Կոմունիստական Երիտասարդական Միություն»: Ուշադիր... Լենինյան երիտասարդական միություն: Այսինքն Լենինյան գաղափարախոսության նվիրյալ, ինչպես իրենց կանոնադրության մեջ է նշված. « կուսակցության ակտիվ օգնականն է ու ռեզերվը, և աշխատում է ԱՄԿԿ ղեկավարությամբ »: Այդպիսով ի՞նչ աշխատանք էր կատարում ԿՈՄՍՈՄՈՒ-ը կամ կոմսոմոլի ակտիվիստը: Այն, որ ակտիվիստ դառնալու համար հարկավոր էր ջանք ու եռանդ չխնայել, կուսակցական սանդուղքով բարձրանալու համար շատերը գնում էին երբեմն մեծ զոհաբերությունների գնով: Նախ Կոմսոմոլի ակտիվիստ լինելու համար՝ պետք է աչքի ընկնել հատուկ առանձնահատուկությամբ, « Գործ տալու » ունակություններով օժտված: Կցանկանայի հիշեցնել, որ դա առհասարակ կապ չունի վերջին ժամանակներս աղմուկ բարձրացրած ՀՅԴ պատգամավոր Անդրանիկ Կարապետյանի « Ազդարարման համակարգի » բանաձևի հետ: Կոմսոմոլի ակտիվիստի աշխատանքը կայանում էր նրանում, որ պետք է լսեր ու կուսակցական ղեկավարներին զեկուցեր այն ամենի մասին ինչ չէր բխում կուսակցական շահերին: Օրինակ՝ դասընկերների դասերից բացակայելը, դպրոցում կատարված վեճերը ու կենցաղային խոսակցությունները, անգամ իրենց ընտանիքներում, կամ հարևանների տներում կատարված խոսակցությունները ու դեպքերը: (Այսինքն Գործ սարքեր) իսկ Կոմսոմոլի կանոնադրության մեկ հավելվածում նշվում է, որ Ակտիվիստը պետք է ակտիվի մեջ վստահություն ձեռք բերել, ուստի նրանք մանրուքները փորձում էին գունազարդել ու մեծացնել ըստ իրենց ֆանտազիայի: Այդպիսով չափազանցված ներկայացնել ակտիվին, իսկ ակտիվի ղեկավարը իր հերթին նույնպես գունազարդում էր եղածը ու զեկուցում վերևներում: Արդյունքում նրանց զոհը հայտնվում էր միլիցիայությունում, կամ դատարանում, իսկ ավելի սարսափելիին հայտնվում էր կալանավայրում, կամ էլ հեռավոր Միրբիրի անձայրածիր տափաստաններում գտնվող արտրավայրերում: Ինչպես ասում են մոծակից փիղ են սարքում ու մարդու ճակա-

տագիրը կործանում: Եթե փաստագրությունը դիտարկելու լինենք 1937 թվականին ստալինյան մեքենան հենց կոմերիտականների շնորհիվ էր հավաքում նյութերը մարդկանց արտրավայրեր քշելու համար: Կոմսոմոլի ակտիվիստների վրա մեծ աշխատանք էր դրված, նրանք « վերբուկկա » էին անում իրենց հասակակիցներին ու դասընկերներին: Կոմսոմոլի կանոնադրության մեջ ասված է. « Պահպանել պետ. գաղտնիքները, բացահայտել աշխատանքում եղած թերությունները ,և հասնել դրանց վերացմանը »: Նույնը կատարում էին Գերմանիայում՝ Հիտլերյուզենդի անդամները, որոնք անգամ սեփական ծնողներին էին ուղարկում կառավարան ,կամ համակենտրոնացման ճամբարներ: Ջորջ Օրուելին իր գրքերում պարզ ներկայացված է ,թե ինչպես է գործում կուսակցական այդ մեքենան: Գարեգին Նժդեհը նույնպես լավ գիտեր երիտ կոմսոմոլների մասին, նա գրել էր կուսակցականամոլ երիտասարդների մասին, որոնք չարիք են ո՛չ միայն երկրի համար, այլև հասարակության: Իսկ ինչպես տեսնում ենք հանկարծ Լենինյան ոգով դաստիարակված Կոմսոմոլ Վազգեն Սարգսյանը հանկարծ, չգիտես ինչպես դառնում է Նժդեհական գաղափարխոսության ջատագողը, որին մի քանի տարի հետո իր ոհմակի ձեռքով էլ ոչ միայն դարձավ Հայաստանի Հանրապետության ազգային հերոսը, այլև իր ոջլոտ, գարշահոտ կերպարով ստվերեց Նժդեհին ու Անդրանիկին փառքը: Սակայն ինչպե՛ս եղավ, որ Վազգեն Սարգսյանը դարձավ հերոսական սպարապետ քիչ հետո: Այն, որ Վազգենը Սարգսյանը միակ կոմսոմոլը չէր ՀՀ իշխանության մեջ դա փաստ է, ժամանակի պահանջի հետ դիմակն ու շապիկը փոխեցին շատերը՝ Հրանուշ Հրանտի Հակոբյանը ՀԼԿԵՄ կենտկոմի քարտուղարը,- ՀԼԿԵՄ կենտկոմի առաջին քարտուղար, ընտրվել է ՀամԼԿԵՄ Կենտկոմի բյուրոյի անդամ (Մոսկվա) Գագիկ Գարուշի Հարությունյանը, որը աշխատել է Հայաստանի Կոմկուսի Կենտկոմում, Վազգեն Սարգսյան 1983-1986 թվականներին եղել է Երիտասարդ կոմունիստների լիգայի ղեկավար՝ Արարատի ցեմենտի գործարանում: Լևոն Տեր-Պետրոսյան, Կարեն Դեմիրճյան, Խոսրով Հարությունյան, Մեյրան Օհանյան, Ադվան Հովսեփյան, Ռոբերտ Քոչարյան, Սերժ Սարգսյան, Վլադիմիր Գասպարյան և այլն: Հայաստանի նախկին պատգամավորների ու կառավարության բոլոր անդամները եղել են կոմունիստական կուսակցության անդամներ: Բոլոր նախարարները և նրանց տեղալավները:

Պետք է հաշվի առնել այն փաստը, որ նրանց կենսագրության այդ հատվածը առհասարակ ջնջված է, կամ չի նշված: Այն, որ նշվում է թե եղել է անկուսակցական, կամ հարել է ինչ-որ գաղափարախոսությանը, ապա դա կեղծիք է, նրանք Լենինյան կամ թալանչիական գաղափարախոսության անբաժան մասն են եղել ու մնալու են: Կոմսոմոլ, կամ Կոմունիստական ակտիվիստներից շատերը առնետավազքով կարողացան տեղավորվեն իշխանության վերին օղակներում թալանելով և կոծկելով մեկը մյուսի հանցանքը: Իսկ թե ինչպիսի կոմսոմոլներ են եղել, արդեն իսկ նրանց հանցանքներից երևում է, որ բարի պտուղ չեն եղել դեռևս այն ժամանակ: Հիմա անցնենք Մոլագար Վազգեն Սարգսյանին, որը շիզոֆրենիայի պատճառով ազատվեց բանակից ու հետագայում էլ հայտնվեց Ղարաբաղյան շարժման կիզակետում: Ինչպես բազմիցս նշվել էր, Խորհրդային Հայաստանում Ղարաբաղյան ու ազատագրական շարժումը վիժեցնելու համար Մոսկովյան Կրեմլի իշխանությունը՝ ԿԳԲ -ն ու ռազմական շտաբը հատուկ ծրագիր են մշակում, որը պետք է հնարավորություն տար բացահայտել ու ոչնչացնել Արցախյան շարժման Գաղափարականներին, որոնք առաջնորդում էին Հայաստանում սկիզբ առած շարժումը: Հայաստանի կոմկուսի ու կոմսոմոլի ակտիվը պետք էր լիներ այդ օպերացիայի աչքերն ու ականջները: Այդ գործում ներգրավված էին միլիցիայի ու ներքին գործերի բոլոր ծառայությունները, բուժհաստատությունների բուժ անձնակազմը, քաղաքացիական պաշտպանությունը ու շրջանային, մարզային խորհուրդները: Մշակութային ակումբների ղեկավարները, դպրոցի տնօրենները: Կոմսոմոլի ակտիվիստները ու երիտասարդները պետք է միտինգների ու ցույցերի ժամանակ գրանցեին ու նշեին ցույցերի ակտիվ մասնակիցներին, և ցուցակները հասցնեին իրավապահներին: Ու պատահական չէր, որ Վազգեն Սարգսյանին նկատել էին և ներմուծել այդ աշխատանքներում: 1988 թվականի Երասխավանի հայտնի դեպքերից հետո, ԿԳԲ -ի հանձնարարականով գեներալ Մախրուս Յուզբաշյանի հրամանով, Վազգեն Սարգսյանին առաջ քաշեցին ու սկսվեց նրա փոչոտ ազտամարտիկի հաղթարշավը: «Ազգադավը » գրքում մանրամասն ներկայացված է փաստերը: Սակայն վերջերս մամուլում հայտնված « Ինչու Վազգենը ձերբակալել տվեց ռուս գեներալին, և ի՞նչ եղավ հետո » հոդվածը անցնում է բոլոր ստի ու կեղծիքի սահմանը: Այս հոդվածի հեղինակը Հովիկ Չարխյանն է, չգիտեմ թե ինչու

է նա կեղծում փաստերը, երբ այդ պատմության մեջ Վազգեն Սարգսյանը միայն երրորդական դեր է ունեցել, վերագրել մեր հերոս տղաների սիրանքը առանձնասենյակից դուրս չեկած կոմսոմոլ Վազգենին, որը հանկարծ բռնեց ու դարձավ Նժդեհական գաղափարախոսության կրողը: Վազգենի ընկերը ՉԵԿԻՍ Սերժ Սարգսյանը նույնպես Նժդեհական գաղափարների կողմնակից էր, մոռանալով, որ իր չեկիստ եղբայրներն են Գարեգին Նժդեհին խոշտանգել ու սպանել: Երբ աչքիդ տեսածը ու ականջովդ լսածն են փորձում կեղծել, դա արդեն վերջն է: Երբ հարբեցող Անդրանիկ Մարգարյանի անվան քաղաքական կուսակցական դպրոց են կառուցում: Մոլագարի անունով Ռազմական ուսումնարան են հիմնադրում, որտեղ միայն խոշտանգում և սպանում են կուրսանտների: Բավական չէ՝ արդյոք մի քիչ նայել իրականությանը ու փաստերին: Ամենազավեշտալին այն է, որ Վազգեն Սարգսյանին հանցակից ընկերները, որոնք նույնպես Կոմունիստական նոմենկլատուրայի մնացորդներ են սկսել են համացանցում ակտիվանալ՝ Անդրանիկ Քոչարյանը, Վահան Շիրխանյանը, Վաղարշակ Հարությունյանը փորձում են իրենց հանցանքները թաքցնել Վազգեն Սարգսյանի հերոսական կերպարի ետևում, իբր թե նա հայրենիքի հերոս է: Մոռանալով, որ մարդկանց հիշողություններից դեռևս չեն ջնջվել Վազգենի դավաճանությունները՝ Արծվաշենի, Շահումյանի, Մարտակերտի ու Լաչինի մարտական գործողությունների ժամանակ: Քրոք Քրոքորյանի կողմից Հայաստանին նվիրաբերած միլիոնների յուրացման գործում նրա ունեցած ավանդի մասին լռում են: Իսկ Վազգեն Սարգսյանի հանցագործ եղբայրների ակտիվությունն արդեն անցել է ամեն տեսակ սահմանը: Երբ Արմեն Սարգսյանը 90- ականներին Հայաստանի գործարանների սարքավորումները մետաղի ջարդոնի գնով վաճառում էր Իրանցիներին՝ դա նրա մենաշնորհն էր: « Լիզինի » հայտնի գործի մասին անգամ ԱՄՆ պետ. դեպարտամենտը գիտեր: Երբ Չոդի ոսկու գործարանի ոսկին իր սեփական կարիքների համար էր օգտագործում: Հազարավոր կողոպտված ու թալանված գործարանների գլխավոր հանցագործը հենց Արմեն Սարգսյանն էր: Չմոռանանք լրագրող Տիգրան Նադդայանի սպանությունը և նրա դեռ չծնված երեխայի մահը նույնպես այդ ոճրագործ ընտանիքի ձեռքերին էր: Վազգեն Սարգսյանի թիկնապահ՝ Մովսես Գեղանգուլյանի սպանությունը ու նրա ընտանիքի ոչնչացումը նրանց խղճին այդպես էլ չաժանրացավ: Երբ

պատերազմով անցած մեր հերոս տղաները մի կտոր չոր հաց չունեն ուտելու: « Սպարապետի » եղբայր՝ Արմեն Սարգսյանի դուստրը իր էլիտար խանութներով է հպարտանում, մոռանալով, որ այդ ամենը իր հոր արյունոտ փողերով է ձեռք բերել: Արմեն Սարգսյանի ֆեյսբուքյան ընկերների ցանկը այնքան մեծ է, որ զարմանում ես թե ո՞րագործին երկրպագող հիշողություն կորցրածների թիվը ինչքան մեծ է: Բավական չէ՞ արդյոք կեղծիքն ու սուտը դարձնեք արդարանալու միջոց... Բավական չէ՞ արյունարբուներին դարձնենք կուռք ու երկրպագենք նրանց... Ե՞րբ պետք է վերջապես հայ ժողովուրդը հասկանա, որ իրեն մորթող Դահիճը երբեք հայրենասեր չի կարող լինել:

Գեհենի Առաքել 11.03.2019

ՇԻՆԱՐԱՐ ՀԱՅՔ

*« Ոչ մի բան այնպես չէ, ինչպես ժողովրդի ձեռքը՝
շինելու համար այն, ինչ շինվում է քանդելով »:
Վիկտոր Հյուգո.*

Շատերը տեղյակ չեն, թե պետություն կառուցելու համար առաջին նախապայմանը որն է, տեղյակ չեն, թե պետություն կառուցելու համար ինչ է հարկավոր կամ ինչից սկսել ու վերջացնել: Երբ անընդհատ մեջ են բերում Իսրայելի ու Սալազիայի օրինակը: Հայ ժողովուրդը իր պատմության ողջ ընթացքում չկարողացավ ուրիշ ազգերից սովորել կամ թեկուզ մեր սեփական սխալներից: Հայ ժողովուրդը անգամ չկարողացավ իր թշնամին բարեկամից տարբերել: Թշնամի՝ ինչպիսի ակազդու բառ, գիտե՞ք, հզորները երբեք թշնամիներ չեն ունենում, որովհետև նրանք գիտեն, որ դիմացինը չի կարող իր հետ մրցակցել, ուր մնաց թշնամի կոչվել: Երբ հայոց լեռնաշխարհը անառիկ ամրոցի պես տրվել էր հայ ժողովրդին, այդ ժամանակ էլ հայերը չիմացան այդ անառիկ բերդի գինը: Արիսյան պատերազմից հետո էր, որ ազգովի աղաղակում էինք 800 հեկտար կորստի մասին,

աղաղակում էինք 100 ավելի զոհված հայորդիների կորստի համար: Անընդ-
հատ մեղքը բարդում էինք Մերժ Սարգսյանի ու հանրապետականների
վրա, 80-ականների զենքի պատմությունը դարձրեցինք « բոլոլա » ու
լոզունգ, Մանվելի տուշոնկաների թալանը դարձրեցինք հասարակական
քննարկման թեմա: Ասացե՛ք խնդրեմ, արդարացի՞ ենք այդ ամենի պատճ-
առների մեղավորը փնտրել նախկին իշխանությունների մեջ... Հիմա
շատերը նորից կսկսեն, թե Առաքելը աղբբեջանցու ջրաղացին ջուր է
լցնում: Այս տարբերակում էական չէ, թե շատերը ինչ են մտածում, էական
այն է, թե ես ինչ եմ մտածում, թե փաստերն ու պատմությունը ինչ է ասում:
800 Հեկտարի կորուստը ցավով ընդունեցին սփյուռքում ու հայրենիքում,
մի՞թե արդարացի էր այդպես ցավագին ընդունել, ինչ էր որ 800 հեկտար
կորուստը, մի՞թե այդպիսի հեկտարներ ենք կորցրել, որտեղ 800 հեկտարը,
այնտեղ էլ 80 հազարը: Կամ ապրիլյան քառօրյայի զոհերի համար ենք
բարձրաձայնում, մի՞թե արժեր, ինչու՞ այդպիսի 100 զինվոր ենք կորցրել...
Որտեղ հարյուրը, այնտեղ էլ հազարը... Մենք՝ հայերս, ցուցամոլ ու կեղծ-
ավոր ժողովուրդ ենք, եղած մոծակից էլ կարող ենք փիղ սարքել, մեր աչքի
գերանը թողած՝ ընկել ենք ուրիշի աչքի փշի ետևից: Հիմա ասեմ այն, ինչը
ցանկալի չէ լսել, ցանկալի չէ անգամ մտածել ու խորհել դրա մասին: Մենք՝
հայերս, սիրում ենք, որ մեր փոխարեն մտածեն ուրիշները, ուրիշները
մատնացույց անեն... Մեր ողբերգությունների պատճառներից մեկն այն է,
որ ինքնուրյունությունից ենք զրկված, սեփական եսից ու ինքնասիրույթ-
ունից: Հիմա կասեն ինչու եմ իրենց ինքնասիրությանը կպնում... Առհաս-
արակ, հայի ինքնասիրությանը որ կպար, արյուն կթափվի, բայց որ ինքնա-
սիրությունը իրենք իրենց կամքով գցում են ուրիշների ոտքերի տակ, դա
համարվում է տղամարդկություն: Սկսենք 800 հեկտարից, որը ցավագին
հարց դարձավ հայ ժողովրդի համար, իսկ երբևէ մտածեցի՞ք, թե այդ 800
հեկտարից առաջ կորցրել ենք Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանը,
Շահումյանը այն 800 հեկտարի նման անմշակ տարածք չէր, ինչպես համո-
զում էին մեր պաշտոնյաները, Շահումյանը իսկական դրախտ էր, իր սիգա-
պանձ լեռներով ու կանաչ սարերով: Նյութը գրելուց առաջ փորձեցի Հյու-
սիսային Արցախի Շահումյանը շրջանի մասին նյութեր գտնեք հայկական
Վիքիպեդիայում: Հավատացե՛ք, որ չգտա, որովհետև այն գոյություն չունի,
միայն գրված էր, Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի մասին,

որը վերաբնակեցվել է շահումյանցիներով: Պատկերացնում եք, Քարվաճառի տարածքում ստեղծել են նոր Շահումյանի շրջան ու անգամ պատմությունից ջնջել են նախկին Շահումյանի շրջանի պատմությունը, ջնջել են մեր ժողովրդի ու մեր հայրենիքի պատմությունը, որպեսզի եկող սերունդները Շահումյանի մասին լսելուց պատկերացնեն Քարվաճառի խանձված ու դատարկ բլուրները: Հետո ազատամարտիկ ընկերոջս միջոցով իմացա, որ Շահումյանը իսկական դրախտավայր էր, իր անզուգական լեռներով ու բնությունով, իր սառնորակ աղբյուրներով ու անձայրածիր անտառներով: Շահումյանի շրջանի շրջանի 16 հայկական գյուղերը, որոնք իրենց կոլորիտով ու բնությունով նմանը չունեին Արցախում, և դա անմշակ տարածքներ համարողը հայրենիքի դավաճան է: Հայոց պատմության մեջ Շահումյանի շրջանի Գյուլիստանը հենց այնպես չէր հիշատակվում Վարդաստան անունով, այդ տարածքում են եղել հայոց արքանների ամառանոցները՝ պատմական Դրախտիկը: Շահումյանի կորուստը այս քսանհինգ տարիների ընթացքում ոչ միայն մոռացանք, այլև ջնջեցինք, միայն մնացին ողբերգության զոհերի հիշողություններում և նրան զոհ գնացած շահումյանցու մորմոքված սրտում: Շահումյանի մասին մոռացանք ու ստեղծեցինք նորը, որը չսփոփեց ո՛չ շահումյանցուն, ո՛չ էլ նրա համար արյուն թափած հայորդիներին: Շահումյանի կորուստը Մերժի ձեռքով չէր, ոչ էլ քոչարյանի, Շահումյանի դավաճանությունը Վազգեն Սարգսյանի ու Լևոն Տեր-Պետրոսյանի թեթև ձեռքով էր: Կորուստը պատճառ չդարձավ, որպեսզի դավաճանները դառնային ազգային հերոս, կամ ժողովրդի առաքյալ: Վազգենի ու Լևոնի մեծարումն ու սրբացումը պատահական չէր, որովհետև մենք հայ ենք... Շահումյանի կորստին հարողեց Մարտակերտի մի մասն ու Արծվաշենը, նորից լռեցինք, նորից հանդուրժեցինք, նորից ջնջեցինք պատմությունից ու հիշողությունից: Այդպես եղել է դարեր և տարիներ առաջ, Կարսի ու Էրզրումի կորուստը նույնպես եղավ դավաճան հայի կոտրած ձեռքով, Անին ու Կիլիկիան, Վանն ու Սասունը, Մուշը, Չեյթունը... Ահա ամեն տեղ հայի արյունոտ սուրը:

Իսկ ամեն անգամ հայր մոխիրների միջից բարձրացավ, վերցրեց իր ավանդական գինու թասը, ու խմեց ծովից-ծով Հայաստանի կենացը, հետո մյուս թասով զոհված տղերքի կենացը ու թասիքի ու ախպերության կենացը: Բոլոր դարերում այդպես է եղել, ինչպես կասեր Բաֆֆին, մեր ժողովրդի

գլխից անպակաս են եղել Լևոնները, Վազգեններն, Մանվելներն ու Ազատ-
իչները: Հավատացեք դժվար է ապուշին բան հասկացնել, որովհետև ինքը
կարող էս ապուշանալ... Ինչպես ասում են. « Սևին սապոնն ինչ կանի,
խևին խրատն ինչ կանի »: Ի տարբերություն մեր ժողովուրդը ոչ միայն
խևերին է սիրում այլև պաշտում է մոլագարներին ու խեղկատակներին:
Ծովից-ծով Հայաստանը թիզ առ թիզ տվեցինք թշնամիներին ու միշտ
արդարացրեցինք, որ անպետք հողեր էին, հերոս հայորդիներին մատաղ
արեցինք ու միշտ արդարացրեցինք թե սուրբ նահատակներ են: Իրական-
ում կներեք արտահայտությանս համար, նրանք դարձան էշ նահատակ-
ներ... Գիտե՞ք թե ինչու... Որովհետև մենք՝ ինքներս, ամեն մի հայ թքած
ունեցանք նրանց գերեզմանների վրա, թքած ունեցանք նրանց ինքնա-
գոհարբության ու նրանք հայրենասիրության վրա, նրանք մնացին
մոռացված բառիս բուն իմաստով... Չեմ փորձի համոզել, ինքներդ տեսեք
աղքատության մեջ մեռնող ազատամարտիկներին, նրանք հայ ժողովրդի
անտարբերության ներքո մեռնում են ու մոռացվում, ապրիլյան քառօրյա
պատերազմի մասնակից զինվորներին, որոնք հաշմանդամ ու անօգնական
արհամարիված ու լքված: Ինչպես նախորդում նշեցի կենացային հայրեն-
ասիրության պակաս չենք ունեցել երբեք, ոչ մի դարում ու ժամանակ-
ներում:

Պատահական չէ ԱԺ-ում ստեղծվեց Ապրիլյան պատերազմի հանգամ-
անքների ուսումնասիրման քննիչ հանձնաժողով: Ազգային ժողովի կանոն-
ակարգի համաձայն՝ քննիչ հանձնաժողովը պետք է ղեկավարի Պաշտպա-
նության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախա-
գահ Անդրանիկ Քոչարյանը: Այն, որ Անդրանիկ Քոչարյանը բոլոր ժաման-
ակների հանցագործներից ու թալանչիներից մեկն է, դա փաստ է, սակայն
այն որ նրա մեջքին կանգնած է Լևոն Տեր-Պետրոսյանը ու Նիկոլ Փաշին-
յանը դա փաստ է, ի՞նչ եք կարծում, դա միտումնավոր չէ՞ արված: Քոչար-
յան Անդրանիկը ոչ միայն Վազգեն Սարգսյանի թալանի վկան է եղել, այլև
անմիջական մասնակիցը այնպես, որ մեր ժողովրդի մեջ դեռ կան շատերը
որոնց հիշողություններում դեռ մնում է Անդրանիկ Քոչարյանի գործած
հանցանքները: Արևմտյան Հայաստանում ցեղասպանվում էր հայությունը,
արևելյան Հայաստանում տոժում էին ու հրապարակներում խորոված ու
քյաբաբ պատրաստում: Նույնը կարելի է սփյուռքի մասին ասել, սփյուռքը

հավերժական քնով նիրհում է լուռ ու անտարբեր, միայն արթնանում է, երբ Հայաստանի խեղկատակ ղեկավարները այցելում են իրենց... Մե ծիղահ, մի ուախություն... Սկզբում գոռում էին Լևո՛ն, Լևո՛ն, հիմա էլ Նիկո՛ւ, Նիկո՛ւ... Հավատացնում են ժամանակին էլ սուլթան Համիդի ու Էնվերին էին այդպես վանկարկում: Քանի խոսեցի զինվորների մասին, հիշեցնեմ վերջերս համացանում հայտնված իմ գրառումներից մեկը, Արծվաշենի առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկ Հայկ Պետրոսյանի մասին, որը բնակվում է սահմանամերձ Ճամբարակ ավանի մի խարխուլ հյուղակում: Գիտե՞ք նրա հաշվին մեկ շաբաթվա ընթացքում փոխանցվել է ընդամենը 7.400 դրամ: Պատկերացնո՞ւ՞մ եք 10 միլիոն հայություն ու 7000 հայկական դրամ, դա ընդամենը 2 սուրճի ու քաղցրավենիքի գին չի անում: Այսպես ենք ազգովի հարգում ո՛չ միայն մեր հերոսին, այլև հայրենիքի համար կյանքները զոհաբերած հայորդիներին: Գնա մեռի, արի սիրեմ... Հայկական այս խոսքը գալիս է պատմության խորքից, դեռ նահապետական ժամանակներից՝ երբ եվրոպացիները ծառների վրա էին: Կորցված 800 հեկտարը աչքներս ծակեց, բայց հեկտարները, որոնք թույնով լցված պոչամբարներ են դարձել, դա անտեսեցինք, հեկտարները որոնք դարձել են հանքարդյունաբերական խոռոչներ, դրանք անտեսվեցին: Գիտեք, զարմանալին այն է, որ այդ հանքատերերն են խոսում մաքրությունից ու մարդկությունից, խոսում են ժողովրդի սիրուց ու մեծահոգությունից: Գագիկ Ծառուկյանին պատկանող ոսկու հանքերը թունավորում են ժողովրդին, իսկ մենք նրան բարերար ու սուրբ ենք դարձնում: Տեսեք քրեական տարերի հաղթարշավը ոչ միայն մեր շրջապատում ու կյանքում, այլև բանակում և սփյուռքում: Նրանք մեր փնթի ու հոգևորականների կողմից սրբացվում են ու դառնում երկնային, անգամ հանցագործ դոն Պիպոն իր սեփական կանթեղն ունի Երուսաղեմի հայկական տանարում: Վարդան Մամիկոնյանը իր մահից հետո կանթեղ չունեցավ այնտեղ, մինչդեռ պիպոն կանթեղատեր է ու բարեգործ ու առաքյալ: Ահա այն ինչի ականատես եք դուք, ինչի էլ դեռ ականատեսն ենք լինելու: Վարչապետ Փաշինյանի խոսքի ու գործի ոճը նկատե՞լ եք... Նա գերազանցեց իր ուսուցիչ Լևոն Տեր-Պետրոսյանին... Աղքատությունը մարդկանց զլուխներում է, ոչ թե իր իր շրջապատի պարզավճարներում, կամ էլ կնքահոր ամերիկյան խաղատներում: Գիտեք ինչ է զավեշտալին, երբ Ռոբերտ Քոչարյա-

-նին մեղադրում են զանցանքի մեջ, ու ազգովի սկսում են քննել թե քոչարյանը ծախեց, կերավ, թալանեց... Սաշիկի 50/50 ու նման հիմարություններ... Հիմա շատերը կասեն, թե Առաքելը Քոչարյանի արածը զանցանք համարում... Այո դա զանցանք է, համեմատած մյուս հանցանքների, սահմանադրության տապալելու գործը զանցանք է: Երբ մոռանում եք, որ պոչամբարների գոհ գնացած հազարավոր հեկտարները նրա ու իր ոհմակի ձեռքով է եղել, երբ մոռանում ենք, որ նրա թեթև ձեռքով Հայաստանի ռազմավարական ոլորտները հանձնվեց օտարներին: Առհասարակ Քոչարյանը ու Սերժ Սարգսյան համեմատ Լևոնի, Վազգենի ու Վանոյի իսկապես հրեշտակներ են: Այդ եռյակ հրեշները գերազանցեցին երիտ թուրքերի եռյակին՝ Թալեաթին, Էնվերին ու Ջեմալին: Այն որ շատերը պնդում են, որ ներկայիս վարչապետ Փաշինյանը ավանդապաշտ չէ, դրան ես համաձայն չեմ, նա շատ էլ ավանդույթները հարգող քաղաքական գործիչ է, նա նույնությամբ շարունակվում է ազգային ավանդույթները... Ժամանակին Լևոն Տեր Պետրոսյանի ձեռքով խեղաթուրվեց մի ամբողջ սրունդ՝ մարմնավաճառ դարձնելով դեռահաս աղջիկներին, իսկ պատանիներին քավորի սեղանիկների մոտ դարձրեցին քցող ու թալանչի: Այդպես եղել են դարեր առաջ, երբ թուրքերը հայ երեխաններին ենիչեր դարձնելով, սարքում էին իրենց ժողովրդի դահիճը: Փաշինյանը ավանդության համաձայն ծննդատներ է փակում, մանկատներ ու պատմական ամբիոններ ու ինչու չէ մշակութային օջախներ... Մշակույթի նախարարություն փակումը առաջին քայլն էր: Երկրապահներ, քայլ արածներ, գենդերներ ու սորոսականներ... Ժամանակին էլ Հայաստանում վիստում էին օտարերկրա միսիոներներն ու միսոնուհիները, հետո նրանց փոխարինեցին շեյխերն ու լորդուհիները ու այդպես դարերից եկած ավանդույթ պահպանվեց մինչև մեր օրերը: Այստեղ Փաշինյանը կապ չունի, ո՛չ էլ Լևոնն ու Սերժը, որովհետև մեղավորը ժողովուրդն է: Հետո կոիվ ենք տալիս, թե արդարադատությունը սխալ է, սահմանադրական դատարան, վեթինգ ու նման ապուշություններ...

Բայց գիտեք ամենաբարձր գոռացողները հենց այդ թալանչիներն են ու ավազակները... Իսկ թամաշավոր ժողովուրդը ինչպես միշտ քեֆ ուրախության մեջ է, ինչպես կիսաբաց լուսամուտներում, ծափ են տալիս ու հպարտանում ազգայի ոգին ու սերունդներ փչացնողներին: Երբ եվրոպա-

ցիները ծառների վրա էին, Հայաստանում քառատում էին ու անդամահատում էին ազատ մտածող մարդկան: Շատերը տեղյակ չեն, որ կաթոլիկ եկեղեցին հայ առաքելական կղերից ընդօրինակեց Ինկվիզիցիան: Նույն աղվեսադրոշմն ու նույն անդամահատումը: Չնայած կաթոլիկ եկեղեցին համարձակություն ունեցավ ընդունել անցյալի գործած իրենց մեղքերը, իսկ մեր առաքելական եկեղեցին ապաշխարհելու փոխարեն օվշորներում միլիոններ է դիզում, դա նույնպես ավանդույթ դարձած երևույթ է: Լուսավորիչ Միքայել Նալբանդյանի Հնդկաստանի ճանապարհորդությունների մասին վկայությունը հենց այդպես չէ արված, Րաֆֆին, Ֆրրիկը, Խորենացին ու Մուրացանն ու Թումանյանը նույնպես ասագանգել են: Մինչ դողերն ու մկները, պիպոները ու մնացած հանցագործները վանքեր ու դղյակներ էին կառուցում, ժողովուրդը ջան գյուլում էր երզում ու ուրախանում... Գարեր առաջ այդպես եղավ Արցախում ու պատմական մեր հայրենիքի բոլոր մարզերում ու շրջաններում: Նախարարական տները քեֆ ուսիության մեջ էին, ժողովուրդը ժանտախտի ու սովի մեջ: Խեղճ Անդրանիկը այդպես էլ չկարողացավ գլուխը դնել բարձին ու քներ, անընդիստ հարամեցին ու ապականեցին, անգամ մեռնելուց հետո էլ մարդը հանգիստ չննջեց, Մանվելի պես փնթիները պետք է ծաղր ու ծանակի ենթարկելին նրա հիշատակը՝ վազգեն ոճրագործի մեղավ շնորհելով նրան, դա դեռ քիչ էր, մտավորականներն ու հայ հասարակությունը լուռ թամաշավորի կարգավիճակում էր հետևում էր: Պատկերացնում եք Գարեգին Նժդեհին սպանելուց տասնամյակներ անց՝ 1992 թ-ի մարտի 30-ին, Նժդեհը անկախ Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից արդարացվեց, որի կարիքը երբեք չէր զգացել: Սրան ի՞նչ կասեք... Կրկին թուրքն է մեղավոր, թե Գեհենի Առաքելը... Հասկանում եմ, դժվար է ընդունել դառը իրականությունը: Իսկ ինչ վերաբերվում է երկիր կառուցելուն, որի մասին նշեցի սկզբում... Արդյոք տեսե՞լ եք Նիկոլ Փաշինյանի մատիկները, տեսե՞լ եք նրա փափկասուն նախարարների նուրբ մատիկները, թրաշներին չխաբնվեք, որովհետև այժմ էլ մուրուք ունի, բայց տղամարդ չէ: Երկիր կառուցելու համար ամուր ու պինդ ձեռքեր են պետք, ամուր բազուկներ ու կամք, ամուր ու հաստատուն խոսք, չափած ու ձևած միտք ու շնորհք, վերջապես ազնիվ ու արդար հավատարիմ մարդիկ, որոնք արդեն իրենց կենսագրությունով ու աշխատանքով, իրենց նվիրվածությամբ ու աշխատ-

անքով բազմաթիվ անգամ ցույց են տվել, որ իրենք արժանի են հայրենիք կառուցելու գործում: Հայրենիք ու պետությունը տուն տունիկ խաղալ չէ, որ բռնոցի ու պախկվոցի: Պետությունը կառուցում են ամուր հիմքի վրա, կառուցում են ազնիվ մարդկանցով, կառուցում են սիրով ու նվիրվածությամբ: Կառուցում են խելքով, ոչ թե ուտել խմելով, ու երկրից երկիր քաշ գալով: Հայ ժողովուրդը իմաստուն չէ, այլապես այս վիճակում չէր լինի, հայ ժողովրդի մեջ եղել են շատ իմաստուններ, որոնց շնորհիվ են մեզ ճանաչել աշխարհում, նրանց շնորհիվ է պահպանվել ազգի համն ու հոտը: Ցավոք սրտի, ինչպես կասեր Գարեգին Նժդեհը « Այլ կերպ հայությունը կմնա մեկն այն դժբախտ ժողովուրդներից, որոնք գոյություն ունեն, բայց չեն ապրում, որոնք « աշխարհում են, բայց աշխարհից չեն »:

Գեհենի Առաքել 07. 02. 2020թ.

ԱԶԳԱՅԻՆ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ

*« Ազգերը անմահական չեն,
Եթե մի ազգ մեռնի, պատճառը իր իսկ ներսից է »:
Հովհաննես Բազազնունի*

Մենք՝ հայերս աշխարհի եզակի ժողովուրդներից ենք, որոնք գենետիկական տեսակով համարյա թե փոփոխությունների չենք ենթարկվել, չնայած, անցել են հազարամյակներ, մենք մնացել ենք մեր տեսակի մեջ, կարծրացած ու ամրացած տգիտությունը դա գենետիկական արատ չէ, այլ ժայռացած կարծրատիպ: Եվ մեկ օր պետք է փշովի այդ ամենը, որպեսզի կարողանանք գտնել ինքներս մեջ: Ամեն անգամ հիշելով Տիգրան Մեծին կամ մյուս հզոր թագավորներին ու հերոսներին՝ մենք արժեզրկում ենք ոչ միայն նրանց գերեզմանները, հիշատակը, այլև մենք վարկաբեկում ենք ինքներս մեզ, մեր ազգային պատկանելությունը: Խաչագողությունը դարձավ ազգային կեցվածք, սրբությունները ոտնատակ անելով քարշ տվեցինք մեր գոյը, բոլոր դարերում: Րաֆֆին « Խաչագողի հիշատակարանը » գրելուց չէր գրել միայն այդ գյուղի բնակիչների մասին, այլ նկատի ուներ հայ ժողովրդի մի զգալի հատվածի մասին, որոնք ապրում են նույն կանոններով

ու սկզբունքներով: Ու ամեն ինչը փորձեցինք ներկել ու գունազարդել, գորշ ու մոայլը ներկեցինք վառ գույներով, իսկ լույսն ու պայծառը գորշ ու սև գույնով: Մեր ազգային ու գեներտիկական որակն է այդպես: (*« Ազգերը անմահական չեն, Եթե մի ազգ մեռնի, պատճառը իր իսկ ներսից է »: Հովհաննես Բազազունի*) Պատահական չէր, որ Ապրիլյան պատերազմում կորցրած 800 հեկտարը անպետք հողեր էին, իսկ հարյուրից ավելի գոհերը՝ անխմաստ գոհեր: Այդպես անպետք էր եղել հետո Անի բերդաքաղաքը, Կարսի բերդը, Էրզրումը, Բայազեթը, Վանը, հետո անպետք էր Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանը, Մարտակերտն ու Արծվաշենը: Անպետք էր ողջ Արևմտյան Հայաստանը ներառյալ Կիլիկիան: Չէք տեսնու՞մ, որ մեր ազգի համար արժեքները ոչինչ են, իսկ սովորաբար արժեքի գինը չիմացողը կորցնում է եղածը: Չկարողացանք արժեքավորել հողը, հերոսներին, լեզուն, մշակույթը թագավորներին ու առաջնորդներին: Փոխարենը հերոսացրինք դավաճաններին, կուսակցությունները ու դավաճաններին ու ազգադավներին: Նոր սերնդին պղծեղինք պղծություններով կեղծելով և թաքցնելով իրականությունը: Վախկոտին ու դասալիքին դարձրեցինք զորավար, անշնորհք անգրագետին՝ գիտնական ու լուսավորիչ: Հեռուներում փնտրում ենք մեղավորներին, ուղղում ենք սլաքները դեպի արտաքին թշնամին, փորձելով մեր վրայից նետել մեր հանցանքների բեռը: Չկարողացանք գնահատել մեզ շնորհված երկիրը, մինչդեռ հայոց լեռնաշխարհը չկարողացանք դարձնել անառիկ ամրոց, չկարողացանք մեր կիրճերը դարձնել թշնամու համար գերեզմանոց: Որովհետև թշնամին մեր կողքին էր՝ մեր մեջ, ու վախեցանք ընդունել այդ ճշմարտությունը, վախեցանք թափել այն արյունը, որը պղծված էր, վախեցանք բռնել գողացողի ձեռքը, վախեցանք կտրել դավաճանի գլուխը: Վախեցանք դրկից դավաճանին ցույց տալ իր տեղը, փոխարենը հանդուրժեցինք, այդ անտարբեր հանդուրժողականությունը դարձավ խրոնիկ, դարձավ ավանդույթ ու սովորություն: Այդ հանդուրժողականությունը եղավ թուլություն, վախ, որի արդյունքը դարձավ հավերժական տառապանք, դարձավ ցեղասպանություն: Անգամ ցեղասպանված լինելով չկարողացանք գտնել պայքարի ու ազատության ճանապարհը, չկարողացանք խուսափել նոր ցեղասպանությունից: Բանի դար է ցեղասպանվում ենք մեր ազգադավների ու դավաճանների ձեռքով, Ադանա, Կիլիկիա, Մեծ եղեռն, Սոււմգայիթ, Գանձ-

ակ Բարու... Ահա այն ամենի պատասխանը: Չկարողացանք դարերից ու մյուս ազգերի պատմությունից դասեր քաղել, չկարողացանք մեր տակ-անքների աչքերին նայել առանց վախի, փոխարենը համբուրեցինք նրանց արյունոտ ձեռքը, հնազանդվեցինք նրանց կրքերին ու քմահաճույքներին: Ոսկու ու հաճույքների փայլը կուրացրեց մեզ, որովհետև նյութապաշտ ենք, կեղծավոր ու տմարդի, մեռելի վրա սուտ ճառեր ասելուց ու արտասուքներ թափելուց ոչնչի ընդունակ չենք, փոխարենը բամբասելու ու վարկաբեկելու համար մեծ վարպետ ենք: Գող ու ավազակ վաճառականներ, հանցագործ ու մարդասպան բարերարներ Տգետ ու բանասարկու ուսուցիչներ, խաբեբա ու դավաճան առաջնորդներ: (*«Մենք չունենք ազնվականություն, առաջ-նորդներ, ղեկավարներ: Մեր ունեցածը վաճառականություն ու հոգևոր-ականություն են Վաճառականությունն արդ է, իսկ հոգևորականությունը միշտ դեմ է անհատի ազատությանը: Նրանք, ովքեր պատասխանատու են մեր անխոսանգության համար, հանցագործ ավազակախումբ են »: Բաֆֆի*) Մի՞թե քերթողահայր Մովսես Խորենացին ամբողջ կոկորդով իզուր էր ողբում, որովհետև գիտեր, որ գենետիկական ու քրեածին ոհմակն էր թագավորում հայոց աշխարհի վրա: Մնասպահ կղերականներն են մոլորեցնում տգիտ-ության ճիրանների մեջ հայտնված զանգվածներին: Ողբում էր, որ հոստի են վերածվել երբեմնի ժողովուրդ կոչվածը: Մովորություն ունենք ամեն ինչը բարդել քրիստոնեության ու բարբարոս ազգերի գլխին, չցանկանալով հավատալ, որ մեր թշնամիները միշտ ուղղորդվել են մեր մեջի ազգադա-վների կողմից: (*«Մեր պատմությունը լեցուն է դավաճանության փաստ-երով: Պարսիկների, հույների, արաբների, սելջուկների կամ մոնղոլների բանակները մեզ նվաճելուց առաջնորդվել են միշտ հայի ղեկավարությամբ: Հայերը միշտ կռվել են թշնամու հետ ուսուսի սեփական ժողովրդի դեմ »: Բաֆֆի*) Սկզբում բացում էին միջնադարյան բերդաքաղաքների դարպասները, հետո էլ դաշույնը խրում ազգային ոգու թիկունքը: Հիմա էլ ծախում ենք երկրի ոչ միայն մարտավարական ոլորտները, այլև ժողովրդին ու ընդերքը: Հոստի վերածված հայ ժողովուրդը մոլախոստի պես անօգնական ճոճվում է հյուս-խային ու հարավային քամիներից դառնալով թուրքասեր, ռուսասեր, հետո արևմտամետ ու ռուսամետ. Ճոճվում ենք փորելով ոչ միայն մեր գերեզ-մանը, այլև մեր զավակների՝ եկող սերունդների: Ու ամեն անգամ արդար-ացնում մեր դավաճաններին ու նրանց գործած ոճիրները, պատճառներ

գտնում մարդասպանի արյունոտ ձեռքերի սուտ պատմությունը ներկայացնել հերոսության լեգենդներով: (« Փնտրեք հայի սուրն այնտեղ որտեղ հայի արյուն է թափվել »: *Բաֆֆի*) Երբ խնամի-ծանոթ-բարեկամը գերադասելի է, քան սեփական երկրի ու ժողովրդի շահը: Երբ միլիոններ են ծախսվում իրենց հաստագլուխ թուլեքի հարսանյաց հանդեսներին, երբ այդ գումարները սովահար որբի բերանից են գողացել, երբ ճոխ ու շքեղ ապարանքների հետ երկինք են բարձրանում արյունոտ փողերով կառուցված եկեղեցիների գմբեթները, իսկ սահմանին կանգնած զինվորը քարերով ու բահով է կռիվ տալիս թշնամու հետ, ապա չտեսնելը դա կուրության նշան չէ, այլ մտավոր ամուլության հետևանքն է: Նույնը եղավ անցյալում, բոլոր դարերում: (« *Վանքերից ծագեց մեր երկրի կործանումը* »: *Բաֆֆի*) Երբ ազգային ջոջերը ու նրանց ընտանիքները սկսեցի ճոխ վայելքների մեջ իրենց շռայլություններ թույլ տալ՝ Աֆրիկաներում առյուծ ու փիղ որսալ, կամ ամերիկյան ուղևորությունների համար միլիոններ մսխել, դա կոչեցինք առատաձեռնություն, անգամ օրհնեցինք ու բարօրություն ցանկացանք նրանց բռնած գործերին: Երբևէ փնտրել՝ ենք մեր մեջ մեր աղետների պատճառը, ո՛չ իհարկե, ինչու՞ փնտրել մեր մեջ, երբ կա օտարը, երբ կարանք ամեն ինչ բարդել ուրիշի գլխին: Երբ օտարներն են կեղծում պատմությունը աշխարհով մեկ կոկորդ ենք պատռում, թե կեղծում են հայոց պատմությունը, բայց երբ մեր տականքներն են կեղծում այդ պատմությունը, ապա դա արդարացնում ենք, նույնիսկ հերոսացնում ու մրցանակներ շնորհում: (« *Դա մի սարսափելի եղեռնագործություն է, սպանել պատմությունը* »: *Դա ամենամեծն է բոլոր հանցանքներից*: *Նրանք կամենում են ոչնչացնել մեր նախնյաց գործերը և հավիտենական մոռացության մեջ թողնել մեր հայրենիքի հիշատակները, որպեսզի իրանց վատ գործերն ևս նրանց հետ ծածկվեն, մոռացվեն և սպազայի համար ամոթի ու նախատինքի առարկա դառնան* »: *Բաֆֆի*): « Հայի արյունը չի կարող թափել », այդպես մեր գլխում մտցրեցին կղերականները, մեղք է, հայը հային չի սպանի, որովհետև քրիստոնյան պետք է ներողամիտ լինի: Այդպիսի հիմարություններով լցրեցին առանց այն էլ դատարկ գլուխները, երբևէ փնտրել՝ մեր մեջ լույսի ու ազատության ճանապարհ ցույց տվողներին, ոչ իհարկե, ինչու՞ փնտրել, երբ կան ճառախոսները կամ մեծահարուստները, երբ կան մեզ խղճացողներն ու մեզ կեղեքողները: Երբ մի օր մեզ հաջողվի գտնել կամք

ու անկեղծորեն նայել մեր անցյալի սխալներին, երբ համարձակություն կունենանք տեսնենք այն ընդունել ու մերժել, ամեն ինչ կդառնա այլ կերպ, այլ երանգով: Բարձունքներ նվաճելու համար չպետք է փնտրել դժվար ու քարքարոտ ճանապարհ, պետք է միայն ընդունել անցյալի սխալները, պետք է միայն ընտրել այն առաջնորդին, որը ընդունակ է անել այն ամենը, ինչ պարտավոր է անել:

Գեհենի Առաքել 17.10.2019թ.

ԱԶԳԱՅԻՆ ՈՐԱԿՆԵՐԸ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍՆԵՐԸ

« Ճշմարիտն էն է, որ մեր ամբողջությունը տառասպում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությամբ »:

Հովհաննես Թումանյան

Ազգային գենետիկական որակների մասին խոսելիս՝ պետք է հաշվի առնել մեր ազգային մտածելակերպն ու մտավոր գիտական ձեռքբերումները: Կարևոր գործոններից մեկը հայ ազգային հերոսներն են: Առհասարակ, քանի որ Արցախը Հայաստանի մի մասն է, ուստի նրա ձեռքբերումները նույնպես մերն են: Այդպես՝ թվարկենք մեր հերոսներին ու կհասկանաք հայ ժողովրդի որակական հատկանիշները: Չնայած գրվել է մտավորականների մասին, որոնք միաբջիջ են ու ողնաշարից զուրկ: Գոյություն ունի ճշմարտություն, և գոյություն ունի հարաբերական ճշմարտություն, նայած թե ճշմարտություն ասվածը ում շուրթերից է հնչում, հանցագործի, մարդասպանի թե ազգադավի: Պետք է ճշմարտությունը գնահատվի ըստ աստղի ու անձնավորության չափորոշիչների: Փորձենք թվարկել, այդպես ասած, չակերտավոր հերոսներին, որոնք դարձել են ազգային հերոսներ:

Հայաստանի ազգային հերոսները թվով 17 են, որոնցից 4-ը, առհասարակ, հայ կոչվելուց շատ հեռու են, այդ մարդկանց տված վնասներն ու հանցանքները գերազանցում են քրեակատարողական հիմնարկում գտնվող ամենավտանգավոր հանցագործներից ու արածներից:

1 Կարեն Մերոբի Դեմիրճյան, 2 Վազգեն Չավենի Սարգսյան, 3 Նիկոլայ

Ռիժկով, 4 Էդուարդո Էռնեսկյան:

«Արցախի հերոս» կոչմանն արժանացածներ 27 հերոսից, որոնցից շուրջ 14-ը պետական դավաճաններ են ու հանցագործներ:

1 Սամվել Բաբայան, 2 Վազգեն Սարգսյան, 3 Մեյրան Օհանյան, 4 Ռոբերտ Քոչարյան, 5 Մանվել Գրիգորյան, 6 Սամվել Կարապետյան, 7 Մերժ Սարգսյան, 8 Մովսես Հակոբյան, 9 Վիտալի Բալասանյան, 10 Արկադի Ղուկասյան, 11 Չորի Բալայան, 12 Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյան, 13 Արթուր Աղաբեկյան, 14 Արշավիր Ղարամյան:

Ահա այդ ցուցակը, այս հերոս կոչեցյալները ոչ միայն թալանեցին ժողովրդին ու երկիրը, այլև մեր զինվորի արյունով սնվեցին տասնամյակներ: Նրանց մեջ կան մարդիկ, որոնք անգամ հայերեն խոսել չգիտեն էլ ուր մնաց թե գրել կարդալ: Ազգային հերոս՝ անտառաճանաչ և օտար: Արդյոք կցանկանա՞ք, որ ձեր զավակները դրանց հերոս համարեն, դեռ նրանց ժառանգների պատմությունը չնշենք, որովհետև նրանց զավակները կրկնակի անկուշտ են, քան թե իրենց հայրերը: Ու հպարտանալ այս աղբակույտով դժվար թե կարողանանք: Սրանք հերոսներ չեն, այլ հրոսակներ... Մի օր երևի ժամանակ լինի՝ կգրեմ այս հրոսակների ու նրանց զավակների կենսագրությունը:

Գեհենի Առաքել 20.10.2019

ՔՈՍՈՏ ԵՐԿԻՐԸ

« Անաստուված երկրում բնակվի՛ր, բայց անօրեն երկրում մի բնակվիր »:
Ըաֆֆի

Հայ ժողովրդի անառողջ հոգեվիճակի մասին բազմիցս է գրվել, ուղղակի ավելորդ չէ ևս մեկ անգամ հիշեցնել այդ մասին: Սակայն վերջին ժամանակներում ինքնաբավարարման ու կլիմաքսային ծանր վիճակը ավելի անհանգստացնող է, քան՝ երբևիցե: Հիշում եմ՝ դեռ 2016 թվականին, Ապրիլյան պատերազմից հետո, ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը շեշտել էր, որ Հայաստանը « քոսոտ » երկիր է: Պետք է խոստովանեմ, որ մասամբ համաձայն եմ Ռադիկ Մարտիրոսյանի հետ:

Չնայած վստահ եմ, որ նա դա ասել է ոչ թե մտածված, այլ մեխանիկորեն, արդարացնելու համար իրենց անգործությունը: Սակայն փաստ է, որ իսկապես ապրում ենք քոստո երկրում, և դրա ապացույցը կտեսնեք ինքներդ: Այն, որ Քոստո երկրում իշխանավորում են քոստոները, դրա մասին կհամաձայնեն շատերը, քոստո կառավարությունով, քոստո վարչապետով ու ինչու չէ, քոստո Ազգային ժողովով... Նիկոլի թրաշամանուկ մանկլավիկները: Այս գրառումը հերթական անգամ լեզու կդնի վայրահաչողների բերանում, հերթական անգամ պատճառ կդառնա, որպեսզի համոզեն իրենք՝ իրենց, որ Գեհենի Առաքելը աղբրեջանական ֆեյք է կամ գործակալ: Սակայն կարևորը դա չէ, պատմությունը ցույց է տվել, որ մենք՝ հայերս, նախընտրում ենք սուտը, քան ճշմարտությունը: Վստահ եմ, շատերը գիտեն, որ ապրում ենք Քոստո երկրում, ուղղակի բարձրաձայնելուց խուսափում են: Նամանավանդ, երբ խոսքը գնում է հայրենասիրության մասին: (*« Գինետնային հայրենասիրությունը, որ բավականին դափնողներունի մեր մեջ, այնքան էլ հեռու չէ անհայրենասիրությունից »: Գարեգին Նժդեհ*) Մտաբերեք. ամեն առիթի դեպքում շեշտում ենք, որ « Այս երկիրը՝ երկիր չէ »: Իսկ եթե երկիր չէ, ապա այդ դեպքում ի՞նչ է... Գուցե Քոստո ասել կուզի, որտեղ ամեն ինչ թարս է, ինչպես « Ծուռ հայելիների թագավորությունում »: Ինչպես կասեր ժամանակի իմաստունը, անգամ խիարն էր թարս աճում: Վիպասան Բաֆֆին ասում էր. « Անաստված երկրում բնակվիր, բայց անօրեն երկրում մի բնակվիր »: Մենք հայերս նախնտրում ենք խաբերաներին, քան թե արդար ու ազնիվ մարդկանց: Հուսով եմ՝ հետևություն անողը կարող է մտածել այդ գրառման մասին: Նախ պետք է հասկանալ թե Քոստո երկիր ինչ է նշանակում: Եթե հիշում եք՝ Ռադիկ Մարտիրոսյանը շեշտել էր, որ Քոստո երկիրը չի կարող զենք արտադրել, ուր մնաց՝ միջազգային շուկա դուրս գա: Չնայած պետք է խոստովանեմ այն, որ հազարավոր պատճառներ կան, որպեսզի Հայաստանը տեղ գրավի Քոստո երկրների առաջին տասնյակում: Ականջին տհաճ չինչելու համար, կարող ենք Հայաստանն անվանել « երրորդ աշխարհի երկիր» այնպիսին, ինչպիսին են աֆրիկյան հետամնաց երկրները: Միայն չասեք, թե դա այդպես չէ... Բավական է նայենք Հայաստանի թոփ մեկ հեռուստաշոուն՝ « Կիսաբաց լուսամուտները », որտեղ անկիրթ, անատամ հյուրերը կենակցում են իրենց հայրիկների ու մայրիկների հետ:

Պատահական չէ, որ Կիսաբացի Հրաչը ու անտառանանաչ Գագիկ Շամշյանը համարվում են հայտնիներից՝ ամենահայտնին: Քանի դեռ հիշեցինք հայտնիներին, տեղին է հիշել ազգային հերոսներին ու մտավորականներին: Եթե բոլշևիկ ու կոմսոմոլ ոճրագործներն են ազգային հերոսները ուրեմն, հավատացե՞ք, այդ ազգի տառապանքը հավերժ է: Հետո հիշենք Արցախի հերոս գեներալների շարասյունը, որոնք աղյուրեջանական գեներալներից ոչնչով չեն տարբերվել, նույնիսկ գերազանցել են նրանց իրենց բարբարոսությամբ: Նրանց ձեռքերին ու խոճին ավելի շատ հայ զինվորի արյուն կա քան թշնամու երկրի գեներալների: Դրանց կարելի է գումարել նաև մտավորականների շարասյունը, որոնց կարելի է կոչել հինգերորդ շարասյան լոկոմոտիվ: Հենց այդ չակերտավոր մտավորականների միջոցով է ազգային տականքը դարձել լեգենդար, նրանց ձոների ու երգերի շնորհիվ է ոճրագործը դարձել առաքյալ: Առհասարակ դա Քոստոս երկրում ընդունված կարգ է, կարծում եմ՝ շատերն են ծանոթ իտալացի գրող Չաննի Ռոդարիի ստեղծագործություններին, որտեղ նկարագրվում են Քոստոս երկրի բարբերն ու սովորությունները օրենքների ու մարդկանց մասին: Տեղին է հիշել վարչապետ Փաշինյանի արտասանած՝ « ՀՀ հայարտ, արժանապատիվ, հաղթանակած քաղաքացի » միտքը: Չավեշտալի է հնչում, երբ Փաշինյանը անգամ չի հասկանում, որ Քոստոս երկրում հայարտ ու արժանապատիվ մարդիկ չեն կարող լինել, հաղթանակած առավել ևս լինել չեն կարող: Դե, եթե չհաշվենք հինգերորդ շարասյունը: Հիմա պատկերացրե՞ք մի տուն, որտեղ դու ոչ թե տան տիրոջ կարգավիճակով ես, այլ ստրուկի, որը զրկված է անգամ խոսելու կամ դժգոհելու իրավունքից: Այնպես որ տան տերը ինչ դիրքով, կամ որ ժամին կցանկանա կվարվի այնպես ինչպես ուզենա: Եկեք իրականությունից չխուսափենք... Եթե երկրի ընդերքը օտարին է պատկանում, այդ թվում՝ ռազմավարական ու տնտեսական ոլորտները՝ երկաթգիծը, հեռահաղորդակցությունը, էներգետիկ համակարգը, ջրամատակարարումն ու գազամատակարարումը, անգամ ապահովագրությունները ու անվտանգությունը պատկանում է օտարին, (հիշեցնեմ որ հակաօդային պաշտպանությունը անգամ մեր ձեռքից խլեցին), ի՞նչ եք կարծում, այդպիսի երկրում կարո՞ղ է հայարտ ու ազատ քաղաքացի լինել: Միայն դրոշով ու զինանշանով չէ պետությունն անկախ կոչվում: Հայաստանում ապրող ժողովուրդը միայն սպառող հուճք է հանդիսանում:

դիսանում: Հումք բառը կոպիտ է հնչում, սակայն դա փաստ է: Եթե երկրի քաղաքացուն օգտագործում են միայն վճարների ու իրենց գրպանները լցնելու համար, ապա դա հումք է: Երբ պետությունը չունի արտադրություն ու միայն սպառող է: Անգամ զուգարանի թուղթն է ներկրվում դրսից: Ինչպես ասացի, երկրի հակաօդային պաշտպանությունը հանձնեցինք ռուսներին, դրանով հարվածի տակ դնելով ժողովրդի գլխին կախված օդային վտանգը: 90-ականներին այդ նույն բացթողության հետևանքով ադրբեջանական օդուժը ռմբակոծում էր Կապանն ու սահմանամերձ գյուղերը: Չհաշված Թուրքական ավիացիան, որը Արարատյան դաշտով էր սավառնում: Գարեգին Նժդեհի խոսքը արդիական է. « Մակաբույժ է մի ժողովուրդ, եթե իր ինքնապաշտպանության համար հենվում է մի օտար ուժի շնորհին: Կյանքում Մակաբույժն անբարոյական է, իսկ նմանը տեղ չունի պատմության մեջ »:

Գազային ու էներգետիկ ոլորտների կորուստը հաստատում էր Քոստոս երկրի կարգավիճակը: Տեղին է հիշել Հանրապետական կուսակցության փիլիսոփա Թոխմախի Մհերի հայտնի հայտարարությունը. « Ավելի լավ է ռուսի լծի տակ, քան թե...»: Անգամ Արցախյան պատերազմի հաղթանակները վերագրեցին ռուսներին, մինչդեռ մեր հայորդիները ամեն թիզ հողի համար արյուն են թափել, սեփական ընտանիքը մատաղ անելով հայրենիքին: Առհասարակ մենք ապերախտ ժողովուրդ ենք, քանի որ ուրացանք ո՛չ միայն դա, այլև սկսեցինք այն օգտագործել ինքնախաբեության ու կեղծիքի համար: Գարեգին Նժդեհը շեշտում էր, որ ապերախտ ժողովուրդ ենք... Մովսես Խորենացին ու Նարեկացին նույնպես: Արցախյան պատերազմի վետերան իմ բարեկամներից մեկը վերջերս մի արտահայտություն արեց, որը կարծում եմ տեղին կլինի ներկայացնել. « Արցախյան պատերազմում մեր հերոսները զոհվեցին, որ Արցախը դառնա Բակո Սահակյանի ու Արայիկ Հարությունյանի հոր բոստանը: Հազարավոր տղաներ, որոնք այդ ժողովրդի ու հողի համար արյուն թափեցին, անգամ մի բուռ հողի չարժանացան, անգամ հասարակ հարգանքից զուրկ մնացին »: Սրանք ազատամարտիկի խոսքեր են, ասված Արցախի նախագահի ընտրություններից հետո, իսկ Գարեգին Նժդեհի ասած « Ապերախտ ժողովուրդը » գրվել է 1920 թվականի սեպտեմբերի 17 ին: Ծուրջ մեկ դար է անցել, սակայն ժամանակը ու պայմանները մեզ թույլ չտվեցին հասունանալ: Երբ

խոսում ենք մտավոր հասունությունից, պետք է հիշենք այդպես ասած՝ ծառերի վրա թառած եվրոպացիներին: Արժե՛ արդյոք խոսել բաներից, որոնց մասին առհասարակ պետք է լռենք: Մոռացանք բաներ, որոնք Փաշինյանի հեղափոխությունից հետո մնացին անտեսված. Ձեզ վկա՛ գեներալների ռեմակը, որոնք Ապրիլյան պատերազմի մեղավորներն էին: Հիշու՛մ եք ինչպիսի խոստումներ ու ճառեր էր հնչում հրապարակներում Փաշինյանի շուրթերից: Կարող եմ ասել, որ նման ճառեր ու խոստումներ նույնությամբ հնչել են 1988 թվականին Փաշինյանի կնքահոր՝ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից: Նրանք էլ խոստացան ժողովրդին ազատություն ու արժանավայել սպազա, խոստացան արդարություն, սեր ու հարգանք, փոխարենն ունեցանք զոհեր, ցուրտ ու մութ տարիներ, թալան և սպիտակ սպանդ: Առհասարակ հարկ եմ համարում Թավշյա հեղափոխության փոխարեն գործածել Փաշինյանի հեղափոխություն: Ճիշտ է, հեղափոխությունը ժողովուրդն է արել, բայց այն սեփականաշնորհեցին Փաշինյանն ու սորոսական դեռահասները: Եկեք արդար լինենք ինչ սովեց ժողովրդին այդ հեղափոխությունը, ժպի՛տ, հու՛յս, հավա՛տ, թե հիասթափություն ու հակակրանք: Դուխի մասին ավելորդ կլինի խոսել, երբ դասավիքների դուխը ելավ ու իրենց սկսեց ուտել: Հավատացեք, Քոստո երկրում այսպես է լինում, երբ առնականը և ուժեղը մղվում են սահմանագիծ, իսկ թույլերը ու վախկոտները թառում իշխանական բազկաթռոններին: Գերմանացի գրող Հայնրիխ Հայնեն ասում է. « Երբ հերոսները հեռանում են, ասպարեզ են մտնում ծաղրածուները »: Փաշինյանը պատահական չի ընտրել իր թիմակիցներին: Իր պես բարակ մատիկներով մանկլավիկների մեջ նա միակ դուրսագուռն է ու վիշապախեղդ: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը իր կառավարման երկու տարիների ընթացքում երբեք չցանկացավ լսել խելացի մարդկանց կարծիքը, չկարողացավ երկիրը դարձնել երկիր: Գիտե՛ք, եթե պետությունը չի կարողանում ապահովվել իր քաղաքացու անվտանգությունը, ուրեմն դա պետություն չէ, այլ « Բառդակ », այդ բառդակում էլ ապրում ենք ազգովի: Ինքնախաբեկանքով տարված ֆիլմեր են նկարում, հեռուստասերիալներ ու տեսահոլովակներ, հաղթանակած ազգի ու ժողովրդի մասին ենք երգեր գրում, հզոր ենք, անպարտ ենք, հպարտ ենք ու նման բաներ... Իսկ կողքից նայել՝ եք արդյոք, ինչի՞ վրա եք ուրախանում, երբ սոված են ու անտեսված ձեր հերոսները, երբ նվաստացած են ու խոշ-

տանգված ձեր զինվորները: Տեղին է ևս մեկ անգամ հիշել Գարեգին Նժդեհի խոսքերը. « Մակաբույժ է մի ժողովուրդ, եթե իր ինքնապաշտպանության համար հենվում է մի օտար ուժի շնորհին: Կյանքում նմանը Մակաբույժները տեղ չունեն պատմության մեջ »: Եկեք խոստովանենք, որ անգամ Արցախի հարցում չկարողացանք տղամարդ լինել, երբ չկարողացանք գնահատել նահատակված հերոսների թափված արյունը: Մեր հերոսները չգոհվեցին, որ Արցախը դառնա Անկախ բայց կախված պետություն, մեր սահմանին կանգնած զինվորը խրամատում չի լուսացնում, որ արցախցիներն ու արցախուհիները աստելությամբ ու թշնամաբար վերաբերվեն հայաստանցիներին: Ո՞վքեր գծեցին սահմանը, ո՞վքեր բաժանեցին մեկ ժողովրդին, ո՞վքեր ժողովրդի անունից որոշում կայացրեցին... Լուռ ու քար անտարբերություն... Ժամանակին այդ քոսոտ երկիրը բաժանեցին մասերի: Հիշենք պատմությունը, գուցե շատերը մոռացել են: 387 թվականին Հայաստանը բաժանվեց Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև, հետո Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև, 1555 թվականին Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև, հետո Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության ու Ռուսական կայսրության միջև: Դե, մանր-մունր բաժանումները չհաշված: Հիմա էլ մենք ենք բաժանում հայաստանցիների ու արցախուհիների միջև: Գարեգին Նժդեհի խոսքերը հիշենք. « Մեր դժբախտությունն այն չէ, որ աշխարհում կան թուրքեր, այլ այն, որ կան թուրքաման հայեր »: Շատերը նոստալգյան հիշողությամբ երանի են տալիս Խորհրդային ժամանակներին, այո, ճիշտ է, որովհետև գոնե այդ ժամանակ, ստորուկ չէին, որովհետև այդ ժամանակ ազատություն ու բարեկեցիկ կյանք կար յուրաքանչյուրի օջախում: Հիմա Հայաստանը դարձել է սպառողական զամբյուղ, հարկեր են մուծում իշխանավորներին հարստացնելու համար, իրենց զավակներին են մատաղ անում գեներալների քմահաճույքները բավարարելու համար: Միտս է գալիս Թումանյանի « Խրճիթում » բանաստեղծությունը:

Մանուկները գոռում,

գոչում, Լալիս էին աղեկեզ.

— Նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում,

Վե՛ր կաց, նա՛նի, հաց տուր մեզ:

Այս տողերը գրվել են 1893 թվականին, և գուցե ինքներդ ասեք, բան փոխվե՞լ է... Խորենացին էր անգամ 5-րդ դարից աղաղակում, որ ազգը դարձել է հոտ՝ վարչապետ Փաշինյանը իր ուղիղ եթերով կոկորդ էր պատռում փչացածվածության մասին, տեսնես հիշու՞մ է այն փչացածներին, որոնք մի քանի տարի առաջ երդումներ ու խոստումներ էին տալիս ժողովրդին: Քոստո երկրում առհասարակ իշխանությունները քոստ են լինում, ինչպես երկիրը, քանի որ հենց այդ քոստների պատճառով է, որ երկիրը դարձել է քոստ... Երբ երկրում հասարակ քաղաքային տրանսպորտ չկա, կամ էլ ավիափոխադրող... Քոստո երկրում խոսվում են սեռական փոքրա մասնություններից, կրոնական փոքրամասնություններից, սակայն մոռանում ենք գաղափարական փոքրամասնություններին, որոնց մտավոր գիտելիքները կարող են ցանկացած ժողովուրդի առաջնորդել դեպի լուսավոր ապագա, սակայն մենք նրանց կարիքը չենք զգացել երբեք, ո՛չ նեղության մեջ, ո՛չ էլ լեռնության: Միայն օրհասական պահերին ենք տեսել նրանց ուժն ու հզորությունը: Ազատամարտիկների մասին է խոսքը, որոնք անգամ Նիկոլ Փաշինյանի գունավոր հեղափոխությունից հետո էլ մնացին լուսանցքից դուրս: Նրանք հիմա շատ ավելի ողբալի վիճակում են, քան եղել են երբևէ: Երբ մտավոր գիտելիքները զրկված են հասարակության մաս լինելուց, փոխարենը գենդերային սորոսական թափփուկներն են ծաղկում ու բարգավաճում, պարզևավճարներ ստանում ու ճամփորդությունների մեկնում ժողովրդի հաշվին: Դեգրացված հասարակական միտքը բթանում է, թրաշ պահելը դեռ չի նշանակում, որ թրաշի ետևում տղամարդ է, կարծում եմ՝ արդեն համոզվել եք դրանում: Քոստո երկրում գործում է աղի ու վարունգի բանաձևը, Նիկոլ Փաշինյանը բավական է վարունգի մասին խոսի, նիկոլամոլները աղը առած վազում են տիրոջ մոտ: Ժամանակին էլ Ազատիչի ասած թարս աճած խիչարի համար էին հերթ կանգնում: Քոչարյանի ու Լևոնի մասին երևի արդեն շատերը մոռացել են: Հավի հիշողությունը քոստո երկրում պարտադիր է, ավելի ճիշտ՝ նախապայման: Ինչպես ասում են՝ ժամանակը ամեն ինչ իր տեղն է դնում, Քոստո երկրի մասին գրված կամ լսված պատմությունները կյանքի կոչեցինք, մինչև մարդկությունը գնում է լուսավոր ապագա, մենք միջնադարի խավարում սպասում ենք հերթական առաքյալին, հերթական կեղծիչին ու կուտ տվողին: Ինչպես ասացի՝ արդեն հավի հիշողությունը մեր ժողովրդի յուրահատ-

կուրթունն է: Հիշու՛մ եք վերջին տգիտությունը, որը լոզունգի պես ամեն տեղ գրած կպցրած էր. «ՀԻՇՈՒԲՄ ԵՄ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒԲՄ»: Ճիշտն ասած՝ անհասկանալի է, թե ինչ ենք հիշում և ինչ ենք պահանջում... Տեսնես հիշու՛մ ենք, թե աղետի գոտին ինչպես էր թալանվում, անգամ օգնության եկած օտարերկրյա փրկարարների շների պահածոները թալանվեցին, աղետյալների համար ուղարկված ծածկոցները ու սննդամթերքը, հետո վերամբարձ կռունկները, շինտեխնիկան ու շինանյութը: Զսան տարի թալանեցինք ու չհիշեցինք, որ գոյություն ունի աղետի գոտի, խեղաթուրված ճակատագրեր ու հաշմանդամներ, որոնք մինչ այսօր խոշտանգված են ու ահաբեկված: Տեսնես հիշու՛մ ենք Խորհրդային Հայաստանի տնտեսության թալանը ու այդ թալանը կազմակերպողներին: Դա էլ հո թուրքը չէր, այլ՝ մենք... Հիմա կասեք՝ մենք ի՞նչ կապ ունենք թալանի հետ... Ինչպե՞ս թե կապ չունենք: Լռեցինք, համաձայնվեցինք, ներեցինք, նորից իշխանության բերեցինք, դե աստվածացնելու ու սպարապետացնելու մասին էլ չխոսեմ, հա նրանց ազգային առաքյալի ու հերոսի կոչում տվեցինք... Ի՞նչ է դա քի՛չ է... Արցախյան ռազմաճակատում թիկունքից խփված տղաների արյունը դեռ չի սառել այդ ոճրագործների ձեռքերին... Բաց հատուցում եք ուզում, պահանջում եք չգիտեմ թե ինչ... Նախ ձեր ունեցածը պահեք, նոր չեղածն էլ պահանջեք... Ու՛մ լռությամբ երկիրը դարձավ պոչամբար կամ հանք, ապականեցիք ոչ միայն հողն ու ջուրը, այլև օդը ու միջավայրն այնպես, որ անգամ մոլախոտը նորմալ չի աճում... Երևի դա՛ էր մեր ժողովրդի երազանքը... Ուրախանում եք ազգովի Դողի Գագոյի կազինոների վրա, Փաշինյանի անիմաստ ճղճողոցների ու մեծահարուստ թալանչիների՝ պիպոների, լֆիկների, սաշիկների ունեցվածքի վրա, ազգային արժեքը Պզոն է, Պիպոն, Կիսաբացի Հրաչը, Շամշյանն ու Փաշինյանը: Խորհրդային Հայաստանը համարվում էր աշխարհի ամենազարգացած երկրներից մեկը, իր հզոր գյուղատնտեսությամբ, ծանր ու թեթև արդյունաբերությամբ, հարյուրավոր գործարաններով, մեքենաշինությամբ ու ռոբոտաշինությամբ: Բա դա հիշելու համար պե՛տք է, որ ես գրեմ... Իսկ գրողներն ու մտավորականները որտե՞ղ են, կամ ու՛մ հետույքում են ծվարել: Մոռացանք Լևոն Տեր Պետրոսյանի սպիտակ սպանդը, շուջ 1,5 միլիոն հայերի արտաքսումը սեփական հայրենիքից, դա հիշելու բան չէ՛... Մեզ կոտորում ենք թե 800 հեկտարը հանձնողին հողին կհանձնենք, կոկորդ ենք պատռում, թե 800

հեկտարը անպետք հող չէր, թե ապրիլյան պատերազմի հարյուրավոր զոհերը հանրապետականների խոհի վրա են: Մոռացե՛լ եք, թե 90-ականներին հող հանձնողներն ովքեր են: Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանը, Արծվաշենը, Մարտակերտի շրջանի գյուղերը, դրանց մասին անգամ հիշողներ չկան, դրանք էլ հո անպետք հողեր չէին, այնտեղ բուրաստան էր ու դրախտ... Իսկ գիտե՛ք թե քանի հայորդի իր կյանքը զոհեց այդ հողերը պահելու համար... Չէ, հիշելու ի՞նչ կարիք կա, անցածը փորփրելը նույնպես չարժե, բայց դե պահանջելուց մեր ուշքները գնում է: Քոստո երկրում այդպես է... Ֆրիդրիխ Էնգելսն ասում էր. « Ազգը բարոյալքելու երկու ուղի կա. պատժել անմեղներին և չպատժել մեղավորներին »: Առհասարակ, հանցագործներին ու ոճրագործներին ձեռնառու չէ հիշել իրենց անցյալը, փորփրել հինը, որովհետև իրենց կյանքի համար խիստ վտանգավոր է իրենց արյունոտ կենսագրությունը: Իսկ ժողովորդը իր լուռ համաձայնությամբ հաստատել է իր մեղսակցությունը: Առհասարակ, Քոստո երկրում մտածելը ընդունված չէ, ինչպես Ջանի Ռոդարին էր ասում, ինչու՞ մտածել, երբ քո փոխարեն մտածում են, քո փոխարեն որոշումներ կայացնում ու քո փոխարեն էլ ապրում վայելքների մեջ:

Ճաճանչափայլ վարչապետ Փաշինյանը արդեն որոշել է, թե ովքեր են անարժանները և ովքեր են արժանավորները... Պարզևավճարներից կարելի է արդեն հասկանալ: Պատահական չէր, որ լուծարվեց մշակույթի նախարարությունը, մշակույթ ունեցող ժողովուրդները թող դարդ անեն մեզ ի՞նչ... Գյուղատնտեսության նախարարությունն նույնպես հարկավոր չէ, հարկավոր չեն նաև ծննդատներն ու մանկատները, ծերանոցները... Փոխարենը՝ Կիսաբաց լուսամուտներ, սեռաբաղց սերիալներ, ու կրքոտ ու անառակ տեսահոլովակներ... Խեղճ Մովսես Խորենացին ողբում էր դեռևս միջնադարում. « Եվ չգիտեմ՝ ի՞նչպես հորինեմ իմ ողբը, և կամ ո՞ւմ արտասվեմ. »: Ողբաց, սակայն ամեն ինչ մնաց ինչպես անցյալում, անփոփոխ. « *Իշխանները ապստամբ, գողերին գողակից, ուսուցիչները՝ տխմար ու ինքնասիական, զինվորականները՝ անարի, պարծենկոտ, զենք ստող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, զինեմոլ, հեղուզակ, ասիակաների բնութենակից* »: Չեմ կարծում, թե Մովսես Խորենացին նույնպես աղբբեջանական ֆեյք էր: Քոստո երկրի մասին միայն Խորենացին չէր գրում, այլ մեր բոլոր Մեծերը, ուղղակի հասկացող ու գնահատող չգտնվեց: Հիմա արժե՞ սերունդ կրթել,

երբ կրթության նախարարությունը կրթելու փոխարեն կռտում է: Հայկական մամուլի մասին չեմ խոսում, դրա նկարագիրը դեռ այն ժամանակ տվել է Հովհաննես Թումանյանը: Գիտե՞ք, Հովհաննես Թումանյանն իր «Քաջ նազարը» գրելուց նկատի է ունեցել ոչ միայն ժամանակի տգետներին, այլև ներկայիս վարչապետին ու իր խմբին, որոնք վարունգի ու աղի բանաձևով են պատրաստ բավարարել իրենց տիրոջ սեռական ու հոգեկան քմահաճույքները: Երբ խոսում ենք ցեղասպանությունից ու ոճիրներից, չգիտես ինչու, մոռանում ենք ոչ վաղ անցյալում գործած ոճիրները, ժողովրդի հանդեպ ցեղասպանություն գործած քաղաքական գործիչներին, որոնք իրենց յոթ պորտով արդեն ապահովվել են իրենց անվտանգությունը: Այրելով Քոստո երկրում մենք մոռանում ենք մեր եսի մասին, մեր անհատականության մասին, մեր արժանապատվության ու թասիբի մասին: Երբ երկրի իշխանավորները իրենց խնջույքներում գումարներ են մսխում աջ ու ձախ, այդ ժամանակ մեր պահանջատիրությունը մնում է անկյունում: Ներքին թշնամու մասին հազարավոր նյութեր կան, հազարավոր խորհուրդներ ու միջոցներ, սակայն դրանք ոչ մեր ժողովրդի համար են, ոչ էլ մեր երկրի: Նորատուսի վերջին արյունալի դեպքերը ևս մեկ ապացույ են առ այն, որ Հովհաննես Թումանյանի « Մի կաթիլ մեղրը » մեր ժողովրդի մեջ նստած տգիտությունն է, ատելությունը միայնաց դեմ: Իմ բարեկամներից մեկը հետաքրքիր մի դեպք պատմեց, որը տեղի է ունեցել 1995 կամ 96-ին Գավառում: Երկու գյուղ, մինչև ատամները զինված մարտական զենքերով գնդացիներով ու ինքնաձիգներով, անգամ նռնականետերով ու ականանետներով դուրս են եկել իրար դեմ: Այունահեղությունը դժվարությամբ կանխվել է միայն ներքին զորքերի ու հատուկ ջոկատայինների միջոցով, չնայած զոհեր և վիրավորներ եղել են բախումների ժամանակ: Հայի ռիսերիմ թշնամին հայն է, դրա մասին հայ մեծերը գրել են, ուղղակի այդ խոսքերը անուշադրության են մատնվել: Քոստո երկրի առանձնահատկություններից են տարատեսակ բարեգործական ֆոնդերն ու բարեգործական կազմակերպությունները, հարյուրավոր ֆոնդեր ու բարեգործներ, որոնք ոճրագործական հիմնարկներից ոչնչով չեն տարբերվում, իրենց փողերի լվացման ու հանցանքները քողարկելու համար որպես ամենաապահով միջոց ընտրելով « բարեգործությունը »: Ազգային ժողովի բոլոր ներկա և նախկին պատգամավորներն ու նրանց կանայք կամ զավակները

ունեն իրենց անձնական օգտագործման բարեգործական հիմնադրամները, ավելի ճիշտ՝ փողերի լվացման լվացքատունը: « Ալեքսանյան բարեգործական հիմնադրամ », « Մհեր Սեդրակյան բարեգործական հիմնադրամ », «Գագիկ Ծառուկյան բարեգործական հիմնադրամ », « Հովիկ Աբրահամյան բարեգործական հիմնադրամ », « Գեներալ Մանվել Գրիգորյան բարեգործական հիմնադրամի »,« Փյունիկ բարեգործական հիմնադրամ », նույնիսկ ԴԱՀԿ նախկին պետ՝ «Զեթրինի » Միհրան Պողոսյանը իր մոր անունով է բարեգործական հիմնադրամ բացել. « Ամայա Հարությունյան » բարեգործական կազմակերպություն: Չմոռանանք հիշել նաև քրեական հեղինակություն՝ դոն Պիպոնին, որը ունի իր բարեգործական հիմնադրամը՝ « Արթուր Ասատրյան Հիմնադրամ », այդ թվում վարչապետ Նիկոլ Փաշինյանի կինը՝ Աննա Հակոբյանը « Աննա Յակոբեան » բարեգործական հիմնադրամը և « Կիսաբաց լուսամուտներ » բարեգործական հիմնադրամը: Քոստոս երկրում, որտեղ կոկորդ կրծելով պատրաստ են միմյանց հոշոտել, արդյո՞ք այսքան բարեգործական հիմնարկներն և ֆոնդերն որևէ լուրջ առաքելությամբ են զբաղված... Քոստոս երկիր, որտեղ ծածանվում է պետական դրոշը, որտեղ պետականությունը լոկ թղթի վրա է, որտեղ « Կիսաբաց լուսամուտները » համարվում է երկիր թոփ հաղորդումներից առաջինը: Միրամանթոյի խոսքերը կարծես արդիական են. « Ո՛վ մարդ կային արդարություն, թող, որ թքեմ քո ճակատին »: Մինչ այս նյութը հրապարակելը իմ բարեկամներից մեկը դժգոհեց, որ ես իրավունք չունեմ մեր երկիրը քոստոս անվանել, որովհետև երկիրը սուրբ է մարդիկ են քոստոս... Մասամբ համաձայն եմ նրա հետ, որովհետև մենք բոլորս ենք այդ սուրբ հողը ու երկիրը քոստոս դարձրել, մեր անտարբերությամբ: Առհասարակ արժանապատիվ երկիր ունենալու համար, նախ պետք է արժանապատիվ լինել, արժանապատվորեն վերաբերվել երկրին, մայր բնությանը, հողին, պատմությանն ու հերոսներին: Ինչու՞ ենք վիրավորվում, երբ գիտենք, որ Քոստոս երկիրը մեր ձեռքով ենք կառուցել: Հիմա ասացեք, ո՞րն է ճշմարիտը, անկեղծ խոսքը, թե՞ ինքնախաբեությունը: Մենք ինքներս մեզ պիտի ում ենք, որ այսպես էլ պետք է լիներ, ո՛վ լիներ իշխանությունում, որ չթալաններ... Այսպիսի մտածելակերպը հանցավոր արարք է ոչ միայն քո ժառանգների, այլև մեր պատմության ու մեր նախահայրերի հանդեպ: Ուրեմն մեզանից է կախված՝ մենք կապրենք Քոստոս երկրում, թե երկրում,

որտեղ թագավորում է ոչ միայն օրենքը, այլև խիղճն ու մարդկությունը:

Գեհենի Առաքել 28.05.2020

ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ

«Օտարը չի հարգի և սիրի մի ժողովրդի, որը ինքնուրույն պատկեր և բովանդակություն չունի»: Հովհաննես Թումանյան.

Հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ շատ ճյուղեր են բազմակողմանի ուսումնասիրության ենթարկվել՝ պատմություն, աշխարհագրություն, ճարտարապետություն, կենդանական ու բնակլիմայական բնագավառներ, իսկ բոլորովին վերջերս տարածվեց հայերի գենետիկական հատկությունների վերաբերյալ մի աշխատություն, որտեղ ներկայացվել էր հայերի գենետիկական հատկությունների վերաբերյալ ուսումնասիրություն: Համաձայն այդ ուսումնասիրության՝ հայերի գենետիկական հատկությունները հազարամյակների ընթացքում չեն փոփոխվել և մնացել են նույնը: Որպես հոգեբան կարող եմ հաստատել, որ դա այդպես է: Սակայն կցանկանայի մանրամասնել իմ գիտական աշխատություններից մեկը, որը վերաբերում է ազգային հոգեբանությանը, որն իր մեջ ներառում է ազգային բնավորությունը, հոգեխառնվածքն ու սովորությունները: Մարդաբանության մեջ ուսումնասիրվում են որոշակի կողմեր, սակայն հոգեկան խնդիրներին մոտենում են մասամբ: Դեռևս չեմ գտել որևէ աշխատություն, որտեղ նկարագրված լինի հայերի հոգեբանական հատկությունները, նկարագիրը կամ խառնվածքը: Ազգային գենետիկայի (Էթնոսի) մեջ կարծես չի ուսումնասիրվել ազգային հոգեբանությունը, այս բացթողումը կարծում եմ պետք է, որ հետաքրքրի ոչ միայն մեզ՝ հայերիս, այլև մեր բարեկամ ժողովուրդներին, եթե այդպիսիք իրոք կան: Հուսով եմ, որ մի գեղեցիկ օր փորձագետներին կհաջողվի բացահայտել էթնոսում հայերի հոգեբանական հատկությունները: Դեռևս մեկ տարի առաջ իմ ընթերցողներին ներկայացրել էի քրեագիտության մեջ հայտնի ձևաչափ, որը կիրառվում է շատ երկրներում, բացի Հայաստանից: Այդ աշխատությունը վերաբերում է մարդաբանության ու հոգեբանական խառնվածքին՝ մանր-

ամասն ներկայացնելով քրեաձին ժառանգությունը: (*« Антропометрия »*
ՔՐԵԱԾԻՆ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ):

Առաջարկում եմ իմ հետազոտությունները այդ մասով: Հնարավոր է՝ շատերը չհամաձայնեն երիտասարդ հոգեբանի հետ, սակայն փորձը ցույց է տալիս, որ հոգեբանության բնագավառում երիտասարդներն ավելի կատարելագործված են, քան միջին կամ ավագ տարիքի մասնագետները, դա պայմանավորված է երիտասարդների պրպտումների ու հետաքրքրությունների լայն շրջանակից, որն ընդգրկում է ավելի մեծ ու լայն տարածություն: Չշեղվելով հիմնական թեմայից՝ շարունակե միտքս:

Այդպիսով էթնիկական հոգեբանական տեսակն ուսումնասիրելու համար կարիք չկա դիմել մարդաբանական չափագրումներին կամ ֆիզիոլոգիական փորձաքննություններին: Բավական է ձեռքի տակ եղած մատյաններն ու հին ձեռագրերը, ներառյալ ազգային բանահուսության ու գրականության գոհարները:

Ովքե՞ր են հայերը, ինչպե՞ս են եղել և ինչպես են այսօր... Հիշեցնեմ կրկին, որ մամուլում բարձրացված այն միտքը, որ հայերն իրենց գենետիկական հատկություններով հազարամյակների ընթացքում մնացել են նույնը՝ առանց փոփոխությունների, հաստատում եմ և համոզված եմ, որ դա միանշանակ այդպես է: Պարզելու համար հայկական էթնոսի հոգեբանական առանձնահատկությունները՝ բավական է հետադարձ հայացք նետենք այն ամենին, ինչ ունեցել ենք և ինչ ունենք հիմա: Ծովից-ծով Հայաստանից մնացել է մի Քոստոս հողակտոր, (ըստ ԱԱ տնօրեն Ռադիկ Մարտիրոսյանի) որի վրա մնացել են մի բուռ «Կիսաբաց լուսամուտների » փնթիներ ու ինչպես Հակոբ Պարոնյանը կասեր՝ Մեծապատիվ մուրացկաններ կամ Առաքյալներ (Մուրացան):(*«Ճշմարիտն էն է, որ մեր ամբողջությունը տատապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությամբ»*: *Հովհաննես Թումանյան*) Ազգային գենետիկական որոշ հատկություններ, որոնք շատ փոքր թիվ են կազմում, նույնպես կան, դրանք գաղափարական հատկություններով օժտված անհատականություններն են: Շատերին կհետաքրքրի, թե դրանք ովքեր են: Իմ մի ակնարկում ես գրել էի այդ լուսավոր հայերի մասին (*ՀԱՅԻ ԷՌԹԹՅՈՒՆՆ ՈՒ ԼՈՒԿՎՈՐ ՄԱՐԴԻԿ*) Խնդրում եմ Գրիգոր Լուսավորչին չկապել այս հարցադրման հետ, խոսքը Մովսես Խորենացու, Ֆրիկի, Նարեկացու և մյուսների մասին է, նկատի

առնենք, որ հենց այդ տեսակն է մշտապես բարձր պահել ազգային արժեքները՝ մշակույթն ու ոգին: Գարեգին Նժդեհն ասում էր. « *Ժողովուրդներն այն են, ավելի ճիշտ՝ դառնում են այն, ինչպիսին որ համարվում են իրենց մտավորականության կողմից* »: Թույլ տվեք խուսափել « մտավորական » բառը գործածելուց, որովհետև ներկայիս ապականված մտավորականությունը այնպես է արժեգրվել այդ բառի իմաստը, որ ցանկալի չէ շեշտել: (*« Պիտի չպարտվեք հայ ժողովուրդը և հոգեբանորեն, եթե նրա մտավորականության մի խոշոր մասը չնետվեր պարտվողական ոգու գիրկը* »: *Գարեգին Նժդեհ*): Այդպիսով խուսափենք մտավորական բառի գործածումից և ընտրենք մեկ այլ բառ՝ օրինակ « գաղափարական » բառը, որը լիարժեք համապատասխանում է իմաստին: Եթե հայ ժողովուրդը իր պատմության ընթացքում ունեցել է վերելքներ ու ծաղկուն դարաշրջաններ, ապա դա եղել է միայն գենետիկական այդ տեսակի շնորհիվ, որին անվանեցինք գաղափարականներ: Հիմա անցնենք փաստերին: Եթե ներկայումս երկիրն ու ժողովուրդը հալածված վիճակում է, նշանակում է, որ նախորդ դարերում էլ Հայաստանում իշխել է այն տեսակը, որը կոչվում է Ազգադավ: Իմ ընթերցող բարեկամները կհիշեն հայ բոշաներին վերաբերող աշխատությունը, որը ներկայացրել եմ վերջերս: (ՀԱՅԵՐԻՆ ՄԻԱԽԱՂՈՒՆՎԱԾ ԲՈՇԱՆԵՐԸ): Այդ աշխատության մեջ ներկայացրել եմ նրանց բնավորության առանձնահատկությունները: Եթե հիշում եք, հայ բոշաները, ապրելով հայերի մեջ արագ սովորել են ոչ միայն նրանց լեզուն ու բարբառները, այլև նրանց սովորություններն ու կենցաղավարության կանոնները, անգամ բնավորությունն ու խառնվածքը՝ դառնալով այդ հասարակության անբաժան մասը: Այնպես որ, եթե շրջապատում եղել են վատ սովորություններով ու բարքերով հայեր, ապա հայ բոշաները ընդօրինակել ու միաձուլվել են նրանց, շատ քիչ պահելով նաև իրենց ազգային բնավորության գծերը: Փաստը ցույց է տալիս, այդ ազդեցությունը փոխկապակցված է եղել ու արդյունքում ստացվել է այն, ինչը տեսնում ենք ինքներս: Այնպես որ, կարծում եմ կարիք չկա մեր՝ հայերիս վատ սովորությունները վերագրել կամ բարդել հայ բոշաների գլխին: (*« Մեր պատմությունը լեզուն է դավանանության փաստերով: Պարսիկների, հույների, արաբների, սելջուկների կամ մոնղոլների բանակները մեզ նվաճելուց առաջնորդվել են միշտ հայի դեկավարությամբ: Հայերը միշտ կռվել են թշնամու հետ ուս-ուսի սեփա-*

կան ժողովրդի դեմ »: Բաֆֆի)

Առհասարակ հայերի մեջ բույն դրած նախանձը, չարությունն ու վախկոտությունը գենետիկական փոխանցվող հատկություններ են, կարիք չկա հայտնագործություն կատարել պարզելու այն: Դա գալիս է նախաքրիստոնեական դարաշրջանից, նույնիսկ քարե դարում: Հայերին չի կարելի նկարագրել դրական հատկանիշներով, ինչպես սովորաբար անում են... Թող չըմբոստանան իմ հայրենակիցները, որովհետև դա ցավալի ճշմարտություն է, ու աչք փակել այդ ճշմարտության վրա՝ կնշանակի մտավոր կույր լինել, ինչպես Մետերլինգյան կույրերն են: (*« Չկա՛ ճշմարտություն, և դրա համար էլ մեր ժողովրդի մի մասը Մետերլինգյան կույրերի նման մոլորված է « տգիտության անտառում »: Գարեգին Նժդեհ*): Այդպիսով ինչու՞ է հայ ժողովուրդը գոյատևել դարեր շարունակ և չի ոչնչացել աշխարհի թոհուրոհում: Թույլ տվեք ասել, որ դա եղել է միայն ազգի գաղափարականների շնորհիվ: Կարծում եմ, շատերը կցանկանան լսել այդ անունները, իմանալ այդ գաղափարականների անունները, թվարկեմ ընդամենը մի քանի անուն՝ պատկերացումը հստակեցնելու համար, օրինակներ բերեմ՝ Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան, Խորենացի, Նարեկացի, Բաֆֆի, Գարեգին Նժդեհ, Թումանյան, Գրիգոր Չոխրապ, Խրիմյան Հայրիկ և այլ մեծեր: (*« Ժողովուրդները միշտ էլ չափվում են իրենց մտավորականություններով »: Գարեգին Նժդեհ*)

Շատերը ծանոթ են Խաչակիր ասպետների պատմությանը: Եթե հիշում եք Խաչակրաց արշավանքների դարաշրջանում էր, որ ի հայտ եկան Տանարական Ասպետները, որոնք օժտված էին այնպիսի լուսավոր գաղափարներով, որ կարողացան լուսավորել ոչ միայն Արևմուտքն ու Եվրոպան, այլ աշխարհի բոլոր ծայրամասերը:

Այդպես էլ հայերի մեջ գաղափարականները լուսավորել են ու առաջ տարել ոչ միայն հայ ժողովրդին, այլև հարևան ժողովուրդներին ու ցեղերին: Գաղափարականների շնորհիվ էր, որ Հայաստանն ապրեց իր ծաղկուն ժամանակները, ստեղծելով գիր, արվեստ, մշակույթ, թատրոն և մամուլ: Բոլոր բնագավառներում գաղափարականները կառուցեցին իրենց նախազգծած ճարտարապետական կառույցները, ստեղծեցին մանրանկարչության անկրկնելի նմուշներ, գրեցին օրենքի ու իրավունք՝ ամրապնդելով հայի պաշտպանությունն ու անվտանգությունը: Երբ Հայաստանում թագ-

ավորել են գաղափարականները, երկրում գործել է օրենքը, հաստատվել է երկրի քաղաքացիների հավասարություն և լիություն, մի խոսքով ներդաշնակություն: Երբ երկրում իշխել են հայերը, այնտեղ եղել է սով, խոշտանգում և մահ: (*Հայի դիտարկում թշնամին օտարը չէ, այլ հայր: Բաֆֆի*): Մենք՝ հայերս հպարտանում ենք, թե միջնադարյան Հայաստանում չի եղել ճորտատիրություն, սակայն չենք ընդունում, որ այժմ մեզ մոտ հաստատված են ֆիոդալական օրենքներ ու ճորտատիրություն: Իհարկե, այս ամենը չի կարելի կապել Ռուսաստանի կամ աշխարհում կատարվող աշխարհաքաղաքական երևույթների հետ: Չնայած այդպես ընդունված է ներկայացնել իրավիճակը: (*« Խաբեքանների կարգը գնալով ընդարձակվում էր, և նրանք օրըստօրե նոր անդամներ էին գտնում: Նրանք տարածվեցան երկրագնդի այն անկյունները, ուր ավելի տիկրում էր մոտավոր խավարը, ո՛րք քրիստոնեությունը գտնվում էր մռայլոտ հեթանոսության մեջ »: Բաֆֆի*) Գաղափարականները էթնիկական տեսակով հայեր էին, սակայն շատ փոքրթիվ, որոնք ժողովրդի մեջ չէին երևում, եթե փորձենք թվերով ներկայացնել նրանց, ապա դժվար թե 0,1 երրորդական մասը կազմեին: Օրինակ՝ հայերը սովորություն ունեն ասելու, որ աշխարհում 10 միլիոն հայ կա, չգիտեմ, թե այդ հաշվարկները ովքեր են կատարել, սակայն ես համամեմատության համար կվերցնեմ կտրացված թիվը: Տեղին է հիշել 2016 թվականի դեկտեմբերի 17-ին Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը ՀԱԿ-ի համագումարին: Լևոն Տեր-Պետրոսյանը բարձրաձայնեց, որ Արցախյան պատերազմին մասնակցել է ընդամենը 12 սփյուռքահայ, չնայած այդ թիվը պետք է կրճատել, որովհետև ինձ հայտնի են դեպքեր, որ այդ հայերից ոմանք եկել են Արցախ այլ նկրտումներով և ոչ հայրենասիրությունից դրդված: Ինչևիցե, տասը միլիոն հայերից Արցախյան պատերազմին մասնակցել են տասից պակաս սփյուռքահայեր: Նշանակում է՝ միջին հաշվով մեկ միլիոն հայերի մեջ կա ընդամենը մեկ գաղափարական: Չեմ կարծում, թե սա հուսադրող թիվ է, երբ Արցախյան պատերազմին մասնակցել են ընդամենը 5-6 հազար կամավորական, որոնց մեջ շատ փոքր թիվ են կազմել գաղափարականները: Հիշեցնեմ, որ պատերազմի դաշտը պարտադիր չէր, որպեսզի գաղափարականներին հաշվարկեինք, ուղղակի հայրենիքը վտանգի պահին գաղափարականները երբեք ձեռքները ծալած չեն նստում, նրանք թիկունքում են, մարտադաշտում արվեստում ու ժողովրդի կողքին:

(« Մեր նկատմամբ մեղաւոր է եւ մարդկութիւնը, բայց անմեղ չենք եւ մենք: Մերն է մեղքի մեծ բաժինը, քանզի մեր ձեռքին է քանային այն բոլոր դրոյթիւնների, որոնց մէջ կ'ուզէինք եւ կարող ենք լինել, քանզի մենք ենք մեր քաղաքական բախտի նարտասուսետը » : Գարեգին Նժդեհ) Իմ ընթերցողները հավանաբար հիշում են իմ բարձրաձայնած թեման՝ Գլխի ու եղունգի հետ կապված, կարծում եմ կարելի է հաշվի առնել այդ գործոնը: Գաղափարականները երբեք իրենց թույլ չէին տալիս անտարբեր թամաշա անողի պէս դիտորդի դերում լինել, երբ ազգային արժեքներն ու հայրենիքը վտանգված էր: Դա եղել է նրանց առանձնահատկությունը, ի տարբերություն ժողովրդի, և դա ցույց է տալիս, որ տասը միլիոն հայության մեջ ընդամենը մի քանի « Սասնա ծռու » կային, մեծ օվկեանից ընդամենը մի քանի կաթիլ: Ի՞նչ եք կարծում, մի ժողովրդի համար արդյոք քիչ չէ սա: Նկատի ունենանք նաև, որ « Սասնա ծռերից » մի քանիսն են մասնակցել Արցախյան պատերազմին, մնացածին համարենք միայն « Սասնա ծռու »՝ Պավել Մանուկյանի որդին՝ Արամը Մանուկյանը: Ի՞նչ է ստացվում՝ գաղափարականները կազմում են այնքան չնչին տոկոս, որ ավելորդ է անգամ հիշատակել, սակայն նրանց դերն ու նշանակությունը հայ ժողովրդի պատմության մեջ այնքան մեծ է եղել, որ օտարները հայերին ճանաչել են միայն նրանց շնորհիվ:

Այդպիսով, ովքե՞ր էին գաղափարականները հայ ժողովրդի կյանքում: Նրանք փարոս են եղել հայ ժողովրդի համար, ովքեր ուղղորդել են ազգին դեպի լուսավորություն: Այդ դեպքում ովքե՞ր են եղել հայերն անցյալում և ովքե՞ր ներկայում: Ազգային դիմագիրը ներկայացնելու համար թվարկեմ մի քանի անուններ... Արփինե Հովհաննիսյան, Արմեն Աշոտյան, Սաշիկ ու Լ.Ֆիկ, Լիսկա, Մանվել, Գրգո, Շմայս, Գագիկ Ծառուկյան և Գագիկ Ծամշյան, Արշակ Չաքարյան, Գոռ Վարդանյան, Շուշան Պետրոսյան, Անդրանիկ Մարգարյան, Տարոն Մարգարյան, Սեյրան Սարոյան և Հերմինե Նադրայան, Վազգեն Սարգսյան ու Հրանուշ Հակոբյան: Կարծում եմ, արդեն հասկանալի է հայ ժողովրդի ոչ միայն դիմագիրը, այլ հոգեբանական խառնվածքն ու տեսակը: Հենց այս կերպարների մասին են ժամանակին գրել Ֆրիկը, Նարեկացին, Խորենացին ու Թումանյանը: Հայ դասականների՝ գաղափարականների ստեղծագործություններում պատկերված են հենց այդ կերպարները՝ տարբեր անուններով, սակայն էությանմբ ու բնութ-

ազրո՞վ նույնը: Այս է հայ ժողովրդի իսկական պատկերը իր առանձնահատկություններով և խառնվածքով: Հենց այս տեսակն է, որ դարերով հավածել ու ծծել է սեփական ժողովրդի արյունը, Մարկոս Աղա Ալիմյան, Միկիտան Սաքո, Բազազ Արտեմ և շատ ուրիշներ, հենց այդ տեսակն էր, որ Խորենացու մարմինը պետք է այրեր իր մատյանների հետ ու գետը նետեր, հենց այս տեսակն էր, որ պետք է Պապ թագավորի դեմ դավեր նյութեր, նրանք էին, որ պետք է Անի ու Կարս բերդաքաղաքների բանալիները հանձնեին թշնամուն: (*«Տգէտ ու չիք մարդիկ Հայոց աշխարհից հարածեցին լաւ ու պիտանի մարդոցը»:* Միքայել Նալբանդյան): Մի՞թե չեք տեսնում, որ նկարագիրը պարզ է ու ակնհայտ: (*Հայերի մեջ ամեն տեղ անպակաս են եղեռնագործ տեր Մարկոսներ, ավազակ մելիքներ, խաբէբա Միրզա-Ճաթալիներ, փոփոխամիտ տիկին Թարղաններ, օգտածարավ վասակներ և այլն...: Այդ իրավ, դրանք բոլորն կան: Բայց հայերի մեջ ամեն տեղ դժվար կարելի է գտնել սիրահարվածագահներ: Ըստֆֆի*): Խորենացին ու Նարեկացին պատահական չէին որքում մեր ազգի վիճակը: Ո՞վքեր էին Խորենացին ու Նարեկացին, նրանք հենց այն գաղափարականներն էին, որոնք ցավում, տառապում էին ժողովրդի հետ, որոնք երբեք իրենց չգատեցին ազգից ու ժողովրդից, փորձելով լուսավորել ու ուղղություն ցույց տալ խավարամիտ ամբոխին, փորձելով աղաղակել, որ թշնամին իրենց մեջ է, իրենց հոգիներում: Սակայն ապարոյուն, նրանց լսող չեղավ անգամ այսքան դարեր անց: (*«Այն մտատրականությունը, որը գրքի ծնունդ է եւ ոչ թէ իր ցեղի մեծության ու ժողովրդի տառապանքի - կեղծ եւ անպտուղ մտատրականություն է »:* Գարեգին Նժդեհ) Հայերն այդպես էլ չկարողացան զնահատել իրենց գաղափարականներին, որովհետև նախանձ էին, երեսպաշտ ու խարդախ և երբեք չզնահատեցին նրանց ո՛չ անցյալում, ո՛չ էլ հիմա, ազգային ապերախտությունը խոր արմատներ է գցել հայի մեջ, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ: (*« Արդ՝ եթե մենք ունենք ազգային ինստուտություն, հոգու արիություն և առողջ բնազդներ, անկարելի է աչքներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ և չզգանք, որ մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, և դրա դեմ կռվելու, առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք և՛ մեր սրտերում, և՛ աշխարհքի առաջ անկեղծ խոստովանենք ու նանաչենք մեր դժբախտությունը»:* Հովհաննես Թումանյան): Սեփական որովայնի ու գրպանի մասին մտածողը չի կարող արժեքներ

ստեղծել, ուր մնաց՝ գնահատի: Եթե ուսումնասիրենք հայ դասականների ստեղծագործություններն ու բանահուսությունը, ապա կհամոզվենք, որ մենք աշխարհի ամենավտանգավոր ու ապերախտ ժողովուրդն ենք, որ պատրաստ են ազգային բոլոր արժեքները ոտնահարել, սրբությունները պղծել, անգամ պղծել սեփական նահատակների գերեզմաններն ու հերոսների հիշատակը, ապականել ու արժեզրկել: (« *Ճշմարիտն էն է, որ մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությամբ* »: Հովհաննես Թումանյան): Պատահական չէ, որ Փնթի Կռազի շոֆեռ Սանվել Գրիգորյանը Չորավար Անդրանիկին շնորհեց Վազգեն Սարգսյան հուշամեդալով, անգամ այդ ժամանակ չգտնվեց մեկը՝ հոգևորական կամ պատմաբան, մտավորական ու քաղաքական գործիչ, որը քննադատեր Կռազի Շոֆեռին՝ ազգային հերոսի հիշատակը ծաղրելու համար: Անտարբերությամբ ազգը նայեց ու ծափահարեց: Մի՞թե սա ազգային առանձնահատկություն չէ, անտարբերության ու ապերախտության մասին արդեն գրվել է և կարիք չկա կրկին հիշեցնել: Գաղափարականների կերպարները ապականելով՝ պետք է փորձեն ոչնչացնել ոչ միայն նրանց ստեղծածը, այլև նրա թողած հետագիծն ու հիշողությունները: Պատահական չէր, որ պետք է կրակեին Կապանում տեղադրված Գարեգին Նժդեհի կիսանդրու վրա՝ փորձելով վրեժ լուծել նրանից: Գաղափարականները խավարամիտների թշնամիներն էին, որովհետև խավարը չէր կարող հանդուրժել լույսն ու գիտությունը: Հաց Բերող Արթուր Սարգսյանից սարսափում էր խավարասերների ողջ բանակը, իսկ ժողովրդի լուռ համաձայնությամբ ու անտարբերությամբ նա խոշտանգվեց ու դատապարտվեց մահվան: (« Փարիսեցիները խաչեցին Հիսուսին, իսկ հայերը Հաց Բերողին »: Գեհենի Առաքել 2017 թ.): Գաղափարականները նրանց թշնամիներն էին: Պատահական չէին Վազգեն Սարգսյանի և Մերժ Սարգսյանի խոսքերը. « Թե թշնամի մի փնտրեք մեր մեջ», նրանք լավ գիտեին, որ գաղափարականներին ոչնչացնելով՝ իրենք ամրապնդելու էին իրենց հավերժական իշխանությունը և այդպես հայ ժողովրդին դարձնելու ոչխարի հոտ: Լևոն Իգիթյանների ու Ռոբերտ Ամիրխանյանների պես. մնացած աղբակույտի մասին խոսելն ավելորդ է, որովհետև նրանք հենց նույն ժողովրդի ծոցից են դուրս եկած խավարամիտներն են՝ իրենց գենետիկական հատկություններով ու տեսակով: Գաղափարականները բոլոր դարերում հալածվել են հայ ժողովրդի

կողմից, Պապ թագավորից սկսած՝ մինչև Չարենց, Թումանյան, Անդրանիկ, Մեպուհ գորավար, Գարեգին Նժդեհ և այլն: Միշտ հալածվել են ու իրենց ճակատին կրել կղերական հոգևորականների կողմից խարանված աղվեսադրոշմը: Ապերախտները ազգի գաղափարականներին դարձրեցին աղանդավորներ ու դավաճաններ, ջիուղներ ու փարիսեցիներ: (*« Կայ մտաւորականի ամենէն վտանգաւորը - նա՛, ո՛վ փարիսեցիների եւ դպիրների նման լաւ է ուսուցանում, բայց վատ ու վատն է գործում »*: Գարեգին Նժդեհ): Հայ ժողովրդի արժանի զավակներին՝ գաղափարականներին շարունակեցին խոշտանգել ոչ միայն բոլշևիկյան կառավարաններում այլև դաշնակցական սպանդանոցներում, կուսակցական մամուլում ու հոգևորական ժողովարաններում: Հայերն էին, որ Երևանի կառավարանում կացնահարեցին Համազասպ գորավարին, հարյուրավոր հայ սպաներին, Մեպուհ գորավարին, Անդրանիկ գորավարին ու Գարեգին Նժդեհին, հարյուրավոր այլ գորավարների հալածեց դաշնակցական խաժամուժը: Իսկ գաղափարականներին Արցախյան պատերազմում գնդակահարում էին թիկունքից: Ինչու՞ Մովսէս Գյորգիսյանի, Արթուր Մկրտչյանի, Սամվել Շահմուրադյանի ու Մոնթե Մելքոնյանի սպանությունները պետք է վերագրեին արտաքին թշնամուն, երբ այդ ամենի ետևում կանգնած էինք մենք՝ բոլորս, ամբողջ ազգը: Մեր անտարբերության ու երեսպաշտության արդյունքը եղավ մեզ մնացած այս Քոստոս երկիրը, որի մասին բարձրաձայնեց Քոստոս Ազգային ակադեմիայի ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: (*« Այն մտաւորականութիւնը, որը գրքի ծնունդ է եւ ոչ թէ իր ցեղի մեծութեան ու ժողովրդի տառապանքի - կեղծ եւ անպտուղ մտաւորականութիւն է »*: Գարեգին Նժդեհ) Ինչու՞ չկարողացանք ազգովի ստեղծել մի պետություն, որտեղ ամեն ՀԱՅ մարդ կարող էր արժանապատիվ ապրել իր հարազատների ու որդիների հետ: Մինչդեռ պատկերացում էլ չունենք, թե ինչ է նշանակում երկիր ու պետություն ունենալ, չգիտենք որևէ արժեքի գին, չունենք սեփական ուղեղ՝ մտածելու և ստեղծելու համար: (*« Ինքնուրույնութիւնից զուրկ ժողովուրդները չեն կարող պետութիւն ստեղծել »*: Գարեգին Նժդեհ): Մեր օրերում գաղափարականների ոչնչացումը ամրապնդված է օրենքով և սահմանադրությամբ: Պավել Մանուկյանի և Արայիկ Խանդոյանի նկատմամբ փորձելու են կիրառել մախապատիժ՝ ցմահների բանտախցում կամաց-կամաց սպանելով ու խոշտանգելով, ինչպես

արեցին մնացած գաղափարականներին՝ հայ ժողովրդի լռությամբ ու համաձայնությամբ: Արցախյան պատերազմի ժամանակ գաղափարականներին ոչնչացնում էր Վազգեն Սարգսյանը, կոմունիստ ՀՀԾ-ականների ձեռքերով, հիմա դա անում են հանրապետական դաշնակները: (« *Հերոսները պետք է գոհվեն պատերազմի դաշտում, հսկառակ դեպքում նրանք անտանելի են դառնում* »: Վազգեն Սարգսյան):

Իհարկե այստեղ կուսակցական տարբերանշանը այդքան էլ կապ չունի, այստեղ ազգային խառնվածքն է ու ազգային հոգեբանությունը: Իսկ 10 միլիոնանոց սփյուռքը համերաշխություն էր ցույցաբերում և ծափահարում գաղափարական տղաների սպանող, ինչպես ժամանակին էլ ծափահարեցին Չարենցի ու Նժդեհի կտտանքներն ու տառապանքները: (« *Ես տեսա ստորուկին ազատության մեջ և զարշեցի մարդուց, Ես տեսա ազատին ստրկության մեջ և սիրեցի մարդը* »: Գարեգին Նժդեհ)

Գարեգին Նժդեհը պատահական չէր ասել. « Ապերախտ ու սրբապիղծ հայ ժողովուրդ », նույնն ասել էր Թումանյանը. « Մանկապիղծ ու կույր հայեր»: Բաֆֆին՝ « Արյունախում ու ազգադավ հայեր »: Հայերը պատրաստ էին իրար հոշոտել, եղբայրը եղբոր դեմ էր դուրս գալիս, հայրը՝ որդու: (« *Շղթաների մեջ ծնվում, սալբում և մեռնում էս դու ես մեղավոր, որովհետև թույլ ես...* »: Գարեգին Նժդեհ)

Մի կարծեք, թե « Կիսաբաց լուսամուտները » շոու է, որտեղ բեմադրվում են տարբեր պատմություններ, ոչ, դա հայ ժողովրդի հոգեբանական պատկերն է՝ փնթի ու տգետ հյուրերով և դահլիճում մշտապես ներկա նույն փորձագետ կոչված մեծապատիվ մուրացկաններով, որովհետև նրանք ոչնչով չեն տարբերվում հատակում հայտնված այն զարշահոտ կերպարներից: Նրանք են հայ ժողովրդի իրական պատկերը, սփյուռքում նույն աղետալի իրականությունն է, ինչ հայաստանյան իրականությունն է հեռուստաէկրանին: (« *Մի ժողովուրդ, որի որդիները հավասար չեն օրենքի եւ մահվան առջև՝ հաղթական հայրենիք չի ունենա* »: Գարեգին Նժդեհ)

Երբ փնթի ու անտաղանդ երգիչները ոռնում են իրենց ճոխ ու թանկարժեք մեքենաների ու փարթիների սիլիկոնային հետույքների ֆոնին, հասկանում ես, որ դարեր են անցել, բայց գենետիկորեն ու հոգեխառնվածքով մենք մնացել ենք նույնը և դա համատարած բնույթ է կրում, որովհետև հայ ենք և դա մեր գենետիկական որակն է, որից չկարողացանք երբևէ ազատագրվել: Դարեր են անցել, ավաղ, չկարողացանք այդ չարորակ ախտը վերացնել ազգային

հոգեբանությունից: (« Մեր քարոզած նշմարտությունը գուցէ թէ կտրատում է ազգի սիրտը, բայց այդ սուրբ միակ հնարն է փոսած ու ճարակած խոցը առողջ մասերից բաժանելու եւ հեռացնելու համար »: Միքայել Նալբանդեան):

Պատրաստ ենք սեփական բռնակալի ձեռքը համբուրել, պատրաստ ենք սեփական բարերարի ձեռքը կտրել, պատրաստ ենք սեփական լեզուն ու գիրը ոչնչացնել, դպրոցն ու կրթությունը, մշակույթն ու արվեստը, ոչնչացնել այն ամենը, ինչ ստեղծել են գաղափարականները: Ժամանակին հայ ժողովուրդն ուներ աստղադիտարան, ուսումնասիրում էինք աստղերն ու տիեզերքը, իսկ հիմա մի քոռ գիտություն էլ չկա, որպեսզի տեսնենք սեփական ժողովրդի տգիտությունն ու ապերախտությունը, չարությունն ու երեսպաշտությունը: Իսկ տեսնողներին էլ պիտակում ենք ու վարկաբեկում:

(« Եվ ամեն մեկը, որ տգիտություն և վատություն ունեցավ իրենից դուրս փնտրելու աղետի պատճառները, կրկնեց հիմարություններ միայն »: Գարեգին Նժդեհ) Վազգեն Սարգսյանին դարձնելով ազգային գաղափարախոսության առաջնորդ՝ ազգովի դարձանք ոջլոտ ու փոչոտ, ինչպես ինքն էր, ամեն մի փնթի դարձել է քաղաքական գործիչ կամ մտավորական: Ահա ազգային հոգեբանության վերելքը, որտեղ ոչխարների պես ծափահարում են ու միաձայն քվեարկում, որտեղ բարբաջում են ու համերաշխ հետույք մտնում: Այդպես 1915 թվականին նույն համերաշխությամբ ճամփա ընկանք Դեր-Չոր, ունակություն չունենալով հավատալ, որ ապրելու համար հարկավոր է պայքարել, ոչ թե ոչխարի պես մորթվել: (« Արդյո՞ք մեր բացարձակ չեզոքության դեպքում, եթե դա նույնիսկ հոգեբանորեն հնարավոր լիներ, թուրք կառավարությունը պիտի չտեղահաներ հայությունը: Նա պիտ վարվեր մեզ հետ նիշտ այնպես, ինչպես որ վարվեց »: Գարեգին Նժդեհ) Սորթվեցինք դարերի ընթացքում, բոլոր ժամանակներում և այդպես էլ չհասկացանք, որ մորթողը օտարը չէ, այլ մեր մեջ բույն դրած թշնամին: Ներքին թշնամուն թողած իրար ենք հոշոտում ու արտաքին թշնամի փնտրում: (« Ներքին թշնամին զինակիցն է ու եղբայրը արտաքին թշնա մու »: Գարեգին Նժդեհ.) Շատերը չգիտեն, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ՀՅԴ ղեկավարները Երիտթուրքերի հետ ձեռք-ձեռքի տված ոչնչացրեցին հայ գաղափարականներին: Բավական է հիշել միայն այն փաստը, որ Իթիհատի կուսակցությունը դաշնակցական էմիսարների միջնորդությամբ կազմակերպեցին հայ երիտասարդների գորա-

կոչը թուրքական բանակ ու հետագայում նրանց զինաթափելով՝ գնդակահարեցին: Դաշնակցականների միջնորդությամբ էին երիտթուրքերը զինաթափել հայ ազգաբնակչությանը, որոնք ի վիճակի էին ինքնապաշտպանություն ցույց տալ: Չգտնվեց գեթ մեկ հայ, որը կբարձրաձայներ այդ մասին, փոխարենը՝ ամեն ինչ բարդեցին արտաքին թշնամու վրա:

(« Թուրքն ավելի դրական կարծիք ուներ և ունի հայ ցեղի մասին, քան մեր հայսնուն ստրկամիտները »: *Գարեգին Նժդեհ*) Անգամ Էրզրումի ու Կարսի դավաճանության մասին լռեցին, փոխարենը սլաքները ուղղեցին տարբեր ուղղություններով: Դաշնակցականների հանցանքների մասին լռեցին մյուս կուսակցությունները, քաջատեղյակ լինելով բոլոր մանրամասներին: Իսկ մենք ազգովի Դաշնակ Դրո ենք երգում, նույնիսկ չիմանալով, անգամ, որ Դրո Կանայանը Մանվել Գրիգորյանի պես հանցագործ ու թալանչի է եղել, բայց նրան հերոսացրեցինք ինչպես Մանվելին ու Վազգենին: Դրոյի դեմ անգամ Գարեգին Նժդեհն ու Անդրանիկն են դուրս եկել, սակայն ապարդյուն, որովհետև հայ ենք, այն է՝ բավականին շատ: (« Դա մի սարսափելի եղեռնագործություն է, սպանել պատմությունը: Դա ամենամեծն է բոլոր հանցանքներից: Նրանք կամենում են ոչնչացնել մեր նախնյաց գործերը և հավիտենական մոռացության մեջ թողնել մեր հայրենիքի հիշատակները, որպեսզի իրանց վատ գործերն ևս նրանց հետ ծածկվեն, մոռացվեն և սպազայի համար ամոթի ու նախատինքի առարկա չդառնան »: *Ըաֆֆի*) Մեր մեջ կա այն հանցավոր հատկությունը, որը չունեն մնացած ազգերն ու ժողովուրդները: Մենք հերոսացնում ենք ոճրագործներին, իսկ հերոսներին էլ խաչ բարձրացնում, խոսում ենք հավատքից ու սրբություններից, սակայն սրբապիղ ենք ու կեղծավոր: Խոսում ենք փարիսեցիների ու հուդանների մասին, սակայն ծախվում ենք մի քանի գրոշով՝ ազգի նվիրյալներին խարանելով դավաճանի պիտակը: Հայերի հոգեբանական առանձնահատկությունների մասին հազարավոր պատմություններ կան գրված մեր գաղափարականների կողմից, բավական է ծանոթանանք Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում մեծ տեղ զբաղեցնող կերպարներին ու կհասկանանք հայ ժողովրդի հոգեբանական առանձնահատկությունները: « Անխելք մարդը », « Մի կաթիլ մեղրը », « Տերն ու ծառան » « Անուշն » ու « Մարոն », « Գիքորն » ու « Լռեցի Սաքոն »: (« Ոսկեքսակ հայը չկանգնեց ոսկեգրիչ մտաւորականի թիկունքում, եւ այդ վերջինի լեզուն՝ կարճ,

խօքն անխելի եղաւ միջազգային արեւուազաների մէջ »: Գարեգին Նժդեհ) Ինչ եք կարծում, պատահականա՞ն էր լուսավոր գաղափարականը հիշեցնում այդ կերպարների մասին՝ ազգային խառնվածքը նրանց մեջ ի ցույց դնելով: Պատահականա՞ն էր արդյոք Գարեգին Նժդեհը գրում ներքին թշնամու մասին, պատահականա՞ն էր արդյոք Րաֆֆին հիշեցնում հայ առևտրականների ու հոգևորականների մասին: Խաբերա ու թալանչի, երեսպաշտ ու սրբապիղծ, վախկոտ, մանկապիղծ, քծնող, անտարբեր ու ապերախտ այդ կերպարները մարմնավորում էին մեր ժողովրդի սովորություններն էր ու բնավորության գծերը: (« Փոխադարձ անհանդուրժողականությունը, ինքնագոհությունը, նախանձը, դավաճանությունն ու բազում ուրիշ թերությունն ուստայն են հյուսել մեր սրտերում »: Րաֆֆի) Հայ գաղափարականների պատկերած կերպարները հիմա հայտնվել են ազգային ժողովում, մշակույթում, կառավարությունում, պետական ու հասարակական բոլոր կառույցներում, անգամ սփյուռքում ու հայկական գաղթօջախներում: Կնշանակի այդ տեսակը դարերով եկել ու հասել է մինչև մեր օրերը: Ահա ազգային գենետիկական ու հոգեբանական գործոնը, որը մնացել է անփոփոխ: (« Ժողովուրդները չունեն անելի մեծ թշնամի, քան կրօնապէս պատկերեցականը, անոգի ուսուցիչը, կաշուապաշտ զօրականը: Խորագոյն անկուրմի իրենց օրինակով սրանք են անբարոյացնում մարդը իբրև անհատ եւ հաւաքականութիւն »: Գարեգին Նժդեհ) Գիտեք, պատահական չեն մեր գաղափարականներն աղաղակել, որ մենք ազգովի տխմար ենք և անգրագետ, հավի ուղեղով, գուրկ ենք հիշողությունից ու ապերախտ: Ապերախտությունը մեր ազգային ամենացայտուն գծերից մեկն է: Ապերախտությունն ու անտարբերությունը հայերի մեջ ձևավորված ու ամրացած երևույթն է, պատահական չէ, որ հայերը սովորություն ունենք ասելու, որ մի հայը լավ է, իսկ երկուսն արդեն աղետ է: (« Մեր նկատմամբ մեղաւոր է եւ մարդկութիւնը, բայց անմեղ չենք եւ մենք: Մերն է մեղքի մեծ բաժինը, քանզի մեր ձեռքին է բանալին այն բոլոր դրոյթիւնների, որոնց մէջ կ'ուզէինք եւ կարող ենք լինել, քանզի մենք ենք մեր քաղաքական բախտի նարտարապետը »: Գարեգին Նժդեհ)

Թշնամությունը գալիս է տգիտությունից, իսկ տգիտությունը՝ ծուլությունից ու տխմարությունից, ամեն ինչ փոխկապակցված է, ամեն ինչ միաձուլված շղթայական կապով: Ինչպես ասում են սովորաբար՝ ենթագիտ-

ակցությունը « այսերգի գագաթն է »: Չկա ոչինչ ենթագիտակցական, որ հնարավոր չլինի վաղ թե ուշ գիտակցել, և չկա ոչինչ գիտակցական, որ հնարավոր չլինի անցնելու ենթագիտակցության մեջ: Սակայն հայերի պարա գայում այդ ենթագիտակցությունը մղվում է վերջին հորիզոնական, կամ էլ առհասարակ բացակայում է: Սովորաբար մարդն իր տեսակով շատ բաներ անում է առանց գիտակցելու, այսինքն ինքնաբերաբար կամ մեխանիկորեն, ինչպես ասում են խոսակցական բառապաշարում, սակայն հայերի մոտ ամեն ինչ անհասկանալի է ստացվում, առանց գիտակցելու անմտածված: Որպեսզի հասկանալի լինի այս բանաձևի միտքը՝ բացատրեն հասարակ եղանակով: (« Հայոց պատմությունը մեզ մի բան է սովորեցնում, այն որ հայր իր պատմությունից բնավ չի սովորում »: *Գարեգին Նժդեհ*) Հայերը սովորաբար իրենց խելքից միշտ հայտնվում են կեղտափոսում, չնայած մեծ ջանքերով ստիպված են լինում հաղթահարել և դուրս գալ այդ կեղտափոսից, սակայն շատ չանցած՝ վերադառնում են ու կրկին ընկնում նույն փոսը, ամեն անգամ նույն փոսում հայտնվելիս թվում է, թե իրենք կամավոր են նախընտրում ընկնել այդ կեղտափոսը: Երբ բազմաթիվ անգամ հայտնվում ես նույն կեղտափոսում, դրան արդեն դժվարանում եմ որևէ անուն տալ: Նույն ոճրագործին, երբ ներում են, հետո մոռանում նրա ոճիրները, վերջում հերոսացնում: (« Թշնամուն մի հանցանք ներել՝ նշանակում է նորե՛րն արտոնել »: *Գարեգին Նժդեհ*) Հիշեք Հովհաննես Թումանյանի « Մի կաթիլ մեղր », որի համար պատրաստ ենք ազգով ու ցեղով իրար փոր թափել, իրար հոշոտել, սակայն իրական թշնամու հանդեպ խոնարհ ենք ու վախկոտ, երեսապաշտ, քծնող, անտարբեր ու ապերախտ... (« Էն հասարակ վարունկի թուփն ինչ է. հայունի է, որ եղծե նա էլ ոտի տակ է ընկնում՝ էլ նրա պտուղը չի ուտվում, էնքան է դառնանում: Ամբողջ կյանքը դարձնում է դառն ու դաժան: Եվ էս տեսակ կյանքը կունենա, այո՛, շատ բան, և՛ « հառաջադիմություն », և՛ « կուլտուրա », և՛ « մամուլ », և՛ « գրականություն », և՛ « դպրոց », և՛ « բարեգործություն », բայց էդ բոլորը ներսից ճիճվի կերած պտուղի նման են, և տառապում են հիմնական պակասություններով, մի ընդհանուր ցավով, որի ճարը դրսից անել չի կարելի: Էդ տեսակ կյանքը կտա և տաղանդավոր մարդիկ, սակայն նրանք էլ կլինեն դառն ու դաժան: Բայց նա չի կարող ծնել ազնիվ մարդիկ, բարի սրտեր ու բարձր ոգիներ, հենց է՛ն, ինչը որ դարձնում է մի կյանք գեղեցիկ ու հրապուրիչ և մի ժողովուրդ թանկ ու հա-

մակրելի »: Հովհաննես Թումանյան)

Տեղին է նշել գաղափարական Նժդեհի խոսքը. « *Այլ կերպ հայությունը կմնա մեկն այն դժբախտ ժողովուրդներից, որոնք գոյություն ունեն, բայց չեն սպրոտ, որոնք « աշխարհում են բայց աշխարհից չեն »:*

Ասացեք խնդրեմ, արդյոք սա մեր ազգային հոգեբանության ամենավառ գնահատակա՞նը չէ, մի՞թե գերագույն արժեքներով մեծ հայր այդպիսի գնահատական կարող էր տալ իր ցեղին, եթե դա ճշմարտություն չլիներ:

(« Մի ժողովուրդ, որի որոշ տարրերը կարծես արդեն հաշտվել են իրենց ցեղի գլխովին կորչելու մտքի հետ և ցուցադրում են մահվան դատասպարտվածի հոգեբանություն »: Գարեգին Նժդեհ) Հիմա կհայտնվեն ինձ քարկոծողները

և կսկսեն դասեր տալով՝ այս աշխատությունը ներկայացնել դավաճանի բարբառանք: Նախապես ասեմ՝ այդ դեպքում պետք է դավաճան կոչվեն նաև Թումանյանն ու Իսահակյանը, Նժդեհն ու Անդրանիկը, Խորենացին ու Ֆրիկը, որոնք բարձրաձայնել են այս ամենի մասին և որոնց իմաստուն խոսքերն անգամ այսօր առանց հասկանալու մեջբերում եք ձեր փիլիսոփայական մտքերում և համարում նրանց Հայ Մեծեր:

Անդրադառնանք հայ մամուլին և ամբողջացնել հայի հոգեբանական փորձաքննության արդյունքները: *(« Թերթեր ունենք, որոնք ավելի օգտակար պիտ լինէին հայ ժողովրդին, եթե բնաւ լոյս չտեսնէին »: Գարեգին Նժդեհ):*

Հայկական մամուլի մասին բազմիցս խոսել են մեր գաղափարականները, որովհետև հայ մամուլը պատկերում է ազգային դեմքը: Թումանյանը, Պարոնյանը, Նժդեհը, Բաֆֆին և մյուսները պատահական չեն ազդակներ հնչեցրել, հիմա նույնը տեսնում ենք « Կիսաբաց լուսամուտներում » և

համացանցային մամուլում ու կայքերում: Հայկական մամուլը միշտ եղել է աղբանոց՝ պատկերելով ազգային դիմապատկերը: *(« Հիմի եկեք ուսուցիչներին տեսեք: Դասերից ավելի շատ է՛ն աշխատանքի վրա են, որ իրար ոտի տակ փորեն, և շարունակ մի որևէ չնչին դեպք, որ կարելի էր ընկերական շրջանում հեշտ վերջացնել, ազգային հարց դարձրած, տարիներով ձգտում են*

պաշտոնական ճանապարհով, դատարանով ու մամուլի էջերում մեկը մյուսին անվանարկել, հարածել ասպարեզից ու սպանել բարոյապես... ո՛չ մի մեղմություն, ո՛չ մի ներողամտություն, ո՛չ մի սահման չարություն »: Հովհաննես Թումանյան)

Դոդի Գագոյի « Կենտրոն » հեռուստաընկերությունը օրվա 24 ժամը իրենց փնթի տիրոջ գովքն ու բարերարությունն են գովազդում,

նման հազարավոր կայքեր կան, որտեղ Շամշյանի ու Արշակ Չաքարյանի պես տգետ աղբակույտերն են ներկայացնում հասարակական կյանքը, ապականելով ոչ միայն մեզ, այլև մեր անցած պատմությունն ու լուսավոր մարդկանց: (« *Իսկ հայ կապիտալիստները. արժէ խօսել տրանց մասին: Չէ՞ որ տրանք ազգ չունեն, հայրենիք չեն ճանաչում: Չէ՞ որ տրանց սրբազան հայրենիքը շահաշատ շուկան եւ մեծածախս հանդիպակրերն են: Մրանք դուրս են սպրտում ազգերից ու մարդկությունից: Պարտականություններ չունեն տրանք: Մարդ չեն տրանք: Ա՛հ, այդ « վատ արտի ու լաւ ստանդրսի » տեղերը. իրենց նիւթական բաւականությունների համար միայն սպրող մարդասիրտ անասուններ, որոնք օտարի համար աշխատող ազնիւ անասունի արժէքն իսկ չունեն: Տմա՛րդ արարածներ, որոնց մասին ասել է մի գրող. « Չա՛րկ կրծքին, դատարկ ձայն կը տայ »: Գարեգին Նժդեհ) Ինչպես ասում են՝ նորը հնի շարունակությունն է, ազգային գենետիկական հատկությունները մնացին նույնը, որովհետև նախընտրեցինք խավարն ու ստրկամտությունը: Նախընտրեցինք քծնանքն ու երեսպաշտությունը, որը դարերով եկել հասել է մեզ: (« *Այլ պիտի լինել ժողովուրդների պատմությունը, եթե գոյություն չունենային ընկածներն ու ընկածությունը մարդկային: Առանց տրանց գոյություն պիտի չունենար բռնությունը, որ անզիղջ վատերի սև գործերով է շնչել բոլոր դարերում »: Գարեգին Նժդեհ) Պատմությունից դասեր չքաղեցինք, շարունակ մնալով նույն աղբանոցում, շարունակելով հավատալ ու պաշտել սրբապիղծ ու մանկապիղծ հոգևորականներին, տգետ ու հիմար մանկավարժներին ու վարժապետներին, թախանչի ու հանցագործ առևտրականներին, ծույլ ու անբան զինվորականներին, կաշառակեր ու ծախված դատավորներին: Ահա հայի իսկական կերպարը, ու կարիք չկա նրանից դժգոհել, որովհետև դարեր շարունակ մնացել ենք անփոփոխ ու դեռ ինչքան կմնանք այսպես՝ հայտնի չէ: (« *Ահա այսպես, կյանքը Հայոց աշխարհում դառել է միահեծան իշխանություն կարմիրների և երեսուն արծաթ տրանց գործիքների՝ ամենօրյա Գողգոթա մեր ժողովուրդի համար »: Գարեգին Նժդեհ) Կցանականայի ավարտել այս աշխատությունը մեծ գաղափարական Մովսես Խորենացու խոսքերով:***

« Ողբում եմ քեզ, հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ ու ուսուցանողդ, վրդովվեց խաղաղությունը, արմատացավ

անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը:

Երբ մտածում եմ այս բաների մասին, սիրտս հառաչում և արտասվում է և ցանկանում եմ տխրալից և սգավոր խոսք ասել: Եվ չգիտեմ ի՞նչպես հորինեմ իմ ողբը, և կամ ո՞ւմ արտասվեմ:

Ուսուցիչները տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած և ոչ աստծուց կոչված, փողով ընտրված և ոչ սուրբ հոգով, ոսկետեր, նախանձոտ, թողած հեզությունը, որի մեջ աստված է բնակվում, և գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը:

Կրոնավորները կեղծավոր, ցուցամոլ, սնափառ, պատվամոլ, քան թե աստվածասեր:

Վիճակավորները հպարտ, դատարկապորտ, դատարկախոս, ծույլ, գիտություններն ու վարդապետական գրվածքներն ատող, առևտուր և կատակերգություններ սիրող:

Աշակերտները սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ փուլաջան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են:

Աշխարհականները ամբարտավան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասակար, ժառանգությունից փախչող:

Չինվորականները անարի, պարծենկոտ, զենք ատող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմոլ, ելուզակ, ավազակներին համաբարո:

Իշխանները ապստամբ, զոդերին զոդակից, կաշառակեր, կծծի, ժլատ, ազահ, հափշտակող, երկիր ավերող, աղտեղասեր, ստրուկներին համախոհ:

Դատավորները տմարդի, ստախոս, խաբող, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող, անկայուն, ընդդիմացող:

Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած:

Եվ ի՞նչ կա այս բոլորի դիմաց, եթե ոչ այն, որ աստված մեզ անտես է արել, և տարրերը փոխել են իրենց բնույթը, գարունը երաշտացած, ամառը սաստիկ անձրևային, աշունը ձմեռ դարձած, ձմեռը սաստիկ ցուրտ, մրրկալից և երկարատև: Քամիները բքաբեր ու խորշակաբեր, ցավեր տարածող, ամպերը կայծակներ թափող, կարկտաբեր. Անձրևներն անժամանակ և անօգուտ, եղանակը դաժան, եղամաբեր. Ջրերի ավելանալը անօգուտ, իսկ պակասելը՝ չափազանց. Հողի պտուղների անբերրիություն և անասունների անանելություն, այլև երկրաշարժեր և սասանումներ: Եվ այս

բողոքի վրա ամեն կողմից խռովություն, համաձայն այն խոսքի, թե ամբար-
իշտներին խաղաղություն չկա: Որովհետև մեզ տիրեցին խստասիրտ ու
չար իշխանավորը, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտ-
անելի հրամաններ են տալիս, կառավարիչները կարգ չեն պահպանում,
անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացած, հավ-
ատը ծախսվում է այս ունայն կյանքի համար: Ավագակներ են գալիս
անհատնում և շատ կողմերից, տները թալանվում են, ստացվածքները
հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտ-
արկվում են, դեպի օտարություն են արքորվում ազնվականները, անթիվ
նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են
ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ
սովեր և հիվանդություններ և բազմատեսակ համաճարակներ:

Աստվածապաշտությունը մոռացված է, և կա դժոխքի ակնկալություն »:
Մովսես Խորենացի

Ահա հայի դիմապատկերը, որի մասին անգամ 5-րդ դարում էր ասվում:
Ի՞նչ էք կարծում, արդյո՞ք տարբերություն գտաք ներկայիս ու անցյալի
միջև: Պատահական չէին այս մեջբերումները Մեծ Գաղափարականների
խոսքերից, որոնք ասվել էին մեր ժողովրդի հասցեին, դրանք մեր Ազգային
հոգեբանության ու նկարագրի ամենավառ ախտորոշումն էր, չնայած
հարյուր հազարավոր վեպեր ու պատմվածքներ կան, հեքիաթներ ու
պոեմներ ու չափածո գործեր, որտեղ բացահայտում է հայ մարդու ներքին
ու հոգեկան վիճակները՝ անկախ ժամանակից ու դարաշրջանից:

Գեհեճի Առաքել 29/10/2017թ.

*« Արդե՛ օր պիտի կարողանա՞նք սպացուցել աշխարհին, թե ինքնօգնությեան,
ստեղծագործությեան եւ ինքնայարգանքի զօրեղ զգացումներով զինուած ազգ
ենք՝ արժանի եւ կարող անկախությեան: - Այո՛, եթէ տարածուող Անին սանձա-
հարելու, եթէ մեր երկրի աւերածութիւնը դարմանելու, եթէ աւերակներին նոր
շունչ փչելու՝ կեանք տալու համար – եթէ ազգովին հասկացանք, թէ օտար
միջոցներից բարոյսպէս ազատ ենք օգտուելու միայն այն դէպքում, երբ արդէն
սպառել ենք մեր սեփական բովանդակ կարողութիւնները, եւ սպա եթէ
ազգովին լծուեցինք օգնութեան գործին: Չվարուեցի՞նք այս ձեւով – սպացուց-*

-ած պիտի լինենք, որ արժանի չենք ո՛չ թե պետական կեանքի, այլ եւ մեր գոյութիւնը քարշ տալու որպէս ժողովուրդ »: Գարեգին Նժդեհ

ՀՐԵՇՆԵՐԸ ՄԵՎ ՈՂՄԿՈՒՄ

« Դժոխքը դատարկվել է... Բողոք հրեշներն այստեղ են... »: Շեքսպիր.

Վահան Շիրխանյանի բաց և փակ նամակներն արդեն դառնում են անտանելի, որովհետև ծերուկն իսկապես անտանելի է դարձել, չնայած ոչ մի ժամանակ էլ ոչ բնությանն էր պետք, ոչ մարդկությանը: Շիրխանյանը մեղադրում էր Քոչարյանին Շահումյանի շրջանի փախստականների հանդեպ ունեցած անտարբեր վերաբերմունքի համար, սակայն ծերուկը չի նշում, թե ու՞մ մեղքով և ու՞մ դավադիր ձեռքով ու դավաճանության շնորհիվ կորցրեցինք Շահումյանի շրջանը, Մարտակերտի շրջանի մի մասը, Արծվաշենը ներառյալ: Շիրխանյանը չի նշում, թե այդ շրջանների ժողովրդին ո՞վ դարձրեց փախստական: Դե եթե միամիտները կարողանում են ժողովրդի աչքին թոզ փչել, ուրեմն կարող եմ իրական փաստերն ու վկաներին ի ցույց բերել: Վազգեն Սարգսյանի կոտրած ձեռքով այդ շրջանները ընկան թշնամու ձեռքը, դավադրությանը ինքնապաշտպանական ջոկատներին ծուղակը գցելով: Վազգեն Սարգսյանը հենց Շիրխանյանի, Մանվելի, Լիսկայի ու Սարոյանի ձեռքով իրականացրեց հայ ժողովրդի հանդեպ սարսափելի ոճիր: Այս հերթական փաստաթուղթը կարծում եմ կարելի է դարձնել հասարակության համար հասանելի: Շատերը չգիտեն, որ Արցախյան պատերազմի ժամանակ եղել է ՄԵԾ Թալան, առհասարակ պատերազմների ժամանակ այն կոչվում է ՌԱԶՄԱՎԱՐ, սակայն մեր տարբերակում դա այդպես չէ, որովհետև ռազմավարի ժամանակ գոնե մարտիկներին ու ռազմիկներին կարողանում էին բաժին հանել Ռազմավարից, քիչ թե շատ թեթևացնելով նրանց ընտանիքների վիճակը: Իսկ քանի, որ մեզ մոտ այդպես չի եղել, ապա դա կոչվում է ԹԱԼԱՆ: Իսկ իրականում ինչպե՞ս է եղել: Մեր ազատամարտիկները ու կամավորականները ռազմաճակատում կռվում էին թշնամու դեմ, իսկ մեր գեներալները կամ հրեշները թալանում էին, ոչ միայն Ադրբեջանական գյուղերը, այլև մեր

կամավորներին, այլև ազատամարտիկների համար հատկացված սննդամթերքը, հանդերձանքը, զինամթերքը, անգամ դրամական միջոցներն ու պարգևատրումները: Իմ ձեռքի տակ գտնվում են կամավորական տղաների մի քանի օրագրեր, ու ձայնագրություններ, որտեղ համոզիչ ապացույցներով ներկայացված է այս ամենը: Քելբաջարի շրջանի թալանը իրականացրել են. Սերգեյ Սահակիչը, Անդրանիկ Քոչարյանը, Սասուն Միքայելյանը, Հայկազ Բաղմանյանը, Վահան Ծիրիսանյանը, Մեյրան Սարոյանը, Աստվածատուր Պետրոսյանը՝ Ալիկ, Սուրադ Կիրակոսյան: Քելբաջարից թալանվել է Կոբալտ, գորգեր, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, զինամթերք, գյուղտեխնիկա և այլն: ԼԱԶԻՆԻ շրջան. Թալանը իրականացրել են. Վահան Ծիրիսանյան, Սուրիկ Խաչատրյան՝ Լիսկա, գնդապետ Աշոտ Պետրոսյան, Աստվածատուր Պետրոսյան, Գևորգյան Գագո, մատգագո, 26-ի Քոռ Հովո, Հովհանիսյան Հովո: Թալանվել է Խոշոր ու մանր եղջուրավոր անասուն: Գյուղտեխնիկա, ցորեն, գարի, և այլ տեսակի գույք: ՋԵԲՐԱԻԼ շրջ: Թալանը իրականացրել են. Սուրիկ Խաչատրյան, Սուրադ Կիրակոսյան, Ղևոնդ Հովհաննիսյան, Աստվածատուր Պետրոսյան, Ֆրունզիկ Ավագյան, Հայկազ Բաղմանյան, Միքայել Հարությունյան: ՖԻԶՈՒԼՈՒ ԾՐՋԱՆ. Թալանը իրականացրել են. Մանվել Գրիգորյան, Սուրիկ Խաչատրյան Լիսկա, Ֆրունզիկ Ավագյան, Նազիկ Ամիրյան, Աստվածատուր Պետրոսյան, Վիտալի Բալասանյան: Թալանվել են Հորադիզ կայարանի մարդատար և բեռնատար մեքենաները, գյուղատնտեսական տեխնիկա, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, թռչնաբուծական ֆերմաներ, ցորենի ու գարու ամբարներ և կենցաղային ապրանքների պահեստներ, զինի և սպիրտ, դիզ վառելիք՝ բենզին: Կենցաղային ապրանքների հսկայական պաշարներ: ԱՂԴԱՄԻ ԾՐՋԱՆ: Թալանը իրականացրել են. Վիտալի Բալասանյան, Մովսես Հակոբյան, Սամվել Կարապետյան Օգանովսկի: Բենզինի ու վառելիքի պաշարներ: Սպիրտի զինու պաշարներ: Խոշոր և մանր եղջերավոր անասուններ, կենցաղային այլ ապրանքներ: Կարծում եմ թվարկածս մեկ կաթին է ամբողջ օվկիանոսից, որովհետև այն շատ ավելի մեծ է ու բազմազան: Ես դեռ չնշեցի, որ Ադրբեջանի խիտ բնակեցված այդ շրջանները բավականին հարուստ էին: Եվ անհատական բնակարաններից հանված գույքը, սկսած գյուղատնտեսական սարքավորումներից վերջացրած կահույք, մեքենաներ, հեռուստացույցեր ու կենցաղային

այլ միջոցներ: Թալանի տեսականին ինչպես տեսնում եք բազմազան են, անզամ բրդյա վերմակներ, մահճակալներ, կահույք, գորգ, հագուստ և բրդի պաշարներ, գործարանների ու բազաներում պահեստավորված կենցաղային շինարարական ու սննդամթերքի հսկայական պաշարներ: Ու այդ ամբողջ հարստության մեջ անզամ մի պարկ այլուր կամ գարի մեր ազատամարտիկներին չի տրվել: Այդ հրեշների անկշտությունը սահման չի ճանաչում, երբ մեր տղաները կենաց ու մահու կռիվ էին տալիս, այդ հրեշները թալանում էին ու կողոպտում:

Կցանկանալի որպեսզի ամբողջական լինի փաստագրությունը ավելացնեմ մի հատված « Բիշքեկի զինադադարի խայտառակ պայմանագիրը » նյութից: Մեր ուժերի հակազորը հաջող էր ընթանալու, եթե չլինեին մեր անկուշտ հրամանատարների ազահությունը: Վերականգնելով նախկին կորցրած դիրքերը հայկական ուժերը կարող էին շարունակել առաջխաղացումը, սակայն կանգնեցվեց հակահարձակումը, որը հնարավորություն տվեց Ադրբեջանի հրամանատարությանը՝ օգտվել այդ կարճատև « զինադադարից » ու իրենց խուճապահար փախչող գործին կանգնեցնել վերադասավորել ու նորից ուղարկել ճակատային գիծ: Իսկ պատճառը այն էր, որ Մանվել Գրիգորյանի ու Ստեփանակերտի գնդի հրամանատար Օզանովսկի Մամվելի (Մամվել Կարապետյան) միջև վեճ էր ծագել, թե առաջինը ում ջոկատները պետք է մտնեն Միր-Բաշիր ավանը թալանելու համար: Մեկ ամիս տևած վեճը անամոթաբար ռադիոէթերներով լուսաբանելով՝ երկու անկուշտ հանցագործներ իրենց կամավորների ներկայությամբ ապացուցում էին, որ այդ պատերազմը ԹԱԼԱՆՉԻԱԿԱՆ է նրանց համար, ոչ թե հայրենական: Օզանովսկի Մամվելը անընդհատ շեշտում էր, որ Մանվելը տարել է Ֆիզուլու թալանը, և թող դրանով բավարարվի, իսկ Միր-Բաշիրի թալանը ինքը պետք է տանի: Մանվելն էլ իր հերթին պնդում էր, որ իր բիրգադը ավելի շատ զոհեր է տվել ու պետք է Միր-Բաշիրի թալանով իր զոհված կամավորականների ընտանիքները պահի: (Կցանկանալի շեշտել, որ 1993 աշնանը 5-րդ կամավորական մոտոհրաձգային բրիգադան ազատագրել էր Ֆիզուլին իր հարակից գյուղերով, և Մանվելը ողջ շրջանի թալանը կազմակերպված տարել էր Էջմիածին, անզամ իր բրիգադայի զոհված կամավորների ընտանիքներին մեկ պարկ այլուր չէր տվել իր թալանից, նրա կամավորները կռվում էին սովահար ու առանց հանդերձ-

անքի: Մանվելը ոչ միայն յուրացնում էր կամավորներին հատկացվող հանդերձանքն ու սննդամթերքն, այլ նրանց հասանելիք դեղորայքը, վճարվող գումարները ու նպաստները:)

Պատկերացնում եք, երկու անկուշտ « հրամանատար» կոչվածների վեճը բաց էթերում կամավորների ներկայությամբ ու նաև՝ ադրբեջանցիների համար: Թավանչիական պատերազմի գույժը հյուծում էր մեր կամավորներին, ովքեր կորցրել էին իրենց ընկերներին՝ արյուն թափելով ամեն թիզ հողի համար:

Իսկ ՀՀ բարձրագույն հրամանատարությունը լռում էր, կարծես թե իրեն էլ իրենց բաժինն ունեին այդ թավանից: Չնայած այդպես էլ կար: Վերջապես երկու թավանչիները գալիս են համաձայնության: Օգանովսկի Մանվելի (Մանվել Կարապետյան) գունդը պետք է շարժվեր Միր-Բաշիր թավանի համար, որը ընդամենը 3-4 կիլոմետր էր ճակատային գծից հեռու, իսկ Մանվել Գրիգորյանին առաջարկված էր շարժվել Բարդա, որը ընդամենը 10-15 կիլոմետր էր ճակատային գծից հեռու և իր հարստությամբ չէր զիջում Բաքվին: Բարդան (Պարտավր) Ադրբեջանի նավթային հանքավայրերից մեկն էր ու առողջարանային կենտրոն էր համարվում: (Պարտավր դա Պատմական Հայաստանի խոշորագույն քաղաքներից մեկն էր ժամանակին:) Չնայած ադրբեջանցիներն արդեն հասցրել էին վերակազմավորել իրենց փախչող բանակին ու վերադարձրել էին ճակատային գիծ: Սակայն ամենահետաքրքիրն այն էր, որ ազատամարտիկի փաստագրության մեջ նշվել էր, որ Մանվելին առաջարկել էին ազատագրել Շահումյանը, իսկ Միր-Բաշիրը թողնել Օգանովսկի Մանվելի գնդին, սակայն Մանվելը հրաժարվել էր, որովհետև այնտեղ թավանելու բան չկար: Հիշեցնեմ որ 5-րդ բրիգադի կամավորները Շահումյանի շրջանի մատույցներում էին և բավական էր մեկ ժամ, որպեսզի Շահումյանի ողջ շրջանը ազատագրվեր: Սակայն Մանվելը նախընտրում էր նախընտրում էր թավանել, ոչ թե ազատագրել... Մանվելը իրականացնում էր կարևոր « առաքելություններից » մեկը՝ դա փորձված ազատամարտիկների ու կամավորների ոչնչացման ծրագիրն էր: Պատահական չէր, որ Մանվելի նախաձեռնությամբ մի ամբողջ գումարտակ ոչնչացվեց ականապատված հատվածներում: Չհաշված, որ նրա պատժիչ գումարտակը, որ կազմված էր քրեական հանցագործներից, խոշտանգում ու սպանում էին ազատամարտիկներին Մանվելի թողտվութ-

յամբ: Պատահական չէր, որ այդ բրիգադի մասին սոսկալի բաներ են պատմում: Այն օրագիրը, որը թողել էր Արա Ավագյանը շատ ավելի սոսկալի էր նկարագրում այդ ամենը, քան կարելի էր պատկերացնել: Հիշեցնեմ, որ հնարավոր էր Արա Ավագյանի ինքնասպանությունը կապված էր այդ փաստագրության հետ: Փաստն այնպես էր ներկայացվել, որ Արա Ավագյանը ինքնասպան էր եղել իր բնակարանում՝ նռնակի պայթուցից: Չնայած, որ նա կռիվներում թրծված մարտիկ էր, ով մի քանի անգամ վիրավորվելով և միշտ վերադառնալով ճակատ, արդյոք կարող էր խաղաղ պայմաններում ինքնասպանություն գործել:

Սակայն վերադառնանք ճակատային միջադեպերին, 1994թ. Մայիսին Օգանովսկի Սամվելը չի կարողանում մտնել Միր-Բաշիր, որովհետև ադրբեջանցիների կողմից հանդիպում է ուժեղ ինքնապաշտպանության: Միր-Բաշիրի փորձը պսակվում է անհաջողությամբ, քանզի գործ ունենք տգետ թալանչիների և ոչ հրամանատարների հետ:

Ազատամարտիկների համար նախատեսված բժշկական միջոցները նույնպես թալանվում էին, Երևանի սեղանիկների վրա վաճառվում էին դեղերն ու ծխախոտը: Այս անպատժելիության վիճակի տերը սպարապետ կոչված հրեշն էր, որովհետև միայն նրա մտերիմներն էին անպատիժ թալանում ոչ միայն ազատամարտիկների սննդամթերքն ու հանդերձանքը, այլ գումար վճարելու սեփականաշնորհում էին պետության գույքը: Ու այդքանից հետո պարզ է, որ այդ հրեշները Վազգեն Սարգսյանին դարձրեցին ոչ միայն սպարապետ, այլև աստված: Թող ներեն ինձ, որովհետև հրեշներից շատերի անունը չեմ նշել, այլապես այն անվերջանալի կլիներ: Այս ամենի մեջ չեմ նշել սփյուռքահայերի կողմից մեր մարտիկների համար ուղարկված հանդերձանքը և միջոցները: Ներառյալ Քրոք Քրքոդյանի Հայաստանին նվիրաբերած 90 միլիոն դոլլարի մի զգալի մասը՝ 70 միլիոնը, որը սպարապետ կոչված հրեշը յուրացրեց շվեյցարական բանկում հաշիվ բացելով:

Գեհենի Առաքել 21.03.2019

ԱՐԺԵՉՐԿՎԱԾ ԱՐԺԵՔՆԵՐ

« Էն հասարակ վարունգի թուփն ինչ է. հայտնի է, որ եթե նա էլ ոտի տակ է ընկնում՝ էլ նրա պտուղը չի ուտվում »: Հովհաննես Թումանյան

Բազմիցս խոսել եմ, որ հայոց լեզվի բանավոր խոսքում շատ բառեր ու բառակապակցություններ ապականվել ու իմաստազրկվել են, անգամ թևավոր խոսքերն են իմաստազրկվել: Երբ մարմնավաճառը խոսում է բարոյականությունից, գողն ու թալանչին՝ արդարությունից ու բարեգործությունից, իսկ ազգադավը՝ հայրենասիրությունից, հասկանում ես, որ արդեն դժոխքի ճանապարհին ենք: Մենք մեր շրջապատում ամեն անգամ բռնաբարում ենք մայրենի լեզուն՝ հայհոյանքով ու ստով: Լեզվի հետ նաև պատմությունն ու ազգային հերոսներին: Երբ ճիվաղները սկսում են ցիտել մեր ազգային Մեծերի խոսքերը, ուզում ես գլուխդ առնել ու Աբու Լալա Մահարու պես փախչել իրականությունից: Հայ ժողովրդի գեղեցիկ ու հնչեղ բառերը ոտքի տակ տրորեցին ու դարձրեցին ողորմելի փնթիների համար լոզունգ ու կարգախոս: « Էն հասարակ վարունգի թուփն ինչ է. հայտնի է, որ եթե նա էլ ոտի տակ է ընկնում՝ էլ նրա պտուղը չի ուտվում, Էնքան է դառնանում: Նրա համար էլ ձեզ թույլ չեն տա, որ նրա թուփը ոտի տակով անեք: Էնպես դառնանում ու դաժանանում է և մարդը, նրա հոգին, սիրտը, միտքը, ու ներքին դառնությունը դուրս է տալի, հայտնվում է և՛ աչքերում, և՛ դեմքին, և՛ խոսքերում, և՛ գործերում, ամեն տեղ, ամեն սասարեզում, ու ամբողջ կյանքը դարձնում է դառն ու դաժան »: Հովհաննես Թումանյան: Սպարապետ բատի բառի իմաստը շատերը չգիտեն, ուղղակի կարծում են, թե այդ բառը կարելի է ամեն մի անարժանի շնորհել: Սպարապետ բառը նշանակում է առաջնորդ, այն էլ եզակի ունակություններով օժտված, գաղափարներով լեցուն, համարձակ ու անվախ, հզոր և անպարտելի: Սպարապետը հայոց բանակի առաջնորդն է, որը ճակատամարտում առաջնորդում է բանակը, իսկ բանակը թագավորության ու պետության անվտանգության երաշխիքն է, նրա հզորության ու անպարտելիության ուժը: Սպարապետը պատերազմի ժամանակ առաջնորդում է ոչ միայն բանակը, այլ աշխարհագորը, իշխանական ու նախարարական տները: Մինչդեռ մեր ժամանակերի սերունդը որպես սպարապետ ճանաչում է

Վարդան Մամիկոնյանին, Մխիթար սպարապետին, Գարեգին Նժդեհին և Վազգեն Սարգսյանին: Այս վերջինիս մասին շատ ենք խոսել, ու դեռ ասելու շատ բան կա, քանի որ թվարկածս չափանիշները որոնցով օժտված էին հայոց բանակի սպարապետները Վազգեն Սարգսյանի պարագայում անհնար էր: Երբ քրտնահոտ ու ոջլոտ մոլագարին վերցրեցին ու մեկ գիշերում դարձրեցին սպարապետ, այն էլ իր մահից հետո: Մինչդեռ, ինչպես ասացի, սպարապետը առաքելություն էր, ու պատասխանատվություն, ոչ թե պաշտոն կամ տիտղոս: Իսկ Վազգեն Սարգսյանը անգամ արժանիք չունեի սպարապետի ախոռի ախոռապահը լինելու: Բանակ չձառայած շիզոֆրենիկին հանկարծ դարձնել առաջնորդ, այն էլ բանակի՝ ծիծաղելի է, այսպիսով սևացնում ենք մեր պատմության բոլոր սպարապետների անունն գործը ու նրանց հիշատակը: Ժողովրդի ու սերունդների պարանոցին փաթաթեցին Վազգեն Սարգսյանի կեղծված ու սուտ հերոսական անցյալը, նրան տալով սպարապետի տիտղոսը: Անգամ եփած հավի ծիծաղն է գալիս, երբ դասալիքը համարվում է բանակի անկյունաքարը, ու նույնիսկ անվանելով հզոր ու անվախ սպարապետ: Վազգեն Սարգսյանին ճանաչողները լավ գիտեն, որ դա սուտ է, սակայն նրանք ժամանակին փաստել են Վազգենի հերոս լինելու մասին, և հիմա խոստովանել, որ մոլագարը ոչ մի արժանիք չունեի, դա բարդ է իրենց համար: Միևնույն է, ինչ էլ որ լինի, ժամանակն ամեն ինչ դնում է իր տեղը... Իսկական սպարապետը գորքի առջևում էի, ինչպես Վարդանը, Մխիթարն ու Նժդեհը, նրանք ապրեցին ու տառապեցին իրենց գորքի ու ժողովրդի հետ, նրանք իմացան զինվորի ու հրամանատարի արժեքը: Իմացան հողի ու երկրի գինը, արյան ու արցունքի ծանրությունը: Հավատացեք, որ այն բոլոր սպարապետները հանգիստ քուն չունեցան՝ տառապետով հայրենիքի ու ժողովրդի համար, պայքարեցին, կռվեցին ազատության հաղթանակի, երկրի ժողովրդի համար: Պետք է կրկնվեմ, որ Սպարապետը առաջնորդում է բանակն ու ժողովրդին: Իսկ Վազգեն Սարգսյանի տարբերակում այլ էր, երբ հայ կամավորներն ու ազատամարտիկները լեռներում ձյան ու ցրտին անոթի ու անգեն կռիվ էին տալիս մեծաքանակ թշնամու հետ, Վազգեն Սարգսյանը Երևանում նախարարական իր առանձնասենյակում տաքուկ մարմնավաճճների հետ թրև էր գալից, չհաշված որ հրամաններ էր արձակում, որպեսզի այդ հերոսներին թիկունքից գնդակահարեն, որպեսզի

ինչպես Մանվել Գրիգորյանն էր ասում, իրենից « Աշոտ » չուզեին երկիրը թալանելու և կողոպտելու համար: Ու առանձնասենյակում ծվարած ազգադավին դարձնել սպարապետ, դա սրբապղծությունն է: Հենց Վազգեն Սարգսյանի կողմից ստեղծված ասֆալտամարտիկներ ոհմակներն էին, որ պետք է դառնային կրակ ու պատիժ հայ ժողովրդի գլխին, կեղծելով ոչ միայն ընտրությունները, այլև ռազմական հեղաշրջումներ իրականացնելով: Կառաջարկեի հետաքրքրասերներին կարդալ « Ձոն Պազովիչին » և Մտորումներ « Պազովիչի »-ից հետո» գրքերը, գուցե հետաքրքիր բաներ գտնեն այնտեղ: Առհասարակ Վազգեն Սարգսյանը դեռ իր կենդանության ժամանակ ոչինչ չարեց հայրենիքի ու ժողովրդի համար, փոխարենը իր եղբայրների ու սանիկների հետ միասին թալանեց երկիրը, ժողովրդին, սփյուռքահայերին , անգամ բարերարներին: Այդպես էլ պատահում է, երբ տականքը իրեն զգում է երկրի տերն ու տիրակալը: Վազգենը մարտադաշտում չի եղել, անգամ թուրք չի տեսել, իհարկե չհաշված իրենց մարզի ադրբեջանական գյուղերի բնակիչներին: Վազգենը ազատամարտիկներին թիկունքից խփողների նախաձեռնողն էր, նրա հրամանով էին Մանվելն ու Սարոյանը սպանում հերոսներին, նրա հովանավորությամբ էին Մանվելն ու Սարոյանը հայկական բանակի զենքն ու զինամթերքը վաճառում չեչեններին, նրա հովանավորությամբ էին Արմեն ու Արամ Սարգսյանները իրականացնում 50/50 ի օպերացիան, որից հետո էստաֆետը հանձնեցին Սաշիկին ու Ծառուկյան Գագիկին: Ծառուկյանը սփյուռքահայ գործարարներին էր « քցում », Սաշիկն էլ բոլորին միասին վերցրած: Սպարապետը դարձավ երկրապահի ոչ միայն խորհրդանիշը, այլև հավերժ նախագահը, երկրապահում պետք է ծաղկեին ու բազմանային ասֆալտամարտիկների ու դասալիքների թուլեքը, հետո պատանի երկրապահներին ապականեցին դարձնելով իրենց պես անտաշ ու տզես: Մամիկոն Խուրշուդյան, Տարոն Սարգսյան, Արմեն Աշոտյան և նման բաներ... Երբ ուղեղի բջիջները՝ եթե իհարկե դրանք կան, դադարում են գործելուց և փոխարենը գործում են ամորձիներն ու ստամոքսը, լափելու ու բազմանալու համար, ամեն ինչ դառնում է Վազգենավարի Երկրապահ ընտանիքի պես: Երկրապահը երեսուն տարի շարունակ դարձավ երկրի հերը անիծողը, ընտրություններ կեղծելով ու երկիրը թալանելով Վազգենին ոչ միայն դարձրեցին սպարապետ, այլև կուռք ու աստված: Նույնն արեց Մանվելը, հասկացավ,

որ քավոր Վազգենը իրենից ոչնչով ավել չէր, սակայն կուռքը ու փառքը նրան բարձրացրեց երկինք, ինքն էլ ձգտեց հասնել Պատռասի բարձունքին: Բայց ինչպես Կասեր Մաքսիմ Գորկին « Սողալու համար ծնվածը չի կարող թռչել »: Իսկապես Մանվելը Վազգենից ոչնչով պակաս չէր անգրագետ, փնթի, արյունարբու ոճրագործ ու անկուշտ: Պատահական չէր, որ քավոր սանիկ էին դարձել, պատահական չէր, որ ժողովրդի վրա կրակելու համար, Վազգենը Մանվելին գեներալի կոչում շնորհեց:

Սպարապետ բառի մեջ ինչքան հայրենասիրություն կա, նվիրվածություն ու հավատարմություն, ամենասուկալին այն է, որ փնթիները Վազգեն Սարգսյանին համեմատում են Գարեգին Նժդեհի հետ, Կոմսոմոլը Նժդեհական, երբ նրան համեմատում են Գարիբալդիի ու Շարլ Դը Գոլի հետ: Ասեմ, որ գեներալ բառի իմաստը նույնպես փոխվեց ու արժեզրկվեց հիմա դարձել է թալանչի, անկուշը տգետ ու փնթի, անբարոյական բառի հոմանիշը: Հայկական իրականության մեջ այդպիսի բառեր շատ կան, որոնք այլ կերպ են ընկալվում բացասական առումով իհարկե, պատգամավոր բառը, որին ժամանակին անվանում էին երեսփոխան, որովհետև նրանք առիթ կամ անառիթ փոխում են իրենց շապիկներն ու իրենց դեմքերը, անհիմաստ խոսքեր ու դատարկ փիլիսոփայություն: Վարչապետ բառի իմաստը ոտնատակ ընկավ, դառնալով ստի, կեղծիքի ու դատարկաբանության խորհրդանիշ: Ինչպես Արթուր Մեսչյանի երգում էր ասվում, իմաստագրկվեց ամեն ինչ անգյամ կյանքն ու պայքարը:

Կյանքը անհիմաստ իմաստագրկվում է,
երբ վերածվում է անվերջ պայքարի,
պայքարն էլ, ավաղ, իմաստագրկվում է,
երբ վերածվում է կյանքի իմաստի....

Երբ բարոյականությունը, պայքարը սերը ու հայրենասիրությունը նյութական դաշտ է մղվում ապա ավելորդ է խոսել արժեքներից: Անհիմաստ արժեքները այսօր դարձել են հայկական իրականության մասը, որտեղ Տապալյան է արժեք դառնում Դոդն ու Պիպոն, Վազգենն ու Մանվելը, հասկանում ես, որ այդ երկրում ոչինչ չի կարող փոխվել, քանի դեռ մարդկանց ուղեղում թագավորում է կիսաբաց լուսամուտները:

Գեհենի Առաքել 12/07/2019

ԴԱՌՆ ՈՒ ՑԱՎԱԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

« Պարտություն, ստրկություն, տառապանք, ահա՛ կեղծիքին հարկատու ժողովուրդների նակատագիրը »: Գարեգին Նժդեհ

«Հ իշխանությունները ամենաշատը վախենում են ճշմարտությունից՝ ներառյալ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Դրա համար էլ սուտն և կեղծիքը հանդիսացավ պետության կառուցման անկյունաքարը: Թող չոգևորվեն Նիկոլ Փաշինյանի երկրպագողները կամ թիմակիցները՝ թե տեսեք մեր վարչապետին քննադատում են... Հարցն այն է, որ ժողովրդին են խաբում... Իսկ գիտե՞ք, թե ինչու են խաբում, որովհետև կույր ու տգետ մասսաներին են օգտագործում, որպեսզի իրենց կեղծիքն ու սուտը մատնացույց անողների վրա արձակեն իրենց անատամ ու գազազած տգետներին: Իսկ ինչպես գիտենք՝ Հայ ժողովուրդը խաբվելու ունակ ժողովուրդ է, համեմատած մյուս ազգերին: Պատմական անցած դարերը մեզ դա արդեն ապացուցել են: Իսկ վաղ անցյալում Վանո Սիրադեղյանի ԲՏՈ-ներն էին հարձակվում ցանկացածի վրա, ով կփորձեր Վանո Սիրադեղյանի հասցեին քննադատական խոսք հնչեցնել: Շատերը չգիտեն, որ հենց այդ կանանց ոհմակի ղեկավարը եղել է գրող Հրանտ Մաթևոսյանի դուստրը՝ Շողեր Մաթևոսյանը իր « Շամիրամ » կուսակցությունով:

Մի խոսքով ինչպես ասում են՝ ճշմարտությունը դառն է ու ցավալի... Ճշմարտության ետևում թաքնված են այնպիսի հանցանքներ ու ոճիրներ, որոնք մասին անգամ մտածելն է սարսափելի, ուր մնաց լսելն ու ներկայացնելը: Հանցագործների ու ոճրագործների շղթայակապ շղթան ձգվում է երկար, ներառելով ինամի, ծանոթ, բարեկամ, կուսակցական ու անգամ հոգևոր շերտերը: Չեմ կարծում, թե ինչ-որ մեկը ցանկություն կունենա բացահայտել ճշմարտությունը, քանի որ կծիկի բացվելով, այն անգամ կհասնի մինչև նորանշանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Հայկական մի խոսք կա, « այն ճյուղը, որին նստած ես՝ մի կտրի » Առհասարակ այս բանաձևով աշխատել են երեսուն տարուց ավելի, իրար փոխանցելով պաշտոնները, տիտղոսներն ու պորտֆելները:

Անգամ երեսուն տարի անց, «Հ իշխանությունները սարսափում են Նաիրի Հունանյանից, Ինչու՞ են նրան յոթ փակի տակ պահել... Ինչու՞ է հոկտեմբերի 27 -ը արգելված թեմա: Ինչու՞ են իշխանությունները փնտրում օտար-

երկրյա պատվիրատուների այդ գործի մասով, փորձելով խճճել ամեն ինչ: Նույնիսկ այսքան տարի անց, նրանք ոչնչացնում են ոչ միայն վկաներին ու փաստերը, այլև այդ թեման հիշեցնողներին: Ինչու՞ այսքան տարի անց, ոչ մի լրագրող կամ իրավապաշտպան չի տեսել Նաիրի Հունանյանի դեմքը, ինչու՞ ոչ ոք չի այցելել նրան հարցնելու, թե ի՞նչը նրան դրդեց գնալու այդ քայլին: Ի՞նչ էր կարծում երեսուն տարի անց Նաիրին չէ՞ր կարող խոստովանել, թե ով իրեն ստիպեց գնալ այդ քայլին, գոհաբերելով իր հարազատներին՝ մորը, եղբորը, քեռուն և ընկերներին... Արդյոք կարո՞ղ էր գտնել մի ապուշ, որն ընդունակ է ինչ-որ մեկի պատվերով կամ ինչ-որ գումարի պատճառով գոհաբերել իր հարազատներին տանել այդ քայլին, իսկ երբևէ մտածել էր, թե ինչու՞ պետք է Արցախյան պատերազմի սարսափի միջով անցած Վռամ Գալստյանը, որը Նաիրի Հունանյանի քեռին էր, պետք է զենք վերցնե՞ր սեփական իշխանության դեմ: Միայն նրա խոսքերը լսողը կհասկանար, որ դա վրիժառուի խոսքեր են, ոչ թե վարձկան ահաբեկչի: « Ժողովուրդ ջան, չե՞ք գտնում, որ ազգը, իրոք, մեղք է: Հիմա իմ ջահել կյանքը ձեզ՝ ինձ խփեն էլ, էլի ոչինչ, էնքան, որ իմանամ՝ ազգս ապրելու է » Վռամ Գալստյան: Արդյոք տեսե՞լ էք ահաբեկիչ, որը ժողովրդի շահը գերադասի սեփական կյանքից ավելի: Կամ թե նա ինչու՞ պետք է ինքնասպան լինե՞ր, երբ բաց ճակատով ասել էր, որ պատրաստ է կրելու իր պատիժը: Չէր տեսնու՞մ, որ ամեն ինչպես են կոծկում ու քողարկում, ստում են ու կեղծում իրական փաստերը: Ոճրագործ Վազգենից սարքեցին սպարապետ, իսկ վրիժառու հայրողիներին էլ ոճրագործ ու դավաճան: Եթե նկատել էք Նաիրի Հունանյանը ՀՀ իշխանությունների Աքիլլեսյան գարշապարն է, նրանք վախենում են, որ Նաիրի Հունանյանի խոսելուց կբացահայտվի ոչ միայն Վազգեն Սարգսյանի ոհմակի կողմից գործած ոճիրները, այլև Լևոնի, Վանոյի ու ՀՀԾ բանդայի հանցանքները: Նրանք վախենում են, որովհետև սուտն ու կեղծիքը պաշտպանում են իրենց անվտանգ ապրել՝ վայելելով գողունը ու թալանը: Սկզբից այդ հանցագործների անվտանգության երաշխիքը Ռոբերտ Քոչարյանն ու Մերժն Սարգսյանն էին, իսկ հիմա էլ Նիկոլ Փաշինյանը, այսպես բոլորը իրար փոխանցելով իշխանությունը՝ ամեն ինչ խճճում են ու կոծկում:

Այդ հանցանքների ետևում մի հսկայական բանակ է՝ հանձինս երկրապահների՝ Սասուն Միքայելյանի ու Մանվելի, Գագիկ Ծառուկյանի, Լիսկայի,

Արմեն Դարբինյանի ու Հրանտ Բագրատյանի, Խոսրով Հարությունյանի ու Խաչատուր Սուքիասյանի (Գրգոյի) դրանց թիվը սարսափելի մեծ է, որոնք մասնակցել են պետական թալանին: Հանքարդյունաբերական թափոններից գոյացած պոչամբարները հենց այդ ոճրագործների շնորհիվ թունավորել և շարունակելու են տասնամյակներով թունավորել եկող սերունդներին և հայրենի բնությանը: Ազգային գենոֆոնդը վտանգված է, այն ուռուցքային ու աղիքային հիվանդությունները, չբերությունն ու թուլությունը այդ ամենի մեղավորը նրանք էին, որոնք միլիոններ աշխատեցին ժողովրդի արյան ու արցունքի հաշվին, ժողովրդի արողջության ու կյանքի գնով: Նրանք էին, որ օրենքի ուժով ամբազրեցին պոչամբարների գոյությունը: Պետության ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերը անվերադարձ վաճառելով երկրին ու ժողովրդին դարձրեցին հարկատու: Թալանին մասնակցում էին բոլորը, գործադիր և օրենսդիր մարմինները, անգամ եկեղեցին: Ու եղավ այն, ինչ հիմա տեսնում ենք: Ինչպե՞ս բացատրել այն փաստը, որ ատոմակայան ունեցող երկրում էլեկտրաէներգիան կրկնակի անգամ թանկ է, քան հարևան երկրում վաճառվող հոսանքի գինը, երբ հենց այդ ատոմակայանի թույնով էլ թունավորում են բնակչությանը: Պատահական չէ Արարատյան դաշտավայրում աղիքային հիվանդություններով տառապող բնակչությունը: Ատոմակայանից հոսող ռադիոակտիվ ջրերը հայտնվում են ոռոգման ու խմելու ջրամբարներում, իսկ ոչ ոք դրա համար պատասխան չի տալիս, որովհետև ոչ մեկին պետք չէ, ո՛չ ազգային գենոֆոնդը, ո՛չ էլ ժողովրդի առողջությունը: Ինչպես հայտնի է Մեծամորի ատոմակայանը Արարատյան դաշտի բնակիչներին է թույնում, իսկ հանքարդյունաբերական պոչամբարներն ու հանքերը Սյունիքը ու Հայաստանի լեռնային մարզերը: Ահա ձեզ ԱՊՈԿԱԼԻՊՍԻՍ. երբ բնակչության պարանոցին ծանրանում է ո՛չ միայն արտաքին պարտքը, այլև առողջության ու գոյի հարցը:

Շատերը անգամ չեն հասկանում, թե ինչու՞ Սերժ Սարգսյանը այդքան հանգիստ իշխանությունը հանձնեց Նիկոլ Փաշինյանին, դե չհաշված իրեն հավատարիմ թիկնազորը, որը պատրաստ էր նրա հրամանով ցանկացածին գլխատել, հիմա հեղափոխական Փաշինյանին են պաշտպանում: Այն, որ 2019 թվականից արդեն Հայաստանը սկսելու է տոկոսներով վերադարձնել արտաքին պարտքը, որը կազմում է 7,3 միլիարդ դոլար: Սերժ

Սարգսյանը հեռացավ այդ պարտքը թողնելով Փաշինյանի վրա: Իսկ գիտե՞ք, թե ո՞վ պետք է վճարի այդ պարտքը, իհարկե ժողովուրդը՝ ձեր զավակներն ու թոռները, ինչպես տեսնում ենք Փաշինյանի ոչ բռնի ու թավշյա հեղափոխականների մտքովն էլ չի անցնում այդ պարտքի մասին խոսել կամ անհանգստանալ: Նրանք լեզիտիմացրեցին ոչ միայն Սերժ Սարգսյանի գրված սահմանադրությունը, այլև նրանց տասնամյակներով թալանված գողունը օրինականացրեցին ու շարունակում են ավելացնել պարտքերը: Ինչպես ընդունված է իրականության մեջ ասել՝ գումարելիների տեղափոխությունից հայտարարը չի փոխվում:

Ծրագրված հեղափոխությունը գործեց անխափան, ժողովուրդը կարծում է, թե բերեց արդար ու ազնիվ դեկավար, միայն չասեք, թե ազնվությունը ճառելու ու խոստումներ տալու մեջ է: Շատերը ականատես են եղել ոչ վաղ անցյալի դեպքերին՝ Լևոնը նույն այսպիսի ճառերով ու խոստումներով եկավ իշխանության, նույն սցենարով թալանեցից, նույն սցենարով հարստացավ: Նույն լոգունգները, նույն ելույթներն ու խոստումները, նույն դեմքերն ու նույն թալանչիները, նույն հանցագործներն ու նույն տգետները: Իսկ ամենակարևորը նույն կեղծիքը, սուտը, հերոսներն ու առաքյալները... Ամեն ինչ նույն ձևերով, միայն շեփոթին փոխարինեց թմբուկը: Ինչպես տեսնում ենք արդեն ավանդույթ է դարձել ու Փաշինյանը այդ ավանդույթի շարունակողն է: Վերածնվեցին նախկինները, վերադասավորեցին իրենց ուժերը, իսկ ժողովուրդը ինչպես կար, այդպես էլ մնաց:

Բուրժուադեմոկրատական հեղափոխություն, որտեղ հարուստը՝ հարստացավ, իսկ աղքատն էլ ավելի աղքատացավ: Հուսով եմ, այս հրապարակումը հիմք կհանդիսանա, որպեսզի ժողովուրդը կարդա Ջորջ Օրուելի գրքերը և կհասկանա, որ ԿԵՂԾԻԶԻ ՈՒ ՍՏԻ վրա պետություն չեն կարող կառուցել, ժողովրդի աչքերին թոգ փչելով ու խոստումներ տալով ժողովրդի վիճակն ու կյանքը չես լավացնի: Կեղծիքին ու թալանին մասնակից եղան բոլորը՝ նախկին պատգամավորներն ու կուսակցական գործիչները, գիտնականներն ու գրողները, անգամ ուսուցիչներն ու հոգևորականները: Համատարած զոմբիացում ու կեղտ, անատամ մասսաների միջոցով են իշխանությունը զավթում, երբ ԼՖիկներն ու Դոդերը բարերար են, իսկ Լևոններն ու Փաշինյանները փրկիչ: Այստեղ նրանց մեղադրելու հարց չկա, մեղավորը ժողովուրդն է, որովհետև կորցնում է իր դիմագիրը՝ նմանվելով իրենց առ-

աջնորդող ղեկավարին: Երբ Քոչարյանի տգետները փողոց փակելով են գիրք կարդում, վստահ են, երևի կյանքում գիրք էլ չեն վերցրել ձեռքները, հիմա ընթերցանության ծարավը խեղդում է նրանց: Ուղղակի ծիծաղելի է, փնթիներին յուրահատուկ արարք: Փաշինյանի պես հեղափոխականը իզուր չէ հայտարարում, որ միակ ու վերջին հեղափոխականը ինքն է, ու փողոց փակելու մենաշնորհը իրեն է տրված: Ու այստեղ հասկանում ես, որ Սասնա ծռերի Փոքր Միերը իզուր չէր փակվել Ագռավաքարում, որովհետև հայրենի հողը ոտքերի տակից փախչում էր, որովհետև տգիտությունը, սուտն ու կեղծիքը, անատամ ոհմակը պատրաստ է իրեն հոշոտելու, որ այդ երկրում անգամ հերոսն անելիք չի ունենում, որովհետև հերոսներին խաչող ժողովուրդը, այդպես պետք է տառապանքների ու պայքարի մեջ ապրի շարունակ:

Պայքար, Պայքար մինչև վերջ... Ու այդ վերջի վերջը չի երևում, երևի մի վաթսուհի կամ 160 տարի հետո այն երևա, սակայն սխալվում եք, գենոֆոնդը ոչնչացված է, քանի որ այն, ինչ ունենք, դժվար թե առողջ համարվի: Ինչպես ասում են՝ առողջ մարմնում՝ առողջ հոգի: Իսկ քանի՞ տոկոսն է առողջ ապրում, երբ շրջապատում առողջ սնունդ ու պայմաններ չկան, երբ առողջ մտածելակերպն է բացակայում, երբ կեղծն ու սուտը արդեն արյան մեջ չարորակ իր գործը արել է տասնամյակներով: Կիսաբաց լուսամուտները տարիներ շարունակ թույլնով է լցրել ոչ միայն հեռուստատեսերը, այլև մարդկանց հոգիները: Իսկ Գոռ Վարդանյանի ու նման հանցագործների թրիլերային հեռուստատեսերիալների մասին խոսելն ավելորդ է: Առողջ հոգին էլ բռնաբարվում է այդ սերիալների վերնագրերը լսելուց:

Դժվար է մեր ժողովրդի ճանապարհը, դա իմ խոսքերը չեն, դա մեր մեծերն են ասել: Քանի դեռ ժողովուրդը չի հասկացել, թե սևերն ու սպիտակները որոնք են, քանի դեռ բարու և չարի սահմանագիծը գծված չի, քանի դեռ թալանչին բարերար է, իսկ ոճրագործը՝ փրկիչ, այդ երկրում ոչինչ չի կարող լավ լինել: Ինչպես ասում են. Վերջը լավ լինի...

Ահա ազգային փիլիսոփայական տափակ մի միտք. Վերջը լավ լինի, հույսով ապրել ու երագել, գոմբիանալ, որ Քոչարյան ու Ազատիչը հանցագործ են, իսկ Ծառուկյանն ու Փաշինյանը փրկիչ: Պատահական չէ համացանցում հայտնվել տեսանյութեր. « Ինչպե՞ս է Գ. Ծառուկյանը վաստակել իր առաջին միլիոնը. Ո՞րն է նրա հաջողության գաղտնիքը »: Մի՞թե նրանք

կարծում են, որ ժողովրդի մեջ չկան մարդիկ, որոնք տեսել և հիշում են նրանց կողոպտված արյունոտ գուժարների պատմությունը: Շեղվելով թեմային անդրադարձ կատարենք 90-ականների մույթ ու ցուրտ տարիները: Ծառուկյանի գազալցակայանի սև ու մույթ պատմությունները, որոնք մնացել են անցյալում, իսկ հազարավոր ընտանիքներ դարձան նրա ու նմանների գոհր: Նորից կեղծիքի ու ստի միջոցով ժողովրդին թալանեցին: Ցուրտ ու մույթ տարիների շնորհիվ հարստացան նրանք, որովհետև պետական ոճրագործները նրանց առջև թալանի կանաչ լույս էին վառել: Գրգոն իր մոմերն ու նաֆթն էր ժողովրդի վրա վաճառում, չհաշված Թուրքիայից ներկրվող անորակ ապրանքները, իսկ Ծառուկյանը գազն ու ռեկետը: Պետական քարոզչական մեքենան նրանց ընդառաջում էր, հայտարարում էին, թե Վրաստանից եկող գազամուղը ադրբեջանցիները պայթեցրել էին ու գազ չի մտնում Հայաստան: ՈՒ դա բավական էր, որ Ծառուկյանի գազալցակայանի մոտ կիլոմետրերով հերթ առաջանա, խնամի, ծանոթ, բարեկամով ու եռակի անգամ թանկ գներով վաճառում էին այդ նույն գազը: Պատկերացրեք մեկ ամսվա մեջ բավական էր այդպիսի կեղծ հայտարարություն, և նա ամբողջ տարվա պլանը մեկ օրում էր կատարում: Իսաչատուր Մրութիասյանը նույնպես դրանից օգտվում էր, նա վաճառում էր նավթը, մոմերը ու ձեթը Գազամուղի պայթեցման սուտ տեղեկատվությունը բավական էր, որպեսզի նրանք միլիոններ աշխատեն, իսկ այն, որ նրանք ունենին իրենց բանդաները, որոնք սկսնակ գործարարներից ու ձեռներեցներից ոչ միայն խլում էին նրանց բիզնեսը այլև գուժարներն ու կյանքը: Հարցն այն է, որ հիմա այդ հանցագործները արդարանում են, թե ազնիվ ճանապարհով են հարստացել, ուղղակի ծանր մեղք է: Նրանք թալանել են բոլոր եղանակներով վախեցնելով ու ահաբեկելով, խոշտանգելով ու սպանելով: Վկաները՝ խնդրեմ, ինչքան ուզեք, սփյուռքում ավելին կգտնեք, որոնք անգամ տասնամյակներ հետո վախենում են խոստովանել, որովհետև գիտեն, թե այդ մարդիկ ինչպիսի հրեշներ են: Միևնույն է, գալիս է ժամանակը, երբ բացահայտվում են հանցանքները, տարիներ առաջ Մանվելի մասին վախենում էին խոսել, հիմա կարողանում են ոչ միայն ասել ու խոսել, այլև պահանջել ու պարտադրել: Հավատացեք, նույնը կլինի Ծառուկյանի, Իսաչատուր Մրութիասյանի, Լիսկայի ու անգամ սաղ ու սատկած « հերոսների » հանդեպ:

Տեսեք, թե Վազգեն Սարգսյանի ռիմակի անդամները ինչ շքեղության ու վայելքների մեջ են ապրում, իրենց հյուրանոցներով ու դղյակներով, մինչդեռ Արցախյան պատերազմի մասնակիցները անգամ ատամներ չունեն բերաններում, իսկ տանիքի ու կուշտ քնելու մասին ավելորդ է խոսել: Գիտեք, Չորավար Անդրանիկը մի խոսք ուներ. « Երբ իրիկունը գլուխներդ բարձին դնեք, որ քնանաք, մի քիչ մտածեք ձեր ազգի մասին. »: Այս խոսքերը «Հիշխանությունները հասկացան իրենց ձևաչափի մեջ, ամեն օր քնից առաջ մտածում էին, թե ինչպես ազգի վերջը տան, մտածում էին, թե ինչ գտնեն ծախելու, որպեսզի լցնեն իրենց որովայնն ու գրպաները: Այդ պատճառով ծախեցին ամեն ինչ, ազգի բարոյականությունը, ազգային արժեքներն ու անգամ հերոսներին:

Ու ոչ հիմա հարց չի տալիս, թե ինչպե՞ս եղավ, որ ԽՍՀՄ-ի ամենահզոր արդյունաբերական հանրապետությունը, որը Հայաստանի Հանրապետությունն էր, ընդամենը մի քանի ամսվա մեջ դարձավ, խղճուկ գոյր քաշ տվող երկիր: Ինչպես եղավ, որ մեքենաշինության ու էլեկտրոնային գիգանտը դարձավ անդամալույծ մի անպիտան սարք: Երբ ԽՍՀՄ ռազմարդյունաբերական բոլոր սարքավորումները, ներառյալ օպտիկական և տիեզերական սարքավորումները արտադրվում էին Հայաստանում: Երբ թեթև արդյունաբերական հսկան, անգամ մի թաշկինակ չի կարողանում արտադրել: Գյուղատնտեսության մասին ավելորդ է խոսել, երբ ԽՍՀՄ-ի տարբեր հանրապետություններում Հայաստանի միրգն ու բանջարեղենն էր, կաթնամթերքն ու գյուղ մթերքներն էին: Այդպես ստեցին, կեղծեցին, թե ՀՀԾ-ի հեղափոխությունները նոր հորիզոններ են բացելու հայ ժողովրդի առջև, արդյունքում գլխատեցին ժողովրդի հերոսներին էլ, այգիներն ու պուրակներն էլ վերացրին: Գաղափարական տղաներին թիկունքից էին խփում, իսկ տականքին էլ հերոսացնում: Պատերազմի ու շրջափակման քողի տակ նրանք գործեցին հայ ժողովրդի հանդեպ ամենամեծ ոճրագործությունը՝ սպանողը: «Հիշխանությունները մինչև հիմա թաքցնում են, որ Հայաստանի ցուրտ ու մութ տարիներին եղել են շրջափակման մեջ: Դա ժողովրդին հնազանդեցնելու Վանոյի ու Լևոնի ծրագիրն էր, դե Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ: Նրանք ժողովրդին սովի, ցրտի ու մթության մեջ պահելով, պատերազմի սարսափի ներքո պետք է սպանեին ժողովրդի ըմբոստ ոգին ու դա նրանց մոտ ստացվեց: Իշխանական էլիտան այդ տար-

իներին Իրանի ճանապարհներից է օգտվել, լույս էլ է ունեցել իրենց հաճույքներն ու փարթիները: Լևոն Տեր Պետրոսյանը իր հարցազրույցներից մեկում, իրեն համեմատում է Չերչիլի հետ, արդարացնելով իր գործած հանցանքը պատերազմի տարիներին: Սակայն մոռանում է, որ Անգլիայում պետական դավաճաններին գնդակահարում էին հասարակության աչքի առջև, իսկ մեզ մոտ հերոսացնում են նման դավաճանին: Պատահական չէ, որ Լևոն Տեր-Պետրոսյանը ամեն անգամ համեմատական գուգահեռներ է տանում Իսրայելի ու Հայաստանի միջև, որովհետև ինքը չնայած իր տարիքին ու կրթությանը, որպես մարդ չկայացավ, չկողմնորշվելով իր ազգությունն անգամ: Սակայն ինչպես ասում են ՏԱԿԱՆ-ՔԸ ազգություն չունի... Կարծում եմ Փաշինյանին մտածելու տեղիք պետք է տա ստի ու կեղծիքի իշխանությունը, եթե պետք է շարունակի իր կնքահայր Լևոն Տեր Պետրոսյանի գործելաոճը, ապա թող մտաբերի այն, ինչ սպասվում է իրեն, ամեն ինչ անպատասխան չի մնում, եթե ոչ՝ ինքը կդառնա գործիք անցյալի հրեշների ձեռքին: Երբեք ոչ մի փոփոխություն չի կարող հաջողություն գրանցել, եթե չդատապարտվի ու չասվի, չհիշատակվի, նախորդ իշխանությունների սխալներն ու բացթողումները, կեղծիքն ու սուտը: Պետք է ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ գնահատական տալ նախկին իշխանությունների արածների ու հանցանքների մասին, այլապես այն ժամանակի ընթացքում դառնալու է նախորդի շարունակությունը:

Գեհենի Առաքել 18.01.2019

ՊԱՐՏԱԴՐՎԱԾ ՈՃԻՐ՝ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Ինչպես տեսնում եմ՝ Ստամբուլյան կոնվենցիան մնացել է «՛ իշխանությունների կոկորդին, որից չեն կարողանում ազատ շունչ քաշել: Չեն կարողանում որոշել՝ վավերացնել թե՛ հրաժարվել... Հասարակության կոշտ արձագանքը իշխանությանը կարծես ետ է պահում վավերացման մտքից: Ստամբուլյան կոնվենցիան իրենից վտանգավոր ոչինչ չի ներկայացնում, սակայն վավերացնելը նույնպես սխալ է, որովհետև, այսպիսով մենք խախտում ենք մի բան, որը մեզ համար խորթ է և օտար: Ընտանեկան բռնությունն ասվածը դա նոր հասկացում է, ուղղակի կիրթձեն բացատրել դրա էությունը: Հայ հասարակությունում, առհասարակ, բռնություն կոչված երևույթը մերժվել է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից և շարունակվել է մինչև մեր օրերը: Այսինքն, Ստամբուլյան կոնվենցիան մենք հաստատել ենք դեռևս մեր թվարկությունից առաջ ու անդրադառնալ դրան՝ կրկին անիմաստ է, և նվաստացուցիչ: Ինչու՞ մենք պետք է պարտավորվենք միանալ մի հուշագրի, որը մեզ մոտ կտրուկ մերժվել է բոլոր դարերում, նույնիսկ կասեի մենաշնորհը եղել է մեր ձեռքին, ու հանկարծ, անտեսելով պատմական այդ փաստը և ընդունել նորը, ընդամենը միայն դատարկաբանություն է, որը գոյություն չունի: Չնայած պատմական փաստերը ի ցույց դնելով՝ կարող ենք հայտարարել, որ հայ կինը իր ընտանիքում եղել է պաշտպանված, ոչ միայն օրենքով, այլ ավանդությամբ: Պատահական չէ, որ հայ կինը համարվում է տան կամ օջախի սյունը, նրա ուսերին է տան ամրությունն ու խաղաղությունը, ներդաշնակությունը: Հավատացեք, տանիքը պահելու համար թույլ սյուներ չեն բարձրացնում, այնպես, որ սյունին ամրություն տալու համար բոլորը պետք է ամրություն տան նրան: Փորձեն բացել փակագծերը, ավելի պարզեցնելու համար: Հայ կինը դարեր շարունակ կարողացել է ամուր պահել իր օջախը ու գերդաստանը: Հայ կինը ամուսնությունից առաջ և հետո միշտ պաշտպանված է եղել սիրով և հոգատարությամբ, եղել է միշտ ընտանիքում ուշադրության կենտրոնում, պատահական չեն, որ հայկական ընտանիքներում աղջիկ երեխան ավելի լայն իրավունքներ ունի, քան տղա զավակը: Աղջիկը ընտանիքում եղել է սիրված ու հոգատար ձեռքերում, անգամ խորթ հայրը աղջիկ երեխայի նկատմամբ եղել է ուշադիր ու հոգատար: Օրինակի համար, ընտանեկան

բռնության դեպքում ոչ միայն կնոջ հարազատները՝ հայրը և եղբայրներն են կնոջը պաշտպանում, այլև ամուսնու հարազատները, հարևանները և, նույնիսկ, պատահական անցորդները: Հայկական ընտանիքներում բռնությունը դատապարտված է եղել բոլոր դարերում, և հարկ եղած դեպքում ընտանիքները կամ գերդաստանները կարող էին պատերազմել միմյանց դեմ, այնուամենայնիվ, բռնությունը կնոջ հանդեպ երբեք թույլ չէին տա: Ինչպես գիտենք պրակտիկայից, սովորաբար կնոջ պաշտպանները շատ են եղել և հարցը չի հասել իրավապահ մարմիններին կամ պետական ծառայություններին: Հայ հասարակության արձագանքը բռնության հանդեպ միանշանակ մերժողական էր, նույնը կարելի էր ասել երեխաների հանդեպ բռնությանը, ընտանի կենդանիների ու անգամ՝ գիշատիչ գազանների հանդեպ: Բռնարարք գործող մարդը հասարակության կողմից վանվում էր, ուստի շատերը, ում ձեռքերը քոր էր գալիս, ստիպված զգալով էին իրենց ոգևորությունը, կամ էլ հայտնվում էին հասարակության ուշադրության կենտրոնում կամ կալանավայրում: Դա նշանակում էր՝ մեկ սխալ քայլով զրկվել ամեն ինչից, նույնիսկ ծնողական սիրուց: Վերջին տասնամյակներում, շատ ընտանիքներում այդ գեղեցիկ ու հինավուրց ավանդությունը խախտվեց: Կներեք, սակայն պետք է նորից կրկնեմ ու շեշտեմ իմ արտասանած խոսքը: Այդ ամենի մեղավորը տգիտությունն է ու օտարամոլությունը: Հարբեցողությունը ու թմրամոլությունը դրանց պտուղներն են, որից հետո գալիս է բոսայությունը ու բռնությունը կնոջ, երեխաների և ինչու չէ՞ ընտանի կենդանիների հանդեպ: Փոքրիկ զանցանքը դառնում է հանցանք, որի անպատժելիությունից ու անտարբերությունից այն դառնում է հանցանք, իսկ չպատժված հանցանքը ծնում է ոճիր: Հայկական հասարակության մեջ կնոջ և երեխաների հանդեպ բռնությունը ժամանակին դատապարտվում էր ու պատժվում, ոչ միայն հարազատների հարևանների ու օրենքի կողմից: Բռնություն իրականացրած մարդու դեմ անգամ ցուցմունք ու հաղորդակցություն էին ներկայացնում անգամ իր ծնողներն ու զավակները: Խորհրդային միության տապալումից հետո այդ ամբողջությունն ու ավանդույթը խարխվեցին, որովհետև Հայաստանում գլուխ բարձրացրեց տգիտությունը, քրեական աղբը ու վայ կոչված մտավորականներն ու քաղաքական գործիչ կոչված քրեականները: Կյանքի կոչեցին, « Մեր դեմ խաղ չկա » կարգախոսը: Ամուսինը կարող էր անգամ զենքով հաշվեհար-

դար տեսնել ոչ միայն իր կնոջ հանդեպ, այլև հարևանների ու, ինչու չէ, մի ամբողջ գյուղի: Մութ ու ցուրտ տարիների ընթացքում բացասական երևույթներն ու բռնությունը անպատժելիությունը սկսեց նոր որակ ու նոր թափ ստանալ: Հայ կնոջ առաքինի կերպարը դարձրեցին իրենց համար ոտնաշոր: ՀՀՇ ական ու կոմունիստ հրեշները դեռահաս աղջիկներին հացի տալունի համար սկսեցին օգտագործել իրենք խնջույքների ու կարիքների համար, սովահար մայրերը դեռահաս աղջիկներին անգամ վաճառքի էին հանում սակարկելով նրանց կուսությունը: Ու այդ ամենի ետևում կավատներն էին, ոստիկաններն ու պետական չինովնիկները: Մտամբուլի ու Դուբայի հասարակաց տներում հայտնված հայ կանանց զգալի մասը այն տարիների դեռահաս աղջիկներից էին էին, որոնք Վազգենի ու Վանոյի պես հրեշների ձեռքով կործանեցին իրենց մանկությունը: Հավատացեք, այդ քառսի ու ցուրտ ու մութ շղարշի տակ ոչ ոք չէր կարող բարձրաձայնել այդ մասին, քանի որ մութն ընկնելու պես ՀՀՇ-ի զինված բանդաների կողմից առևանգվում էր կամ սպանվում: Այն փաստը, որ Երևանի կավատներից մի քանիսը անգամ երկրապահների պաշտպանության տակ են եղել, դա փաստ է. Կավատների համար դժվար չէր փողոցում որսալ բարետես դեռահաս աղջնակներին ու մեկ ափսե տաք ապուրի դիմաց դարձնել իրենց համար օգտագործվող խաղալիք: Գայթակղել երկու կոպեկով կամ թուրքական փայլուն հագուստով նրանց համար դժվար չէր: Բոլորը վախենում էին մաուզերիստների հաշվեհարդարից, այդ էր պատճառը, որ լռությունից նրանք ավելի ոգևորվեցին ու սկսեցին ավելի մեծ ու դաժան ոճիրներ գործել, ոչ միայն կանանց, դեռահաս աղջիկների հանդեպ, այլև ժողովրդի: Հետագայում դրան նպաստեցին քրեական հեռուստասերիալները՝ Որոգայթները, բռնությունով ու բռնաբարություններով հարուստ սերիալները, անգամ հեռուստահաղորդումները՝ Կիսաբաց լուսամուտներն ու Վիտամին ու չգիտեմ ինչ ակումբները: 90 ականներին բռնությունների ծաղկուն ժամանակահատվածն էր, որտեղ սկիզբ էր առնում դասակարգային ջրբաժանը: Դոլար առնող ծախող դեռահասները դարձան քրեական հանցագործների համար հաշվեհարդարի գործիք, դեռահաս աղջիկներն էլ դարձան մարմնավաճառ կավատների արհեստանոց: Ու երկիրը դարձավ բռնության ու բռնաբարության դարբնոց: Ոստիկանությունը, դատարանը անգամ ԱՎԾ-ն իրենց մասնաբաժինը ունեին սերուղների փչացման գործ-

ում: (Քանի դեռ իշխանությունները, իրավապահներն ու եկեղեցին չեն խոստովանել իրենց գործած մեղքերի ու հանցանքների մասին, հավատացեք, դա մնալու է այդպես անպատիժ ու անհատույց:) Հայկական ավանդական ընտանիքում՝ նահապետական բարք ու վարքում չի եղել ոչ մի սահմանափակում, կնոջ և տղամարդու միջև, եթե չհաշվենք, որ գյուղերում, որտեղ թագավորում էր տգիտությունը: Հովհաննես Թումանյանն իր ստեղծագործություններում քննադատում էր հենց այդ հանցավոր տգիտությունը, որը մտել էր առօրյա: Մարոն, Անուշը, Գիքորը, այս պատմվածքներում հենց այդ բռնության պատկերն է, որը տգիտության արդյունքում էր ի հայտ եկել: Հայկական ընտանիքներում ամուսինների հավասար կարգավիճակը տեսնում ենք մեր նահապետական կենցաղում, երբ հայ կինը անգամ զենք էր վերցնում և պաշտպանում իր ընտանիքն ու հայրենիքը: Ազգ, որը ծնեց Այծեմիկներ, Սոսե մայրիկներ, իշխանուհիներ ու թագուհիներ, որոնք սովորեցրեցին համայն աշխարհին ճիշտ ապրելու և արարելու կանոնը: Երուսաղեմի հայ թագուհիներից սկսած վեջացրած հեքիաթների հերոսուհիները՝ Անահիտը և Սալբին: Եվրոպայում, հեռավոր արևելքում և արևմուտքում, երբ կանայք զրկված էին իրավունքներից, հայուհիները ամուսինների հետ բանակներ էին առաջնորդում, կռվում կողք կողքի: Այդ ժամանակ հավասար ասպետների կողքին էին իրենց ռազմական հմտությունը ցուցադրում, ետ չմնալով իրենց ամուսիններից: Երբ խոսք է գնում Ստամբուլյան կոնվենցիայից, ապա պետք է հիշել Սասունի, Չեյթունի, Շապին Գարահիսարի ու Մուսալեռան մեր հայրենակցուհիներին, որոնք հենց Ստամբուլյան հանցագործների նախապապերի դեմ էին կռվել, նրանք ցանկանում էին ապրել առանց խտրականության, ազատ ու երջանիկ: Սակայն պատմությունը հաստատեց, որ այդ քաղաքում ծնված գաղափարը կամ միտքը չի կարող օգտակար լինել ո՛չ մեր ժողովրդին, ո՛չ էլ մարդկությանը: Շատերը կասեն, թե տեղանունը Ստամբուլը ի՞նչ կապ ունի եվրոպական չափանիշների հետ, սակայն հավատացեք տեղանունը մեծ նշանակություն ունի, մանավանդ թուրքերի ներկայության պայմաններում: Թուրքիան եղել է առաջիններից մեկը, ով ստորագրել է 2011 թվականի պայմանագիր, որը կնքվել է Եվրոպայի Խորհրդի շրջանակներում: Եկեք չանտեսենք այն կանանց իրավունքները, որոնք 1915 թվականին ոչ թե ենթարկվեցին բռնությունների հենց այդ թուրքերի կողմից, այլ ենթար-

կվեցին կտտանքների ու խոշտանգումների, եկեք չմոռանանք մանուկներին որոնց սպանեցին ու որք թողեցին: Հիմա ստորագրել մի թաստաթղթի տակ, որտեղ ոճրագործը արդարացնում է իր ոճիրը, թքած ունենալով պատմության ու հազարավոր խեղված ճակատագրերի վրա, կարծում եմ սխալ է: Երբ ոճրագործին ու զոհին դնում են կշեռքի նույն նժարին, ապա դա անընդունելի է: Երևի մենք մոռանում ենք նաև թրքացած հայուհիների մասին, որոնք անգամ զրկված են մայրենի լեզվով խոսելուց և աղոթելուց, Համշենահայությունը և մնացածը այդ կոնվենցիայի դրույթների մեջ չեն մտնում: Մոռանում ենք բազմակնությունը Թուրքիայում, մոռանում ենք Իսլամական պետության գերևարված կանանց և երեխաների սեքս – ծառայությունների գնացուցակները, նրանց վաճառակետերը, որոնք գտնվում են հենց Թուրքիայի տարածքում: Թրաֆիքինգի զոհ դարձած հազարավոր կանանց, որոնք Թուրքիայի տարածքով են հայտնվում Իսլամական պետության հարեմներում: Թուրքերի հասարակաց տներում Եվրոպայից առևանգված զոհերն են, որոնք տաժանակիր ու բռնության միջոցով են պահվում: Իսկ ինչ վերաբերվում է Հայաստանին, ապա իսկապես այս վերջին տասնամյակներին բռնությունը աճել է ի շնորհիվ Դիանա Գրիգորյանի, Գոռ Վարդանյանի ու Հրաչ Մուրադյանի պես մարդկանց շնորհիվ: Բռնության տեսարանները սերիալներում ու հաղորդումներում դրա խթանող գործիքն են: Քաղաքակիրթ հասարակությունում ցանկացած բռնություն համարժեք պատասխան է Քաղաքակիրթ հասարակությունում ցանկացած բռնություն համարժեք պատասխան է ստանում, երբ Կիսաբաց Լուսամուտները դառնում է երկրի թոփ մեկ հաղորդաշարը, ապա այդ երկրում առաջնակարգը բռնությունն ու բռնաբարությունն է: Հեռուստասերիալների հայեցողականն ու ժարգոնը, բռնաբարության տեսարանները սերնդի համար դառնում է սովորական երևույթ: 30 տարիները ընթացքում ծաղկեց ու բարգավաճեց բռնությունը: Առհասարակ, այդպիսի բռնության սցենարներ գրելու և ցուցադրելու համար պետք է քրեական պատասխանատվության ենթարկել հանցագործներին ու մանկապիղծներին, երեխաների հոգեկան աշխարհը փչացնելու համար: Հարկ եղած դեպքում, նրանց մեկուսացնել հասարակությունից: Դետք է արգելել կամ փակել նման հեռուստաընկերությունները, որտեղ իրենց տափակ հույսերով անգամ բռնություն են քարոզում սիլիկոնային իրենց ուղեղներով

փչացնում են պատանիների ու աղջիկների ներաշխարհը: Ստամբուլյան կոնվենցիան թղթի վրա գրված մի դատարկ փաստաթուղթ է, որը միայն ձևական բնույթ կրող լվացքատուն է: Հասարակական միջոցները անտեղի վատնելու մի ծրագիր: Եվրոպական ֆոնդերից գումարներ կորզելու միջոց: Սովերային այդ գումարներ վատնելու կառույցը ի սկզբանից ծառայել է ոչ նպատակային, երբ ցույց են տալիս, որ ինչ-որ իքս քանակի խոշտանգված կին կա, և նրանց համար հարկավոր են գումարներ, անվտանգության, բնակության, աշխատանքի տեղավորման, փաստաբանական, բժշկական ու հոգեբանական օգնության համար, ինչքան շատ գոհ, այնքան մեծ գումարներ, արդյունքում այդ գոհ դարձած կանանց ոչ գումար են հատկացնում, ոչ էլ միջոցներ հնարավոր է մի քանի կոպեկ տան, որպեսզի ցույց տան իբր թե աշխատում են: Ադմինիստրատիվ այդ հսկա կազմը պահելու համար հսկայական միջոցներ են ծախսվում՝ ցուցադրելով, որ աշխատանք է տարվում: Դա դժվար վերահսկվող կառույց է, որը գումարները թալանում է ինչպես կարող է: Եթե Ստամբուլը մտահոգված է կանանց իրավունքներով, ապա պետք է արգելի Թուրքիայում կանանց գլխաշորերի կրումը և բազմակնությունը, չեն կարծում, թե կինը ցանկանում է ապրել սև վարագույրի տակում, ինչպես փորձում են համոզել մահմեդականները կամ թուրք պաշտոնյանները: Վերջերս հայտնի դարձավ, որ Թուրքերի կողմից կառավարվում և հսկվում են Աջարիայի հասարակաց տները, որտեղ անօրինական աշխատում են Թաիլանդից ու Ասիական երկրներից բերված ստրկուհիներ, սեքսուալ բռնությունը այդ հասարակաց տներում կատարվում են ամեն վայրկյան, մինչդեռ թուրք պաշտոնյանները, որոնք ստորագրել են Ստամբուլյան կոնվենցիան աչք են փակում իրենց հանցանքների վրա ու փորձում են իրենց աղբը փաթաթել ուրիշ ազգերի վրա: Եվրոպական մյուս երկրները լավ տեղյակ են Թուրքիայի թրաֆիքինգի կենտրոն լինելու փաստի մասին, սակայն ոչինչ չեն ձեռնարկում, միայն դիտորդի դերում են, մինչդեռ դա լուրջ պրոբլեմ է Եվրոպայի համար: Ետադարձ հայացք նետենք Խորհրդային ժամանակներին, երբ ԽՍՀՄ-ի բոլոր ծայրերում հարբեցողների համար գործում էին սթափարաններ, իսկ Խորհրդային Հայաստանում դրանք պարզապես չկային, որովհետև Հայաստանում հարբեցողներ չկային, ու ավելորդ էր նման սթափարաններ կառուցել: Ստամբուլյան կոնվենցիան Հայաստանի համար չի կարող չափանիշ ծառայել, որովհետև

ամեն երկիր իր կոլորիտն ու իր ձևն ունի, ամեն ազգ իր խառնվածքն ու հոգեբանությունը, բոլորին մեկ չափանիշով չափելը սխալ է: Եվրոպական բոլոր երկրներում օրինական և սովետային հասարակած տներ են գործում, որտեղ առևանգված ու թրաֆիքինգի զոհ են դարձել հազարավոր կանայք, որոնք ստրկության մեջ իրենց կյանքն են քարշ տալիս: Եվրոպական երկրներում մարմնավաճառ կանանց զգալի մասը հակառակ իրենց կամքի՝ պարտադրված են աշխատում կավատների համար, որոնց ետևում ազդեցիք մարդիկ են ու քաղաքական գործիչներ: Իսկ ինչու՞ այդ նույն կառույցները չեն զբաղվում հենց այդ կանանց պաշտպանությամբ, ինչու՞ պետք է այս տարբերակով առանձնացնել սեռերին, եթե կինը հավասար իրավունքների վրա է, ինչ տղամարդը: Պետության քաղաքացին կին թե տղամարդ պետք է ենթարկվեն օրենքին անկախ իրենց սեռից ու դավանանքից: Այս կոնվենցիան տարբերություն է դնում սեռերի միջև: Կանայք բռնության են ենթարկվում Եվրոպայում և Թուրքիայում ավելի շատ, քան թե Հայաստանում ու Հայաստանի պարանոցին փաթաթել այդ հիմարությունը՝ կլինի ուղղակի դավաճանություն: Ազգային դավաճանություն, ով կստորագրի այդ փաստաթուղթը անկախ դրանի կլինի Նիկոլ Փաշինյանը թե Գեհենի Առաքելը: Շատերը անգամ չգիտեն, որ Եվրոպական երկրներում մանկական հեռուստալիքներում ցուցադրում են սարսափելի բռնություններով ու հայհոյանքներով անհիմացիոն ֆիլմեր՝ մուլտֆիլմեր, դրան գումարած համակարգչային խաղերը բռնության ու խոշտանգումների տեսարաններով: Որպես հոգեբան կարող եմ վստահեցնել, որ դա ավելացնում է բռնության ու անգամ ընտանեկան բռնությունների ցուցանիշները: Եվրոպական հասարակությունը հայերի պես չէ, նրանք շատ դեպքերում աշխատում են զերծ մնալ հարևանուհու դեմ իրականացրած բռնությունից, սակայն շատերը պարտավորված են լինում դիմել իրավապահներին, դա ամեն մի քաղաքացու սուրբ պարտքն է հետևել և վերահսկել օրենքը: Քաղաքակիրթ հասարակությունում բռնությունը մղված է վերջին պլան, որովհետև հանցանք գործողը պետք է իմանա, որ կստանա համարժեք պատասխան պետության, օրենքի ու հասարակության կողմից: Պետք է կրկնեմ կրկին, որ Հայաստանում ժամանակին բռնություն գործած տղամարդուն պատժում էին ոչ միայն կնոջ հարազատները, այլև իր ծնողները, հարևանները ու շրջապատի ծանոթները: Հասարակությունը չպետք է

վախենա և իր անտարբերությամբ դառնա մեղսակից հանցագործին: Հանցագործի տեղը բանտն է՝ անկախ իր պաշտնից թե կարողություններից: Ստամբուլյան կոնվենցիան ասելուց առաջ, թող հիշեն մեր հերոսական կանանց, որոնք պայքարել են իրենց ամուսինների կողքին հավասար առանց տրտնջալու, թե իրենք կին են ու պաշտպանության կարիք ունեն: Հայ կինը պետք է իրեն հարգի, և թույլ չտա, որ պետսի անգամ իր ամուսինը թույլ տա իր ձեռքերին ազատություն: Դա վերաբերում է նաև մեր զինվորների, որոնց սպանելը ձեռք են բարձրացնում իրենց վրա: Հասարակությունը պարտավոր է բարձրաձայնել ու պաշտպանել անգամ կենդանիներին ու մայրենի բնության դեմ ոտնձգություն կատարողներին: Այդ ժամանակ կարիք չի լինի մտածել ինչ-որ կոնվենցիաներ ստորագրելու: Իսկ եվրոպական երկրները այդ կոնվենցիան պարտադրելուց առաջ թող պարտադրեն Թուրքիային ընդունելու հարյուր հազարավոր հայ, հույն ու ասորի կանանց և երեխաների խոշտանգումը, բռնությունը ու սպանությունը քողարկելու ու թաքցնելու մեջ, հազարավոր եզդի կանանց բռնաբարությունը ու խոշտանգումը նրանց առք ու վանառքը հովանավորելու մեջ: Մի՞թե ոճրագործից կարելի է բարեհոգություն ակնկալել երբ պատմությունը ցույց է տվել, որ մարդասպանը չի կարող առանց հանցանքի ապրել, եթե չապաշխարհի իր անցյալի հանցանքները: Ճատերը տեղյակ չեն, որ Եվրոպական որոշ երկրներում անգամ մանկական ալիքներով հեռուստատեսային բռնության տեսարաններով անհիմացիոն ֆիլմեր են ցուցադրում, այդ ամենին գումարվում է համակարգչային մանկական խաղերը, որտեղ գլխատում և քառատում են ոչ միայն կենդանիների այլև մարդկանց: Այդ ամենը բռնության շարժառիթ է դառնում, երբ մանուկ հասակից երեխաներին սովորեցնում են բռնություն և սպանություն: Ստամբուլյան կոնվենցիան իհարկե այդ ամենը շրջանցում է՝ փոխարենը առաջ քաշելով գենդերային պաշտպանության հարցը: Իսկ ինչ վերաբերում է սեռական փոքրամասնություններին իսկապես պաշտպանության կարիք ունեն, ինչպես և բոլորը այս մոլորակի վրա ապրող՝ տնային ու գիշատիչ կենդանիներին՝ փողոցային թափառող շներին ու կատուները, արագիլները ու թռչունները անգամ միջատներին ու սողուններին: Հոգատարության կարիք ունի մայրենի բնությունը՝ լեռներն ու գետերը, միջավայրը և էկոլոգիան: Կարիք չկա առանձնացնել այդ ամենը, կյանքը ու բնությունը այդպես է ստեղծված՝ ներդաշնակ ու

ամեն որ պարտավոր է այն պահպանել ու խնամել աչքի լույսի պես: Ու կարիք չկա գենդերային փոքրամասնություններին առանձնացնել հասարակությունից ու բնությունից, նրանք պետք է ապրեն ինչպես բոլորը՝ ապրեն հանգիստ ու խաղաղ, չփչացնելով մյուսների խաղաղությունը և անդորրը: Ապրեն օրենքի շրջանակներում ու չփորձեն առանձնանալ մյուսներից: Իրենց սեռական կողմնորոշումները ոչ մեկին չի հետաքրքրում, եթե չփորձեն այն գովազդել ու դարձնել հասարակական քնարկման առարկա: Ամեն որ պետք է հասկանա, որ օրենքը բոլորի համար է, անկախ սեռական, կրոնական, կամ կարողության ու պաշտոնական դիրքից:

Գեհենի Առաքել 02/08 /2019

ՀԱՅՏՆԻ ԼԻՆԵԼՈՒ ՀԻՍՏԵՐԻՎՆ ԿՎՍ ՄՈԼՈՒՑՔԸ

Ազգային հոգեբանության վերջին տենդենցները, որոնք նկատելի են համացանցային տիրույթում, շատ հետաքրքիր են, ամենահետաքրքիրը՝ անգրագետ ու լատինատառ գրողներն ու մտածողներն են, որոնց մասին բազմիցս խոսվել է: Սակայն, երբ ուսումնասիրում ես Ֆեյսբուքյան էջերը արդեն պատկերացում ես կազմում, թե այդ Հայտնի լինելու մոլուցքը քանի մարդու է կլանել, այդ թվում նաև քաղաքական գործիչներին ու մտավորականներին: Առհասարակ, ես բազմիցս նշել եմ, որ ազգային հոգեբանության կարևոր հատկանիշներից մեկը ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ Է, Նախանձը և Բամբասանքը... Կարծես թե ազգովի ուշադրության կարիք ունենք... Ճիշտն ասած հենց այդ ուշադրության պակասից է, որ սկսվում է հենց այդ հիստերիան: Անտարբերության կաղապարի մեջ կաղապարված մարդիկ անգամ չեն նկատում իրենց դրացուն կամ բարեկամին, անգամ ամուսինը՝ կնոջ կամ հակառակը: Շատերը ապրում են ՅՈՒՏ տանելով: Վտանգավորն այն է, որ հասարակության կողմից ճնշումը արգելափակում է ճիշտ որոշումներ կայացնել: Այն, որ հայ տղամարդիկ վաղուց գերազանցել են կանանց այս թվարկածս հատկանիշներով, դա նկատելի է անգեղ աչքով: Շատերը երևի նկատել են, որ Ֆեյսբուքյան օգտատերերից շատերն իրենց գլխավոր լուսանկարը ընտրում են հենց այնպիսին, որոնք հետուստատես-

ային տաղավարում կամ հարցազրույցի պահին է արված, շատերն իրենց սերիալային ֆիլմերի հատվածներն են դնում, իսկ ոմանք էլ եռագույնի կամ պաշտոնական ինչ-որ անձի ֆոնի վրա է լուսանկարված: Հիմա ինչ եք կարծում, այդ հարցազրույցի լուսանկարը դիտողի մոտ կձևավորի մի այնպիսի տպավորություն, որ ինքը ճանաչված ու հայտնի է, չնայած իր էջը լցված է անգրագետ լատինատառ մեկնաբանություններով, առանց կետադրական նշանների ու անիմաստ արտահայտություններով: Սակայն, կարևորը հարցազրույցի լուսանկարն է, որ կարող է մարդկանց ցույց տալ, իր անձի կարևորությունը: Չարմանալի է կուսակցական ու քաղաքական միջակների ՖԲ էջերը, նրանք ամպայման պետք է փողկապով լինեն, գրասեղանի մոտ եռագույն դրոշը ետևում: Դա իրենց ՖԲ ընկերներին ցույց է տալիս իր պաշտոնական դիրքն ու կարևորությունը: Ճիշտն ասած հանդիպել եմ ՖԲ օգտատերերի, որոնք մանրամասն ներկայացրել են իրենց կենսագրականը, անգամ պաշտոնական պարզևներն ու ոչ պաշտոնական տիտղոսները: Ամենահետաքրքիր հանդիպածս տիտղոսներից մեկի օգտատերը Արևմտյան Հայաստանի վտարանդի վարչապետն էր և Վահե Ավետյան օգտատերը, որը նշել էր, որ ինքը Միացյալ Հայաստանի լեգիտիմ նախագահն է: Սակայն ամենահետաքրքիրը գիտական բնագավառի օգտատերերն են, որոնք իրենց փորձագետներ են համարում, պատմագիտական ու կիրեռնետիկայի, քվանտային ֆիզիկայի, կամ մեխանիկայի փիլիսոփաներ կամ պրոֆեսորներ են ձևանում: Իսկ այն, որ անգույն լուսանկարների համադրությամբ մի անչափահաս պատանի, իր էջում նշում է, որ ինքը գրող բանաստեղծ լինելուց բացի գործարար է ու բարերար: Շատերն անգամ չեն էլ նայում, թե իրենց ընկերության հայտ ուղարկողը քանի տարեկան է, արժե նրա հայտը հաստատել թե՞ ոչ: Վերջերս մի մոլագար անչափահաս ինձ գրում էր, որ իրեն լավ է զգում ֆեյքի կերպարի ետևում, ուզում է՝ հայիոյում է ու անպատվում: Ու շատերն արձագանքում են այդ տխմարին, չիմանալով, որ 16 տարեկան մի թուլա է այդ Ֆեյքի ետևում: Չշեղվեմ թեմայից, շարունակելով միտքս: Այդպես Սփյուռքահայերի մոտ նույնպես ՀԱՅՏՆԻ լինելու մոլուցքը հանգիստ չի տալիս, այդ էր պատճառը, որ շատերը ՖԲ ու ուղիղ եթերով կամ տեսագրությամբ հանդես էին գալիս Դոն Պիպոյին պաշտպանելով կամ գովերգելով նրան: Իսկ սփյուռքահայ « Հեղափոխականների » մասին արդեն ավելորդ է խոսել,

բավական է նայեք Արտակ Սերգոյանի հեղափոխական ելույթները ՖԲ էջում: Արտակը ինչպես տեսնում ենք՝ ուշադրության կարիք ունի, սակայն իրենից վերև կանգնած Պիպոյի ինչի՞ն էր պետք այս հեղափոխական միջոցառումները, որը ինքը կազմակերպել էր իր մակարդակին մարդկանց հետ միասին: Լավ նա գումարի պակաս չուներ, սոված չէր, ու բաց երկնքի տակ չէր քնում, լավ ինչը նրան ստիպեց ելնել ու միանալ պայքարին, ինչպես նշում է ինքը: Հենց այստեղ գալիս է ՀԱՅՏՆԻ լինելու մոլուցքը, եթե նկատել էք Դոն Պիպոյի մասին ֆիլմը տարբեր էջերում կրկնվում է, անգամ անգլերեն ու ռուսերեն գրված: Սակայն բովանդակությունը նույնն է: Պիպոն սիրում է, որ իրեն շրջապատում են հայտնիները, ու մոլուցքը նրան կույ է տվել, գումարներ է ծախսում, միայն իր անունը մնա պատմության մեջ: Նույնը Ծառուկյանի ու մնացածի մոտ: Բոլորը ուզում են հայտնի ու ճանաչված լինել, կարծես թե հայտնի լինելը երաշխիք է տալիս հավերժացնելու անունը պատմության մեջ: Ծատերը չգիտեն, որ Տուշնկա Մանվելին նույնպես տարել էր այդ մոլուցքը: Նրա մասին նկարված ֆիլմերն ու գրքերը դրա վառ ապացույցն են, անգամ նրան պետքարան գնալուց նկարահանում էին տեսախցիկները, ու պատանի երկրապահներին ստիպում էին իր համար աղոթել: Սակայն, ինչպես տեսաք, իր տիտղոսներն ու հերոսական կերպարը նրան չփրկեցին համազգային աստելությունից: Ծառուկյանն ու մյուս չակերտավոր բարերարները պետք է հասկանան, որ ժողովրդի մեջ ենթագիտակցությունը արթնացել է, ու նրան կուտ տալով չես խարի: ՖԲ-ում աշխուժացել են նաև երկրապահ հայտնիները, որոնք իրենց տիրոջ ողբն են ողբում: Այն ՀՀԾ ական ու Կոնգրեսական աղբակույտը ետ չի մնում դաշնակներից, որոնք իրենց կուսակցական դրոշների ֆոնի վրա լուսանկարվում են, կարծես թե ազգի համար լավ գործ են արել, հիմա էլ հպարտանում են այդ դրոշի ֆոնի վրա: Հայտնի դառնալու մոլուցքի մասին շատ կարելի է գրել ու խոսել, սակայն սահմանափակվենք այսքանով, հիշեցնեն միայն, որ ՖԲ-ի ընկերության հայտ ուղարկողների հայտը հաստատելուց առաջ, համոզվեք արդյոք այս չափանիշներով է նա առաջնորդվում, թե ուղղակի ապրում է հանգիստ առանց ոգևորության, որ ինքը հայտնի չէ: ՀԱՅՏՆԻ ԼԻՆԵԼՈՒ ՀԻՍՏԵՐԻԱՅՈՎ տառապողները վտանգավոր են, միաժամանակ անգրագետ են ու լքված: Չար են ու նախանձ, ինչքան հեռու լինեք գոռոզամիտ ու չար մարդկանցից,

այնքան ավելի հեշտ կլինի ձեզ համար:

Գեհենի Առաքել 11.09.2018թ.

ՀԵՐՈՍՆԵՐ և ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐ

Շատերը կարծում են, թե ես փորձում եմ Նաիրի Հունանյանին հերոսացնել, կամ եղած ոճիրը արդարացնել: Հարգելիներս, փորձեք խելամիտ լինել, ու ներկայացված փաստերը տարբերել իրարից: Հարցը Նաիրի Հունանյանը չէ, ես նրան չեմ էլ ճանաչել, ուղղակի փաստերը, դեպքերի հաջորդականությունը ներկայացնում եմ այնպես, ինչպես եղել է: Այնպես չէ, որ Նաիրին սուրբ էր, իսկ Վազգենը՝ հրեշ: Իրականում հրեշավորը ո՛չ միայն Նաիրի Հունանյանի արածն էր, այլև՝ Վազգենի արածը: Եթե փորձենք մեկ կշեռքի վրա դնել Նաիրի Հունանյանի ու Վազգենի գործած հանցանքները, Վազգենի գործած հանցանքները հարյուրապատիկ են Նաիրի Հունանյանի արածի համեմատ: Նաիրին սուրբ չէր, սակայն չենք սխալվի նրան ռոմանտիկ անվանել, երիտասարդ էր, փորձում էր նաև դառնալ հանրաճանաչ վրիժառու, իսկ իր գոհը՝ Վազգեն Սարգսյանն էլ ցանկանում էր դառնալ հավերժական միապետ, չնայած դարձավ հավերժական երկրապահ: Հաճախակի են շեշտում, որ Նաիրի Հունանյանը ցանկանում էր դառնալ վարչապետ, իսկ ինչու՞ չեն խոսում, որ Վազգենն էր ձգտում դառնալ միապետ: Կարեն Դեմիրճյանի ու Վազգեն Սարգսյանի հակասությունների ու վեճերի մասին ոչ մեկը չի ցանկանում բարձրաձայնել.այն, որ Դեմիրճյանը քիչ ուշ համոզվել էր, որ Վազգենը իրեն խաբել է ,դա փաստ է. վերջին շրջանում նրանց մեջ լարվածությունն ու հակասությունը ավելացել էր, մանավանդ Վազգեն Սարգսյանի կադրային քաղաքականությունից հետո: Դեմիրճյանը հասկացել էր, որ Վազգենի հետ գործ բռնելը սխալ էր: Այն, որ բարձրաձայնում էին, թե Նաիրի Հունանյանը ՊԱԿ գործակալ է, ԿԳԲ-ի, դա պատահական խոսակցություն չէր, քանի որ այդ տարիներին՝ 88 թվականին, Հայաստանում իրականացվում էր « Հույժ գաղտնի » խորագրով օպերացիա, որը պետք է հնարավորություն տար Մոսկվային վիժեցնելու Արցախյան շարժումը հենց ներսից: Եվ բացառված չի, որ Նաիրի Հունանյանը եղել է հենց այն հավաքագրվածների շարքում, որոնք

պետք է լրտեսություն անելին Մոսկվայի հատուկ ծառայության հրահանգով: ՊԱԿ-ի կողմից (« ՊԱԿ-ԿԳԲ Պետական Անվտանգության Կոմիտե») հավաքագրվածները աշխատում էին բոլոր ոլորտներում՝ լրատվության, ուսանողական և արհմիութենական օրգաններում: Լրագրող Տիգրան Նաղդալյանը նույնպես այդ հավաքագրվածների մեջ էր: Այն, որ այդ խմբերի անդամները իրար չէին ճանաչում, դա փաստ էր, որովհետև հարյուրավոր այդպիսի փոքրիկ խմբեր էին գործում հանրապետությունում: Տիգրան Նաղդալյանը և Նաիրի Հունանյանը իրար հետ կապ ունեին, հնարավոր է, որ նրանք եղել են մեկ խմբակի անդամ: Հիշեցնեմ, որ Վազգեն Սարգսյանը 88 -ին նույնպես ՊԱԿ-ի կողմից հավաքագրվել էր հենց այդ նպատակով: Կարելի է ասել, որ հետագայում այդ խմբակները ուղարկվում էին ռազմագիտական պատրաստության դասընթացների, դա փաստ է, իսկ թե նրանք այնտեղ շփվե՞լ են միմյանց հետ, դա դժվար է պարզել: Սակայն խորհրդային համակարգի հատուկ ծառայության կանոնակարգում արգելված էր, որ մեկ խմբակը ճանաչի մյուս խմբակին: Ուստի այս փոքրիկ խմբակները մեկը մյուսի գոյության մասին տեղյակ չէին կարող լինել: Այն, որ Հոկտեմբերի 27-ը եղել է Նաիրի Հունանյանի ծրագիրը, դա չի բացառվում, սակայն հնարավոր է, որ Նաիրի Հունանյանի խմբի մեկ ուրիշ անդամ այն նախագծել և պատրաստել է, քանի որ բացի Նաիրի Հունանյանից, իրենց խմբում կային ավելի խելացի ու պատրաստված մարդիկ: Ինչ վերաբերում է ԱԱն -ին, սպա հնարավոր է, որ իմացած լինեն, սակայն անուշադրության են մատնած եղել, որովհետև այդ տարիներին ամբողջ համակարգերում էլ, ինչպես ասում են « բառդակ » էր, այդ թվում բանակում, անվտանգությունում, ու ԱԺ-ում:

Սակայն ճշմարտությունը, ինչքան էլ այն ողբերգական ու ցավոտ լինի, պարտավոր ենք ասել ու ներկայացնել: Ոճիրը մնում է ոճիր՝ անկախ նրանից մե՞կ մարդու կորուստ է, թե՞ մեկ մարդու ճակատագիր: Գիտե՞ք ցավալին այն է, որ շատերը չկարողացան Վազգեն Սարգսյանի կորուստը դարձնել վերջինը: Վազգենի ողբերգական ավարտը չկարողացան դարձնել հիշարժան ու սուրբ օր: Վազգենի կորուստը պետք է դառնար ահաբեկության ու հանցանքների վերջը, սակայն ընդհակառակը՝ այն դարձավ անպատժելիության, ահաբեկության ու ոճրագործության շարունակություն: Երբ թաքցնում են հանցանքը, դա կոչվում է մեղսակից, իսկ երբ թաք-

ցնում են ոճիրը, դա կոչվում է ոճրագործություն: Հոկտեմբերի 27 -ը կարող էր լինել ավարտը, սակայն, ինչպես տեսնում եք, նույն ոճով շարունակվում է այսօր՝ վազգեների վկաններ, որոնք չեն ցանկանում ընդունել ճշմարտությունը: ՀՀԾ-ի կառավարման տարիներին՝ ցուրտ ու մութ տարիներին, որոնք շատերն են մոռացել, շատերը չգիտեին, թե այդ մութ տարիներին ինչպիսի հանցանքներ են եղել, դա կանխամտածված ու ծրագրավորած ահաբեկություն էր՝ ժողովրդին դարձնելով մտածելու անընդունակ: Ցուրտ ու մութ տարիները պարտադրվեց մեր ժողովրդին հատուկ նպատակով, այդ ցրտի ու մթի մեջ ՀՀԾ-ն պետք է իրականացներ ո՛չ միայն պետական ու հասարակական միջոցների թալանը, այլև՝ ժողովրդի կողոպուտը: Իրականացվեց մի թալան, որը չէին իրականացրել ոչ մի բարբարոս ցեղեր՝ բոլոր դարերում միասին վերցրած: Պատերազմի, սովի, ցրտի ու մթի ետևում ազատամարտիկների ու գաղափարական երիտասարդների սպանդն էր, դրա ետևում աղետոյալ գոտու թալանն էր ու Ադրբեյջանից մազապուրծ փախած մեր հայրենակիցների խոշտանգումը: Աղետոյալ գոտուց թալանվում էր ոչ միայն համապատասխան շինանյութը, այլև շինարարական տեխնիկան և միջոցները: Թալանվում էր արտերկրից ու սփյուռքից բերված օգնությունը՝ բժշկական սարքավորումներն ու տեխնիկական միջոցները: Խորհրդային Հայաստանի երբեմնի ամենահարուստ և հզոր հանրապետությունը աչքիդ առջև դառնում էր աշխարհի երրորդական երկրներից մեկը: Դրա մասին, չգիտես ինչու, նախկին ու ներկա իշխանավորները չեն փորձում հիշել, որովհետև իրենք մասնակից են եղել այդ ամենին: Ու խոստովանել այդ ամենը, կնշանակի վերջ դնել իրենց շքեղ ու շոսայլ կյանքին, հրաժարվել իրենց դոյակներից ու միլիոններից:

Նաիրի Հունանյանի գործած հանցանքը շատ ավելի քիչ էր, քան ՀՀԾ-ի շարքային անդամինը: Այնպես չարեցին, որ Հոկտեմբերի 27-ի դատավարությունը ընթանար արդար ու թափանցիկ. քողարկեցին ու ծածկեցին հանցանքները ո՛չ միայն Նաիրի Հունանյանի, այլև Վազգեն Սարգսյանի և ՀՀԾ ռեժիմի: Երբ աչքի տակ եղած մեղավորին թողած փորձում են հեռունեքում մեղավորներ փնտրել, ամեն ինչ դառնում է անհասկանալի: Հոկտեմբերի 27-ի դատավարությունը բեմադրեցին ինչպես ցանկացան՝ առաջին մաս, երկրորդ մաս, բաժանված մաս ու նման բաներ. չկարողացան մեկ գործի մեջ ընդգրկել ամբողջը: Կրկնում են՝ այդ դատավարությունը

կարող էր դառնալ Հայոց պատմության նոր վերելքը, Վազգենի մահով վերջ կդրվեր անարխիային ու թալանին ու կլանային ռեժիմին, դա կլիներ պատիժ ո՛չ միայն Նաիրի Հունանյանին, այլև մնացած հանցագործներին: Մեր այդ դատավարությունը կարող էր օրինակ ծառայել մնացած ազգերի ու ժողովուրդների համար, որ, միևնույն է, սաղ թե սատկած՝ ոճրագործությունը պետք է ասվի ու դատապարտվի, այլապես այն ծանրանալու է եկող սերունդների վրա, դրանից է, որ բազմանում են ու շատանում են քրեածին հանցագործները: Նաիրի Հունանյանը կդառնա՞ր հանրահայտ ահաբեկիչ, եթե բացահայտվեր Վազգեն Սարգսյանի հանցանքները, իհարկե՞ ոչ... Վազգենի գործած հանցանքները պետության ու ժողովրդի դեմ անհերքելի են: Հարկավոր էր՝ այն ասվեր ու դրանով ավարտվեր թալանի դարաշրջանը: Վազգենի գործած քաղաքական սպանությունները խոստովանելով՝ վերջ կդրվեր այդ սպանությունների ավանդությանը: Սակայն ի՞նչ արեցինք, ամեն ինչ շուռ տվեցինք գլխիվայր: « Ազգը բարոյալքելու երկու ուղի կա՝ պատժել անմեղներին և չպատժել մեղավորներին: »: (Ֆրիդրիխ Էնգելս) Այս խոսքերը պատահական չեն ասվել, բոլոր դարերում էլ հանցանքները այս կարգախոսով են իրականացվել: ՀՀԾ-ի կառավարման տարիների մասին շատ քչերն են հիշում, որովհետև բացի ցրտից ու մթից ոչինչ չեն հիշում: Հացի ու կարագի կտրոնները մոռացվել են, գործարանների թալանը՝ նույնպես, գյուղատնտեսության ու կոլտնտեսությունների թալանը, ազատամարտիկների սպանողը, հողեր ծախելու և մնացած բաները առհասարակ չեն էլ հիշվում: Մոռացել ենք 90 - ականներին աղբբեջանցի մեր փախստականների խոշտանգումը: Նրանց կողոպտեցին և թալանեցին այս անգամ մեր հայրենիքում: Թալանվեցին աղետյալ գոտում մեր հայրենակիցները, ՀՀԾ-ի ոհմակը հարստացավ ոչ միայն երկիրը կողոպտելով, այլև՝ ժողովրդին: Դրամի մուտքը ու ժողովրդի թալանը կազմակերպեցին մեկ օրվա ընթացքում, վաուչերների շրջանառությունը նույնպես թալանի մասն էր՝ պետական ու հանրային միջոցների զավթումն ու կողոպուտը: Դպրոցների ու մանկապարտեզների, մշակութային օջախների ու ակումբների զավթումը արվեց մթի ու ցրտի քողի տակ: Իրանին վաճառված հաստոցաշինական գործարանների սարքավորումները մետաղի ջարդոնի գնով իրենց արագ եկամուտ էր բերում: Էլ չասենք տնամերձ հողամասների վաճառքներն ու շինարարական տեխնիկայի վաճառքը:

Պատերազմի անվան տակ ոչնչացնում էին իրենց քաղաքական հակառակորդներին, ոչնչացնում էին զաղափարական տղաներին, որոնք տեսնում էին իշխանավորների հանցանքները: Ռազմաճակատում մեր հերոս տղաները կռվում էին արտաքին թշնամու դեմ, իսկ ներքին թշնամին ոչնչացնում էր նրանց թիկունքից: Խորհրդային ԿԳԲ-ի ծրագիրը իրականացնում էին այդ եղանակով՝ ոչնչացնելով հայոց ըմբոստ ոգին: ՀՀԾ-ի էլիտան փոշիացվում էր, սփյուռքահայության նվիրատվությունները և բարեգործությունները՝ թալանվում բարբարոսաբար: Մեփականաշնորհումն ու վառուչերային թալանը ՀՀԾ-ին տվեցին նյութատեխնիկական միջոցներ, որոնք ծառայելու էին քրեաօլիգարխիկ դասակարգի ձևավորմանը: ԽՃԲ (խնամի, ծանոթ, բարեկամ) կապը ստանում էր նոր որակ ու նոր ձևեր: Եվ այս թոհուրթոհի մեջ չնկատել, թե այդ ամենի ետևում ովքեր էին կանգնած, չնկատել անկուշտ հրեշների այդ հաղթարշավը, դա նշանակում էր մտավոր կույր լինել: Չնկատել հարյուրավոր խեղաթուրված ճակատագրեր՝ նշանակում է լինել իրենց պես: Նաիրի Հունանյանը մի քանի մարդու կյանք էր խլել, իսկ այդ անկուշտ ոհմակը հազարավոր ճակատագրեր էր խլել, մենք նրան ոճրագործ չենք անվանում: Երբ երկիրը աչքիդ առաջ դառնում է քառս ու սովահար, երբ հարյուրավոր դեռահաս աղջիկներ միայն մեկ հացի կտրոնի համար դառնում էին այդ էլիտայի հրեշների համար կուրտիզանուհիներ՝ իրենց բռնաբարված ճակատագրերով, դա՞ էլ ենք չտեսնելու տալիս: Այդ մանկահասակ աղջիկների մասին ոչ մեկը չի խոսում, անգամ իրենք են վախենում բարձրաձայնել: Երբ աղետոյալ գոտում ցրտահարված տնակների մեջ գոհվում էին երեխաներ, դա՞ էլ մոռացանք: Մի՞թե արժանի ենք ապրել այս երկրի վրա, երբ աչք ենք փակում ու անտարբեր հետևում ենք, թե մեզ ինչ նոր կեղծիք ու սուտ են մատուցելու հերթական անգամ: Շատերը երևի մոռացել են, որ ՀՀԾ-ի հրեշները մեկ ժամ լույս տալու համար թաղի բնակիչներից վերջին կոպեկն էին թալանում, թաղ -թաղ գումար էին հավաքում, որպեսզի քրեական ոհմակը իրենց վայելքների մեջ ուրախանա: Այրված տրանսֆորմատորների ու կաբելների համար էին շաբաթը մեկ գումար հավաքում, երևի դա էլ գիտաֆանտաստիկ ժանրից են վերցրել: Նավթի ու գազի համար նույնպես փողեր էին հավաքում, որոշ տեղերում այն նույնպես տալոնով էր: Ժողովրդի վերջին հույսը մոմի պես մարում էր, ու սպանեցին հույսն ու հավատը, սպանեցին ֆիզիկապես ու բարոյապես:

Հայաստանից հեռացած մեր հայրենակիցներից շատերը զգվանքից ու հույսից զրկված՝ ջնջեցին իրենց մեջ հայ լինելու ձգտումը: Երբ հայի ոգին սպանում են, մարդը դառնում է օտար, ու նրանք օտարացրին մեր ժողովրդին: Չավեշտը է, երբ տեսնում ենք հիմա, անգամ 20 տարի անց, վազգենամոլ զանգվածը փորձում է ամեն ինչ թաքցնել, իբր Վազգեն Սարգսյանը կապ չուներ այդ տարիների թալանին, սպանություններին ու ոճիրներին: Ինչպե՞ս է, որ Արայիկ Խանդոյանի ու Ստեփան Ստեփանյանի (Ռեմբո) պես ազնիվ տղաները ապրում են աղքատության ու կարիքի մեջ՝ զրկված լինելով անգամ հարգանքից, իսկ Վազգեն Սարգսյանի եղբայրները վայելքների ու շռայլությունների մեջ հայրենասիրությունից են խոսում՝ կոչվելով հանրային դեմք ու սիրված գործիչներ... Երբ իրենք անգամ պատերազմի դաշտում չեն եղել, ստում են, թե կռվել են, հայրենիք են ազատագրել: Արմեն և Արամ Սարգսյանները չկարողացան արժանավույնս հարգել գոնե իրենց եղբորը՝ Վազգեն Սարգսյանին: Նրա հանցանքները բացահայտելով՝ կմաքրագործվեին ու կապաշխարեին. Արդյունքում՝ մինչև հիմա իրենք ցանկություն չունեն դա անելու: Պատահական չէ, որ նրանք Գագիկ Ծառուկյանի, Խաչատուր Սուքիասյանի, Մանվել Սարոյան ու մյուս թալանչիների հետ միասին են, որովհետև իրենց կապը ոչ միայն մտավոր է, գաղափարական, քրեածին, այլ՝ խնամի-բարեկամական: Նաիրի Հունանյանի գործը անավարտ մնաց, որովհետև նրա ասելով ժողովրդի արյուն ձոնները շարունակում են իրենց սև գործը: Այնպես չէր, որ Նաիրի Հունանյանը գնաց այդ քայլին հենց այնպես՝ իր հաճույքից ու պաշտոն ստանալու մոլուցքից դրդված, դա պարտադրված էր ժամանակի ու Վազգենի Սարգսյանի կողմից: Եթե Նաիրի Հունանյանը չգնար այդ քայլին, միևնույն է, գալու էր մեկ ուրիշը, որը հաշվերարդար էր տեսնելու Վազգենի հետ, գուցե ավելի դաժան ու սարսափելի եղանակով: Ուստի եթե հանցագործին պետությունը չի պատժում, դա անում են խենթերը՝ վրիժառուները: Հուսանք մի օր կհասկանան, որ Վազգեն Սարգսյանի հիշատակը հարգելու համար, հարկավոր է ամեն ինչ պատմել ու ասել նրա գործած հանցանքների մասին: Այդպիսով երջ կորվի անարխիային ու հանցանքին: Ոչ մեկը իրավունք չունի խլել ինչ-որ մեկի կյանքը: Եթե հնարավոր է, պետք է խուսափել հաշվեհարդարից, սակայն երբ հնարավոր չէ այն քաղաքակիրթ ձևով լուծել, ուստի գալիս է միջնադարյան կացնի տարբերակը: Ասելով ու ընդունելով

սխալև ու հանցանքը՝ մենք կարող ենք կառուցել նոր հասարակություն, որտեղ չեն լինի հարստահարողներ, խոշտանգողներ, շահագործողներ և կեղծարարներ:

Գեհենի Առաքել 31/10/2019

ՊԱԼԱՉՆԵՐԻ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ

Հուսով եմ, շատերը գիտեն, թե ինչ է նշանակում Պալաչ, դա ռուսերենից թարգմանաբար նշանակում է ԴԱՀԻՃ: Ի՞նչ է, պատահական է նրան տրվել այդ անունը: Պետք է որ հայտի լինի, որ մահմեդական բոլոր խաները և փաշաները ունեցել են սեփական ԴԱՀԻՃՆԵՐԸ, որոնք խոշտանգում կամ գլխատում էին ցանկացածին, ում կիրամայեր ՏԵՐԸ: Հիմա մամուլի կենտրոնում է Արթուր Հարությունյանը («Պալաչ»), որը եղել է Գագիկ Ծառուկյանի անձնական օգտագործման դահիճը, հնարավոր է՝ եղել է Ժամանակին ԴԱՀՃԱՊԵՏԸ, որովհետև Ծառուկյանը սիրում է ամեն ինչը ճոխ ու շատ: Այնպես որ, թիկնագործի թվաքանակից ելնելով, նաև եղել են Դահիճների մի խումբ, որը նրա հրամանով մարդկանց ոչ միայն խոշտանգել ու առևանգել են, այլև սպանել ու գլխատել: Սա մեղադրանք չէ, այլ կանխատեսում, քանի որ փաստացի իրավիճակներն այդպես են թելադրել: Չափազանցրած չեմ լինի, եթե ասեմ, որ ՊԱԼԱՉԻ ձեռքերով է Գագիկ Ծառուկյանը կրկնապատկել իր կարողությունը: Առհասարակ, գալիս է մի պահ, երբ Պալաչները սկսում են գիտակցել ու ձեռքի հետ էլ կողքից գումարներ աշխատել, շատ դեպքերում փորձում են ՏԻՐՈՉ գլխից թռնել, ինչպես իրենց մոտ են ասում: Բանն այն է, որ ՏԵՐԵՐԸ առհասարակ, պալաչներին վստահում են ամեն ինչ, դե հավատարմությունը փորձելու կարիք չի լինում, քանի որ վստահ են, որ իրենցից կախվածություն ունեն: Սակայն պալաչները երբեմն սկսում են իրենց հաստագլուխ ուղեղն աշխատեցնել, սկսում են տիրոջ անունն օգտագործելով « Լևի» փողեր աշխատել: Որպես հոգեբան կարող եմ վստահ ասել, որ Հայաստանում Պալաչների աշխատանքը հարգի է, բայց ավելի բարդ քան կարող են պատկերացնել շատերը: Պալաչներին հարկ եղած դեպքում, իրենց տերերը կարող են շախմատի գինվորիկի նման գոհարերել, կամ էլ ոչնչացնել՝ առանց հետքի ու հիշատակի:

Պալաչների ավանդույթը սովորաբար երեք տասնամյակ է արդեն գործում է Հայաստանում, սովորաբար ամեն « հարգված » մարդ, ունենում է սեփական պալաչը, կամ պալաչները: Ինչքան շատ են տիրոջ մոտ Պալաչները, այնքան նրան շրջապատում հարգում են: Պալաչներին մի քանի սերունդ տեսնում ենք ԵԿՄ-ի շարքերում, ինչպես կասեր Կռազի շոֆեռ Մանվել Գրիգորյանը՝ Եռասերունդ Երկրապահը: Միայն չասեք թե այս ինչ կապ ունի Մանվելի հետ: Ես բազմիցս գրել եմ, որ Մանվել Գրիգորյանը Արցախյան պատերազմի ժամանակ 5-րդ կամավորական բրիգադի կազմում ունեցել է պատժիչ գումարտակ,ավելի շուտ պատժողների գումարտակ, որոնք կազմված էին էջմիածինցի քրեական տարրերից, որոնք Մանվելի հրամանով իրականացրել է խոշտանգումներ ու գնդակահարություններ ինչպես և ռազմաճակատում, այնպես էլ թիկունքում: Փաստացի ականատես վկաներից ու զոհերից կան, որոնց մասին խոսվել է արդեն: Փաստ է, որ ազատամարտիկներին ու կամավորականներին պատերազմի ժամանակ ռազմադաշտում Մանվելի պալաչները ոչնչացնում էին թիկունքից: Իսկ Մանվելը իր հերթին զբաղեցնում էր գլխավոր ոճրագործ Վազգեն Սարգսյանի ԴԱՀՃԱՊԵՏԻ պաշտոնը: Ճիշտ է, դահճապետին պետք է նշանակելին գեներալ, որովհետև նրա միջոցով էր Վազգենը կեղծում ընտրությունները և ահաբեկում բոլորին, սկսած ԱԺ պատգամավորներից, վերջացրած հոգևորականներով: Բոլորին հայտնի է՝ տարիներ առաջ Մանվել Ալեքսանյանի անձնական Պալաչը՝ « Չուկ» մականունով Արմեն Իսրայելյանը, որին սպանեցին Մոսկվայում: Պալաչներ են ունեցել Մանվել Գրիգորյանը, անգամ նրա տիկինը՝ Նազիկ Ամիրյանը, որոնց հրամանով պալաչները մարդկային մտով են կերակրել արջերին: Պալաչներ են ունեցել գրեթե բոլորը՝ Մուկը, Հովիկ Աբրահամյանը, Ազատիչը՝ Սերժ Սարգսյանը, Ռոբերտ Քոչարյանը, անգամ Արմեն Չավենի Սարգսյանը ու Երևանի ավագանու անդամ Անի Խաչատրյանը, այս վերջինս Վազգեն Սարգսյանի սանիկն է: Որովհետև ամիսներ առաջ, ինձ հաշվեհարդարի էր կանչում, խոստանալով գլուխս ու ոտքերս ջարդել տալ: Պալաչների ավանդույթը, ինչպես ասացի, մնաց Վազգեն Սարգսյանից, Լևոն Տեր Պետրոսյանից ու Վանո Սիրադեղյանից: Այդ եռյակի ձեռնադրմամբ էլ Պալաչները ներմուծվեցին հայկական իրականություն: Վանո Սիրադեղյանի մարդասպանների մասին շատերը տեղյակ են, նրանցից մի քանիսը բանտերում են, ԼՏՊ-ի պալ-

-աչապետը, այսինքն՝ Դահնապետը գեներալ Ռոման Ղազարյանն էր, իմիջ-
իայրոց նրանց ձեռքով է սպանվել Արցախի առաջին նախագահ Արթուր
Մկրտչյանը: Դե Վազգենի Դահնապետը Մանվելն էր, Շմայսն ու Նազիկը:
Չհաշված Ասֆալտամարտիկների այն ոհմակը, որոնք հետագայում դարձ-
ան գեներալներ: Ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի անձնական
օգտագործման պալաչի մասին վերջերս իմացանք՝ Արշակ Հակոբյանը,
Գագիկ Ծառուկյանի նոր Պալաչի՝ Էդուարդ Բաբայանի հանցանքներից
մեկի մասին հանրությունը կրկին նոր իմացավ, հուսով եմ, հիշում եք, թե
ինչպես Ռուբեն Հայրապետյանի (Նեմեց Ռուբոի) ՊԱԼԱՉՆԵՐԸ առև-
անգել էին գործարար, «Էյր Արմենիա» ընկերության սեփականատեր
Արսեն Ավետիսյանին, այնուհետև խոշտանգել, իսկ տարիներ առաջ խոշտ-
անգել էին ռազմական բժիշկ Վահե Ավետյանին, որը գիտակցության
չգալով՝ հիվանդանոցում մահացավ: Ռոբերտ Քոչարյանի պալաչների ձեռ-
քով իրականացվեց Պողոս Պողոսյանի հաշվեհարդարը: Վազգեն Սարգս-
յանի Պալաչների ձեռքով իր եղբայր՝ Արմեն Սարգսյանը իրականացրեց
Տիգրան Նադդայանի սպանությունը: Սակայն վերջերս Սարգսյանների
ընտանիքին մոտ կանգնած մարդիկ տեղեկացրել են, որ Տիգրան Նադդա-
յանի սպանության պատվիրատուն եղել էր ոչ թե Արմեն Սարգսյանը, այլ
նրա մայրը՝ տիկին Գրետան, Գրետա Սարգսյանը կամ ինչպես ընդունված
է ոհմակի կողմից Գրետա մայրիկը: Պատվիրատու Գրետա մայրիկին
խայտառակությունից փրկելու համար, իր կրտսեր որդին՝ Արմեն Սարգս-
յանը իր վրա էր վերցրել հանցանքը: Ինչպես տեսնում եք՝ անգամ Գրետա
մայրիկն էր օգտվում Պալաչների ծառայությունից: Հիմա Գագիկ Ծառուկ-
յանի անձնական օգտագործման ԿԵՆՏՐՈՆ հեռուստաընկերությունը
սկսել է Պալաչի՝ Արթուր Հարությունյանի դեմ արշավ, փորձում է նրան
սարքել հանցագործ, սակայն մոռանալով, որ նրան վաղուց Գագիկ
Ծառուկյանն էր դարձրել Պալաչ, օգտագործելով որպես ԴԱՀԻՃ, որի
ձեռքերով մարդկանցից խլում էր նրանց բիզնեսներն ու ունեցվածքը,
ինչպես նաև նրանց կյանքն ու հոգին: Կարծում եմ այս գրությունը պետք է
ազդակ լինի իրենց տերերին ծառայող հաստավիզ ստրուկներին, որ շուտ
թե ուշ իրենց տերերը նրանց գլուխները ուտելու են անհիշատակ ու
անհետք, ինչպես արվեց ժամանակին Վազգեն Սարգսյանի անձնական
օգտագործման պալաչ՝ Մովսես Գեղանգուլյանի հետ, որին ոչ միայն ոչնչա-

ցրեցին, այլև իր ընտանիքին: Մի խոսքով ՊԱԼԱՉՆԵՐԻ պատմությունը երկար է ու բազմազան, կարծում եմ մի ամբողջ օր չի բավականացնելու գրել նրանց ու նրանց տերերի մասին: Հուսով եմ, թավշյա հեղափոխությունը վերջ կդնի ՊԱԼԱՉՆԵՐԻ ավանդությանը, որովհետև հասարակությունը չպետք է թույլ տա, որպեսզի միջնադարի այդ թափփուկները ներխուժեն մեր իրականություն, ահաբեկեն ու խոշտանգեն մարդկանց:

Գեհենի Առաքել 1.09.2018թ.

ԸՆԴՈՒՆԱՎ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼ

« Ինքնությունությունից զուրկ ժողովուրդները չեն կարող պետություն ստեղծել »: Գարեգին Նժդեհ

Բազմիցս խոսվել է հայոց ցեղասպանության մասին, սակայն դեռևս մնում են մութ կողմեր, որոնք ուսումնասիրելու ու բացատրությունների կարիք ունեն: Երբեմն փորձում ենք զգուշությամբ ներկայացնել այն՝ առանց ներկայացնելու այդ ողբերգության պատճառահետևանքային կապերը և իրավիճակները, պետք է պթափ դատել՝ ներկայացնելով բազմաշերտ ու բազմաբնույթ այդ դեպքերը: Հայոց ցեղասպանության հոգեբանական կողմը ուսումնասիրված չի և լիարժեք գնահատական հնչեցված չէ: Չնայած որ փորձում ենք միայն երկրորդական հարցերին գնահատականներ տալ, ինչոր միջազգային կոնվենցիանների ետևից ընկնել ու շեղվել բուն նպատակից: Հայոց ցեղասպանության բարբարոսությունները և միջոցները անգամ ներկայացվել են լուսանկարներով, սակայն ոչ մի խոսք հոգեբանական պատկերի մասին, իսկ բարոյական չափանիշների մասին լռում ենք: Երբ 1915 թվականի ցեղասպանությունը դեռ սաղմնային վիճակում էր, դրա մասին լռեցին գիտակ մարդիկ, նույնիսկ կարելի է ասել որ հենց նրանց օգնությամբ էլ նոր թափ ստացան կոտորածները: Հայ Հեղափոխական դաշնակցությունը ցեղասպանությանը նախորդող տարիներին զինաթափեց ո՛չ միայն հայկական գյուղերը, որոնք ի վիճակի էին պաշտպանվել, այլ թուրքական իշխանություններին հանձնեցին Հնչակյան կուսակցության իրենց մրցակիցների ցանկը, որոնք երիտթուրքերի դեմ ըմբոստանում էին:

Կարծում եմ, փաստերը կան՝ թուրքական, անգամ ՀՅԴ բյուրոյի արխիվներում: Իթթիհատի կուսակցությունը պատահական չէր, որ ՀՅԴ-ի օգնությամբ եկավ իշխանության: Շատ դեպքերում դաշնակները արդարանում են, թե երիտթուրքերը իրենց խաբել են եղբայրություն և հավասարություն լոգոնգների ետևը թաքնվելով: Լավ, բա քաղաքական ձեռ հոտառությունը որտե՞ղ էր, որ չէիք զգում պատերազմի հոտը: Երբ դաշնակցական հայ մեծահարուստները ֆինանսական աջակցություն էին ցույց տալիս երիտթուրքերին: Ինչևիցե, հայ կապիտալիստների մասին գրել են Թումանյանը, Նժդեհը, Պարոնյանն ու անգամ Չոբրապը, ավելորդ է արդարանալ, թե ցեղասպանությունը կանխելը հնարավոր չէր: Երբ ռուսական կայսրության նավթային մագնատները հայեր էին, երբ Պոլսո ամենաազդեցիկ ու հզոր բանկերը գտնվում էին հայերի ձեռքին, երբ խոշոր վաճառականները հայերն էին: Բաֆֆին նույնպես գրել էր այդ անհայրենիք հայ վաճառականների մասին: Երբ Թուրքիայում կոտորածներ էր, Ռուսաստանի ու աշխարհի մնացած երկրների հայկական համայնքները զբաղված էին մամուլում իրար վրա ցեխ շարտելով, փոխարենը գումար հավաքելին ու վարձկանների բանակներ տեղափոխելին Արևմտյան Հայաստան, գոնե գաղթական հայերի զավակներին փրկելին սպանդից, որպեսզի գոհ չդառնային թուրքի յաթաղանին: Կամ էլ գոնե մի փոքրիկ ցայտաղբյուր կառուցելին Դեր Չորի անապատում, որպեսզի իրենց հայրենակիցները ծարավից չմեռնեն չոր անապատում:

Կարելի էր կանխել այդ ամենը, Գարեգին Նժդեհի խոսքերը հայ կապիտալիստների հասցեին գեղեցիկ է հնչում... Չկաշառեցինք թուրք փաշաներին, որոնք պատրաստ էին մի քանի ոսկու դիմաց անգամ իրենց ջոկատները ուղարկել դժոխք: Հայ մեծահարուստները իրենց խնջույքների մեջ են զվարճ անում, իսկ հայ ժողովուրդը կոտորվում էր գաղթի ու Դեր Չորի ճանապարհներին: Նույնը հիմա է՝ Ծառուկյանն ու Պիպոն իրենց շքեղ դրյակներում զվարճանում են ու միլիոնանոց դոլարների փարթիներ, հյուրընկալություններ պատրաստում, իսկ հայ ժողովուրդը սահմանամերձ շրջաններում կոտորվում է՝ բառիս բուն իմաստով, առանց ճանապարհների, մի կտոր չոր հացի: (« Միայն Չմյուռնիայի հարստության իննսուն տոկոսը պատկանում էր հայերին: Այդ վիթխարի հարստության ընդամենը տասը տոկոսը քավական էր՝ հայերի նկատմամբ աշխարհի խղճմտանքը հրեաբար

կաշառելու... : Մեծահարուստ հայը այդպես էլ չեղբայրացավ մտավորական հային: Մտավորական հայը այդպես էլ մահացած-նահատակված հերոսից բացի կենդանի հերոսի հետ չեղբայրացավ... Ոսկեքսակ հայը չկանգնեց ոսկեգրիչ մտավորականի թիկունքում, եւ այդ վերջինի լեզուն՝ կարճ, խօսքն անլսելի եղաւ միջազգային արժօրացման մէջ: Եւ եղաւ այն, ինչ որ եղաւ: Խորհրդածէք, պարոն՝ արուեստագետ, եթէ սիրտ ունիք, խորհրդածէք այդ մասին, եւ դուք - համոզուած եմ - ձեր ցեղը մեղադրելու փոխարէն, պիտի դատաւիտեմէք Հայաստանը կործանող այն յանցապարտ մտայնութիւնը, որ կ'անձնատրեմ հայ օտարասէրը եւ հայ մեծահարուստը - թշուառականներ, որոնց որքան աւելի ժպտայ բախտը, այնքան հոգեպէս կը հեռանան իրենց ցեղի կեանքէն: Պարզ չէ՞, թէ ինչո՞ւ միայն հայութիւնը կը մնայ որպէս պարտուած մասը մարդկութեան»: *Գարեգին Նժդեհ*)

Էլ չհաշված տարագիր ու տնավեր մեր հայրենակիցներին, որոնք Սիբիրի ու Յակուտիայի տայգաններում իրենց կյանքն են քարշ տալիս: Մի՞թե կարելի է հայրենիքից ու հայրենասիրությունից խոսել, երբ այդպիսի հրեշներ են մեր շրջապատում, որոնք պատրաստ են իրենց հայրենակցի վերջին շապիկը հանել, որոնք պատրաստ են վերջին պատառը որբի բերանից փախցնել: Խոսում ենք հայրենասիրությունից ու մոռանում ենք, որ նրանք հայրենիք չունեն, ունեն միայն գրպան ու որովայն լափելու ընդունակ հրեշ, անկախ թե նա ինչ կկոչվի՝ ազգի թշնամի է: Մենք՝ հայերս մեծամիտ ու պոռոտախոս ենք, շատ են խոսում հայրենասիրությունից, Արևմտյան Հայաստանից ու հայկական հողերից, ծովից ծով Հայաստանից: Խոսում ենք Սվոյ Ռաֆից ու Պոլոյից, Պիպոյից ու Չապից՝ ներկայացնելով համացանցում նրանց հզորության ու նրանց մեծության մասին, իբր թե նրանք քրեական հեղինակություններ են եղել՝ ծանր ու ազդեցիկ իրենց կերպարով, սակայն երբեք հարց չենք տվել, թե այդ ազդեցիկ ախպերության ծանրակշիռ խոսքը ու՞ր էր, երբ Բաքվում ու Սումգայիթում հայերին էին կոտորում, ինչ է՝ չէի՞ն կարող իրենց ազդեցիկ խոսքով զսպել քրեական խուժանին, որը օրը ցերեկով իրենց հայրենակիցներին էր այրում փողոցներում: Բա այդ հզոր Պիպոները ու՞ր էին, կամ Պոլոները, չեմ զարմանա, որ նրանք եղել են երկրաշարժի թալանչիների առաջին շարքերում, իրենց համար ազգությունը դա իր նեղ շրջապատն է՝ ախպերությունը: Դաշնակները երիտթուրքերի հետ էին ախպերություն անում, սրանք էլ՝ աղբբեջանցի գլխակերներին:

Հիմնա համացանցը ողողված է Սվոյի Ռաֆի ու Պոյոյի ֆիլմերով, իբր թե Սվոյ Ռաֆը Արցախյան պատերազմի ժամանակ գեներ ու զինամթերք է բերել Հայաստան... Լսեք, ու՛մ եք ուզում խաբել, այդ երբվանի՞ց քրեական հեղինակությունը հանկարծ դարձավ հայրենասեր բարերար, այդ երբվանի՞ց գողերին հարգող հանցագործը դարձավ ազգասեր ու հայրենասեր... Երբ նայում ես, թե ինչպիսի շքեղության ու վայելքների մեջ են ապրում Պզոներն ու Ծառուկյանները, Պիպոներն ու Սարոյանները հասկանում ես, որ թուրքերը ստիպված են եղել ոչնչացնել մեր ժողովրդին, հասկանում ես, որ հենց այդպիսի մարդկանց պատճառով են մորթել մեր ժողովրդին: Քրեականներ, հոգևորականներ, չինովնիկներ ու պաշտոնյաններ, որոնք անտարբեր լռությամբ ջուր են լցում թշնամու ջրաղացին: Երբ երկրի ընդերքն են թալանում անկուշտ բարբարոսների պես, երբ անկուշտ ու հրեշավոր իրենց թուլեքին ամուսնացնում են իրար հետ ժողովրդի արյուն արցունքով թալանված փողերով կազմակերպում դարի հարսանիքներն ու ծննդյան տոները: Այո, մի կարծեք, թե այդպես չի եղել մի քանի դար առաջ, երբ հանձնում էին Կարսն ու Էրզրումը, երբ 1915 թ-վին մորթում էին ժողովրդին: Այո, անտարբեր ու անհոգի ազգ ենք, երբ կարող էինք այդպիսին չլինել, ոչ ոք մեզ չէր խանգարում լինել հոգատար մեկ մեկու հանդեպ, մեր հոգում նստած այդ նախանձն ու անկշտությունը մեզ դարձրեց այսպիսին: Չտեսանք ձուն գողացող հանցագործին, որից հետո ձվագողը պետք էր դառնար երկրաշարժի օգնությունը թալանողը, հետո երկիր ու ընդերքը թալանողը: Դժվար է ու դառը փաստերն ու իրականությունը, երբ թալանչին ու հանցագործը բարերար են, երբ բժիշկը՝ դարման անողը՝ մարդասպան, իսկ զինվորին սպանողը՝ գեներալ, ապա հավատացեք, որ ցեղասպանության նոր եթերաշրջանները շարունակվելու են՝ նոր մեթոդներով ու ձևերով, տրանսգեներներով ու աղանդներով, ազետ ուսուցիչներով և ծախվող դատավորներով: Խորենացին 5-րդ դարում էր ողբում ազգիս վիճակը, Նժդեհը նույնպես ողբաց, Թումանյանն ու Բաֆֆին ողբացին. նաև Մոնթեն ու Միայնակ Գայլը: Ու ողբը հավերժ է, եթե չկա պայքար, չկա ցանկություն և կամք, չկա ազնվություն ու խոստովանանք, աչք կփակենք մեր կեղտերի ու դավաճանների վրա, փակեցին ու շարունակեցինք ապրել քրեական ու գողական միջավայրում, որտեղ միայն Պզոներն ու Պիպոներն են դառնում ազգային հերոս ու ազգային կերպար:

Այստեղ է, որ մտածում ես, արժե՞ արդյոք հպարտանալ մեջ ազգի անունով, երբ ամեն ինչ ոչնչացվել է անտարբերության, քծնանքի ու ստրկամտության արդյունքում: Խելագարվել կարելի է, երբ մեր մեջի աղբն ու դավաճանությունը բոլոր դարերում տարբեր ձևերով ու երանգներով մեր մշակույթն ու ազգային արժեքներն են ոչնչացրել, եկող սերունդների պայքարող ոգին են կոտրել, Գողական քրեական բարեգործներ, արյունարբու ոստիկաններ ու գեներալներ, կաշառված ու ծախված դատավորներ ու բժիշկներ, տգետ ու ողորմելի ուսուցիչներ ու հոգևորականներ: Լրագրողների ու մամուլի մասին կլեմ, որովհետև Թումանյանն ու Պարոնյանը ասել են դրա մասին, ու լավ իմանալով բանաձևը, թե ինչպես կանխել դարերի այդ ոճիրները, փորձում ենք նոր մաքրեմաքուր կերպարի մեջ պատկերացնենք ամենավերջին քրեականին, դասալիքին ու սրբապիղծին: Հետո էլ դժգոհում ենք, թե թուրքերը մեզ կոտորեցին, շատերը անգամ տեղյակ չեն, որ թուրքերը հենց այդ տեսակի հայերի ձեռքով կազմակերպեցին ցեղասպանությունը: « Մեր քաղաքական չեզոքության դեպքում իսկ, եթե դա, կրկնում եմ, նույն-իսկ հնարավոր լիներ, թրքությունը պիտ վարվեր մեզ հետ ճիշտ այն ձևով, ինչպես որ վարվեց »: Գարեգին Նժդեհ Այդ տեսակը եղավ գործիք բոլոր դարերում՝ հայ ժողովրդին ոչնչացնելու համար: Նոր սերունդների աչքերին թոզ փչեցին ու խաբեցին, թե հայոց պատմության միակ դավաճանը Վասակ Սյունեցին էր, սակայն չիմանալով, որ այդպիսի դավաճան վասակներ մեր կողքին են ու մեզ են ուղղորդում դեպի դժոխք դեպի կործանում: Նորօրյա վասակները կառավարությունում են ու Ազգային ժողովում, կուսակցություններում են ու հասարակական կառույցներում են, դատարաններում եկեղեցիներում ու դպրոցներում: Ու չսեցինք մեծ իմաստունի պատվիրանը, որ չարորակ ուռուցքը պետք է կտրել հեռացնել, այլապես կապականի մարմինը: Այո, ապականված այդ ուռուցքը արմատավորվեց բոլոր դարերում ու ժամանակներում, հիմա երգել Ջան գյուլում ու անցնել առաջ՝ սիալ կլինի: Հայաստանի արժանապատիվ ու հպարտ քաղաքացին պետք է հասկանա, որ խոստումների դարաշրջանը վաղուց անցել է, պետք է ապրել ու կառուցել, իսկ ովքեր խոչընդոտում են, պետք է ոչ միայն ոտնատակ տալ՝ անկախ դրանից դա կլինի վարչապետ թե նախարար, ազգային հերոս թե առաքյալ, պետք է շարժվել առաջ՝ ընդունելով ապրելու ճիշտ բանաձևը: Քանի դեռ անպատիժ են ոճրագործներն ու ավազակները, գողերն

ու դավաճանները, հավատացեք, որ մնալու ենք միշտ նվաստ, աղքատ և հիվանդ: Պիպոն հիմա Էջմիածինում անհիմաստ շինություններ է կառուցում, հազարավոր քցված մարդկանց փողերով, նրանց արյուն արցունքը շաղախելով: Ծառուկյանը իր թալանած միլիոններով ժողովրդին թունավորելով իր կարողությունն է բազմապատկում, իսկ Փաշինյանն էլ ժողովրդին կուտ է տալիս, թե մի քիչ էլ համբերեք ու ամեն ինչ լավ կլինի, միտքս եկավ Թումանյանի « Խրճիթում » բանաստեղծությունը, կարծում եմ շատերը կհամաձայնվեն:

Գեհենի Առաքել 28/07/2019

Խրճիթում

Մանուկները գոռում, գոչում,
Լալիս էին աղեկեզ.

— Նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում,

Վե՛ր կաց, նա՛նի, հաց տուր մեզ:

Հիվանդ նանը տեղի տակին

Ծանր տընքաց տըխրալի.

— Մենք հաց չունենք, ես ձեզ մատաղ,

Ապին գնաց հաց բերի:

— Չէ, իսարում ես, սուտլիկ նանի,

Չէ՞ դու ասիր՝ քարափին

Հենց որ զարկի շողքն արևի

Հաց կըբերի մեր ապին:

Արևն եկավ անց էլ կացավ,

Մենք սոված ենք դեռ էսպես.

Նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում,

Վե՛ր կաց, նա՛նի, հաց տուր մեզ:

— Հաց չի գտել ձեր ապին դեռ,

Տուն չի գալի սևերես.

Քիչ էլ կացեք, իմ բալիկներ,

Հիմի էնտեղ կերթամ ես...
Մի մեծ ապի կա երկնքում,
Նա շատ ունի էնտեղ հաց...
Նա ձեզ էնքան շատ է սիրո՛ւմ...
Նա չի թողնի ձեզ սոված...

Կերթամ էնտեղ նրբան կասեմ,
Որ սոված եք, իմ բալեք,
Ձեզ համար շա՛տ-շա՛տ հաց կուզեմ,
Որ դուք ուտեք, լաց չըլեք...
Մանուկները գոռում, գոչում,
Լալիս էին աղեկեզ.

— Նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում,
Վե՛ր կաց, նա՛նի, հաց տուր մեզ:
Բայց չէր լսում էլ ականջը
Բազմաչարչար մայրիկի,
Աչքը փակեց նա հավիտյան
Գրնաց, որ հաց ուղարկի:

1893 Հովհաննես Թումանյան

ՄԵՂՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*« Թուրքն ավելի դրական կարծիք ուներ և ունի հայ ցեղի մասին, քան մեր
հայանուն ստրկամիտները »: Գարեգին Նժդեհ*

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովուրդն այն-
քան հանցանք գործեց, որ նկարագրելն ուղղակի սարսափելի է: Մեզանից
շատերի պապերը և նախնիները Արևմտյան Հայաստանից են, նրանցից
շատերն ականատես են եղել թուրքերի իրականացրած ցեղասպանությ-
յանը՝ պատմել են սարսափն աչքերում: Նրանցից շատերն էլ ավստասանքով

հիշում էին, թե իրենց ծնողները ինչպես են ուսկիներն ու զարդերը թաքցրել պատերի ու տանիքների մեջ փորված թաքստոցներում: Այդպես թաքցրեցին գանձերը ու այդ ամենը մնաց թուրքին: Թուրքերին մնաց ոչ միայն իրենց տունն ու այգին, այլև նրանց տարիների աշխատանքը՝ ուսկիներ ու հարստություն: Գիտե՞ք, թե դա ինչ մեծ հանցանք է, երբ մեր ֆիդայիները հորդորում էին, որ ոսկու փոխարեն հարկավոր է զենք ու զինամթերք գնեն, որ թուրքը մնում է թուրք, հայի ժլատությունը կուրացրել էր շատերին, կարծում էին, թե այդ թաքցրած ոսկին իրենց տաք է պահելու: Եղան շատերը, որոնք իրենց ոսկիները պահելու համար, մեր հայդուկներին դավաճանեցին ու մատնեցին՝ հանձնելով թուրքերին: Յավալին այն էր, որ մի քանի անգամ կոտորածներ տեսած հայ ժողովուրդը այդպես էլ չհասկացավ, որ զենք ու զինամթերք է հարկավոր իր ընտանիքն ու կյանքը պաշտպանելու համար: Որ արտաքին թշնամուց պաշտպանվելու համար, պետք է ներքին թշնամուն սպանել... Մի քանի անգամ ցեղասպանված հայ ժողովրդին դաս չեղավ անցյալի ողբերգությունը: Անգամ 1894-1896 թթ. Համիդյան ջարդերը՝ Ադանայի և Հալեպի կոտորածները, Կարինի, Տրապիզոնի, Տիգրանակերտի, Բաղեշի, Անգորայի, Սեբաստիայի, Ակնի, Արաբկիրի, Եդեսիայի, Այնթապի և ապա Կ. Պոլսի, Եվդոկիայի, Սասունի, Չեյթունի, Հաճընի ու Վանի կոտորածները: Դաս չեղավ անգամ Սուլմզայիթն ու Բաքուն: Դաս չեղավ Նախիջևանն ու Շահումյանը, Արծվաշենն ու Մարտակերտը: Ու այդ ամենի ետևում մեր ներքին թշնամին է՝ դավաճան հոգևորականները, կուսակցական տականքները՝ հանձինս ՀՅԴ բյուրոյի ու թալանչի ու հանցագործ կապիտալիստները ու պետական պաշտոններում բազմաձև իշխանավորները: Պատմության դասերից չքաղեցինք, որովհետև իրար հաջորդած հրեշներին դարձրեցինք հերոսներ ու ազգային կուռքեր, դարձրեցինք անմեղ ու ազնիվ ազգային արժեքներ: Հիմա ի՞նչ, ինքներս էլ չենք հասկանում, երբ ԱԶԳՈՎԻ հպարտանում ենք, որ ազգային վրիժառու Սողոմոն Թեիլերյանի ՎՐԻԺԱՌՈՒ ԳՆԴԱԿԸ գտավ դավաճանին, սակայն մոռանում ենք, որ Թեիլերյանի օրինակով էր, որ Նաիրի Հունանյանը բաց ճակատով կանգնեց հրեշի դիմաց ու պատժեց բոլոր ժամանակների չարիք դարձած Վազգեն Սարգսյանին: Ազգովի մեղադրում ենք Ռոբերտ Քոչարյանին, սակայն մոռանում ենք, որ նրան այդպիսի հրեշ դարձրեց Վազգեն Սարգսյանը: Մոռանում ենք, որ Մարտի 1-ը եղել է 1996 թվականի սեպտեմբերի

25-ի կրկնությունը: Մոռանում ենք, թե ովքեր թալանեցին Խորհրդային Հայաստանի հարստությունը՝ երբ Սովետական Հայաստանը համարվում էր աշխարհի ամենազարգացած ու հարուստ պետությունը: Ինչպե՞ս ենք հիմա կուրորեն հավատում նրանց, երբ նրանց մի մասը դեռ արյունոտ ձեռքերով բռնել է պետության դեկր: Մեղադրել Ռոբերտ Քոչարյանին՝ չմեղադրելով Վազգեն Սարգսյանի ու Լևոն Տեր Պետրոսյանի բանդային, նույնն է՝ մեղադրել Երիտթուրքերին ու չմեղադրել սուլթան Համիդին:

Գեհենի Առաքել 17.05.2019

ԵԹԵ ՀԱՆՑԱԳՈՐԾԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՊԱՏԺՈՒՄ, ԱՊԱ ԴԱ ԱՆՈՒՄ ԵՆ ՎՐԻԺԱՌՈՒՆՆԵՐԸ

« Երբ չի մնում ելք ու ճար, Խենթերն են գտնում հնար »:
Պարույր Սևակ

Դռնեցկի և Լուզանսկի այդպես ասած ինքնահռչակ հանրապետությունների ժողովրդական դատարանի 22 հունիսի 2018 թ հանրության առջև՝ հրապարակավ կարևոր որոշում է կայացրել է, ոչ միայն ամբողջ Ուկրաինայի համար այլև քաղաքակիրթ մարդկության համար, քանի որ քաղաքական գնահատական տրվեց նախկին հանցագործ ռեժիմին, նա դատապարտեց պատերազմի հանցագործներին ու ներկայացրեց մեղադրանքը, չնայած այն իրականացնելու համար շատ խոչընդոտներ կան, սակայն կարևորը հանդիսանում է բարձրաձայնումը ու հրապարակային քննադատումը ոճիրների հանդեպ: Կարևոր է, որպեսզի ժողովրդի ենթագիտակցության մեջ մտնի, որ նրանք ոչ միայն Ուկրաինայի թշնամի են, այլ համայն մարդկության դեմ չարիք՝ պատերազմի հանցագործներ: Միևնույն է, թե հետագայում դատական մարմինները այդ որոշումը կհաստատեն թե ոչ, սակայն այդ հանցագործները այլևս չեն կարող հասարակական խմբերի կողմից կոչվել հերոս կամ բարեգործ՝ ինչպես արվում է մեզ մոտ: Սակայն կարևոր մի երևույթ է, առհասարակ երբ պետությունը չի պատժում հանցագործին, ապա դա անում են խենթերը, կամ վրիժառուները: Ինչպես եղավ 1999 թվականին հոկտեմբերի 27-ին: Ոճրագործ Վազգեն Սարգսյանների

պատճառով է, որ ժողովրդի արգանդը Նաիրի Հունանյան է ծնում, որպեսզի պատժի ազգադավ հանցագործներին: Ուկրաինայի ժողովրդական դատարանի որոշումը հասարակության պահանջն է, եթե այդ հանցագործները հայտնվեն ճաղավանդակների ետևում, ապա միևնույն է՝ նրանց սպասելու է իրենց արժանի պատիժը՝ ավելի դաժան ու ավելի սարսափելի մահ: Իսկ եթե մնան էլ ազատության մեջ՝ միևնույն է, կգտնվի մի խենթ՝ Նաիրի Հունանյանի նման երիտասարդ, որը աչքաթող չի անի ժողովրդի ցատումն ու վրեժը: Այնպես, որ մենք՝ հայերս, պետք է կարողանանք գնահատական տալ նախկին հանցագործներին, իսկ մենք սպարապետացնում ու զորավար ենք սարքում ազգի կաշին քերթած տականքներին: Արդյունքը Քոչարյանի դատավարությունն է, այդ ամենի արդյունքն այն է, որ գնահատական չտրվեց երևույթներին: Եթե Վազգեն Սարգսյանը ազգային հերոս է ու սպարապետ, ապա Քոչարյանն ինչու պետք է կոչվի հանցագործ, երբ նա շարժվել է Վազգեն Սարգսյանի հետքերով: Վազգեն Սարգսյանը 1996 թվականի սեպտեմբերի 25-ին Բաղրամյան պողոտայում կրակեց ժողովրդի վրա՝ իրականացնելով ռազմական հեղաշրջում, օգտագործելով բանակն ու ուժային բոլոր կառույցները: Իսկ Ռոբերտ Քոչարյանը նույն բանը արեց 2008 թվականի մարտի մեկին: Ռոբերտ Քոչարյանը Վազգեն Սարգսյանից սովորեց անպատիժ գործել՝ թալանելով ու կողոպտելով Հայաստանն ու ժողովրդին: Դատապարտել Ռոբերտ Քոչարյանին, սակայն չդատապարտել Վազգեն Սարգսյանին՝ կնշանակի անիմաստ քայլեր անել ու դառնալ հանցանքների մեղսակից: Վազգենի գործը շարունակող երկրապահները հանրապետականներն ու Կոնգրեսակական ՀՀՇ ականների հանցագործ ռեժիմը դեռ շարունակում են իշխանական վերնախավում մնալ, անգամ ԱԺ՝ ում զբաղեցնելով պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը: Ահա այս է մեր իրականությունը, որը շարունակելու է խոշտանգել սերունդներին՝ ֆիզիկապես և բարոյապես:

Գեհենի Առաքել 26.05.2019

ԹՐԱՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Մի հետաքրքիր տենդենց եմ նկատում, դա ոչ միայն միայն Հայաստանում է, այլև ամենուրեք, օրինակ մորուք պահելը:

Հիմա շատերը կասեն թե. « Ինչպե՞ս է, որ դու մՈ՛ւրուք ես պահում, իսկ մյուսներին էլ քննադատում ես »: Առհասարակ այնպես չէ, որ ես դա անում եմ՝ կանանց դուր գալու համար կամ ժամանակի մոդայի պահանջով, ինչպես շատերն են հիմա իրենց հույս տալիս: Իմ պատճառները այլ են, սակայն խոսքը վերաբերվում է ներկա երիտասարդներին, որոնք կարծում են թե իրենք մորուքով ավելի բարետես են կամ ավելի հմայիչ, ասեմ որ չարաչար սխալվում են: Չեմ հասկանում՞մ նուրբ մատիկներով, նիհար կազմված քով երիտասարդին այդ այծի մորուքն է, որ տղամարդ է դարձնում՞, թե՞ կանանցի շարժ ու ձևով իրենց պահվածքը:

Երբեմն հանդիպում ես սափրագլուխ մի հաստավզի, որը թավ մորուքով ու բիցեպսներով իրեն տղամարդ է համարում, թիկնապահի իր կերպարով, որի ձեռքերը կարծես պարանոցիժ են աճում, փայլուն սափրագլուխ լինելը ավելի հարգի է բարձրաստիճան թիկնապահների մոտ, մանավան, Ճառուկյանի թիկնագործում են, կամ էլ Վլադիմիր Գասպարյանի մոտ: Իսկ այն որ Գորիլայատիպ այդ երևույթներին չի կարելի անգամ ժպտալ դա այդպես է, որովհետև ճակատագիրը այնպիսի հետք է թողել նրանց վրա, որ անգամ ժպտալու փորձը անհնար է՝ ինչպես Բոտոքս արած կանանց մոտ, որոնք միշտ սառը կերպարի մեջ են, որպեսզի կնճիռներ չհայտնվեն դեմքին: Լցոնած « սկուլաներով »՝ այտոսկրերով ու կպցրած արհեստական թարթիչներով, կարծես թե բոլորը նույն « կոնվերի» մամլիչի արտադրանք լինեն, շրթունքների մասին հիշելիս անգամ մարմնով փշաքաղվում ես, դեմքի մոտ 70 տոկոսը շուրթերն են ու դրած թարթիչները: Կանանցի այդպիսի կերպարները կարող եք տեսնել Womens club Վումենս քլաբսի առաջնագծում: Անգամ նայել այդ սարսափելի կանանց ու երիտասարդներին, որոնք չգիտես ինչու հռհռում են անիմաստ հումոր կոչվածի վրա:

Տեղին է հիշել նաև աստղայինը տարած 32 ատամի անհումոր անհամներին, որոնք իրենց կերպարը անգամ տասը տարիներին ընթացքում չկարողացան մոտեցնել դերասանի կերպարին: Այն որ մորուքը դարձել է կարծես հեղափոխական Հայաստանի պարտադիր արքեսուլարը դա տեսնում ենք

բողոքս: Նույնիսկ այն տպավորությունն է, որ « իմ քայլը » դաշինքի կանայք նույնպես մորուքով են... Համացանցում մի տիկին կար, դրանց անվանում էր թրաշամանուկներ ու անունը շատ համաշունչ էր ու տեղին: Ինչպես տեսնում ենք հեռուստատեսային եթերներից հարդարված ու ընդգծված թրաշով երիտասարդները շատացել են, ու կանանցի կոկիկությամբ ոչ միայն ուրվագծում են իրենց թրաշը այլ կորեկցիա են անում նաև ունքերը, որպեսզի համապատասխանի թրաշին: Ճիշտն ասած Հիգիենան լավ բան է, քանի որ շրջապատում շատերը փնթի ու տգետ մարդկանցից ուղղակի գարշում են:

Այն ինչ կատարվեց վերջին երեսուն տարիներին անթրաշ ու ոջլոտ հանցագործների կողմից նկարագրելը դժվար է, ներկայիս ծանր վիճակը դրա արդյունքն է: Չափանիշները կորցրած ժողովրդի պարանոցին փայթաթեցին, որ հերոս լինելու համար պարտադիր է փոչոտ ու ոջլոտ լինել, դե վրայի « գոգահետը՝ » գարշահոտությունը չհաշված: Տեղին է հիշել մի այսպիսի հերոսի թևավոր խոսքերը. « Ինձ ժողովուրդը չի ճանաչում, ինձ նորմալ ճանաչում են իմ նեղ շրջապատի մարդիկ, մնացածը գիտեն ինձ մորուքով, գիտեն ջղայնացած, գիտեն քրտնած... Ես արտիստ չեմ, ո՞նց փոխվեմ, ես չեմ կարող համ ճառ ասել, համ զանգ կախել »:

Բանականություն ունեցող մարդը կմտածի այս խոսքերի վրա, ինչպե՞ս կարող է ժողովուրդը իր հերոսին չճանաչել հոտով, չէ որ հերոսը պետք է լինի ժողովրդի սիրելին լինի, պետք է ժողովրդական արժեք լինի, իսկ սպարապետը առավել ևս... Ինչպե՞ս կարելի՞ է ժողովրդականություն վայելող մարդուն ժողովուրդը չճանաչի միայն գարշահոտության շնորհիվ: Չնայած բացառված չի, որ ՀՀՇ ռեմակի բաշիբոգուկները հենց այդպես էլ ճանաչել են իրենց ոջլոտ ու ոճրագործ առաջնորդին՝ Վազգեն Սարգսյանին և պատահական չէ, որ այդ ռեմակի անդամները փորձում են իրենց « գոգահոտ » հանցագործ ընկերոջը հերոսի կարպարով փայթաթել հայ ժողովրդի պարանոցին, ճիշտն ասած իրենց մոտ դա լավ ստացվեց: Ամենահետաքրքիրը այս հաստվածն էր « ես չեմ կարող համ ճառ ասել, համ զանգ կախել » Մոլագարի այս հայտարարությունը բավական էր, որպեսզի հասարակությունը նրա ամորձները կտրի, իսկ ինչպես տեսանք նա հերոսացավ: Աշխարհում չեք գտնի մի ժողովուրդ, որի հերոս պետք է լինի փոչոտ, մորուքով, ջղայնացած ու քրտնած գարշահոտ... Մեզ մոտ հայերիս մոտ է միայն, որ ազգա-

դավները հերոս են իսկ անբարության կոռնիկը առաքինի կույս: Ակամայիս սարսափում ես, որ ժամանակը ու դարաշրջանը անկարող է փոխել մեր ժողովրդին: Մխալի վրա կրկին սխալներ ու ազիտության վրա նորից ազիտություն: Մնում է հույսներս դնենք հրաշքների վրա, ու հավատացեք հրաշքներ լինում են, սակայն պետք է հրաշագործ մարդուն գտնել իր կախարդական փայտիկով:

Գեհենի Առաքել 18.02.2018

Ականջդ կանչի Շմայս, այսօր հիշեցի նրան, երեկ մի նյութ գրեցի Թրաշների հեղափոխության մասին, ու այսօր էլ Շմայսի խոսքը հիշեցի: Դեռ Թավշյա հեղափոխության նախասկզբին՝ Առաքել Մովսեսյանը խորհուրդ էր տալիս, որ Փաշինյանը գնա տուն ու թրաշվի: Փաշինյանը հակադարձեց, բայց դրա մասին չէ խոսքը: Հեղափոխության հաղթանակից հետո՝ Փաշինյանը ժողովրդի խնդրանքով Ճարահատյալ մնաց մագ-մորուքի մեջ ու դարձավ Թավշյա հեղափոխության սիմվոլը՝ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ: Որպես հոգեբան կարող եմ վստահ ասել, որ մորուքն իր սրտով չէ, բայց զոհաբերում է ինքն իրեն, այս դեպքում՝ ուղղակի պետք է խղճալ նրա կնոջը՝ գեղեցկուհի Աննա Հակոբյանին, ով ստիպված է լինելու Փաշինյանի թրաշի զոհը դառնալ, որովհետև թրաշը խանգարում է ներդաշնակ համատեղ ամուսնական կյանքին: Ուղղակի չեմ հասկանում, Նիկոլ Փաշինյանը մենակ թրաշի հարցում՝ պետք է ժողովրդի ձայնին ականջալուր լինի, թե... Ի՞նչ է, քի՞չ հարցեր կան երկրում, մանավանդ, որ կան խելացի մարդիկ, ովքեր կարող են լավ ու արդար խորհուրդներ տալ: Օգնել գտնել ոչ միայն հարցերի պատասխանները, այլև՝ լուծումները առաջարկել: Երբ նայում ես, որ քաղաքակիրթ երկրների ղեկավարները սափրված, գեղեցիկ հարդարված, անուշահոտ օծանելիքով գնում են միջազգային կամ ինչ որ հրավերների ու հանդիպումների ու մեկ էլ՝ տեսնում ես թրաշավոր, սևավորված հայ պատվիրակությանը, սևաքեմ տերտերներին ետևները զցամ գալիս են ու հասկանում ես, որ ոչ թե եկել են բանակցությունների, այլ՝ մեռելի տուն՝ մեռելոց: Հետո խոսել եվրոարկան աժեքներից ու քրիստոնեական հավատքից անիմաստ է դառնում, երբ մահմեդական խավարամիտներից ոչնչով չեք տարբերվում, միայն պակասում է մահապարտի գոտին: Հիմա ամեն մի

նորաթուխ պատգամավոր իր աղվամազ թրաշով, փորձում է հեղափոխականի կերպարի մեջ մտնել, չհաշված՝ իրենց ամպագոռոգո հեղափոխական Դուխով ճառերը: Իսկ այն, որ դրանց ետևից գալիս են փնթի ու անատամ կին երկրպագուների մատյան գունդը, որոնք պատրաստ են Փաշինյանին քննադատողներին հոշոտել ոչ միայն հրապարակներում, այլև՝ համացանցում: Սոց. ցանցերում, յուրուրում և ՖԵՅՍԲՈՒԶՈՒՄ լատինատառ արտահայտվող բաջիներն անտանելի ագրեսիվ են, փողոցային հայհոյանքներով ու իրենց անկառավարելի բնավորությամբ: Ճիշտն ասած՝ սա այն կանանց տեսակն է, որ ժամանակին լֆիկին էր աստվածացնում՝ Հիսուսին անտեսելով: Այդ տեսակն էր, որ Դիպոյի ու Դոդերի ձեռքերն ու ոտքերն է համբուրում, իսկ Տարոն Մարգարյանին, Մանվելին ու Քոչարյանին մեծարելու համար խելքները իրենցը չի: Ու այդ զանգվածն այսօր Փաշինյանին դարձրել է փրկիչ, հարձակվում է բոլորի վրա: Առհասարակ, սա արդեն ավանդույթ դարձած երևույթ է, իսկ այդ պառվաբոզերն էլ՝ ստաժավորված կողմնակիցներ են: Հիմա գոնե Փաշինյանը հասկանա, որ իր վարկանիշը գնալով անկում է ապրում, ու այդ անատամ, կիսաբաց լուսամուտների կանանց վրա հույսը չի կարող դնել, պետք են իսկական բարեփոխումներ: Իսկ առաջին բարեփոխումը սկսելուց առաջ նախ թող սափրվի ու ազատվի այդ մազ մորուքից, որը անհանգստություն է պատճառում ոչ միայն իրեն, այլև իր տիկնոջը՝ Աննային: Հիմա էլ հո ԹՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ հաղթել է, ի՞նչ է, վարչապետ էլ դարձար, չկարողացա՞ր ազատվել հեղափոխական ընդդիմադիրի կերպարից: Ամեն ինչ պետք է քեզից սկսես, եթե ի վիճակի չես փոխել ինքդ քեզ, ապա դժվար թե կարողանաս փոխել շրջապատդ, դա նկատի ունենմ լավ առումով, որովհետև եկող նախագահները կարողացան ո՛չ միայն փչացնել ու կեղտոտել քաղաքական դաշտը, այլև՝ մարդկանց, շրջակա միջավայրը ու անգամ հավատքն ու բարոյականությունը: Մտածե՛ք, պարոն վարչապետ:

Գեհենի Առաքել 19/02/2018

ՍԱՍՈՒՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ ԱՐԺԱՆԱՎԱՅՅԵԼ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳՈՐԾԸ

*«Յուրաքանչյուր տգետ՝ լինի պարոն, թե իշխան,
կարող է և պետք է դասվի խաժամուժի դասին. »: Սերվանտես*

Կարծում եմ ԵԿՄ-ի անողնաշարավորները սրանից բացի լավ ընտրություն չէին կարող անել: Ճիշտ գնահատական տալու համար, պետք է նախ նայել նախասկիզբը: Որպես բժիշկ, կասեմ բժշկական տեսանկյունից: Ամեն ինչ ճշգրիտ կազմակերպելու համար, նախ պետք է ախտորոշել և նոր անցնել բուժման: Պատահական չէ, որ ԵԿՄ-ն ունի հավերժ նախագահ Վազգեն Սարգսյանին, ինչպես գիտենք նրա թեւավոր խոսքերը «Մեր դեմ խաղ չկա» կարգախոսն էր: Իսկ գործելաոճը. « Ընդդիմությունը 100 տոկոս ձայն էլ ստանար, նրան իշխանություն տվող չկար »: Ինչպես տեսնում ենք Վազգեն Սարգսյանի եղբայր Արմեն Սարգսյանը հաստատում էր, որ իրենք երբեք իշխանությունից դուրս չեն եղել՝ 30 տարի բռնազավթած պահել են իշխանությունը: Երեսուն տարի խոշտանգելով ժողովրդին՝ կեղծելով ընտրություններն ու գոփելով թավանելով հավերժացրեցին իրենց տականքին: Ուրախ եմ, Մանվել Գրիգորյանին արժանի փոխարինողը գտնվեց՝ նույն անգրագիտությամբ, նույն հարստությամբ ու անշարժ գույքով, դե իրենց քաղաքապետ զավակներին էլ չհաշված: Այն, որ երկուսն էլ Վազգեն Սարգսյանի ասֆալտամարտիկ մարտական ընկերներից են, դա փաստ է: Բավական է նայեք Մանվելի ու Սասունի հայտարարագրերը՝ անշարժ գույքն ու կարողությունները, իսկույն հասկանում ես, որ նրանք երկուսն էլ մի սանրի կտավ են: Իհարկե չհաշված նրանց թաքցրած անօրինական զենքն ու զինամթերքը՝ որով կարելի էր մի ամբողջ բանակ զինել: Մեկը Էջմիածնում, մյուսն Հրազդանում՝ երկու անկուշտ, որոնք հասցրել են ազատամարտիկների և պետության հաշվին հարստանալ: Երբ Արցախյան պատերազմի հազարավոր հերոսներ ու հաշմանդամներ անգամ պատերազմի մասնակցի մի հասարակ տեղեկանք չունեն: Իսկ սրանք անգամ սեփական լճեր ու հյուրանոցներ ունեն, իրենց զազանանոցներով ու դրյակներով: Հարցն ունենալը չի, այլ ուրանալը: Ինչքանով գիտեմ ազատամարտիկը համարվում է արդարության ու ազատության խորհրդանիշ:

Պատվի ու արժանապատվության մարտիկ, իսկ մենք ի՞նչ ենք տեսնում ԵԿՄ-ում: Սրանք երեսուն տարի միաձայն ընտրում են ազգի կաշին քերթողներին՝ սկզբից Լևոն, Վազգեն, հետո Քոչարյան ու Անդրանիկ Մարգարյան, հետո էլ միաձայն Սերժիկ ու Մանվել: (*Սասուն Միքայելյանը միաձայն ընտրվեց ԵԿՄ վարչություն և նախագահ*) Ահա նրանց միաձայն համաձայնությամբ թավանվեց երկիրը ու կողոպտվեց: Ու հիմա ներկայանալ, որ փոխվել է ԵԿՄ-ում ինչ-որ բան՝ կարծում եմ սխալ կլիներ: Սասուն Միքայելյանը արժանի է ԵԿՄ-ի նախագահի պթոռին, որովհետև տուշոնկա ու խտացրած կաթ թավանելու Էստաֆետը երկրապահները միաձայն տրվել են իրեն: Սպասենք նոր հերոսական էջերի, հիմա էլ Սասունի մասին երգեր կգրեն, ինչպես եղել է նախորդում, հետո էլ Սասունը կկազմակերպի ուխտագնացություններ ու համերգներ դեպի Արցախ: Վարդան Դևրիկյանը ու Գագիկ Շամշյանը նոր ոգևորությամբ կգովերգեն Նորին գերազանցություն՝ Արցախի հերոս Սասուն Միքայելյանին: Երկրապահ Արզիկ Մխիթարյանը հիմա էլ Սասունին կդարձնի Քրմապետ ու Հերոս: Ամեն ինչ առաջվա պես: Ճիշտ կլիներ ԵԿՄ-ի նախագահի պաշտոնը Սասունին տալուց նաև հանձնել Նազիկ Ամիրյանին, մանավանդ Նազիկը արդեն համապատասխան փորձ ունի: Սասունն ու Նազիկը իրար ավելի սազական են, երկուսն էլ Երկրապահ ընտանիքի կարկառուն դեմքերից: Ուղղակի մի բան դժվար է հասկանալ՝ տեսնես երկրապահ ընտանիքի անդամ Սասուն Միքայելյանի ու Լևոն Երանոսյանի եղբայրական հարաբերությունները ինչպե՞ս են: Հիմա պիտի իրար լսաստեն, իրենց մոտ ամեն ինչը պետք է միաձայն համաձայնությամբ լինի, միաձին կոծկեն իրենց հանցանքները, իրար պետք է արդարացնեն, ինչպես նախորդում: Երբ նայում եմ ԵԿՄ համագումարների բոլոր տեսանյութերը, որտեղ անողնաշարավորների մի հսկա բազմություն միաձայն ծափապարույրումներով ողջունում է Յոդունապատված իրենց առաջնորդին ու արդարացնում Ապրիլյան պատերազմի 800 հեկտարի կորուստը, հասկանում ես, որ սրանք Արցախյան ազատամարտի հետ առհասարակ կապ չունեն: Կապ չունեն նաև հայ ժողովրդի հետ: Կապ չունեն Հայ զինվորի հետ: Հավատացեք արժանապատվություն ունեցող ազատամարտիկը երբեք այսքան չէր կարող իջնել: Այնպես չէ, որ ես չեմ ճանաչում ազնիվ ազատամարտիկների, իմ ընկերների մեջ կան այնպիսիները, որոնք վստահում են, որ այդ կառույ-

ցը սկզբից ի վեր եղել է ահաբեկչական կառույց, և ստեղծված է եղել որպես-
սզի արժեգրկի ու վարկաբեկի իսկական ազատամարտիկների անունը: Եվ
ինչպես տեսնում ենք նրանց հաշոդվել է: Երբ այդ հսկա դահլիճի մեջ
չգտնվեց մի իսկական տղամարդ, որը Մանվելի երեսին կթքեր ու կասեր
ճշմարտությունը: Այսքանից հետո էլ անգամ Մանվելի հանցանքներն են
արդարացնում ու երազել նրա հետ սեղան նստել: Հարամ լինի այն մի կտոր
հացը, որ կերել էք դուք, հարամ լինի այն ապրելը որ ապրել էք դուք: Անգամ
չեք ամաչում Եռաբլուրի հերոսների անունից եք խոսում, երբ այդ հերոս-
ների ընտանիքները սովահար արտագաղթում են երկրից: Երբ ձեր ունե-
ցած հարստությունը՝ բենզալցակայանները սրճարաններն ու գիշերային
ակումբներում ու կուտակած հարստությունը փորձում եք քողարկել
նրանցից: ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ արդեն արվել է, և բավականին ժամանակ է
ու հիմա բուժելու ժամանակն է, սակայն մենք սխալների վրա նոր սխալներ
ենք գործում: Ու դա ճակատագրական է լինելու ոչ միայն Փաշինյանի
համար, այլև ժողովրդի: Վերջին այս ԵԿՄ ի տեսագրությունում ակնհայտ
երևում է թե Սասուն Միքայելյանի կողքին՝ հանդիսավոր տեղում ովքեր են
նստած: Արա Կետիկյանը, Արմեն Մխիթարյանը և Դուկաս Ուլիխանյանը:
Արդյոք հասարակությունը տեղյա՞կ է, թե այդ մարդիկ ինչպիսի ահռելի
հարստության տեր են, չնայած դրանց մեծ մասը իրենց հարազատների
անուններով են ձևակերպել: Իրենց սրճարանները, հյուրանոցներն ու
բենզալցակայանները այք են շլացնում, երբ հասարակ հաշմանդամ ազատ-
ամարտիկը անգամ իր դեղերի համար չի կարող վճարել: Ահա այսպես
ԵԿՄ ի հերոսները, որոնք թքած ունեն ոչ միայն ազատամարտիկների վրա,
այլև հայ ժողովրդի: Ու հետաքրքիրն այն էր, որ Սասուն Միքայելյանի
ընտրությանը ներկա էր երկրապահ՝ Գագիկ Ծառուկյանը, Սամվել Ալեք-
սանյանը ու անգամ Ծառուկյանի թիկնապահ երկրապահ՝ Էդուարդ Բար-
այանը, դե նրա հանցանքների մասին կարծում են ավելորդ է հիշել:
ԵԿՄ-ն առհասարակ եղել և մնում է հանցագործների որջ, անկախ նրանից
շատերը համաձայն են թե ոչ, փաստը՝ փաստ է:

Գեհենի Առաքել 07.04.2019

ՈՒՐ Է ԿՈՐԵԼ участковый-ին

Որպես հոգեբան կփորձեմ զերծ մնալ մասնագիտական տեսանկյունից ներկայացնել վարչապետ Նիկոլ Փաշինյանի բնութագիրը, այլ՝ կփորձեմ ներկայացնել որպես հասարակ քաղաքացի: Շատերը, ինչպես տեսնում ենք համացանցում, Փաշինյանին ոչ միայն սիրում են, այլև՝ կուրորեն պաշտում, ու անգամ պատրաստ են մեռնել նրա համար: Առհասարակ, այս երևույթը հայկական իրականության մեջ արդեն ավանդույթ դարձած պատկեր է: Ժամանակին էլ՝ 90-ականներին Լևոն Տեր-Պետրոսյանի համար էին կոկորդ պատռում, հետո՝ Վանո Սիրադեղյանի, Ռոբերտ Քոչարյանի, Գագիկ Ծառուկյանի, ԼՖիկ Սամոյի, Մամվել Գրիգորյանի և անգամ քրեական Պիպոյի ու Պոլոյի համար: Այնպես որ, Փաշինյանը բացառություն չէ, մանավանդ, որ նրան համարում են Թավշյա հեղափոխության Լենին պապին: Փաշինյանասեր հասարակությունը, առհասարակ, սխալ է այստեղ օգտագործել « Հասարակություն » բառը, որովհետև հասարակությունը սովորաբար ունենում է հասարակական միտք ու գործելաոճ, իսկ այստեղ տեսնում ենք կույր անհատամոլների մի զանգված, որոնց համար էական չէ միտքն ու գործը, կարևորը՝ լոզունգն ու ճառն են, խոստումները: Սակայն Փաշինյանին մեղադրել Փաշինյանամոլության մեջ, կարծում եմ սխալ է, սակայն նա մանիպուլյացիա անելով՝ ուղղորդում է նրանց դեպի երկպառակտում: Հիմա հիմնական թեմային անցնենք: Նիկոլ Փաշինյանի ու Ռոբերտ Քոչարյանի միջև տարբերությունը շատ չնչին է, մանավանդ՝ գործով ու խոսքով իրենք չեն տարբերվում իրարից: Շատերը կհիշեն Հոկտեմբերի 27-ի դեպքերի ժամանակ Ռոբերտ Քոչարյանի արտասանած թևավոր խոսքերն ու խոստումները. « Որ Հոկտեմբերի 27-ի գործը կարող է անգամ լավ **участковый-ին** բացահայտել »: Սակայն գիտենք, որ Ռոբերտ Քոչարյանի ժամանակ այդպես էլ **участковый** չգտնվեց, կամ էլ՝ չփորձեցին գտնել, ինչպես հարկն է: Հիմա ինչպես տեսնում ենք, Նիկոլ Փաշինյանը ընկած Ռոբերտ Քոչարյանի ասած **участковый-ին** է փնտրում: Միայն ոչ թե Հոկտեմբերի 27-ը բացահայտելու համար, այլ՝ հանցագործությունները, պետական թալանն ու կողոպուտը «բացահայտելու» համար: Երևի մի քանի տասնամյակ հետո կգտնվի այդքան սպասված **участковый-ին**: Երբ Հայաստանի ցանկացած քաղաքացի գիտի, թե ովքեր են թալանել երկրի

հարստությունը, երկրի ժողովրդին ու անգամ ընդերքը: Մինչ վարչապետ Փաշինյանը ԱԱԾ-ին կհանձնարարի գտնեն այդքան սպասված *участков*-ին, որպեսզի գործերը բացահայտեն, այդ ընթացքում Նազիկ Ամիրյանը դատարանին կներկայացնի, որ իրենց ամառանոցում հայտնաբերված զենքն ու զինամթերքը օրինական է, իսկ փոքրիկների գրած նամակերը եղել են Պատանի եռասերունդ երկրապահների շարադրություններն ու նման բաներ: Չենք զարմանա, որ Նազիկը տեղեկանք էլ բերի, որ Մանվել Գրիգորյանը թունավոր հղիություն է տանում, ու պատանի երկրապահները առանց Մանվելի որբացել են և նրանց կուրծք տվող չկա: Մինչդեռ Հայաստանի անգամ կրծքի երեխան գիտի, թե որտեղից և ում միջոցով է առաջացել իր 4000 եվրո պարտքը: Գիտի Հայաստանի արտաքին պարտքի պատմություններն իր բոլոր մանրամասնություններով, գիտի անուն առ անուն: Հայաստանի ցանկացած քաղաքացի, անգամ սփյուռքահայ դեմքերով, գիտեն գողերին, ավագակներին ու հանցագործներին: Դժվար է, երբ տեսնում ես, որ էլը ուրիշներին է ավանակի տեղ դնում: Երբ ընկած՝ հանցագործ են փնտրում հանդում, իսկ հանցագործները օտար երկրներում ու անգամ իր քթի տակ՝ բարեգործ ու հեղափոխական են ձևանում: Երբ քեռակիմների նվիրատվություններն ու օժիտները դառնում են օրինական, երբ թալանչին դառնում է խոշոր սեփականատեր, իսկ հանցագործ զենբայն ու ոստիկանը վերափոխվում են վարդագույն երազանքների ասպետների, հասկանում ես, որ այստեղ ամեն ինչ Թավիշով պատված մի խաբկանք է, սուտ երդումներ ու խոստումներ, աղվամազ ու կանացի մատիկներով թրաշամանուկներ: Ու երանի ես տալիս նախորդին, երևի շատերը ծանոթ են Մխիթար Գոշի « Իշխանը և այրի կինը » առակին: Ինչպես ասում են՝ մեր խելքից է, որ անկուշտ իշխանավորները հաջորդում են մեկը մյուսին: Ծիշտն ասած, պետք է Ազգովի աղոթենք, որ այդքան սպասված *участков*-ին հայտնվի ու պարզի, թե մեր դժբախտությունների պատճառն ու մեղավորներն ովքեր են: Անընդհատ շահարկելով « Հեղափոխություն » բառը, ցանկանում ենք քողարկել այն, ինչ տեղի է ունենում իրականում: Պարզվում է, որ Հակահեղափոխականները նույն հեղափոխականներն են և հակառակը: Իսկ այդ դեպքում ժողովուրդն ո՞վ է կամ ովքե՞ր են, երևի սա էլ պետք է *участков*-ին բացահայտի:

Գեհենի Առաքել 05/05/2019

ՆԱՄԱԿ ՀՌՈՄԻ ՊԸՊ՝ ՖՐԱՆՑԻՍԿՈՍԻՆ

Հարգելի Հռոմի Պապ Ֆրանցիսկոս, այս նամակը գրում եմ՝ ճանաչելով Ձեր և Ձեր կենսագրությունը: Հարգելի Սուրբ Օծություն, մոտակա օրերը Դուք նախատեսել եք այցելել Հայաստան, սակայն չգիտեմ, թե ինչքանով եք իրագրելված Հայաստանից: Այնուամենայնիվ, որպես իմ երկրի քաղաքացի, ինձ պարտավորված եմ զգում Ձեզ տեղեկացնել իմ Հայրենիքում կատարվող իրադարձությունների մասին: Առաջին հերթին տեղեկացնեմ, որ Վենետիկում գտնվող Հայաստանի դեսպանը հանդիսանում է Հայաստանի իշխանությունը բռնազավթած Սերժ Սարգսյանի հարազատ փեսան՝ Միքայել Մինասյանը Հայաստանում, որի տված տեղեկությունները Հայաստանի Հանրապետության մասին շատ հակասական է իրականությունից, քանի որ Հայաստանում արդեն քսան տարի Նեպոտիզմի սկզբունքով է առաջնորդվում: Եվ բռնատիրական ողջ մեքենան գործում է խնամի-բարեկամ սկզբունքով: Քաղաքական նաև քիզնես կոչվածը գրեթե ընդհանուր է, այսինքն փաստացի մեկ տարբեր բուրգի անկյունաքարերն են: Չեմ փորձի երկար գրել, որովհետև այն ավելի երկար ու սարսափելի է քան կարելի է պատկերացնել: Այն ինչ Հայաստանի Հանրապետությունում տիրող անարխիան ավելի վաղուց է սկսել իր սև գործը՝ արդեն 25 տարի է ժողովուրդը հալածվում է և խոշտանգվում իշխանությունների կողմից: Ոտնահարվում են անգամ հաշվանդամների, հղի կանանց ու մանուկների իրավունքները: Դա արվում է ոչ միայն ՀՀ իշխանությունների կողմից, այլև Հայ Առաքելական եկեղեցու՝ կաթողիկոս Գարեգին Բ-ի լուռ համաձայնությամբ: Ավելի ճիշտ կասեի նրա օրհնությամբ: Քանի որ եկեղեցին ու հոգևորականները հեռացել են ժողովրդից ու Աստծո պատվիրանից, մաս կազմելով բռնակալ համակարգի հետ, կողոպտում ու ոտնահարում են ժողովրդին: Հարգելի Ֆրանցիսկոս պապ, Ձեր այցելությունը նշանակալի է մեր ժողովրդի համար, քանի որ Դուք ոչ միայն այցելում եք Հայաստան, այլև այցելում այնտեղ՝ որտեղով անցնում է Դժոխքի ու կյանքի սահմանագիծը: Երկիր, որտեղ ժողովուրդին խաչում են ամեն օր, խաչում են հենց այն Փարիսեցիներն ու Պիղատոսներն, որոնք Հիսուսին գամեցին խաչափայտին: Այնտեղ է գրտնվում Չարիքի իշխանությունը, որտեղ սուտը ու կեղծիքը դարձել են պետական գործելաճ, որտեղ մարդասպանները խրախուսվում են, իսկ

բարին հալածվում: Այսօր ինչպես և քսանհինգ տարի առաջ իշխանությունների կողմից հալածվելում են լրագրողներն ու պատերազմի վետերանները, ձերբակալվում են քաղաքական ակտիվիստներն ու ազատամիտ մարդիկ: Իզուր չէր, որ Անգլիացի գրող Ջորջ Օուրելին իր « 1984 » գրքում ներկայացրել էր Չարիքի Իշխանության ողջ պատկերը, խոշտանգումները ու կտտանքները: Հայաստանում նույն վիճակն է,ինչպես ներկայացված է Օուրելի գրքում: Խաբեությանը երկարաձգում են իրենց իշխանությունը, իսկ Քաղաքական հալածյալներին դարձնելով քավության նոխազ, քրեական գործերի անվան տակ խոշտանգում բանտերում ու կառավարաններում: Ահա այն մեկ կաթիլը, ողջ օվկիանոսից, որը ներկայացրեցի այս նամակի մեջ: Հուսով եմ Դուք չեք սխալվի ճիշտ որոշում կայացնել, զսպելով անարխիան ու չարիքը: Ես իմ երկրի քաղաքացին եմ, ինչպես միլիոնավոր մարդիկ, որոնք ամեն օր հալածվում են այդ բռնակալ ռեժիմի կողմից: Ես Ձեզանից օգնություն չեմ խնդրում, այլ միայն գնահատական ու ազնիվ առաքելական մարդու խոսք: Օրհնություն է հարկավոր և Ձեր Ճշմարիտ խոսքը: Աստվածահաճո մարդու օրհնությունը կարող է դառնալ լույս խավարում տանջվող հայ ժողովրդի համար:

Հարգանքներով՝ Գեհենի Առաքել 20/06/2016

ԳԻՆԵՏՆԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

« Գինետնային հայրենասիրությունը, որ բավականին դավանողներ ունի մեր մեջ, այնքան էլ հեռու չէ անհայրենասիրությունից»: Գարեգին Նժդեհ Հարգելի Հայաստանի Հանրապետության հպարտ քաղաքացիներ, ի՞նչ եք կարծում ժամանակը չէ՞ խոստովանել, որ շեղվել ենք ո՛չ միայն հեղափոխական ուղուց, այլև բանականության սահմաններից: Եթե Հայկական Բանակը սպանդանոց է հիշեցնում ու այդ մասին խոսելը, կրկին մնում է արգելված թեմա, այդ դեպքում ինչպե՞ս ենք ցանկանում լուծել պետության անվտանգության հարցը: Գիտեք, մեր բախտը բերել է, որ աղբբեջանցիները մեզանից ավելի հիմար են, այլապես նրանք ո՛չ միայն կլողանան Սևանում, այլև կթեյեին Երևանում:

Եթե մի երկրում պետական դավաճանները խրախուսվում են պետության ու ժողովրդի կողմից, դա արդեն շատ վտանգավոր է հետագա՝ ոչ միայն սերունդներին դաստիարակելու համար, այլև ազգային գոյի: Քանի դեռ պետության ղեկին դասալիքներն են, համասեռամուկները, փնթիները, խաղամուկներն ու օլիգարխները, ապա հավատացեք, որ ապագայում Դեր Չորը կրկնվելու է: Արդյո՞ք պետական պաշտոնյանները, սկսած նախագահից վերջացրած բանակի սպաներն ու բժիշկները, պատասխանատվության ենթարկվե՞լ են իրենց երդումը դրժելու կամ խախտելու համար: Եթե պետության նախագահը սահմանադրության ու Վեհամոր ավետարանի վրա կեղծ երդում է տալիս, որի վրա երդվում է, « հարգել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ապահովել Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը՝ ի փառս Հայաստանի Հանրապետության և ի բարօրություն Հայաստանի Հանրապետության ժողովրդի »: Եթե մի բանակի սպաներն ու գեներալները երդվում են ու ո՛չ միայն դրժում երդումը, այլև ոտնատակ տալիս սպայի պատիվը, եթե մի երկրում բժիշկը երդում է տալիս ոչ թե հիպոկրատին, այլ լուցիֆերին... Ի՞նչ էք կարծում, արդյո՞ք ձևականությունն չէ ու կեղծիք, ինքներս մեզ խաբում ենք, թե հարուստ մշակույթ ունեցող ազգ ենք, մշակույթ սիրող ազգ ենք, բայց մշակութային արժեքներն են ոչնչացնում, ներառյալ փակում մշակույթի նախարարությունը, դա դեռ քիչ է, մակունցների մատին փաթթածն դարձնում: Հերթը կգա կրթությանն ու գյուղատնտեսությանը: Մոլագարների ու համասեռամուկների պարից հետո հերթը կգա անասնազոմերին, որոնք դարձնելու ենք կայանատեղի կամ խաղատուն... Պատահական չէ, որ Ներքին գործերը դարձրեցինք ոստիկանություն, իսկ ԱԱԾ- ն էլ տիկնիկային թատրոն: Ամեն մեկը երկրորդ հայրենասեր է, ազնիվ ու բարեպաշտ, սակայն չգիտես ինչու այդքան դրականի մեջ ունենք մի քոսոտ երկիր: Ազգային ՀՀ ԳԱԱ սկադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը չէր սխալվել, որովհետև մեր բոլորի ջանքերի ու անտարբերության արդյունքում ունեցանք այս երկիրը: Երկիր, որտեղ թալանչին կոչվեց խոշոր սեփականատեր ու բարերար, որտեղ գողն ու ավազակը դարձան խոշոր հարկատու: Ի՞նչ էք կարծում, կգա՞ մի օր՝ Ավգյան ախոռները մաքրելու, թե՞ շարունակելու ենք աղբի մեջ ապրել, կոամետիկ դիմահարդարումով թաքցնել համաճարակի օջախը: Օջախ... Հայերիս

համար սուրբ խոսք է, ամեն տեղ գավաթ ենք բարձրացնում սուրբ օջախի կենացը, սակայն հարամում ենք այն մի կտոր հացը, հարամում ենք աղն ու հացը, հարամում ենք օջախն ու սրբությունները: Երբ խոսք է գնում հայրենասիրությունից՝ կուրծք ծեծողների պակաս չի լինում, դաշնակ ու բարգավաճ, «ՀՇ ու կոնգրես... Քայլողներ ու պագողներ... Չեք տեսնու՛մ, որ ինչքան խաղում ենք կղկղանքի հետ, այնքան հոտը ավելի « բուրումնավետ » է դառնում: Արցախի հարց ենք ուզում լուծել, երբ այդ հարցը արդեն լուծվել է վաղուց՝ մեր հայրողիների արյան գնով: Փորձում ենք երկիր կառուցել, երբ այն քանդելու ճանապարհով ենք գնում, տգիտությունը ուժ է, ինչպես ասում էր Ջորջ Օրուելին... Գիտեք, թե ինչու՞ մեր երկուսը՝ երեք չի դառնում, որովհետև նախ պետք է ունեցած երկուսի արժեքը իմանալ, նախ պետք է սեփական արժանապատվության գինը իմանալ, սեփական խոսքի ու բարոյականության: Երդումը տալիս ենք, ու տեղն եկած տեղը, բռնաբարում այդ երդումը... Երկրապահները երդում տվեցին Վազգենին ու Մանվելին, բայց ոչ թե հայրենիքին ու ժողովրդին... Նախագահները երդում տվեցին մամոնային, ոչ թե ժողովրդին ու պետությանը: Հոգևորականները երդում տվեցին ո՛չ թե առ Աստված, այլ առ սատանա... Շեքսպիրը մի .իմաստուն խոսք ունի. « Դժոխքը դատարկվել է... Բոլոր հրեշներն այստեղ են... »:

Գեհեհի Առաքել 21.02.2020թ.

ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ (Ինքնագիտակցություն)

« Ծշնարիտն էն է, որ մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությանը »: Հովհաննես Թումանյան

Բազմիցս լուսաբանվել է հայ ժողովրդի հոգեբանական առանձնահատկությունների մասին, որոնք պատճառ են դարձել ազգային աղետների ու դժբախտությունների: Ինչու՞մն է բանը, որ չենք կարողանում ձերբազատվել գենետիկական այդ ժառանգությունից կամ ենթամշակույթից: Շատ ազգեր ու ժողովուրդներ վաղուց կարողացել են ինքնաքննադատությունը ընդունել որպես ախտորոշման միջոց, կարողացել են վերագտնել ոչ միայն

իրենց, այլև պատմության սխալները, փորձել են դասեր քաղել նրանից, փորձել են չկրկնել իրենց պապերի սխալները: Սակայն հայերը չկարողացան այդպես էլ պատմության չարաբաստիկ անիվը պտտել իրեն օգտակար ուղղությամբ: Կորոնավիրուսի այս հաղթարշավը հերթական փորձությունն էր մարդկության ու ժողովրդի առջև: Ու, ինչպես երևում է, ազգերն ու ժողովուրդները իրենց որակական հատկությունները բացահայտում են ու ցուցադրում այսպիսի աղետների ժամանակ: Մարդկային օրգանիզմը կատարյալ է ու Արարիչը այն օժտել է յուրահատուկ առանձնահատկություններով, մնում է միայն բացահայտել այն: Որպես հոգեբան կարող եմ ասել, որ մենք՝ հայերս շատ սնահավատ ենք ոչ միայն մեր հանդեպ, այլև մեր կարողությունների, մեր ժողովրդի տաղանդի ու մտքի հանդեպ: Բերեմ մի քանի օրինակ, պարզեցնելու համար խոսքս: Եթե մարդը հիվանդանում է, ապա նրա ջերմությունը բարձրանում է, մարդու օրգանիզմում սկսում է ոչ միայն պաշտպանվել, այլև գրոհել: Իմունային համակարգը հակամարմնի կամ հակաձմնի հայտնաբերուց հետո ամիջապես հակագրոհի է անցնում: Իմունային համակարգ, օրգանների, հյուսվածքների և բջիջների մասնագիտացված համակարգ է, որը պաշտպանում է օրգանիզմը գենետիկորեն օտար ինֆորմացիա կրող նյութերից և կենդանի մարմիններից, այդ թվում միկրոօրգանիզմներից, նրանց կողմից արտադրվող թույներից, օտար բջիջներից այդ թվում նաև գենետիկորեն փոփոխված սեփական բջիջներից: Իմուն համակարգի անբավարարությունները աղետաբեր հետևանքներ է առաջացնում մարդու մոտ: Որպեսզի բժշկական տերմինների մեջ չխորանամ, շարունակեմ միտքս: Մենք՝ հայերս ջերմության դեպքում փորձում ենք դեղահաբերով կամ ինքնաբուժությամբ իջեցնել ջերմությունը, չիմանալով մարմնի ինքնադիմադրողականության իմունիտետի մասին: Ինչպես ասացի ջերմող մարմինը ավելի լավ գիտի պայքարել հակամարմինների դեմ, քան մենք: Ինքնաբուժությունը եղել է մեր ժողովրդի ամենամեծ թշնամիներից մեկը, երբ բժշկին դիմելու փոխարեն, փորձում ենք տնային պայմաններում, ավանդական եղանակով բուժել վտանգավոր հիվանդությունները: Միտորով կամ հոգնայով են փորձում ձերբազատվել վարակակիր բացիլներից: Շատերը կհիշեն Հովհաննես Թումանյանի « Նեսոյի քարաբաղնիսը » պատմությունը: Հավատացեք, բժիշկը նրա համար է, որպեսզի ախտորոշի ու բուժի, ոչ թե անիմաստ խոր-

հուրդներով վնասի ու մահվան դատապարտի հիվանդին: Հայոց ցեղասպանությունը համարվում է մեր ժողովրդի ամենամեծ դժբախտություններից մեկը, սակայն մենք կարողացա՞նք ճիշտ ախտորոշել այդ դժբախտության պատճառները: Ոչ իհարկե, չկարողացանք... Մեր ժողովրդի մեջ եղել են հզոր անհատականություններ, որոնք բարձրաձայնել են այդ ամենի մասին, սակայն նրանց խոսքը մնաց որպես մոռացված գրություն: « Ազգերը անմահական չեն... Եթե մի ազգ մեռնի, պատճառը իր իսկ ներսից է »: Հովհաննես Բազազունի: « Ապագան վտանգված ժողովուրդների վերջին խաղաթուղթը - վերադաստիարակությունն է: Չկա՝ ճշմարտություն, և դրա համար էլ մեր ժողովուրդի մի մասը Մետերլինգյան կույրերի նման մոլորված է « տգիտության անտառում »: Գարեգին Նժդեհ Դեռ սուլթան Համիդի ժամանակներից հայերը գիտեին, որ իրենք թուրքերի համար չարորակ ուռուցքի տպավորություն են թողնում, և թուրքերը ամեն ինչ անելու էին, որպեսզի ազատվեն հայերից: Սակայն հայությունը այդպես էլ չհասկացավ, որ ինքնապաշտպանությունը փրկվելու միակ միջոցն էր, չհասկացավ, որ ապրելու համար այս արևի տակ, պետք է վաստակել իրավունքը, որ թղթե շերեփով երբեք չեք կարող ճանապարհ բացել սերունդների համար: Իմ ձեռագրաբան բարեկամներից մեկը խելամիտ գնահատական էր տվել Հայոց ցեղասպանությանը, նրա ասելով հայերի մոտ պետք է, որ ինքնապահպանման բնագոր պետք է որ աշխատեր, սակայն ինչպես ցույց է տալիս հայաթափցված Արևմտյան Հայաստանը, այդպես չեղավ: Հավատացեք հոգեձեռագրաբանությունը եզակի մասնագիտություն է Հայաստանում և իմ բարեկամը իսկապես ճշմարիտ է, նրա մյուս խոսքը հետևյալն է, որ « Մենք՝ հայերս, գենոցիդը սարքել ենք բիզնես... Ու դա Տգիտության ու տմարդության, մարդկային էժանության ամենավերջին աստիճանն է »: Չեմ կարող չհամաձայնվել նրա կարծիքին: Ցեղասպանության ժամանակ, երբ թուրքերը հերթական հայկական գյուղն էին սրի քաշում, հարևան գյուղի հայությունը աղ ու հացով էր դիմավորում թուրք փաշաներին, չհասկանալով, որ իրենց կոտորվելու հերթը շուտով գալու է: Երկարաձգելու համար կյանքը, հայերը պատրաստ են վճարել ցանկացած գին, անգամ կյանքով, սակայն ապրելու համար, չգնացին ինքնագոհաբերության, չգնացին պայքարելով: Հերոսապատումները հայոց պատմության մեջ եղել են հերոսների շնորհիվ, ոչ թե ժողովրդի կամ ամբոխի: Ցավոք սրտի, մենք

ամբոխավարությունը ընդունել ենք որպես ազգային արժեք: Պատահական չէր, որ վարչապետ Փաշինյանը կորոնավիրուսի դեմ պայքարում նշանակել է առողջապահության նախարար Արսեն Թորոսյանին, որովհետև նրա առաքելությունն է ոչնչացնել ոչ միայն հայի մտավոր գիտելիքները, այլև երկիրը դարձնել փորձագիտական լաբորատորիա, որտեղ մկներին կփոխարինեն հայ մանուկները:

Այստեղ է, որ պետք է հարց առաջանա, հիմա մենք քաղաքակիրթ մարդկության մաս ենք, թե՞... Կորոնավիրուսից ավելի մեծ աղետների վրա աչք ենք փակում, հարյուր հազար հեկտարներով պոչամբարներ ու պոչանքներ, որոնք թունավորելու են եկող սերունդներին, որոնք անորակ ու անմշակ են դարձնելու ոչ միայն շրջակա միջավայրը, այլև հողը, ջուրը, օդը և վերջապես առողջությունը: Հիմա տուն տունիկ խաղալու ժամանակները չեն սխտորով ու հոգնայով բուժելու ժամանակները վաղուց անցել են: Փաշինյանը կարծես չարորակ ուռուցք է դարձել ժողովրդի գլխին: Ավելի ճիշտ կլիներ ասել, որ ՉԱՐՈՐԱԿ ՈՒՌՈՒՑՔԸ դա Լևոն Տեր-Պետրոսյանն էր ու Վազգենը, իսկ Քոչարյանը, Սերժը ու Փաշինյանը նրանց մետաստազներն էին, որոնք աճեցին ու ճյուղավորվեցին՝ խնամի, բարեկամ, քավոր ու սանիկ: Ահա այն մեծ աղետը, որը հայ ժողովրդի գլխին է: Երբեք չկարողացանք հին ցավից ազատվել, որովհետև նորերը այն մոռացնելու հնարավորություն չտվեցինք, երբեք չկարողացանք գնահատական տալ անցյալը, չկարողացանք անվախ նայել ճշմարտության աչքերին: Երկիրը կառուցում են ամուր ու առողջ զաղափարներով մարդկանց շնորհիվ, ոչ թե հիվանդ, դասալիք մոլագարների միջոցով: Կորոնավիրուսի հետևանքները աղետաբեր չէ հայ ժողովրդի համար, որովհետև իրենք տեսել են 90 ականների ցուրտ ու մույժ տարիները, տեսել են թիկունքից դավադիրներին, տեսել են Գողգոթայի տառապանքները: Չարիքը, որի վրա աչք ենք փակում, հազարապատիկ անգամ աղետաբեր է, քան կորոնավիրուսն է, դա գիտակցության պակասն է, դա ամբոխավարությունն է, դա անհատապաշտությունն է ու կուռքամոլությունը:

Գեհենի Առաքել 03.03.2020թ.

ՆՈՐԸ՝ ՀՆԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ Է

« Ուլ վերահսկում է անցյալը, վերահսկում է ապագան. ուլ վերահսկում է ներկան, վերահսկում է անցյալը »: Ջորջ Օրուելի

Առհասարակ, ես համարում եմ, որ հայ ժողովրդի պատմությունը, ոչ թե միայն հասարակ գիրք է, այլ Ձեռնարկ, որպես ուղեցույց, քանի որ պատմությունից շատ բան կարելի է սովորել առաջ գնալու համար, երկիր ու պետություն կառուցելու համար, հասարակություն կերտելու համար: Բայց ինչպես կասեին մեր մեծերը. « Հայոց պատմությունը մեզ մի բան է սովորեցնում, այն որ հայը իր պատմությունից բնավ չի սովորում »: Առհասարակ ինչպես կասեր մեծ իմաստունը. « Անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն՝ անմոլոր գնալու համար »: (Հովհաննես Թումանյան) Եթե համարձակություն ունենանք ու նայենք պատմությանը, ապա ոչ զինված աչքով, կտեսնենք, որ հայոց երկրին արտաքին թշնամիները այնքան մեծ վնաս չեն տվել, որքան ներքին տականքը: Պետք չէ թշնամիներ փնտրել հեռուներում, քանի որ իսկական թշնամին մեր կողքին է, նույնիսկ մեր մեջ, սակայն մեզ ձեռնտու չէ տեսնել նրանց, որովհետև այդպես հեշտ է ապրել՝ մտավոր կույր ու տգետ: Կարծում եմ շատերն են տեղյակ, որ Գերմանիան գրավում Եվրոպայի լոկոմոտիվի դերը, որովհետև նա համարձակություն ունեցավ նայել իր պատմությանը, համարձակություն ունեցավ իր երկրին աղետ բերած ոճրագործների հանցանքները ոչ միայն դատապարտել, այլև փոխհատուցել այդ ոճիրների զոհերին: Իսկ մենք ինչ արեցինք, երբեք համարձակություն չունեցանք ասել անգամ ճշմարտությունը, ցուրտ ու մուրթ տարիների մասին, երկիրը թալանածներին ու կողոպտածների մասին: 90 ականների պայքարի դուրս ելած հերոսների թիկունքից խփողներին ոչ միայն հերոսացրեցինք, այլև կուռք դարձրեցինք: Երբ այսօր այդ նույն ոճրագործների ժառանգները իշխանական բուրգի կատարին են, շարունակում են ոչ միայն իրենց գործած հանցանքները քողարկել, այլև նորերը գործել: Այսօր Նիկոլ Փաշինյանը լուր է իր կնքահոր հանցանքների մասին, այսօր նա այցելում է Վազգեն Սարգսյանի գերեզմանին, նրա հանցակից եղբայրների հետ սեղան է նստում, կոծկելով նրանց հանցանք-

ները: Մի՞թե հասարակությունը չկարողացավ կայանալ, որպեսզի հասկանա այս երկու տարվա մեջ, թե իր թշնամիները որտեղ են ապաստանած: Փաշինյանը կոկորդ է պատռում, թե Ռոբերտ Քոչարյանը սահմանադրական կարգն է տապալել, մոռանալով, որ նույն սահմանադրական կարգը 1996-ին տապալել է իր կնքահայրը՝ Լևոնը. Վազգենը, Վանոն... Նիկոլ Փաշինյանը Հրայր Թովմասյանին է մեղադրում, սակայն մոռանալով, որ Սահմանադրական Դատարանի առաջին հանցագործը Գագիկ Հարությունյանն է, որը երեսուն տարի կեղծեց ընտրության արդյունքները, երեսուն տարի տգրուկի պես ծծեց ժողովրդի արյունը: Աղվան Հովսեփյան, Գագիկ Ջհանգիրյան, Գևորգ Կոստանյան, Արփինե Հովհաննիսյան... Ահա այն փոքրիկ խումբը, որի ետևում հոշոտողների ու թալանչիների հսկա բանակներ են: Երբ աչքիդ գերանը անտեսանելի է դառնում, ապա ուրիշի աչքի փշի մասին խոսելը անբարոյականություն է: Փաշինյանի ԱՅՈ քարոզարշավին մասնակցում են բոլոր ժամանակների հանցագործներն ու թալանչիները, արյունածուծներն ու կողոպտիչները: Աղետալին այն է, որ մինչև հիմա չեն հասկանում, որ 7 հանցագործին գործից հեռացնելու համար, հանրաքվե չեն անում, որովհետև տիկնիկային ներկայացում սարքելը իրենց արյան մեջ է, ժամանակին էլ Լևոն Տեր-Պետրոսյանն էր այդպիսի ներկայացումներ բեմադրում: Գիտեք, երբեմն համացանցում տեսնում եմ մեր քաղաքացիների անտարբերությունը քաղաքական կյանքի վերաբերյալ, շատերը արդարանում են, թե իրենք քաղաքականությամբ չեն զբաղվում, որ իրենց հետաքրքիր չէ, թե կառավարությունը ինչ որոշումներ է կայացնում: Չեմ փորձի համոզել, թե դա սխալ է, որովհետև իրենք են որոշում սխալի ու ճշտի տարբերությունը: Սակայն տեղին է հիշեցնել հայոց պատմության մասին: Դեռ առաջին համաշխարհայինի ժամանակ՝ երբ թուրքերը ծրագրավորել էին հայերի կոտորածը, մեր հայրենակիցներից շատերը արդարանում էին, թե իրենք հող մշակող են ու քաղաքականությունը իրենց չի հետաքրքրում, շատերն էլ արդարանում էին, թե իրենք մշակույթի ու արվեստի գործիչներ են, բայց դե պետք է խոստովանենք, որ թուրքի յաթաղանը տարբերությունը չտեսավ քաղաքականությամբ չբաղվող մտավորականի ու հոգևորականի միջև: Նույնիսկ այդ գործիչներից շատերը ոչ միայն համբուրեցին թուրքի յաթաղանը, այլև սրեցին այն, նույնիսկ հովանավորեցին ու վարձատրեցին: Անբարոյականություն է խոսել

թուրքերի ոճիրներից, երբ մենք մեր ոճրագործներին դարձնում ենք ազգային հերոս, անբարոյականություն է խոսել կորցրած 800 հեկտարների, երբ մեր հրեշների կողմից զավթված հեկտարները դառնում են հանքեր ու պոչամբարներ, չհաշված դոլակների ու առանձնատների շրջակա տարածքները: Ինչպես ասում է հայ ժողովուրդը՝ մի ծաղկով գարուն չի գա, ոչ հարզելիներս, ես համաձայն չեմ այդ մտքին, եթե այդ ծաղիկը Նիկոլ Փաշինյանն է, ապա վստահեցնում եմ հայոց արշալույսի գարունը չենք տեսնի երբեք, ո՛չ այսօր, ոչ էլ հինգ տարի հետո... Ավգյան ախոռների պատմությունը հենց այնպես չէր ասված, քանի որ այդ բանաձևով գործել են շատ ազգեր ու ժողովուրդներ, ու արդյունքը եղել է գոհացուցիչ: Արբի, կեղտի վրա անգամ հավաքում չեն կառուցում, իսկ մենք ցանկանում ենք երկիր ու պետություն կառուցել: Չարմանալին այն է, որ որ վարչապետ Նիկոլը ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար նշանակել է Հակոբ Արշակյանին: Պատկերացնո՞ւմ եք, մանկամիտ երեխային վստահել երկրի ռազմարդյունաբերական ոլորտը, որը ոչ միայն պետության անվտանգության երաշխիքն է, այլև սահմանին կանգնած զինվորի անվտանգությունը: Ինչ եք կարծում դա ահաբեկչություն չէ՞ մեր երկիր հանդեպ, մեր, դա հանցանք չէ՞ նորաթուխ անկուշտ մանուկին դնել այնպիսի պատասխանատու պաշտոնին: Մնացած թրաշամանուկների մասին ավելորդ է անգամ խոսել: Իսկապես անհավատալի է պատկերացնել, որ վարչապետ Փաշինյանը այսքան կարճ ժամանակում ձեռք կրերի ոչ միայն հասարակության հակակրանքը, այլև զգվանքը: Նա արդեն սպառել է իրեն, երկարաձգել իր իշխանությունը ստի ու կեղծիքի միջոցով, կարծում եմ, խելամիտ քայլ չէ, քանի որ ռևանշիստները ամեն ինչ անելու են, որպեսզի վերարտադրվեն ու ձևավորվեն նոր դեմքերով ու մարտավարությամբ: Ուստի, Փաշինյանը պետք է համարձակություն ունենա ու հրաժարական ներկայացնելուց առաջ ազատ արձակի Ազգային ժողովը ու կառավարությունը: Սկզբնական փուլում, կարծում եմ, սա հնարավորություն կտա Հանրապետության առողջ ուժերին ձևավորվել ու մասնակցել ԱԺ ընտրություններին:

Գեհենի Առաքել 11.03.2020թ.

Նամակ վարչապետ Նիկոլ Փաշինյանին

Բարև՝ Ձեզ, վարչապետ Փաշինյան, որոշեցի այս նամակս Ձեզ գրել ու վստահ եմ, որ հասնելու է Ձեզ, սակայն վստահ չեմ, որ տեղ կհասնի ասածս: Դուք այն մարդը չեք, որի նկատմամբ ինչ-որ հոգեբանի նամակ կարողանա ներգործություն ունենալ, սակայն Ձեր շրջապատի խելամիտ մարդիկ գոնե համեմատություններ կարող են անել:

Չկարծեք, թե այս նամակս առաջինն է, դեռ մեկ տարի առաջ՝ Ձեր թավշյա հեղափոխության ժամանակ նամակ գրեցի՝ առաջարկելով ոչ միայն իմ ու իմ բարեկամների օգնությունը, այլև նրանց աջակցությունը պետության կառուցման գործում, սակայն նախորդ նամակս մնաց անարձագանք, մնաց անպատասխան նաև. իմ ընդհանրիկ հանդիպման առաջարկը Ձեզ հետ: Դուք անտեսեցիք ու անցաք առաջ: Հիմա կմտածեք, թե ինչու՞ եմ գրել Ձեր թավշյա հեղափոխությունը և ո՛չ մեր: Այո՛, վարչապետ Փաշինյան, ճիշտ է գրված, որովհետև դա Ձեր հեղափոխությունն էր, քանի-որ մենք այդպիսի հեղափոխություն չենք ցանկացել, որտեղ պետք է առաջվա պես ոտնահարվեր ժողովրդի կամքը, որտեղ պետք է անպատիժ մնային հանցագործները, որտեղ պետք է քողարկվեին ու պարտակվեն հանցագործություները: Երևի նկատեցիք, որ նամակիս սկզբում չեմ գրել հարգելի, պարոն կամ ականջահաճո ինչ-որ բառեր. Ինքս լուրջ մարդ եմ և հենց այնպես չեմ սիրում բառեր շռայլել, երբ մարդը չի վաստակել դրանք, սա ոչ թե Ձեզ վիրավորելու համար եմ գրում, այլ բացատրելու, որ առհասարակ հարգանքը վաստակում են արված գործերով, սակայն ես չեմ տեսնում արված գործերը, որոնք խոստացել էիք ոչ վաղ անցյալում: Դուք երևի մոռացել եք, սակայն հիշողները հիշում են... Ամեն անգամ Դուք փորձում եք արդարացնել ո՛չ միայն Ձեր սխալները, այլև՝ Ձեր թիմակիցների, հավատացե՛ք՝ դա վատ սովորություն է. մեծամտությունը ստվածային մեղք է, կարծում եմ՝ պետք է, որ լավ իմանաք դա: Իսկական առաջնորդը մեծամիտ չի լինում, այլ՝ խոհեմ ու բանիմաց: Իմաստուններից խորհուրդ հարցնելը առաջնորդին դարձում է ավելի իմաստուն: Առաջնորդ լինելու համար պետք է ունակություն ունենալ, լսելու ո՛չ միայն ժողովրդի ու ցեղի ձայնը, այլև հայրենի հողի, մայր բնության ու անգամ դարերի խորքից եկող պատմահայրերի ձայնը: Առաջնորդը պետք է սիրի իր ժողովրդին, իր հայրենիքը, արդարութ-

յունն ու ազնվությունը, իր կերպարով պետք է օրինակ ծառայի շրջապատին: Պետք է արդարամտությամբ հանդիսանա ուսուցիչ՝ սերունդներին: Որպես հոգեբան՝ կցանկանաի օգտակար լինել Ձեզ, որովհետև փոքր սխալներից են սկիզբ առնում ո՛չ միայն անհաջողությունները, այլև դժբախտություններն ու հանցագործությունները:

Այսօր Դուք որդեգրել եք մի քաղաքականություն, որը երկիրը տանում է փակուղի: Դուք նկատե՞լ եք, թե ինչպես են Ձեր թիմակիցները ամեն անգամ կրկնում Ձեր արտասանած բառերը՝ շահարկելով ժողովրդի տված քվեն ու վստահությունը: Ամեն անգամ Ձեր թիմակիցները՝ ավագանու անդամներից սկսած վերջացրած կառավարության անդամներով, շեշտում են, որ իրենք ստացել են ժողովրդի 70 տոկոսի քվեն: Հավատացե՛ք՝ դա վստահախասկիզբ է: Յուրացնել ժողովրդի պայքարը, յուրացնել ժողովրդի ձայնը, նրա տված վստահությունը: Շահարկելով ու արդարանալով Դուք հանցանք եք գործում: Հավատացե՛ք՝ պատմությունը կարևոր ուսուցիչ է, պետք է նրանից դասեր քաղել, որպեսզի չկրկնեք անցյալի սխալները: Այն, ինչ տեսնում ենք բոլորս, դա աննկարագրելի է ու կործանարար հետևանքներ է թողնելու... Աղվամազ պատգամավորներ, որոնք ունակ չեն ինքնուրյուն մտածել, այսօր ազգի ճակատագիրն են որոշում, ու այդ ամենը Ձեր առաջնորդությամբ: Հավատացե՛ք՝ այսօրվա սխալը, կարող է վաղը ճակատագրական լինել ամբողջ ժողովրդի համար, այդ թվում և՛ Ձեզ: Գիտե՛ք, վարչապետ Փաշինյան, ամեն ինչ չափ ու սահման ունի, երբ անցնում են այդ սահմանագիծը, սպա կորուստը անխուսափելի է դառնում: Հավատացե՛ք՝ ժողովրդի վստահությունը շահարկելով երկիրը քանդելը անբարոյականություն է, ժողովրդի քրտինքն ու չարչարանքը յուրացնողը ոճրագործ է՝ անկախ նրանից, թե ինչ տիտղոսներ կամ պաշտոն ունի: Երբ սպանում են ժողովրդի հավատը և հույսը, տեղում լցնելով ստեղծություն, նզովք ու անտարբերություն, դա արդեն վտանգավոր երևույթ է: Վարչապետ Փաշինյան, արդյոք մտածե՞լ եք, թե Ձեր իշխանության գալուց հետո, ինչու՞ են սևագգեստ մայրերը դեռ պայքարում փողոցներում, արդյոք մտածե՞լ եք, թե ինչու՞ են Ամուլսարի պահապանները շարունակում մնալ իրենց դիրքերում: Ինչու՞ են շարունակվում զինվորների սպանությունները, ինչու՞ են նորից ուսանողները փողոցում: Հավատացե՛ք՝ այս ամենը ցույց է տալիս, որ ժողովրդի տված ձեր վստահությունն ու սպաս-

ելիքները ձախողել եք: Գիտե՞ք՝ երբեմն պետք է հպարտությամբ ընդունել պարտությունը, քան տրորվել խելագարված ամբոխիների ոտքերի տակ: Հավատացե՛ք՝ սա նամակ չէ սոսկ, այլ դողանջ ու ահազանգ Ձեր ընկերների համար: Մի՛ կարծեք, թե բարձրունքում եք ու կարելի է թթել ժողովրդի ու ճշմարտության վրա, ժամանակն ամեն ինչ իր տեղն է դնում, այնպես մի արեք, որ Ձեր տեղը քաղաքական աղբանոցում լինի:

Վարչապետ Փաշինյան, Դուք դեռ ունակ եք փոխել վիճակը, այլապես չէի գրի այս նամակս, հավատացնում եմ, որ այս նամակը շատերին օգտակար կլինի, անգամ Ձեր թիմակիցներին, որոնք զուրկ չեն բանականությունից: Մի՛ կարծեք արտաքինը փոխելով՝ մոռուք պահելով ու խոստումներ շռայլելով, կարող եք հաջողությունների հասնել, հավատացե՛ք՝ դրանք ժամանակավոր երևույթներ են:

Գործով պետք է ապացուցեք Ձեր տղամարդկությունը: Վարչապետ լինելը մեծ պատասխանատվություն է, այդ թվում՝ ծանր բեռ, եթե ի վիճակի չեք այդ բեռը տանել, ապա, Աստծո սիրույն, թողեք այն մարդուն, որը ի վիճակի է այն տանել: Հավատացե՛ք՝ այդ ժամանակ կլինեք ժողովրդի սիրելին: Գիտե՞ք, որ անկշտությունն ու լկտիությունը չափ ու սահման ունեն, մեկ անգամ արդեն ականատես ենք եղել այդ չափ ու սահմանին, նկատի ունեմ հոկտեմբերի 27-ը: Հավատացե՛ք՝ մեկ անգամ բանտ նստելով ու մոռուք պահելով հեղափոխական չեն դառնում, առաջնորդները չեն սխալվում և առաջնորդում են, ոչ թե ծիկրակում ուրիշների թիկունքից: Գիտե՞ք՝ պետություն կառուցելու համար ամուր ձեռքեր են պետք և պինդ բազուկներ, իսկ կանացի նուրբ մատիկները տավիղ նվագելու համար են, ոչ թե պետություն ու երկիր կառուցելու համար: Ձեր շուրջը նայեք, Ձեր թիմի անդամների մատներին նայեք, նրանցից շատերը բառիս բուն իմաստով դասալիքներ են, եթե ոչ համասեռամու: Գիտե՞ք՝ գենդերային հավասարությանը դեմ չեմ, այստեղ հարցը սեռի ու դավանանքի մասին չէ, այլ բարոյականության ու անբարոյականության միջև է: Երբ կշեռքի տարբեր նժարներին դրվում են այդ երկուսը, ապա չպետք է այն հավասար լինեն, որովհետև դա նման է հանցագործին ու հայրենասեր ու ազնիվ մարդուն իրար հավասարեցնելուն: Այստեղ հարցը արդարության և անարդարության դաշտում է: Ազնիվ լինել, ոչ թե զանգակի պես անիմաստ դողանջել: Գիտե՞ք՝ առաջնորդը պետք է համարձակություն ունենա ընդունել ո՛չ միայն իր սխալները,

այլև իր ուսուցիչների՝ անկախ այն բանից՝ նրանք քաղաքական դաշտում են, թե քավոր- խնամհական օթյակում: Այն, ինչ հայտարարում էք Դուք բարձր ամբիոններից ու հարթակներից, նման է ջուր ծեծելուն: Երբ խոսում եք Գյումրու թալանյիներից, մտաբերեք Ձեր զինակից ավագ ընկերոջը՝ Անդրանիկ Քոչարյանին, որը աղետոյալ գյումրեցիների վերջին պատառ օգնությունն էր թալանում, վերջին շապիկն էր հանում հաշմանդամների ու ծերերի հագից: Կարծում եմ՝ ինձանից լավ գիտեք նրա հանցանքների ցանկը: Գուցե Դուք մոռացե՞լ եք նրա արածը, սակայն գյումրեցիները լավ են հիշում այդ ամենը: Գիտե՞ք՝ սիսալը ինչու՞մն է, այն, որ մինչև հիմա Դուք և Ձեր թիմակիցները քաղաքական գնահատական չեք տվել անցած վարչակարգի հանցանքներին: Անցած երեսուն տարիների հանցանքները չեն սպիացել, դրանք բաց վերքի պես տանջում են ժողովրդին: Քաղաքական գնահատականով կարող եք վերջ դնել կասկածանքներին ու անվստահություն: Ժողովուրդը իր ձայնը տվել է միայն նրա համար, որ արդարություն հաստատվի երկրում: Քանի դեռ չեն դատապարտվել հանցանքներն ու հանցագործները չեն կանչվել պատասխանատվության, Դուք չեք կարող երկիր կառուցել: Աղբի վրա տուն հնարավոր չէ կառուցել, ուր մնաց՝ երկիր: Մի կրկնե՞ք անցյալի հանցագործների կիսատ գործը, հարկավոր է համարձակություն ունենալ ու խոստովանել:



Այս մեկ ու կես տարվա մեջ չկարողացաք Ձեզ տրված վստահությունը օգտագործել: Հասկացե՛ք վերջապես, առաջնորդներին երբեք չեն կարող պարտադրել խաղի կանոններ, ինչպես տեսնում ենք « Ստամբուլյան կոնվենցիան » և Ամուլսարի հանքը պարտադրել են Ձեզ ու Ձեր թիմակիցներին, հավատացե՛ք՝ դա վտանգավոր է ոչ միայն ժողովրդի ու երկրի համար, այլև Ձեր առողջության: Ձեր ամեն մի սխալ արտահայտությունը դաշույնի պես հարված է ժողովրդի սրտին, հավատացե՛ք, որ գործն ու խոսքը իրարից չտարբերող քաղաքական գործիչը քաղաքական դիակ է, որը հեռանկար չունի: Մի՛ դարձե՛ք քաղաքական դիակների պես, մի՛ դարձե՛ք նզովքի ու հակակրանքի թեմա, արե՛ք այն, ինչ կցանկանաք անել ձեր զավակների համար: Հուսով եմ, որ գոնե կհասկանաք այս նամակի իմաստը: Հավատացե՛ք՝ կան ազնիվ ու նվիրյալ հայորդիներ, որոնք կարող են երկիրը կառուցել, որոնք պատրաստ են Ձեզ օգնել ոչ միայն խորհուրդներով, այլև իրենց մասնակցությամբ ու ներդրումներով: Ակնկալում եմ խոհեմություն:

Ծնորհակալություն Գեհենի Առաքել 18/11/2019

ՀԱՅՐԵՆԻՔ

Շատերը չգիտեն թե ինչ է նշանակում Հայրենիք, դա միայն լոկ բառ չէ, շատերը կարծում են թե հայրենիքը այնտեղ է, որտեղ ծնվել է, կամ մեծացել ու ապրել: Սակայն դա այդպես չէ: Սովորաբար ծննդավայրը ու հայրենիքը տարբեր բաներ են: Ծննդավայրը այնտեղ է, որտեղ ծնվել ես՝ անկախ քո կամքից, սակայն հայրենիքը ընտրում ես դու՝ ինքդ: Առհասարակ հայրենիքում մարդը իրեն պետք է զգա ոչ միայն ազատ այլև երջանիկ ու անվտանգ: Ծշմարտությունը այն է, որ Հայրենիքում մարդը զգում է ոչ միայն հողի ուժը, այլև իրեն ձգող միջավայրը, բնությունն ու ջուրը, մարդիկ իր պապերի ու նախնիների գերեզմանները ու անգամ անցած դարերի պատմությունը: Սակայն այն միջավայրում, որտեղ տիրում է գաղջ ու մռայլ մթնոլորտ, տառապանքն ու ցավը, արհամարանքն ու ծաղրանքը, հավատացե՛ք այդ միջավայրը չի կարող հայրենիք անվանել: Մենք հայերս

մի հետաքրքիր խոսք ունենք, « Որտեղ հաց, այնտեղ կաց »: Սովորաբար այս բանաձևը չի կարելի գործածել այս տարբերակում, որովհետև ինչպես կասեր ժողովրդական իմաստությունը. « մի փոր հացի համար չենք ապրում »: Պետք է խոստովանեմ, որ մեր հայրենակիցներից շատերը, հենց այդ մի փոր հացի համար են ապրում: Դա ցավալի փաստ է, սակայն իրականություն: Այդ տեսակի մարդիկ են, որ մի փոր հացի համար պատրաստ են ծախել, ոչ միայն հայրենիքն ու հայրենակիցներին, այլև իրենց ազգությունն ու անգամ ծնողներին: Ծախում են նաև արժանապատվությունը ու իրենց զավակների ապագան: Հավատացեք հայ դասականները շատ են գրել այդ տեսակի երևույթների մասին, ու ցավալին այն է, որ դրանք եղել են բոլոր դարերում առ այսօր: Պատահական չէր, որ այդ տեսակը պետք է կործաներ աշխարհի ամենահրաշալի երկիրը, պետք է վաճառեին Խորհրդային Հայաստանի ողջ հարստությունը, երկրի ռազմավարական ոլորտները, ընդերքն ու արժանապատվությունը, անգամ ապագա սերունդների ճակատագիրը: Չհաշված իհարկե նախնյաց շիրիմներն ու անցյալի պատմությունը: Հավատացե՛ք այդպիսի սրբապիղծ խաչագողեր ամենուր են, սփյուռքում, կառավարությունում, ազգային ժողովում երկրի բարձրադիր իշխանությունում ու կաթողիկոսարանում, հանձինս Գարեգին Գ-ի: Սփյուռքահայերից շատերը Հայաստանը համարում են իրենց հայրենիքը, սակայն դա ինքնախաբեություն է, կամ երազանքների ինքնաբավարարում: Այն, որ Արցախյան պատերազմի ժամանակ՝ 90 ականներին ողջ սփյուռքից ընդամենը 12 կամավորական է մասնակցել Արցախյան գոյամարտին, դրա մասին անգամ Լևոն Տեր-Պետրոսյանն էր ծաղրանքով վկայում: Պատկերացնու՛մ եք 9 միլիոն հայությունից ընդամենը 12 հայրենասեր հայորդիներ: Ուղղակի զավեշտալի է, երբ ամեն առիթով փորձում ենք մեզ համեմատել հրեաների հետ: Արդյոք քանի՞ սփյուռքահայ էր պատրաստ այդպես կոչված իր հայրենիքի համար որևէ բան անել, առանց սեփական շահը հաշվի առնելով: Հավատացեք հայրենիքը լոկ հող չէ, քար, սար կամ էլ ջուր, հայրենիքը դա ամրություն է ու ապահովվություն, անվտանգություն... Ոչ միայն հայրենիքին պետք է տալ, այլև պետք է նաև ետ ստանալ, Հայրենիքը սիրելու համար պետք է նաև արժանի լինել դրան... Եթե փոխադարձ չէ այդ սերը, ապա ամեն ինչ դառնում է անիմաստ ու անարդյունք: Ցավոք սրտի շատ անարժաններ պղծեցին ոչ միայն հայրեն-

իք անունը, այլ իմաստը: Երբ ամեն անգամ սեղանների շուրջ հավաքվածները գավաթ են բարձրացնում ու հայրենիքի սահմանները պաշտպանող տղանների կենացն են խմում, գոհվածների ու նահատակների հիշատակն են հիշում դա հայրենիքի հանդեպ սեր ու հարգանք չէ: Ստով ու կեղծիքով ընտանիք չես կարող կառուցել, ուր մնաց թե բանակ, պետություն, կամ հայրենիք: Հավատացեք ստով ու կեղծիքով առաջնորդվելը արդեն իսկ հանցագործություն հայրենիքի հանդեպ, ավելի ճիշտ սրբապղծություն է: Հայրենիք սիրելու համար պետք է ազնիվ ու մաքուր մարդ լինել. հայրենիքը ոտքերը սրբելու կամ այնտեղ թաղվելու համար չէ: Ծատերը Հայաստանը համարում են իրենց հայրենիք, սակայն երբ այդ հայրենիք կոչվածի հողը ոտքերիդ տակից փախչում է, երբ շրջապատում են ամեն ինչ գորշ է ու մռայլ, ողբ սով է ու տառապանք, որտեղ արհամարանք է ու նվաստացում երբ անգամ քեզ օտար է թվում հայրական օջախդ ապա կնշանակի, որ դու օտարական ես այդ երկրում: Ինչպես ասացի հայրենիքը մի փոր հաց չի, կամ էլ լախաման ու շահույթի աղբյուր, հայրենիքը այն տեղն է, որտեղ երջանիկ ես, անգամ սառուցյալ օվկիանոսի սառույցների վրա կարելի է հայրենիք հիմնել ու կառուցել: Մենք հայերս չենք կարողանում սիրել այն հողը, որը կարոտ է մեր սիրուն, մենք չկարողացանք այն ծովից-ծով Հայաստանից մնացած մի կտոր հողը դարձնել ծաղկունքի հայրենիք, եղած էլ այդ մի կտոր հողն էր, որը մեր իսկ կոտրած ձեռքով դարձրեցինք պոչամբար ու հանքեր, հիմա մեր քաջարի հայորդիներն են կենաց մահու կոիվ տալիս ամեն մի մետր հողի համար, բայց ասացեք խնդրեմ, այդ ազատագրված հողը մենք երբևէ սիրելու՞ ենք, մոլախտոսի ու տափաստանի ենք վերածելու, ինչպես արեցինք մեր լեռների հետ, որոնք բացված հանքերի խորը վերքերից տնքում են, մենք չենք լսում մեր լեռների ձայնը, չենք լսում հայրենի հողի ճիչը, մայրենի բնությունը մեզանից է ակնկալում իր պաշտպանությունը, սակայն մենք ի՞նչ արեցինք: Ապականեցինք ո՛չ միայն հողը, այլև գետերն ու սարերը, հողն ու ընդերքը: Հոշոտեցինք Մայրենի բնությունը, հոշոտեցինք այն երկիրը, որը մեր պապերի օրրանն է՝ մեր վերջին հանգրվանը: Հայերից շատերը քնելուց առաջ մտածում էին ինչպես թալանել դրացուն, բարեկամին ու երկիրը, ցանկանալով անկուշտի մրցակցությամբ դրացու ու բարեկամի ունեցածից ավելին ունենա, ինչպես կողոպտել ու հարստանալ: Մենք ծախեցինք ոչ միայն երկիրը այլ երկրի ռազմավարակ-

ան ոլորտները՝ ընդերքը, ջուրը, հողը անգամ մարդկանց, չհաշված հակա-
օդային անվտանգությունը: Պատերազմի ժամանակ թշնամու հարված-
ային սարքերի՝ Բայրաքթարների դեմ մենակ մնացել էր մեր 18 տարեկան
զինվորը: Ասացեք անբարոյականությունն չէ, զինվորի արյունով սպրելը,
ասացեք խնդրեմ ի՞նչ անուն կարելի է տալ, երբ ամեն տականք իրեն քաղ-
աքական այր համարելով ծամում է այդ զինվորի միսն ու արյունը: Երեսուն
տարի շարունակ, դիակների վրայով քայլեցինք ու չհասկացանք, որ այդ
հայրենիքի գավակները մեզանից շատ ակնկալիքներ ունեին, ավաղ չտես-
ան այն ինչ պետք է տեսնեին: Երբ երկրի պատգամավորները իրենց պար-
զևավճարների համար իրար են ուտում, մեր ժողովուրդը Թումանյանի
ասելով թամաշավորի աչքով նայում էր, ամոթանք է տալիս ու հետո էլ
մոռանում: Չէ մենք հայրենիքը ու այդ հողը չենք սիրում, այլապես ամեն
մի պիղծ ու նզովյալ հերոս չէր կոչվի... Ասացեք խնդրեմ, ու՞մ մեղքով է, որ
թալանչի ավազակներին համարում ենք բարեգործ կամ փրկիչ, ամեն ազգ-
ադավիհն ու մարդասպանին դարձնել գեներալ կամ սպարապետ: Եթե մի
ժողովուրդը իր ազգային հերոսին ճանաչում է իր քրոնած գարշահոտով,
փրջոտ անվա, մոլագարության մասի դեռ չիոսենք, ապա դժվար թե կար-
ողանանք գնահատել ու արժեքավորել հողը ու հայրենիքը: Պատահական
չէ, որ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը ամեն պատահածի
Արցախի հերոսի կոչում էր շնորհում, այն էլ դեռ պատերազմը չավարտած,
չի բացառվում, որ նա շուտով Ռոբերտ Քորաթյանին էլ նրա որդուն էլ Արց-
ախի հերոսի կոչում շնորհի, կամ էլ որևէ այլ տիտղոս: Արայիկ Հարություն-
յանի հայրենասիրական ճառերի ետևում գիտե՞ք թե ինչ է թաքնված,
շատերը երևի տեղյակ չեն, որ պարոն Արայիկ Հարությունյանը խոշոր
գործարար է, համենայնդեպս այդպես է գրված նրա կենսագրականում:
Իսկ Քաջության երկրորդ աստիճանի մեդալը վաստակել է Ռոբերտ
Քոչարյանի ու Սերժի միջոցով: Հիմա շատերը կմտածեն թե ինչու եմ հիմա
գրում այդ մասին, ասեմ, որովհետև հիմա այդ խոշոր գործարարի սեփա-
կանության համար են կենաց ու մահու կռիվ տալիս մեր հերոսները:
Արայիկ Հարությունյանի պատկանող անտառային տարածքները, ՀԷԿ -
երը Արցախի գետերի վրա կառուցված, Դրմբոյի ոսկու հանքը, չհաշված
գյուղատնտեսական մշակովի ու անմշակ հեկտարները և այլն: Իսկ հարց
չեք տալիս երբևէ, ինչպե՞ս է ստացվում, որ Հայաստանից գնացած մեր

կամավորները չարժանացան ո՛չ մեդալի, ոչ ուշադրության, ո՛չ էլ մի բուռ հողի, որպեսի իրենց գլխին տան... Քանի-քանի հեկտարներ ազատագրեցին Արցախյան պատերազմի ժամանակ, հարցրեք որևէ ազատամարտիկի, արդյոք իրեն Հայաստանի կամ Արցախի իշխանությունները բանով օգնե՞լ են, չե՞ որ նրանք են այդպես կոչված հողի տերերը... Իհարկե ոչ, որովհետև իրենք՝ օլիգարխները կամ էլիտան միայն իրար են օգնում, իրար աղջիկ տալիս, տղա առնում, խնամի ու սանիկ դառնում: Առաջնագծում նորից անապահով խավն է, իր կոտրած տաշտակով ու դառնացած կյանքով ու ապրուստով: Հիշու՞մ եք Ստեփան Չորյանի «Պատերազմը» պատմվածքը Մանկական Դավիթի ճակատագիրը, ինքն էլ էր անապահով ընտանիքի զավակ, նորից տանում էին առաջնագիծ, իսկ տանուտեր Արսենը ու նրա զավակը ինչպես մեր պաշտոնյաները, միշտ հիմնավոր պատճառ ունեին առաջնագիծ չմեկնելու համար, ինչպես կասեր Մեյրան Օհանյանը հարուստի երեխաներ կարողանում են ԲՈՒՀ- երում սովորել ու տարեկետում վերցնել: Դե բա իրենք էլ հայրենիքը այդ ձևով են սիրում, հո ազգովի չե՞նք գնալու մեռնենք, մեկը պետք է լինի՞ որպեսզի ապրի, վայելի վեջապես հերոսանա ու իշխանավորի: Իրենց կռիվն էլ թիկունքում է, բա որ բոլորը գնացին, մեր թիկունքը ո՞վ է պահելու, այս դեպքում ասելու են, որ իրենք զենք ու զինամթերք հասցնում ճակատ: Ժամանակին էլ ոչլուտ ՊՆ նախարար ունեինք, իր ասելով բուրումնավետ քրտնահոտով էր հայտնի ժողովրդին, պատերազմի ժամանակ տաքուկ աշխատասենյակում նստած հերոսացավ: Առհասարակ լավ չի, որ այդպիսի մարդիկ շուտ են մեռնում կամ սպանվում, որովհետև մահից հետո հերոսանում են ու դառնում կուռք: Պատահական չէր, որ զեներալ Մանվելը ցանկանում էր դառնալ ազգային կուռք, բայց ցավոք սրտի չստացվեց, չնայած, որ նա այդպես էլ մնաց Արցախի հերոս, ինչպես մի շարք դավաճանները, կարծում եմ տեղին կլինի նշել դրանց անունները, կարծում եմ զոհված զինվորների հարազատները պետք է իմանան այդ անունները, այդպիսով զեներալներ զեներալ-լեյտենանտ Արշավիր Ղարամյանը, Կարեն Աբրահամյանը, Լևոն Մնացականյանին, Մամվել Կարապետյան՝ Օգանովսկի, Մեյրան Օհանյանը, Արթուր Աղաբեկյանը, Մովսես Հակոբյան, զեներալ-լեյտենանտ Արշալույս Փայտյան, Կամո Քոչունց, Հայկազ Բաղմանյան, զեներալ-լեյտենանտ Օնիկ Գասպարյան, Յուրի և Գեորգի Խաչատուրովները, Արշակ Կարապետյան,

Լևոն Երանոսյան, Սեյրան Սարոյան, Մանվել Գրիգորյան սրանք դեռ մի փոքր մասն են, սրանց էլ կարող ենք նաև գումարել ԱՄՇ ու Ոստիկանության գեներալներին, որոնք ոչ միայն թալանեցին բանակը, այլև պատճառ դարձան հարյուրավոր զոհերի, սրանք էին տասնյակ տարիներ ապականել հողը, ջուրը, երկիրը, բանակը ու սպայի ու գեներալի կոչումը: Հենց այս գեներալական ոհմակի թեթև ձեռքով շատ ավելի զինվոր սպանվեց, քան կերագեղին ադրբեջանցի գեներալները: Ադրբեջանի ջրաղացին ջուր լցնողները եղել են հենց այս բարձրաստիճան սպաները, որոնք տասնյակ տարիներով մեր բանակի գաղտնիքները փոխանցել են թշնամուն, չհաշված բանակի ու զինվորին հասանելիք միջոցները թալանել: Ես տարիներ առաջ գրել էի. որ « Համաշխարհային պատմության մեջ գեներալները համարվում են բանակի և հաղթանակների խորհրդանիշ, իսկ Հայաստանում՝ անբարոյականության ու հանցագործության »: Ինչպես տեսնում ենք չափանիշները տարբեր են, տարիներ առաջ մամուլում գտա հետաքրքիր մի միտ, հեղինակը Դավիթ Մեծահոգին էր, նա գրում էր. « Ովքեր են գեներալներ Մանվելները ու Սեյրանները: Սրանք այն տականքներն են, որոնք ղեկավարվում էին բռնաբարված ընտրությունների ասպետ՝ Սարգսյան Վազգենի կողմից »:

Ամեն ինչ սաված է ճիշտ և դիպուկ: Շատերը չգիտեն, որ այսօրվա պատերազմի զոհերի մեղավորը հենց Վազգեն Սարգսյանն ու Լևոն Տեր-Պետրոսյանն են, որովհետև նրանց դավաճանության շնորհիվ էր, որ ադրբեջանցիները 1994 ին Կապիտուլացիայի փոխարեն կնքեցին զինադադար, հենց այդ Բիշքեկյան զինադադարի փաստաթուղթն էր, որ հոշոտեց երկիրը ու հայ զինվորներին, խայտառակ զինադադար այն էլ այն դեպքում, երբ մեր կամավորները ու զրահատեխնիկական կանգնած էր Ադրբեջանական նավթային քաղաքից ընդամենը 15 լիումետր հեռավորության վրա: Նրանց մեղքով էր, որ մի քանի սերունդ ժառանգեցին չավարտված պատերազմը: Կարդացեք Չոյրանի պատերազմը պատմվածքը, ու կհասկանաք, որ հեղինակը հենց այնպես չէր աղաղակում այդ մասին: Մենք ականկալում ենք հաղթանակ, բայց ոչինչ չենք անում այդ հաղթանակի համար, չհաշված սփյուռքում հավաքված օգնությունը ու սոցցանցային հայրենասիրական կոչերը ու գովազդները: Հաղթելու համար պետք է արիանալ, պետք է ընդունել ճշմարտությունը: Գարեգին Նժդեհ ը ասում էր. « Մի ժողովուրդ,

որի որդիները հավասար չեն օրենքի եւ մահվան առջև՝ հաղթական հայրենիք չի ունենա »: Տեսնու՞մ եք թե ինչ է պատգամել մարդը, որը արյուն է տվել իր հայրենիքի համար: Հայրենիքը սիրում են գործով, ոչ թե ամբիոններից բանաստեղծություն ճառելով: Հայրենիքը սիրողը չի կարող այդ երկիրը թալանել, այդ ժողովրդին խաբել, չի կարող պիղծ ու տմարդի լինել: Ինչպե՞ս կարող է հող սիրողը իր երկիրը դարձնի պոչամբար, կամ աղբանոց... Մի՞թե այսպիսի հայրենիքի համար են գոհվել Մոնթեն ու մեր ազատամարտիկները, մի՞թե այսպիսի երկիր համար են գոհվում մեր լույս տղաները... Արդյոք արժանի՞ ենք այն հողին, ծախեցինք մեր նախնիների պատիվը... Մի՞թե պատմությունը մեզ կների այսօրվա հանցանքների համար, չի ների՞, ինչպես չներեց մեր պապերին իրենց գործած ոչ միայն հանցանքների համար այլև իրենց սխալների համար: Չներեց, որովհետև մեր նախնիները չեն հասկացել իրենց լեռների խորհուրդը, չեն կարողացել օգտվել մեր անառիկ լեռների ռազմագիտական արժեքից: « Չհասկացանք մեր լեռների խորհուրդը եւ չկարողացանք յաղթահարել մեր գետերի քմահաճոյքը: Յարմարւելու մէջ սպիկար եղանք եւ պատշաճեցումի նւազ կորով յայտնաբերեցինք: Դրա համար էլ թե՛ հայրենիքը կորցրինք, թե՛ հայոց հազարամեակների հերոսականի ողբերգական վախճանը տեսանք »: Հայկ Ասատրյան: Հայրենիքը սիրելու համար ոչ միայն պետք է արժանի լինել, այլ արժանապատվություն ունենալ, հայրենիքին պետք է տալ սեր պետք է տալ ջերմություն և ուշադրություն: ՈՒ դեռ քանի՞ սերունդ է մեծանալու կիսաբաց լուսամուտներում: Հայրենիքը կեղծիք ու սուտ չի սիրում, ստրկամտություն ու դավաճանություն չի ներում: Արևմտյան Հայաստանը կորցրեցինք, որովհետև չկարողացանք գնահատել, չկարողացանք այն դարձնել հայրենիք, փոխարենը մեր դարավոր թշնամին՝ թուրքը այն դարձրեց իրեն հայրենիք: Բոլոր ցեղերը ասպատակեցին ու անցան Հայաստանով ու մենք միշտ էլ էշի ականջում քնած մնացինք, Թամաշավորի անտարբերությամբ մնացինք, մնացինք ամուլ ու անտարբեր... Մեզ ի՞նչ... հենց այդ բառը դարձավ ազգային փորձանքների արդարացման միջոցը, մեզ ի՞նչ, որ մեր զավակներին են սպանում... Մեզ ի՞նչ, որ երկիրն են թալանում, մեզ ի՞նչ, որ ընդերքն ու հողն են ծախում, մեզ ի՞նչ, որ գետերն ու լճերն են ապականում: Հովհաննես Թումանյանը ճիշտ էր ասում մենք հայերս թայֆայականությամբ ու թամաշավոր ժողովրդ ենք: Մի փոր հացի իրար կոկորդ ենք

կրծում, երբ հերթը հասնում է հայրենիք կառուցելուն մենք քաշվում ենք մի կողմ, ինչու՞ ես... Վախկոտ ենք ու ծույլ, դա անգամ Մովսես Խորենացին է գրել, ճիշտ է մեր մեջ կան հզոր ու լուսավոր անհատներ, որոնց միջոցով են մեզ ճանաչում աշխարհում, որոնց միջոցով է ազգը գոյատևել ու ապրել, սակայն այդ լուսավոր դեմքերը այնքան քիչ են, չհաշված որ նրանց էլ հալածում ենք ու խոշտանգում, նրանք բոլոր դարերում հետապնդվել են ու հոշոտվել ժողովրդի ու խավարամիտների կողմից: Ասում են իբր քարից հաց քամող ենք, սակայն այդպես չէ, տեսեք մեր խանձված լեռներն ու սարերը, տեսեք ճահճացած դաշտավայրերը ու կհասկանաք, որ մի ծառ տնկելու շնորհք էլ չունեցանք, եղած անտառներն ու պուրակները գլխատեցինք: 90 ականներին անգամ այգիներն ու պտղատու ծառերն էին կտրում, մինչդեռ պետք է դավաճան ազգադավներին կացնի տակով անցկացնեինք: Չհասկացանք թե հայրենիքի թշնամին որտեղ է, չհասկացանք ու այդ թշնամում ոչ միայն պատիվներ արեցինք, այլ ազգային հերոսներ ու փրկիչներ: Մի՞թե Հայրենիքը դա էր ակնկալում մեզանից, մի թե սերը հայրենիքի հանդեպ այսպես է լինում: Այս երեսուն տարիները ցույց տվեցին, որ հայ ժողովուրդը ընդունակ չէ հայրենիք կառուցել, որտեղ հայ մարդը իրեն կզգա անվտանգ ու ապահով, երջանիկ ու գոհ: Ծատերը երջանկությունը տեսնում են փողի ու պաշտոնի մեջ, իրենց շքեղ առանձնատներով ու դղյակներով: Ինչու՞ չենք կարողանում տեսնել իրականությունը երևի մահմեդական կալիֆանի ծուխը չի թողնում է հասարակած տների նեոնային լույսերի փայլը: Սարսափելի ու ողբալին այն է, որ այսքան նվիրյալներին գոհելուց հետո անգամ չկարողացանք հայրենիք կառուցել: Հողի գինը չիմացանք... Հավատացեք շատ հայեր կան, որոնք օտար երկրում ապրելով ստեղծեցին ու արարեցին, այդ երկիրը դարձնելով իրենց հայրենիքը, շատ հայեր էլ կան որոնք իրենց կյանքը տվեցին այդ հայրենիքը պահելու ու հզորացնելու համար... Մակայն հայոց հողը հայրենիք դարձնել չստացվեց... Հիշում եք Աշուղ Ջիվանու խոսքերը. « Օձերն ու գորտերն են խմել, Ա՛խ, իմ հայրենիքիս ջուրը »: Արդյոք մեզանից քանիսը՞ մատը-մատին տվեց, որպեսզի այդ օձերից ու գորտերից ազատվենք: Հավատացեք, որ մեզանից շատերը ծառայել ու ծառայում են այդ օձերին ու գորտերին, հենց մի փոր հացի համար: Մենք չկարողացանք անգամ ազատագրված հողերի վրա այգիներ ու անտառներ տնկել, չկարողացանք բուրատան ու դրախտ սար-

քել, փոխարենը չոր սարեր, անպաշտպան խրամատներ, ու 90 ականների զենքեր ու թիրախ դարձած զինվորներ: Հույսներս դրեցիք անապահով մաճկալանց Դավիթների վրա, սակայն տղաները գերազանցեցին իրենք իրենց, մնում է, որ գոնե նրանց արած անձնագոհությունը գետնով չտանք, նրանց արյունը շուն ու գելին բաժին չդարձնենք: Նորից պետք է գրեմ զեներալների ու հերոսների մասին... Արդյոք Արցախի ղեկավարները ընդունա՞լ են հայրենիքի համար մի լավ բան անել, բացի ճառելուց ու թալանելուց, երեսուն տարվա մեջ ոչինչ չարեցիք, հիմա հասկացա՞ք, որ հայրենիք ունեք, այնպես որ խելքներդ գլուխներդ հավաքեք ու դադարեցրեք ձեր նախկին գործերը: Վարչապետ Փաշինյանը ընկած ռազմադաշտում դավաճաններ է փնտրում, արդյոք նա իրեն հարց տվե՞լ է, թե հրամանատարական կետում բազմած զեներալական ուսադիրներով դավաճանները, ի՞նչ են անում այնտեղ, զինվորի ու երկրի ճակատագիրը հենց այդ աղբամանի ձեռքին է, ինչ է չկա՞ի՞ն տաղանդավոր ազատամարտիկներ, որոնք կարող էին այս հարցը մի քանի օրում լուծել, իրենց մարտական փորձով այսօր առաջնագծում հրաշքներ են գործում: Փոխարենը նրանց հանձնել պատերազմի կառավարումը, ընկել եք դավաճաններ եք փնտրում, երբեք էլ ուշ չէ ճշմարիտ որոշումներ կայացնելու համար: Դավաճաններ փնտրեք ձեր մեջ՝ ձեր թիմում հավաքելով սորոսական դասալիքներին զինվորների ճակատագրի հետ շախմատ եք խաղում: Եթե չգիտեք անուններ, կարող եմ տեղն ասել, համացանցում կգտնեք բոլորին, անգամ ձեր կողմից նշանակած Ազգային անվտանգության խորհրդի նախագահ Արմեն Գրիգորյանին, չհաշված ԱԱԾ ու ՊՆ բարձրաստիճան սպայակազմը: Չգիտեմ ինչու ընդունված է ասել մի դատարկ իմաստությունը Այն մասին. « Որ գետանցին ձիերին չեն փոխում »: Դա դատարկ փիլիսոփայություն է: Կարդացեք Արցախի գրող Վարդես Օվյան, գուցե հասկանաք ճշմարտության բանաձևը. Ճիշտն ասած ո՛չ ձեր թիմում, ո՛չ էլ նախկինում ձիեր չեն եղել, էշերից բացի, իսկ ինչպես ասում էր Վարդգես Օվյանը. « էշերին անպայման է պետք փոխել »: Եթե չեք կարողանում գտնել ելքեր կամ լուծումներ, գոնե բարի գտնվեք հեռացեք, այլապես ձեզ չի ներելու ո՛չ ժամանակը, ո՛չ էլ ժողովուրդը: Հեռացեք Աստծո սիրուն, գոնե մի լավ բան արեք... Թողեք թող լուծում ունեցող մարդիկ որոշումներ կայացնեն: Հիշեցնեմ որ. « Նծույզին սայլին չեն լծում », այնպես որ կան արժանավայել

հրամանատարներ, որոնք կարող են գերագույն հրամանատարի գործը ստանձնել, գոնե այս պահին:

Գեհենի Առաքել 30.08.2020

ՍՐԲԱՊԻՂԾ ԱՇԽԱՐՀ

Սրբապիղծ աշխարհ, դաժան օրենքներ,
Առնող ու ծախվող սուտ առաքյալներ,
Գահեր արյունոտ եւ պիղծ հերոսներ,
Բյուր ու բյուրավոր աննար թշվառներ:

Փողով տրվում են իրենց տերերին,
Հյու հնազանդ իշխան ու բղէշիս,
Դարը լուսավոր մնաց անցյալում,
ՈՒ ծվարեցինք մենք միջնադարում:

Հեռու է սակայն լույսը փրկության,
Քանզի տգետ ենք ու խավարամիտ,
Գիրը, ուսումն է ուղին ճշմարիտ,
Մակայն կրթությունն այլեւս չկա:

Եւ տերերը քո փնթի են, տգետ,
ՈՒ գլուխները գոմաղբով լցված,
Մի՞թե կարող է աշխարհը փոխվել,
Երբ տկար է միտքդ, իսկ հոգիդ՝ նվազ:


Գեհենի Առաքել 25/05/2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի խոսքը	2
1. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՐԱՎՈՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ.....	3
2. ԻնՉ ԱՆՈՒՄ ԵՆՔ՝ ԵՐԵԽԵՔԻ ՀԱՄԱՐ ԵՆՔ ԱՆՈՒՄ.....	20
3. ՄԵՆՔ ՔԻՉ ԵՆՔ, ՍԱԿԱՅՆ ՄԵՉ ՀԱՅ ԵՆ ԱՍՈՒՄ... ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ	23
4. ԱԶԳԱԴԱՎ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ.....	35
5. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ	40
6. ՍՈՎՈՐԻՐ ԱՆՅՅԱԼԻ ՍԽԱԼՆԵՐԻՑ	49
7. ՆԱՄԱԿ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ	51
8. ՄՈՒԼԱԳԱՐ ԿՈՍՍՈՍՈՒԼԻ ՓԱՌԱԲԱՆՈՒՄԸ	54
9. ՇԻՆԱՐԱՐ ՀԱՅԸ.....	59
10. ԱԶԳԱՅԻՆ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ	66
11. ԱԶԳԱՅԻՆ ՈՐԱԿՆԵՐԸ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍՆԵՐԸ	70
13. ԲՈՍՈՏ ԵՐԿԻՐԸ	71
14 ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	82
15. ՀՐԵՇՆԵՐԸ ՄԵԿ ՈՂՄԱԿՈՒՄ.....	100
14. ԱՐԺԵԶՐԿՎԱԾ ԱՐԺԵՔՆԵՐ.....	105
15 ԴԱՌՆ ՈՒ ՑԱՎԱԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ.....	109
16 ՊԱՐՏԱԴՐՎԱԾ ՈՃԻՐ՝ ՍՏԱՍԲՈՒԼՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ.....	116
ՀԱՅՏՆԻ ԼԻՆԵԼՈՒ ՀԻՍՏԵՐԻԱՆ ԿԱՍ ՄՈՒԼՈՒԹՅՈՒՆ	124
ՀԵՐՈՍՆԵՐ և ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐ.....	127
ՊԱԼԱԶՆԵՐԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ	133
ԸՆԴՈՒՆԱԿ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՅՆԸ.....	136
ՄԵՂՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	142
ԵԹԵ ՀԱՆՑԱԳՈՐԾԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՊԱՏԺՈՒՄ,	
ԱՊԱ ԴԱ ԱՆՈՒՄ ԵՆ ՎՐԻԺԱՌՈՒՆՆԵՐԸ	144
ԹՐԱՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ	146

ՍԱՍՈՒՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳՈՐԾԸ	150
ՈՒՐ Է ԿՈՐԵԼ участковый-ին	153
ՆԱՍԱԿ ՀՌՈՍԻ ՊԱՊ՝ ՖՐԱՆՑԻՍԿՈՍԻՆ.....	155
ԳԻՆԵՏՆԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....	156
ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՅՈՒԹՅՈՒՆ (Ինքնագիտակցություն)	158
ՆՈՐԸ՝ ՀՆԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ Է	162
Նամակ վարչապետ Նիկոլ Փաշինյանին	165
ՀԱՅՐԵՆԻԶ.....	169
ՍՐԲԱՊԻՂԾ ԱՇԽԱՐՀ	178

Խմբագիր Տ. Բարսյան, Ա. Աբովյան, Վ. Հովհաննիսյան
Գրքի ձևավորումը Վ. Հովհաննիսյան
geheniaraqel@gmail.com



ԳԵՅԵՆԻ ԱՌԱՔԵԼ